

ՋԱՐԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆՈՐՈՇ ԴԵՐՔԱՅՆ
ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿԱԶՄՈՒՄ
(«ԵՂԱՆԱԿԱԿՈՐՈՂ + ԱԴ»
ԿԱՌՈՒՅՑԸ)

ԵՐԵՎԱՆ
ՆԱԻՐԻ
2019

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ա. 459

*Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը և հայոց լեզվի ամբիոնը*

Գիտական խորհրդատու՝ ք. գ. դ., պրոֆ. ՊԵՏՐՈՍ ԲԵՂԻՐՅԱՆ

Գրախոսներ՝ **ք. գ. դ., պրոֆ. ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
 ք. գ. թ. դոց. ԼԵՈՆԻԴ ԹԵԼՅԱՆ
 ք. գ. թ. դոց. ՌԻՏԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Աղաջանյան Զ. Խ

Ա 459 Անորոշ դերբայն ստորոգրյալի կազմում («Եղանակավորող +
ԱԴ» կառույցը) / Զ. Խ. Աղաջանյան. - Եր.: Նաիրի, 2019.-
272 էջ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-550-01840-8

© Աղաջանյան Զ.Խ., 2019
© «Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ, 2019

Ուսումնասիրության նյութը ժամանակակից հայերենում բաղադրյալ ստորոգյալի դրսևորումներից մեկն է՝ արտահայտված «եղանակավորող + անորոշ դերբայ»¹ կաղապարով:

Հայերենի լեզվաբանական հետազոտություններում թեպետև ընդունվել է (ոչ բացարձակ առումով) նման կառուցվածքով ստորոգյալի կարևորությունը, բայց և այնպես, մեծ մասամբ այլ հարցերի առնչությամբ ծագած անհրաժեշտության բերումով հարցին վերաբերող միայն մասնակի խնդիրներ են շոշափվել:

Հայ լեզվաբանական գիտության շատ տարակարծություններ ու տարըմբռնումներ այս հարցին էլ են վերաբերում: Այն ժամանակակից հայերենի շարահյուսության հանգուցային խնդիրներից մեկն է, որի համակողմանի քննությունը պահանջում է ելնել տրամաբանական-քերականական, զուգորդական-հոգեբանական և սուբյեկտիվ-գնահատողական սկզբունքներից. այսպիսի ուսումնասիրությունը տեսական-ճանաչողական և գործնական-կիրառական նշանակություն ունի:

Եթե հայ դասական լեզվաբանության ներկայացուցիչները հազվադեպ են անդրադարձել այս հարցին, ապա նոր և նորագույն շրջանի հայագետները (Գ. Զահուկյան, Էդ. Աղայան, Ս. Աբրահամյան, Ա. Աբրահամյան, Վ. Քոսյան, Ալ. Մարգարյան, Մ. Ասատրյան, Ռ. Իշխանյան, Հ. Հարությունյան, Է. Մկրտչյան, Թ. Շահվերդյան, Լ. Թելյան և այլք) առանձնակի ուշադրություն են դարձրել-դարձնում են, և հատկապես վերջին շրջանում արդյունավետ աշխատանք է կատարվել:

¹ Այսուհետև՝ «եղանակավորող + ԱԴ»:

Հայոց լեզվի զարգացման ընթացքն անհրաժեշտություն է դարձրել առանձնաբար քննարկելու ստորոգյալի «եղանակավորող + ԱԴ» կաղապարը՝ բազմազան և հետաքրքիր իրացումներով: Ժամանակակից հայերենում ներխուժմասային առանձին խումբ են կազմում անցողական ու անանցողական և տարբեր սեռերի մի շարք բայեր, որոնք հայտնի են **կերպավորիչ, եղանակավորիչ** անունով և ի տարբերություն մյուսների՝ առնում են նաև անորոշ դերբայով արտահայտված լրացումներ: Այդպիսիք ավանդված են հին հայերենից և հնուց անտի արժանացել են հայ քերականների ուշադրությանը, սակայն մինչև օրս նմանիմաստ բայերի և ԱԴ-ի գուգորդումով կազմված շարահյուսական այս կառույցի արժեքավորման վերաբերյալ միասնական տեսակետ չկա: Հ. Հարությունյանի վկայմամբ՝ «1979թ. հոկտեմբերին ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կազմակերպվեց «Ժամանակակից հայոց լեզու» եռափառոր աշխատության քննարկում, որը տևեց երեք օր, և այդ ընթացքում գուցե ոչ մի հարցի մասին այնքան շատ չխոսվեց, ոչ մի հարցի մասին այնքան չբանավիճեցին լեզվաբանները, ինչքան **բայ + անորոշ դերբայ** կառույցների մասին»²: Սա այն յուրահատուկ կառույցներից է, որի խորքային և մակերեսային քննությունը կատարելիս այլ լեզուների ըծեռած փաստերին ու նրանց վերաբերյալ տեսակետներին դիմել չենք կարող, քանի որ անորոշի հոլովվելու իրողությունը գուտ հայկական երևույթ է: Ռուսերենում, անգլերենում, ֆրանսերենում ևս նման կառույցներ կան, բայց, ի տարբերություն հայերենի, անորոշ դերբայը չի հոլովվում, առնվում է ուղիղ ձևով (ֆրանսերենում՝ նաև նախդիրների հետ), որն էլ էական դեր է կատարում կառույցի գնահատման հարցում:

Մեր նպատակն է հնարավորինս ամբողջացնել նյութի վերաբերյալ եղած կարծիքները, դրանց քննական օգտագործումով «եղանակավորող + ԱԴ» կառույցի համակողմանի ուսումնասի-

² Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 188:

րություն կատարել: Փորձել ենք բացահայտել կառույցի էությունը, նրա առանձնահատկությունները՝ ստորոգյալի մյուս ձևերի համեմատությամբ, ցույց տալ ընդգրկման սահմանները, լեզվաոճական արժեքը՝ չանտեսելով եղանակավորողների իմաստային կողմը, կառույցի բաղադրիչների իմաստային-քերականական հարաբերությունների հետ առնչվող այլևայլ խնդիրներ, նաև լեզվական տվյալ իրողության զարգացման որոշ միտումներ ու տեղաշարժեր:

Ուսումնասիրության հիմքում ընկած է այն միտքը, որ «եղանակավորող + ԱԴ» կառույցը նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ է դառնում՝ բացառությամբ «դերբայ եղանակավորող + ԱԴ»-ի, որտեղ բաղադրիչների իմաստային-քերականական նույն հարաբերությունն է՝ շարահյուսական որոշակի արժեքով:

Այստեղ ձևաբանական առումով գործում են երկու կարգի խմբեր (մի դեպքում՝ երկուսն էլ բայական, մյուս դեպքում՝ անվանական և բայական)՝ իբրև մեկ միասնություն՝ վերլուծական կազմությամբ: Ձևաբանորեն սրանք միացած չեն, բայց շարահյուսորեն իմաստային մեկ միասնություն են կազմում՝ չնայած երկու եզրերի որոշակի զանազանության: Հետևաբար՝ կառույցին վերաբերող հարցերն անմիջականորեն առնչվում են լեզվի երեք մակարդակների հետ՝ բառային, ձևաբանական, շարահյուսական:

Աշխատանքում առանձնակի ուշադրության կենտրոնում են այն բայերը, որոնք միայն ԱԴ-ի հետ գործածվելով են շարահյուսորեն իմաստավորվում և նախադասության անդամ դառնում: Դրանք մի տեսակ «օժանդակ բայեր» են, որոնք գործողության բային (տվյալ դեպքում՝ ԱԴ-ին) օգնում են իրացվելու դեմքով, թվով, ժամանակով, նաև եղանակավորությամբ՝ խոսողի վերաբերմունքն արտահայտելու առումով: Առանց զգացության, եղանակավորման, «գունավորման» լեզուն «մեռյալ մարմին» է և չի կարող ծառայել իր նպատակին. ահա թե ինչու լեզվի մեջ անհրաժեշտորեն օգտագործվում են մտքերի ու զգացմունքների, վերաբերմունքի դրսևորման զանազան արտահայտչաեղա-

նակներ, որոնցից մեկի՝ իմաստափոխության դրսևորումներից է շատ բայերի եղանակավորող նշանակության ձեռքբերումը: Ծագումնաբանական առումով եղանակավորող բայերը, որ եղանակավորման արտահայտիչներ են, ստորոգման դրսևորման միջոցներ, գտնվում են քերականացման տարբեր աստիճաններում. շատերը քերականության են վերածվել (բառ-մասնիկի), շատերը դեռևս պահպանում են իրենց կապը սերող լիիմաստ բայերի հետ, այսինքն՝ գտնվում են լիիմաստ բայից սպասարկու բայի վերածման ճանապարհին: Բնականաբար, այս դեպքում առկա են տարբերակային ձևեր, և լեզվական նորմը խստության տարբեր աստիճաններով ճիշտ, թույլատրելի կամ սխալ է համարում գուգաձևությունների գոյությունը: Միևնույն ժամանակ չպետք է անտես առնել այն հանգամանքը, որ ոչ ճիշտ, անկանոն և «մեղանչում» դիտված շատ «երերուն», «տատանվող» ձևեր հաստատուն՝ կանոնական կարող են դառնալ լեզվի զարգացման հաջորդ աստիճանում: Այս կապակցությամբ հարկավոր է հաշվի առնել կառույցի կադապարային, բաշխական, գործառական և սրանց հետ կապված իմաստային արժեքը լեզվի զարգացման ներկա ժամանակահատվածում: Լեզվագիտական որոշ աղբյուրներում «եղանակավորող + ԱԴ» կառույցի եղանակավորող բաղադրիչները նաև բառ-մասնիկներ են անվանվում: Վերջիններս միայն անորոշ դերբայի կողքին են այդպիսի իմաստային երանգավորում ստանում, եղանակիչ բառերի գործառնությով հատկանշվում: Ըստ Գ. Ջահուկյանի՝ սրանք մենագործառական են: Նա գրում է. «Ավելի լայն մեկնաբանության դեպքում բառ-մասնիկներ պետք է համարվեն նաև անորոշ դերբայի հետ գործածվող այն դիմավոր և անդեմ բայաձևերը, որոնք արտահայտում են եղանակային, կերպային և այլ իմաստներ՝ **ուզում եմ (գնալ), հարկավոր է (գնալ), սկսեց (քայլել), դադարեց (քայլել(ուց)), շարունակում է (գնալ) և այլն**»³:

³ **Ջահուկյան Գ.**, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 381:

Ընդհանրապես լեզվաբանական աղբյուրներում օրինաչափական է համարվում բառերի իմաստաբանական արժեքի երկփեղկումը՝ նաև լիիմաստ բայ և եղանակավորող բայ (բառ-մասնիկ) դրսևորմամբ, սակայն չկա մայր կամ հիմք կամ սերող խոսքի մասի և քերականության վերածվողի հստակ սահմանազատում, չկան իմաստաարժեքիոխման ընդհանուր օրինաչափություններ:

Քննության առարկա են դառնում նաև ստորոգյալի դրսևորման այնպիսի ձևեր, որոնցում **են**, **լինել** բայերի հետ հանդես են գալիս գոյականներ, ածականներ, մակբայներ, որոնք, տարբեր չափերով հեռանալով իրենց ծագումնային բառային նշանակությունից, առանձնանում են **են**-ի և **լինել**-ի հետ, մի եղանակավորող միություն և ստորոգելի ԱԴ-ի հետ բաղադրյալ ստորոգյալ են կազմում:

Եղանակավորողները գործողության բայերին բառիմաստային զանազան նրբերանգներով են օժտում՝ կամային, կարողական, ցանկական, կարելիական և այլն, որոնք իմաստային-քերականականից բացի բաղադրյալ ստորոգյալին ոճական ուրույն արժեք էլ են հաղորդում, մի տեսակ հատկանշանակային (կոննոտատիվ) իմաստ:

Քննված է նաև եղանակավորողների գործառական տարածքը՝ ժամանակագրական հստակեցմամբ:

Եղանակավորողները միանգամից և նույն ժամանակում չեն առաջացել: Կան այնպիսիները, որոնք դարերի պատմություն և վաղուց անտի մեծ մասամբ եղանանավորող դեր ու արժեք ունեն: Կան նաև այնպիսիք, որոնք նոր գոյացություններ են, այս արժեքով դեռևս կայունացած չեն, այս կամ այն հեղինակի լեզվում անգամ դիպվածային են:

Հարցի քննության ժամանակ առանձնակի ուշադրության է արժանացել նաև եղանակավորողների գործածության հաճախականությունը, որ նյութի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունի:

«Եղանակավորող + ԱԴ» կառույցի ուսումնասիրությունը նաև գործնական-կիրառական նշանակություն ունի. վեր է հանում, ներկայացնում լեզվական նորմը, ըստ այդմ նպաստում է ճիշտ խոսք կազմելուն, որն էլ այսօրվա լեզվաուսուցման սևեռուն նպատակն է:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստական նյութերը քաղել ենք ժամանակակից հայերենով գեղարվեստական գրականությունից, նաև մամուլից, բառարաններից, խոսակցական լեզվից (այս բոլորը մեր քարտարանի նյութերն են):

Քննարկումն ընդհանրապես կատարել ենք համաժամանակյա կտրվածքով, թեպետև հարկ եղած դեպքում դիմել ենք գրաբարի փաստերին, երբ անհրաժեշտություն է զգացվել ցույց տալու կառույցի տեղաշարժերը, եղանակավորողների ժամանակագրությունը, նրանց փոփոխությունները, մատնանշելու ավանդականության դերը:

Ըստ հարկի դիմել ենք նաև արևմտահայերեն փաստերի զուգադրական քննությանը:

Հայոց լեզվում բացառիկ արժեք է ներկայացնում ԱԴ-ն իր պատմական զարգացմամբ, ձևաբանական-շարահյուսական, կիրառական առանձնահատկություններով, մյուս դերբայների հետ ունեցած բառային և ձևային կապով: Նման արժեքը պայմանավորված է և՛ ԱԴ-ի էությամբ, և՛ ընդհանրապես մեր լեզվի կառուցվածքով:

ԱԴ-ն, որ հատուկ է շատ լեզուների (ինչպես օրինակ՝ դասական լատիներենին, հունարենին, ժամանակակից գերմաներենին, անգլերենին, ռուսերենին...), ցույց է տալիս մի բան անելու (գործողության) կամ լինելու (եղելության) ընդհանուր գաղափար: Նախ և առաջ ընդունված է այն բայի ելակետային ձև համարել: Սրանով, սակայն, անորոշ դերբայն իր խոսքիմասային հատկանիշներով չի հակադրվում մյուս դերբայներին ու դիմավոր ձևերին: Նման ընտրությունը պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ այն բայական համակարգում հնարավոր բոլոր փո-

փոխվող ձևերի հիմքն է, այլ այն պարզ պատճառով, որ մեր լեզվական ըմբռնմամբ ներկայանում է իբրև ուղիղ, չփոփոխվող ձև։ Միաժամանակ չպետք է մոռանալ, որ անորոշ դերբայն իբրև հիմնային ձև ընտրելը ընդունված է նաև ընդհանուր քերականագիտության մեջ, և հայերենն այս տեսակետից բացառություն չէ։ «Ժամանակակից հայերենի քերականները (և բառարանագիրները) հիմք են ընդունում անորոշ դերբայի ձևերը, որոնք, ունենալով ըղձական եղանակի առաջին դեմքի ձևերի արժանիքները, չունեն նրանց հոգեբանական թերությունը և կարող են դիտվել որպես ելակետային ձևեր»⁴։ Մյուս կողմից՝ սա նշանակում է, որ նմանատիպ ընտրությունը կարևորում է անորոշ դերբայի դերը ոչ միայն բայի կազմության ու բառական-քերականական հատկանիշների ուսումնասիրության, այլև լեզվի բոլոր բառական միավորների հարաբերակցության և այդ միավորների մեջ բայերի գրաված յուրահատուկ դիրքի բնութագրման համար։ Բայական բառույթ - անորոշ դերբայը որոշակի ու հստակ ձևով ընդգծում է նաև բայակազմության, բայաձևակազմության տարբերությունը՝ այլ խոսքի մասերի համեմատությամբ։ Որպես սկզբնաձև ընդունված անորոշ դերբայը միաժամանակ բայական բառույթի քերականական բազմազան դրսևորումներից մեկն է։ Այս դրսևորումների բարդ ցանցի մեջ առանձնացնելով բայական բառույթը մի որոշակի ձևով՝ հնարավորություն ենք ստանում քննելու բայը թե՛ բայական-բառապաշարային, թե՛ բառակազմական բնույթի և թե՛ քերականական նշանակության տեսակետից։ Ապա՝ այն կառուցվածքային տեսակետից հիմնությային դեր ունի մյուս բայաձևերի կազմության մեջ։

Որպես լեզվական երևույթ, որպես լեզվական իրողություն՝ ԱԴ-ն ունի իր նախապատմությունը։ Լեզուների տիպաբանական ուսումնասիրության նյութերը վկայում են, որ այն (ինֆինիտիվը) որ ընդհանուր նախաձև չունի, հնդեվրոպական տարբեր լեզու-

⁴ **Զահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 223:

ներում առանձին զարգացումներ է ունեցել, և որ հին լեզուներում վերջինիս կիրառության շրջանակն ավելի մեծ է, քան ժամանակակից լեզուներում: «ԱԴ» լեզվաիրողության ուսումնասիրությունն առավել հետաքրքիր է դարձնում նրա տարաբնույթ մեկնաբանումը. հայ քերականների (մեկնիչների) կողմից երբեմն դիտվել է «ընդունելություն» խոսքի մաս, երբեմն՝ «աներևույթ եղանակ»⁵, «անորոշական եղանակ» (Առաքել Սյունեցի), կամ էլ անվանվել է տարբեր կերպ՝ «դերբայ» (Հովհ. Կոստանդնուպոլսեցի⁶, Արսեն Բագրատունի), «բայանուն» (Մ. Աբեղյան), «դերբայ գոյական» (Մ. Աբեղյան), «առբայ» (Գ. Ջահուկյան), «անկախ դերբայ» (Ա. Աբրահամյան, Մ. Ասատրյան):

Անորոշ դերբայը հայոց լեզվի զարգացման ընթացքի տարբեր ժամանակահատվածներում ծանրակշիռ դեր է կատարել և կատարում է. այն կարող է մասնակցել բոլոր կարգի շարահյուսական հարաբերությունների ձևավորմանը՝ ենթակայական, ստորոգելիական, որոշչային, խնդրային, պարագայական... Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ ԱԴ-ն թե՛ գրաբարում, թե՛ միջին հայերենում խոսքի մեջ հանդես է եկել եղանակային ձևերի արժեքով, անգամ մասնակցել դրանց կազմությանը: Գ. Գևորգյանը «Անորոշ դերբայը որպես եղանակային ձևերի բաղադրիչ» հոդվածում փորձում է փաստերով հիմնավորել, որ հին հայերենյան շրջանից սկսած՝ անորոշ դերբայի և օժանդակ բայի հարադրությունն ունեցել է սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի գործառույթ: Նա գրում է. «Հայտնի է, որ գրաբարյան ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերի վերաիմաստավորման հետևանքով ստեղծվել են այդ իմաստների արտահայտման կառուցվածքային նոր կադապարներ: Այդ կազմությունների քննությունից հետևում է, որ

⁵ Որոշ լեզուներում (օր.՝ հին հունարենում և լատիներենում) այս դերբայն արտահայտում է նաև ժամանակային իմաստ. ժամանականիշ այս հատկությունն էլ հիմք է տվել այն եղանակ համարելու:

⁶ Առաջին անգամ նա է օգտագործել «դերբայ» տերմինը:

դրանք կազմվել են նախդրիվ անորոշ դերբայով և օժանդակ բայով՝ **ի գալ եմ, ի գալ ես, ի գալ է»**⁷: Միջին հայերենյան շրջանում լայն գործածություն են ունեցել անորոշ դերբայի ժխտական ձևերով կազմությունները: Ա. Այտընյանը, խոսելով «օժանդակ բայի ժխտական ձև + նախդիր և ԱԴ» կաղապարով ժխտական ներկայի մասին, գրում է. «Միջին դարերու աշխարհիկ լեզուին մէջ *ոչ* մակբայը գրեթէ իսպառ վերացած է, մինչեւ որ ԺԱ, ԺԲ դարերու մէջ երեւան կ'ելլէ նոր ձեւ բացասական մը՝ էական բայով եւ *ի* նախդրով՝ *Չէ ի հասնել...*, *չէմ ի գալ...* Յետոյ ԺԳ դարու մէջ կը գտնենք հիմնական բացասականը առանց նախդրի՝ *Չէմ վախնար, չէս նախանծիր»*⁸:

ԱԴ-ի նախաշխարհաբարյան կիրառական առանձնահատկությունները այսօր երևան են գալիս մի շարք մի շարք բարբառներում⁹: Բարբառային նման գործածություններն էլ իրենց հետքն են թողնում գրական հայերենի «ԱԴ» երևույթի վրա:

Ժամանակակից գրական հայերենում ԱԴ-ն չի մասնակցում դիմավոր ձևերի կազմությանը՝ ի հակադրություն մեր լեզվի գարգացման նախորդ փուլերի. արդի արևելահայերենում հատկան-

⁷ **Քևորգյան Գ.**, Անորոշ դերբայը որպես եղանակային ձևերի բաղադրիչ (Հալազիտություն և զուգադրական լեզվաբանություն, Գիտական աշխատություններ), Զ պրակ, Երևան, 2008, էջ 72:

⁸ **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 87:

⁹ Ըստ բարբառագիտական տվյալների՝ ԱԴ-ն ժխտական ներկայի ձևեր է կազմում Համշենի, Նոր Նախիջևանի բարբառներում (**չիմ բերիլ**), ենթադրական (պայմանական) եղանակի ժամանակաձևեր է կազմում Շամախու, Կարճևանի, Հավարիկի, Մեղրու բարբառներում՝ «ԱԴ + օժանդակ բայ» կաղապարային կառույցով (**բերիլ իմ, բերիլ հս**), հարկադրական եղանակի ձևեր՝ Արարատյան, Թբիլիսիի բարբառներում՝ «ԱԴ + օժանդակ բայ + հարկադրական իմաստ ունեցող եղանակիչ (**պարտ է, պիտոյ է, արժան է...**)» կաղապարային կառույցով, արգելական հրամայականի ձևեր՝ Արարատյան, Ղարաբաղի, Ագուլիսի, Շամախիի բարբառներում՝ «ԱԴ + մի (մէ, մա) ցուցիչ»-ով՝ **վախսլ մի, մի տանջիլ**: ԱԴ-ի և օժանդակ բայի միջոցով են կազմվում նաև հայերենի «Լ» ձյուղի բարբառների (Մարաղա, Խոյ) ներկա և անցյալ անկատար ձևերը:

շական է ԱԴ-ի անկախ գործածությունը, որը և շարահյուսական արժեքի մեջ է սահմանափակվում:

Նշանակությամբ պատկանելով բային, ելնելով յուրահատուկ իմաստից՝ ԱԴ-ն շարահյուսական բազմաբնույթ յուրահատկություններ է դրսևորում:

Ա) Ձևավորում է բայական անդեմ նախադասություն (միայնակ կամ լրացումներով): Սոռանալ, գոնե մի օրով մոռանալ կայսրին էլ, պարսից թագավորին էլ, մարդկության դասեր առնել մանկության ընկերոջից (ՊՁԱԵ, 448): Ախ, քեզ ինչպե՞ս ասել, որ քեզ հիշում եմ դեռ, Ինչպե՞ս չասել, որ դու դեռ թանկ ես ինձ համար, Ինչպե՞ս մեզ բաժանող արգելակը քանդել, Ինչպե՞ս չգալ քեզ մոտ, ինչի՞ համար (ՊՍ, 1, 144): Ճշտի համար աքսոր չկա, ստի հանդեպ ինչո՞ւ լքել (նտ, 173):

Բ) Նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալի մաս է դառնում. ավանդաբար անորոշ դերբայ պահանջող ստորոգական կառույցները բաշխվում են ըստ խնդրառու բայերի իմաստային դաշտերի (ասացական, իմացական, մտածական, զգացական, եղանակական, սկսական և այլն) կամ միադիմի բայերի իմաստային և ձևաբանական որոշ հատկանիշների: Օրինակներ՝ Եվ մի՞թե ինձ հարկավոր է մխիթարել, գովել, մանավանդ օվսանաններ կարդալ իմ ենթադրյալ մեծության մասին (ՄՍԳՆ, 344): Ես որպես շրջիկ եկա Երևան, այն վճռական որոշմամբ, որ չեմ կարող, իրավունք չունեմ, ի վիճակի չեմ մեկնել այստեղից (ՎՊՀԲԱ, 116): Հին օրերի մտերմությամբ պչրանքներ է փորձում գրել (ՎԴԱ, 16): Ու կսկսենք նորի՛ց, նո՛ր խանդով Մանուկնե՛ր ծնել, ճամփաներ քանալ, Եվ երգով, ծիրքով, գույնով գրնգալ (ՍԿԳՄՀ, 219): Ես չեմ ուզում քեզ հանդիպել, Քեզ չեմ ուզում տեսնել անգամ, Շտապում եմ ճամփաս թեքել, Երբ իմ դեմս ես ելնում հանկարծ (նտ, 122): Թո՛ւյլ տուր մի պահ նայել աչքերիդ (ՎԴԱ, 45): Ես ի գորու եմ լոկ սիրո հուրը վառել, Սակայն մարել, ավա՛ղ, անկարող եմ (նտ, 289): Չէ՛, չէ՛, արժե վախենալ շինականից և պետք է վախենալ (ՄՍԳՆ, 321): Եթե դու ուխտել ես չար-

չառել քո մարմինը, որ հոգիդ առողջանա, մաքրվի, ապա հարկ է մտածել, որ պարտավոր ես ունենալ առողջ մարմին (նտ, 367):

Գ) Հոլովումը, որ բային հատուկ քերականական կարգ չէ, ԱԴ-ի ձևաբանական հատկանիշներից է: Դեռևս հին շրջանում հայ քերականները (Գ. Ավետիքյան, Հովհ. Հոլով...) նշել են, որ ԱԴ-ն գոյականի ուժ ունի: Ժամանակակից հայերենում այն հոլովվում է՝ որոշյալ և անորոշ առումներով, միայն եզակի թվով՝ նախադասության մեջ ամենաբազմազան պաշտոններ կատարելով (միայնակ կամ դերբայական դարձված կազմած. ընդգծված են ԱԴ-երը):

ԱԴ-ն դառնում է՝

ա) Ենթակա. Ախ, ես գիտեմ՝ ապրելն այնքան Գեղեցիկ է ու ահավոր (ՎԴԱ, 27): Սխալ է ատելն, Սխալ է սիրելն, Այրվելն, Մխալն (ՊՍ, 2, 96): Պիտի չհասնեմ և այն դրության, Երբ փափուկ բանի հեշտ կտրվելն վերագրվում է թրի սրության, Լողալ չիմացող մարդու խեղդվելն՝ Լճի խորության, Ստիպողաբար կռվում հաղթելն՝ Սրտի բարության, Իր սկզբունքներին հաստատ մնալն՝ Մտքի քարության (ՊՍ, 1, 430): Հետաքրքիր ու յուրահատուկ, բայց և տարագործառությամբ (և՛ իբրև ենթակա, և՛ իբրև ուղիղ խնդիր, և՛ իբրև ստորոգելի, և՛ իբրև անդեմ նախադասության գերադաս անդամ) կարող են ընկալվել Գ. Էմինի հետևյալ տողերում ընդգծված ԱԴ-երը՝ Ջա՛ն, այս աշխարհում մի օր ծնվելն, Այս հողում թեկուզ մի օր ապրելն, Այս հողի համար թեկուզ մեռնելն, Մեռնելով այս սուրբ հողին մերվելն. Եվ սիրելն՝ ջա՛ն, Եվ խանդելն՝ ջա՛ն... (ԳԷ, 2, 207):

բ) Ստորոգելի. Եվ ի՞նչ ասել է «դուրս գալ մարդամեջ... Եվ ի՞նչ ասել է «ձանապարհի հարթել» (ՊՍ, 1, 232): Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է (նտ, 504): Ամենից դժվար բանը սիրելն է (նտ, 300): Բանը սիրելն չէ, այլ տիրելն է սիրածին (ՀՇ, 3, 267):

գ) Որոշիչ, բացահայտիչ, հատկացուցիչ. Եվ հայացքիդ տակ հավատում եմ ես Սիրուց մեռնելու առասպելներին (ՎԴ, 1, 119): Ու զարթնում է իմ մեջ նորից Տաք հողի հետ լուռ մխալու Կարո-

տը տաք (նտ, 137): Չորս կողմից եկող մորիկների մեջ հողմա-
հարվելու, Ապառաժներիդ ու լեռներիդ պես անբոց այրվելու,
Շեկ հողմերիդ հետ պատառոտվելու ու ծարավելու Այս տվայ-
տանքը, այս դժվարին կյանքը տվեցիր դու (նտ, 155): Նույնիսկ
գլխավոր նպատակը՝ Փառանձեմին խեղճացնելն ու չոքացնելը,
երկրորդական էր դարձել (ՊԶԱԵ, 41): Գիտե՞ս հիմա ո՞րն է իմ
միակ երազանքը... Հասնել դիմացի պատին... Գոնե մեկ անգամ
շոշափել... Երեսս դնել խոնավ քարերին... Չգալ մամուռի ու
բողբոջի գաղջ հոտը (նտ, 588): Մինչ սրտիս մեջ բողբոջում էր
մի ցանկություն Ե՛վ մարդկային, և՛ բնական – Ինձ հայր տեսնել և
քո գրկում տեսնել որդի (ՊՍ, 1, 51):

դ) Ուղիղ խնդիր. Երեկոյի մոտենալը ամենից շուտ տայգան է
գգում (ԳՄԾՓ, 130): Սպանվել չեմ ասում, այլ վիրավորվել
(ՍԽԱ, 424): Ես ձեր սիրով ապրելն էի ուզում (ՀՄ, 2, 30): Նա եր-
բեք չի ների իր դյուրահավատությունը, իր այդքան շուտ
հանձնվելը, այդքան շուտ պարտվելը (ՊԶԱԵ, 512): Ով էլ գա ու
դեմս ելնի, Իմանամ մեռնելս, կելնեմ (ՎԴԱ, 57): Դնում են իրենց
մեղքն ինձ վրա Եվ հետո հերքում են հերքելս... (ՀՄԴԾ, 108):

ե) Անուղղակի խնդիր. Գովերգում եմ ... Եվ այն ցավը, Որ
ծնվում է շատ սիրելուց (ՊՍ, 1, 372): Աղն էլ է ծանոթ արցունքոտ-
վելուն Ու կուրանալուն (ՊՍ, 2, 106): Թամբի ու ձիու հոտը թմրա-
դեղի պես օգնում է քնելուն (ՍԽԱ, 392): Վե՛րջ տուր ցնորքներով
սնվելուդ (նտ, 5): Սպարապետի տոհմակիցը լինելով՝ էլ ավելի
ծանրացրին իրենց մեղքը (ՊԶԱԵ, 464): Գթառատ ՏԵՐԸ Թո՛ղ
ազատի իր ազատելուց... (ՊՍ, 2, 201):

զ) Պարագա (նպատակի, պատճառի, ժամանակի, ձևի, հի-
մունքի, չափի...): Նրանք դժգոհ հեռու թռան՝ Որոնելու նոր սեր
(ՎԴ, 1, 166): Ու նա հարբել էր, բռնել ճամփաները անմեկին,
Որոնելու լույս ու շող (նտ, 394): Նրանց փշոտ ու չոր ձեռքերի
մեջ Անվերջ թալտալուց Լույսն է արցունքոտվել (նտ, 33-34):
Երևի այս նույն դողն են զգացել Իմ նախնիները Տաճար մտնե-
լուց (նտ, 362): Բայց մխալուց հոգնել եմ շատ (նտ, 346): Չէր էլ

իմացել, չէր էլ մտածել, թե ում կհանդիպեր դուռը բացելով (ՊԶԱԵ, 502): Գովերգում եմ ես այն լավը, Որ մեռնում է նրա մասին չցավելուց (ՊՍ, 1, 372): Սրինգն առավ հավաքելու ու ջրելու հոտն իր ծարավ (ՀՇ, 3, 207): Սակայն վախենում եմ, ո՛վ բարձրյալ, որ կորցնելով նրան, կկորցնեմ նաև աստվածությունդ ճանաչելու հնարը (ՄՍԳՆ, 45): Հավիտենություն, թող բիբերիդ մեջ Պատկերդ տեսնեմ.... Ու չերկնչեմ իմ չլինելուց (ՀՄԴԾ, 18):

Է) Շարահյուսական տարբեր պաշտոններ է կատարում նաև կապերի և կապական բառերի հետ հանդես գալով. Լույսը բացվելու պես մեկնում ենք Շուշի (ՍԽԱ, 39): Ամեն ինչ սակայն սիրտ ցավելու չափ ծանոթ է վաղուց (ՎԴ, 1, 191): Ծուխդ երկնքին, Մոխիրդ հողին խառնելուց առաջ Ղառնում ես կապույտ բանաստեղծություն (նտ, 257): Բայց քո գալու հետ, լո՛յս առավոտի, տեսնում եմ սակայն, Որ ցավն ու ոգին մնացել դրսում, Անբառ են լալիս (նտ, 292): Բակուրը ժլատ չէր խոսելու մեջ (ՊԶԱԵ, 436): Եվ կծելու տեղ լոկ կաղկանծում է (ՊՍ, 1, 381): Քեզ այս ձևով ունենալու-չունենալու պատճառով կորցրել եմ ունեցածըս՝ հպարտությունս հաղթողի (նտ, 273): - Այն էլ զգացի, ցավո՛վ զգացի, Որ կտրվելուց հետո է միայն երևում ծառի բուն հաստությունը (նտ, 474): - Առանց գժվելու՝ չկա՛ շահած մարտ: Առանց գժվելու՝ չեն ծնի նոր մարդ (նտ, 399): Եվ փրփուրը բերնիս ես կարող եմ վիճել, Որ բերան է տրված ո՛չ ուտելու, Այլ խոսելու՝ և համար (նտ, 292): - Բա՛րև, Մեկ հատիկ այս բառն եմ ասում՝ Կնքված անձնագիր ցույց տալու նման, Կենսագրություն պատմելու նման, Կամ հարցաթերթիկ լրացնելու պես (ՊՍ, 2, 103): Որդին ու դուստրը ծիծաղում էին նրա աղոթելու վրա (ՀՄ, 2, 81): Եվ ապրելուց մինչև մեռնելն՝ ավելի Դժվար է ուղին, քան հանձնվելը միևնույն հողին (Մ., 133): Լցվելու համար դատարկվել է պետք, Դատարկվել է պետք ավելորդ հնից (նտ, 135):

Դ) Ձևաբանական մակարդակում այն տալ բայի դիմավոր ձևերի զուգորդմամբ պատճառական բայ է կազմում, և ստացվող կապակցությունը սեռի քերականական կարգի արտահայտու-

թան վերլուծական ձև է ընկալվում: Օր.՝ Կինը մարդ կանչեց ու սափրել տվեց (ՎԴԱ, 158): Քարը, եթե հիշողություն ունես ու հիշում ես, ես տաշել տվեցի, ե՛ս... (ՀՄ, 2, 27): Թագիդ սիրտը փուշ է մտել, Բայց ես փուշը կհանեմ՝ Քավել կտամ նրանց մեղքը (ՀՇ, 3, 317):

Ե) Ուշադրության է արժանի ԱԴ-ի ևս ոճական մի արժեքը. գրաբարից սկսած՝ ԱԴ-ն, դրվելով նույն բայի եղանակային ձևի վրա, սաստկացնում է գործողության կամ եղելության իմաստը, ոճավորում այն: Ոմանց կարծիքով նման ձևերը (**ամաչելով ամաչել, ատելով ատել, սիրելով սիրել...**) արտահայտում են մեկ ընդհանուր հասկացություն, ուրեմն և նախադասության մեկ անդամ են՝ բայական բաղադրյալ ստորոգյալ, ոմանց համար այսպիսի ըմբռնումը ճիշտ չէ: Ա. Աբրահամյանը դրանք պայմանականորեն անվանում է «բայական հավելադրություն». Նա գիտի վաղուց Եվ գիտի մանկուց. Ինչի վրա ես գլուխ եմ ջարդել Եվ տառապելով տառապել սաստիկ (ՊՍ, 1, 233): Եվ սիրելով սիրում Փառանձեմին, Եվ տենչալով տենչում Փառանձեմին՝ Տոչորում էր Գնելն այն պատանյակ (ՎԴ, 32): Դեռ ինչքան պիտի ջանալով ջանամ (ՀՄԴԾ, 90): Եվ տարին բոլոր տոկալով տոկում, Քարից իմ սակավ սնունդն եմ պոկում (ՀՄԴԾ, 206): Դու մարմարվելով մարմարվիր, գնա, Ես մնալու եմ, քանի դեռ հող կա (Մ, 226):

Այսպիսով՝ ԱԴ-ն, որպես ելակետային ձև, որպես ընդհանրական իմաստ ունեցող բայական միավոր, հայերենում ունի իր սահմանումը:

Իր բառիմաստային, բառաքերականական հատկանիշներով պայմանավորված՝ այն հայերենի ամենավիճահարույց դերբայներից է, նաև՝ հայերենի ամենաբազմազան և ծավալուն կիրառություն ունեցող դերբայը: Ուրեմն՝ պարզ նկատելի է, որ ըստ էության գործ ունենք «ԱԴ» բարդ մանրահամակարգի հետ, որի միայն մի օղակի՝ բայական բաղադրյալ ստորոգյալի կազմում մեկ այլ բարդ մանրահամակարգի՝ եղանակավորողների հետ հանդես գալու հարցի քննությունն է մեր նպատակը:

«ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ +ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅ ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում լեզվաբանական աղբյուրներում կառույցը տարբեր կերպ է գնահատվել՝ ուղղորդված տարբեր սկզբունքներով (դիմավոր բայի սեռը, երկու բայերի՝ միևնույն թե տարբեր ենթակաների գործողություն լինելը, անորոշ դերբայի հոլովածևը, հոդով կան անհոդ գործածությունը և այլն):

Դասական լեզվաբանության ներկայացուցիչները հազվադեպ են անդրադարձել այս հարցին՝ այն էլ այլևայլ խնդիրների կապակցությամբ: Դեռևս 17-րդ դարում լատինատիպ ռացիոնալիստական քերականության ներկայացուցիչներից Ոսկան Երևանցին տարբերակել է «բայք ծառայականք», որոնք նշանակել են ոչ թե «իրականության (գործողությունների) շարալրացեալ», այլ ԱԴ-ով արտահայտված գործողության սկիզբը, ավարտը և այլն¹⁰: Վ. Չալըխյանն այս կառույցի ԱԴ-երը համարել է ուղիղ խնդիր: «Աներևույթի» գործողության մասին խոսելիս նշում է այն դեպքը, երբ այն անփոփոխ ձևով գործածվում է զանազան հոլովների տեղ: Ա. Այտընյանը նշանակալից չափով մանրամասնում է Չալըխյանի տեղեկությունները՝ «գոյական անհոլով աներևույթը» իբրև բայ դիտվող աներևույթից տարբերելով. առաջինը դիմավոր բայի խնդիրն է, և նրա ենթական նույնն է դիմավոր բայի ենթակայի հետ, իսկ երկրորդինը տարբեր է (հմմտ. «Կամին ի բաց գնալ» և «Աղաչեին՝ խօսել մեզ ընդ նոսա»): «Անհոլով աներևույթը» կարող է գործածվել կամ իբրև ուղղական և

¹⁰ **Զահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն (17-19-րդ դ.դ.), Երևան, 1974, էջ 86-87:

անորոշ հայցական, կամ փոխարինել զանազան հոլովներով և **ի, առ, առ ի** նախդիրներով ձևերին¹¹: Մ. Չամչյանն իր «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1779 թ.) աշխատության մեջ հանգամանորեն խոսում է նաև այն երևույթի մասին, երբ անորոշ դերբայն է հանդես գալիս որպես խնդիր, նշում «խնդրի արգելման» երևույթը՝ «խնդրոյ արգելիչ»: Ընդ որում, անորոշները դրվելով դիմավոր բայի խնդրի փոխարեն՝ իրենք էլ են ստանում իրենց սեփական խնդիրները: Նրա խոսքերից կարելի է հետևեցնել, որ ասվածը ոչ թե առհասարակ անորոշ դերբայով խնդիր առնող բայերի՝ այլ բառերով լրացում առնելու հատկությունից զրկվելու մասին է, այլ միայն այն խնդիրների, որոնք արտահայտված են անորոշ դերբայով: Այսինքն՝ ոչ թե փոխվում է բայի արժույթայնությունը, այլ խնդիրների արտահայտությունը՝ գոյականի փոխարեն գործածվում է անորոշ դերբայը: Նա գրում է. «Արդ նոքա, այսինքն՝ աներույթ բայք բազում անգամ՝ ի բազում տեղիս՝ ընդ առաջ ելեալ դիմաւոր բայի՝ արգելուն զխնդրառութիւն նորա զի ինքնին լեալ խնդիր բային՝ ինքնեանք առնուն զխնդիրն ըստ պահանջելոյ բնութեան իւրեանց և յայնժամ կոչին արգելիչ խնդրոյ զօ. Որ խոստացար տալ զփականս արքայութեան երկնից երանելոյն Պետրոսի...»¹²:

Հայոց լեզվի զարգացման ներկա շրջանում լեզվագետները համեմատաբար ավելի հաճախ են անդրադարձել այս հարցին, իսկ հատկապես վերջին տարիներին մեծ ու արդյունավետ աշխատանք է կատարվել:

Մ. Աբեղյանը, խոսքը (նախադասությունը) բնութագրելիս նշում է. «Խոսքը, ինչպես շատ լեզուների մեջ, նույնպես և հայերենում, կարելիական կամ հարկադրական բնավորություն է ստանում, երբ ըղձական եղանակի վրա ավելանում է ձևական նշանակություն ունեցող մի բառ կամ մասնիկ, որ ցույց է տալիս

¹¹ Նույն տեղում, էջ , 432:

¹² **Չամչյան Մ.**, Քերականութիւն հայկազեան լեզուի, Մոսկվա, 1859, էջ 218:

հնարավորություն կամ անհրաժեշտություն, կամ թե անորոշ դեր-բայը դրվում է լրացում այնպիսի բայերի, որոնք նշանակում են՝ կարողանալու, կարելի, հնարավոր կամ անհրաժեշտ, հարկա-վոր լինելու, անհրաժեշտորեն ստիպված լինելու գաղափար: Դրանք եղանակական կամ եղանակիչ բառեր, մասնիկներ կամ բայեր են»¹³: Ըստ նրա՝ անորոշ դերբայն իբրև բայանուն իր հոլո-վով կախված է խնդրառու բայից:

Հարցին անդրադարձել է նաև Ա. Աբրահամյանը: Նշելով ժամանակակից հայերենի բայական բաղադրյալ ստորոգյալի բազմազան իրացումների մեջ նման կառույցների առանձնա-հատկությունը՝ նա չի ընդունում այն դեպքերը, երբ ԱԴ-ն մաս է համարվում այն ժամանակ, երբ իրականում նախադասության ինքնուրույն անդամ է, ստորոգյալի լրացում, իսկ նրա մոտ դրված բայը՝ ինքնուրույն ստորոգյալ: Լեզվաբանը գրում է. «Ժա-մանակակից գրական հայերենի համար մեզ հետաքրքրող իրո-ղությունների շրջանակների սահմաններում ըստ կիրառության կարելի է ընդունել ստորոգելիական և լրացական անորոշ դեր-բայներ, առաջինը որպես ստորոգյալի կազմիչ մաս՝ կերպավո-րական կամ եղանակավորական դիմավոր բայերի մոտ (**սկսեց խոսել, կարողանում է գրել** տիպի կառույցներում), երկրորդը՝ լրացում՝ որոշ կարգի բայերով արտահայտված ստորոգյալների համար (**առաջարկում են հեռանալ, խնդրում են ասել** տիպի կա-ռույցներում)»¹⁴: Նա այս հարցում հիմնվում է նաև ռուս լեզվա-բանության տվյալների վրա և ընդունում է ըստ կիրառության ստորոգելիական և լրացական ԱԴ-եր:

Վ. Առաքելյանը նման կառույցը, արտահայտված բայական եղանակավորողով և ԱԴ-ով, անվանում է բայական բաղադրյալ ստորոգյալ: Նա գրում է. «Անորոշ դերբայը, դառնալով որևէ բայի

¹³ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 302:

¹⁴ Աբրահամյան Ա., Ժամանակակից հայերենի շարահյուսական մի քանի կա-ռույցների մասին (Դասախոսների և ասպիրանտների 32-րդ գիտական նստաշրջանի թեզիսներ), Երևան, 1977, էջ 128:

ուղղակի խնդիր, որոշ չափով թուլացնում է այդ դիմավոր բայի բառական նշանակությունը՝ խանգարելով նրա լիակատար ու ամբողջական դրսևորմանը: Այդ առաջանում է անշուշտ այն պատճառով, որ ամբողջ բուն գործողության դրսևորումն ընկնում է անորոշ դերբայի վրա, իսկ դիմավոր բայերը դառնում են մի տեսակ եղանակավորիչ բառեր, կերպավորման միջոցներ՝ արտահայտելով գործողության սկսման, մտադրման, ցանկության, նախասիրության, պարտադրման և այլ կամային, զգացումային դրսևորումներ, որոնցով կանխորոշվում է գործողությունը»¹⁵:

Գ. Զահուկյանը ստորոգյալի քննության հետ կապված մատնանշում է նաև նրա դրսևորման այն դեպքը, երբ կերպաեղանակային իմաստներն արտահայտվում են դիմավոր բայաձևերի միջոցով, իսկ բուն հատկանշաստորոգելիական իմաստն արտահայտվում է անորոշ դերբայի միջոցով. այս տիպի կապակցություններն ընկալվում են որպես մեկ միասնական ստորոգյալ և կոչվում են բարդ ստորոգյալ: Նա եզրակացնում է. «Բարդ կոչվում է պարզ կամ բաղադրյալ ստորոգյալի և անորոշ դերբայի զուգորդումը. **ուզում է գնալ, կարող է գնալ, պարտավոր է գնալ...** Այս բոլոր դեպքերում տեղի է ունենում բուն բայական հատկանիշն արտահայտող և կերպային, եղանակային ու այլ կարգի լրացուցիչ իմաստ ունեցող միավորների զուգորդումը, այլ կերպ ասած՝ հանդես է գալիս բայական քերականական կարգերի իմաստների վերլուծական-նկարագրական արտահայտության յուրահատուկ եղանակ»¹⁶:

Լեզվաբանը բայի արժույթայնության մասին խոսելիս առանձնացնում է այն երկարժույթ բայերը, որոնք բացի ենթակայից ստանում են նաև անորոշ դերբայ՝ անփոփոխ ձևով, երբեմն էլ տրական և նույնիսկ բացառական հոլովով՝ արտահայտելով

¹⁵ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Ա, Երևան, 1958, էջ 139:

¹⁶ Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 412-413:

տիպարային, կերպային և եղանակային իմաստներ՝ **աշխատել, դադարել, դանդաղել, կարողանալ, հապաղել, ճգնել, շարունակել, շտապել, որոշել, ջանալ, սկսել, վճռել, փորձել** և այլն: Ջգալի թիվ են կազմում -վ-ով բայերը, որոնք սովորաբար պահանջում են տրականով, երբեմն էլ անփոփոխ ձևով անորոշ դերբայ՝ **հարկադրվել, մտադրվել, նպատակադրվել, պատրաստվել, պարտավորվել, չարչարվել, ստիպվել (ստիպված լինել)** և այլն: «Առաջին կարգի բայերից մի քանիսը հավասարապես գործածվում են նաև համապատասխան բայանունների հետ, որոնք հանդես են գալիս որպես ուղիղ խնդիր՝ **շարունակել (գործը), որոշել (հարցը), սկսել (գործը), վճռել (գործը)**: Ընդհակառակն, կան անանցողական բայեր, որոնք սովորաբար ստանում են բայանուններ որպես ուղիղ խնդիր, բայց կարող են դրանց փոխարեն անորոշ դերբայ ստանալ՝ սովորաբար գոյականացված ձևով՝ **ը հողով՝ վերջացնել (գործը, գրելը), դադարեցնել (աշխատանքը, աշխատելը)** և այլն: Անորոշի հետ գործածվող բայերը հարաբերակից են եղանակային և կերպային իմաստ ունեցող ածականներին՝ տիպարային և կերպային տարբերությամբ՝ **պատրաստ եմ գրելու=պատրաստվում եմ գրելու, պարտավոր եմ գրել = պարտավորվում եմ գրել** և այլն: Այս տիպի ածականները պետք է դիտել որպես ստորոգական ածականներ»¹⁷:

Այսպես է մտածում նաև Ալ. Մարգարյանը. «Դա նշանակում է, որ եղանակավորող բայերի հետ հանդես եկող անորոշ դերբայը ոչ թե ուղիղ խնդիր է, ինչպես կարծում են ոմանք, այլ ստորոգյալի մաս է և այդ չափով էլ ենթակայի գործողություն է ցույց տալիս: Նույն այդ հանգամանքով պայմանավորված, բայական բաղադրյալ ստորոգյալների մեջ, մանավանդ ժողովրդախոսակցական լեզվում, հաճախ դիմավորվում և գործածվում է խոնարհված ձևով: Այսպիսի դեպքերում անորոշի ոչ թե ուղիղ խնդիր, այլ ստորոգյալի մաս լինելը հավաստվում է նաև նրա-

¹⁷ **Զահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 472-473:

նով, որ եղանակավորիչ բայերի մեջ կան այնպիսիները, ինչպես՝ **կարողանալ, կարենալ, ձգնել, պատրաստվել, համարձակվել** և այլն, որոնք չեզոք սեռի բայեր են: Ուրեմն՝ ինչպես համադրական, այնպես էլ հարադրավոր բայերի անորոշ ձևերը եղանակավորիչ բայերի հետ հավասարապես բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում»¹⁸:

Է. Մկրտչյանը և Թ. Շահվերդյանը ևս նման կապակցությունները (որոշ վերապահությամբ) բայական բաղադրյալ ստորոգյալ են համարում:

Հարցին հանգամանորեն անդրադարձել է Հ. Հարությունյանը: Նա, որպես ներխուժիմասային առանձին խումբ, առանձնացնում է անցողական և տարբեր սեռերի այն բայերը, որոնք հայտնի են «եղանակավորիչ», «կերպավորիչ» անունով և ի տարբերություն մյուս բայերի՝ առնում են նաև ԱԴ-ով լրացում: Նաև այն միտքն է հայտնում, որ եթե եղանակիչն ու ԱԴ-ն համարվում են նախադասության մեկ անդամ, ապա կապակցման եղանակի մասին խոսք լինել չի կարող: Լեզվաբանը պնդում է, որ ոչ ճիշտ է ընդունված երևույթի գնահատման ու արժեքավորման ելակետը, և հաշվի չի առնվում պատճառահետևանքային կապը: Ինչո՞ւ միայն որոշ բայերին է հատուկ այս երևույթը, ո՞րն է պատճառը, կապակցման շարահյուսական ի՞նչ կապ է սա: Լեզվաբանն այն կարծիքին է, որ ներխուժիմասային իմաստն է պատճառը, որ որոշ բայեր ԱԴ-ով լրացում են պահանջում: Այս ներխուժիմասային իմաստը կոչում է «կերպավորման, եղանակավորման» և առանձին խմբերի է բաժանում: Ի վերջո եզրակացնում է՝ թեկուզ դրանք դիտվեն բարդ կամ բաղադրյալ ստորոգյալ, միևնույն է, շարահյուսորեն վերլուծելի են, և պետք է պարզել դրանց կապակցման եղանակը: Վերջինս կարևոր է, բայց այդ մասին քիչ են խոսել: Սրա պատճառն այն է, որ համարել են նախադասության մեկ անդամ, հետևաբար կապակցման եղանակի մասին չպետք

¹⁸ Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966. էջ 249:

է խոսվեր: Ուրեմն՝ «**Բայ + անորոշ դերբայ** կառույցները մենք համարում ենք շարահյուսորեն վերլուծելի. այն կազմված է երկու շարահյուսությունների կապակցությունից, շարահյուսություններն ունեն տարբեր դեր ու արժեք, քերականական տարբեր ձևավորում, մեկը գերադաս է, մյուսը՝ ստորադաս, և անկախ գերադաս բայի սեռից, դիմավորությունից, ստորադասի (անորոշի) հոլովական ձևավորումից, առումից, երկու բայերի՝ նույն թե տարբեր ենթակաների գործողությունը լինելուց **բայ + անորոշ դերբայ** կառույցներում, իբրև կապակցության եղանակ, բավական հստակորեն գործում է կառավարումը՝ գերադաս բայի խոսքիմասային իմաստի պահանջով (կերպավորման, եղանակավորման), առանձին դեպքերում նաև սեռի պահանջով է դրվում անորոշ դերբայը: Պատահական չէ, որ այդ բայերն առնում են նաև գոյականով արտահայտված լրացում, որն էլ սովորաբար դրվում է նույն հոլովով, ինչ անորոշ դերբայը»¹⁹: Ըստ Հ. Հարությունյանի՝ Չամչյանի կողմից ժամանակին նկատված «խնդրի արգելման» երևույթը նկատելի է նաև ժամանակակից հայերենում: Նա բերում է **խուսափել** բայի օրինակը. եթե այս բայն առնում է բացառականով անորոշ դերբայ, ապա գոյականով արտահայտված խնդիրը այլևս չի գործածվում: Կամ՝ **խոստանալ** բայն առնում է ուղղականով սեռի խնդիր, սակայն եթե սեռի խնդիր է դառնում անորոշ դերբայը, ապա բայը գոյականով սեռի լրացում այլևս չի առնում (**աշակերտին խոստացավ բացատրել**): Նա առաջնային է համարում բաղադրիչների կապակցման եղանակը և «Բայ + խնդիր + անորոշ» մասնակաղապարի մասին գրում է. «Կառավարող գերադաս բայը երկարժույթ է (կամ բազմարժույթ), ունի և՛ գոյականով, և՛ անորոշ դերբայով արտահայտված լրացումներ (երեխային հրամայեց գրել, ընկերոջը առաջարկեց գնալ): Այս դեպքում արդեն որոշակիորեն գործում է շարահյուսական այն

¹⁹ Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 196:

երևույթը, որ Մ. Չամչյանը կոչում է խնդրի արգելում, այսինքն՝ կառավարող գերադաս բայը այլևս չի առնում այն լրացումը, որի դերը կատարում է անորոշ դերբայը. եթե բայն անցողական է, և անորոշ դերբայը անցողականության ուղիղ խնդիրն է, ապա գոյականով արտահայտվող ուղիղ խնդիրն «արգելվում է»՝ **ուսանողին գիրք խոստանալ և ուսանողին խոստանալ գնալ**»²⁰: Նման մեկնաբանությունը թերի է: Եթե ասում ենք՝ **խոստացավ գիրք**, բնականաբար այստեղ հասկանում են՝ **խոստացավ գիրք տալ, նվիրել, հանձնել, բերել**, այսինքն՝ **խոստանալ**-ի մեջ ներակայված է ԱԴ-ի իմաստը: Կարծում ենք՝ հստակեցման կարիք ունի նաև «խնդրի արգելակում» արտահայտությունը. խնդիրն արգելել նշանակում է կամ ընդհանրապես խնդրի չառնել, այսինքն՝ խնդրառական կապակցման մասին խոսք չպետք է լինի, կամ որևէ խնդրի փոխարինում մեկ այլ տեսակի խնդրով: Կարծում ենք, որ լեզվաբանը որոշ ծայրահեղության է հասնում՝ կառավարում տեսնելով ամեն տեղ, չնայած ըստ նրա բացառականով կամ տրականով առնվելու փոխարեն ուղղականով առնվելու դեպքում «փաստորեն գործում է կառավարումը, բայց ոչ ամբողջական արտահայտությամբ, այլ մասնակիորեն, այսինքն՝ կառավարող բայը կերպավորման, եղանակավորման իմաստով պայմանավորված առնում է անորոշով լրացում, բայց նրա քերականական ձևավորումը չի պայմանավորվում գերադաս բայի պահանջով, որն էլ կառավարման մասնակի արտահայտություն է»²¹: Իրոք, այստեղ բաղադրիչների միջև կապակցման խնդրառական եղանակն է, եթե կառույցը տարրալուծում ենք. բարդ բառերն էլ, հարադրություններն էլ ուսումնասիրելիս տարրալուծում ենք, կապակցման եղանակներ նշում, խնդրառական տարբերակներ տեսնում, սակայն երբ կառույցը հասնում է անտարրալուծելիության աստիճանի՝ նախադասության մեկ անդամ դիտ-

²⁰ Հարությունյան Հ., նշվ., աշխ., էջ 201:

²¹ Հարությունյան Հ., նշվ., աշխ., էջ 207:

վում, ապա վերանում ենք կապակցման եղանակի մասին խոսելուց. կառավարման տիրույթը գրոյանում է: Մյուս կողմից՝ ինչպես բացատրել կապակցական այն երևույթը, երբ անորոշ դերբայի ձևը պայմանավորված չէ գերադաս բայի պահանջով, որ կառավարման էությունն է: Դա լեզվում մշտապես գործող մի օրինաչափության արտահայտություն է, այն է՝ միօրինակության ձգտման, նմանակության. քանի որ ուղղականով անորոշ դերբայ առնող բայերի քանակը ավելի շատ է, ուստի նմանակությամբ ոչ ուղղականով լրացում առնող բայերի անորոշով լրացումն էլ առնվում է ուղղականի ձևով: Նաև թարգմանական գրականության ազդեցությունն է. օրինակ՝ ռուսերենում անորոշ դերբայը չի հոլովվում, բնականաբար մեքենայական թարգմանության դեպքում դրանք հենց ուղիղ ձևերով էլ մտնում են հայերենի մեջ: Ի միջի այլոց, այս կառույցի տարբերակային ձևերի առաջացման հարցում Հ. Հարությունյանը ժխտում է գրաբարի ազդեցությունը. այն փաստորեն բացառվում է, քանի որ ուղղականաձև լրացումներն ավելի շատ տարածված են ժողովրդախոսակցական լեզվում, ուր գրաբարի ազդեցությունը բացառվում է, իսկ ժողովրդախոսական լեզվում, նրա ազդեցությամբ և գեղարվեստական լեզվում անորոշ դերբայի փոխարեն առնվում է նաև խոնարհված բայ, մանավանդ եթե երկու բայերի գործողությունները վերաբերում են նույն ենթակային, և այդ ձևը իրականում հանդես է գալիս որպես շարահարությամբ կապված ստորադաս նախադասություն:

Հ. Հարությունյանի տեսակետը տարբերվում է մյուսներից ամենից առաջ նրանով, որ եթե մնացածները կա՛մ ընդգծում են, կա՛մ հաստատում նյութական իմաստ ունեցող բայերի եղանակավորական վերաիմաստավորումը, այսպես ասած՝ «քերականացումը» (կա՛մ էլ ընդհանրապես չեն անդրադառնում այս հարցին), ապա նա չի ընդունում դիմավոր բայերի վերաիմաստավորումը՝ կերպավորման, եղանակավորման նշանակությամբ: Նրա կարծիքով այս կառույցներում դիմավոր բայն իր բառարանային

նշանակությամբ է գործածվում. «այստեղ նկատելի է երևույթի գնահատման ու արժեքավորման ելակետի ոչ ճիշտ ընտրություն, պատճառի ու հետևանքի ոչ հստակ հաշվառում», և լեզվաբանը հարցի վերաբերյալ հարցերի մի խումբ է առաջ քաշում: Նա Վ. Առաքելյանի տեսակետը հիմնականում ճիշտ է համարում, սակայն նշում է վերջինիս վիճելի կողմը մի քանի կետերով: Ըստ նրա՝ նախքան անորոշ դերբայով լրացում ստանալը «լիակատար իմաստ» ունեցող դիմավոր բայի բառական նշանակության թուլացման պատճառը անորոշ դերբայը չէ. «...Սակայն իրականում անորոշ դերբայով լրացում առնելը հետևանք է այն բանի, որ նման բայերը ցույց տված գործողության բնույթով կազմում են ներխուսքիմասային առանձին խումբ, և այս ներխուսքիմասային իմաստն է պատճառը, որ պահանջում են անորոշ դերբայ լրացում: Այդ ներխուսքիմասային իմաստը կոչվում է կերպավորման, եղանակավորման՝ բաժանվելով առանձին ենթախմբերի՝ «գործողության սկսման, մտադրման, ցանկության, նախասիրության, պարտադրման» և այլն: Եթե այդպես չլիներ, ապա տեսականորեն հնարավոր պիտի լիներ, որ բայերը առնեին անորոշ դերբայով լրացում: Դիմավոր բայը նման կառույցներում գործածվում է իր սովորական բառարանային իմաստով»²²: Իր ասածը հիմնավորելու համար այսպիսի հետևության է հանգում՝ «բ. Եթե դիմավոր բայը դառնար մի տեսակ կերպավորիչ, եղանակավորիչ այս կապակցություններում, և նրա բառական իմաստը նշանակություն չունենար անորոշ դերբայով լրացում առնելու հարցում, ապա նրան հավելված անորոշ դերբայները պետք է դրվեին նույն հոլովաձևով՝ պայմանավորված բայերի հենց այս առանձնահատկությամբ, ընդհանրությամբ, այսինքն՝ դիմավոր բայի բառական իմաստը որևէ նշանակություն չպետք է ունենար անորոշ դերբայի հոլովական ձևավորման հարցում: Այնինչ իրականում այդպես չէ. համեմատենք՝ սիրում է

²² Հարությունյան Հ., նշվ., աշխ., էջ 190-191:

գրել, պատրաստվեց գրելու, խուսափեց գրելուց: Ընդ որում նկատելի է որոշակի օրինաչափություն, համապատասխանություն անորոշ դերբայի և նույն դերով գործածված գոյականի հոլովական ձևավորման հարցում. **սիրում է գրել և սիրում է գիրք, պատրաստվեց խոսելու և պատրաստվեց ելույթի, խուսափեց խոսելուց և խուսափեց ելույթից»:** գ. Եթե իսկապես անորոշ դերբայը թուլացներ դիմավոր բայի բառական նշանակությունը, և վերջինս դառնար սոսկ կերպավորիչ, եղանակավորիչ, ապա, բնականաբար պետք է զրկվեր բառական իմաստի պահանջի այնպիսի հատկությունից, ինչպիսին այլ լրացումներն առնելն է: Բայց սովորական է, երբ անորոշ դերբայով լրացում ունեցող բայը մյուս կողմից պահանջում է գոյականով արտահայտված այլ լրացումներ...դ. Անորոշ դերբայով խնդիր (լրացում) պահանջող բայերը կարող են գործածվել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ ձևով, հետևաբար բացառվում է կառույցը բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ կոչելու հանգամանքը, և այս երևույթին ուշադրություն է դարձրել Վ. Քոսյանը»²³: Լեզվաբանի համար հետաքրքրական է նաև այն, որ **բայ + անորոշ դերբայ** կառույցը բաղադրյալ ստորոգյալ համարող լեզվաբանները բաղադրիչների անվանդական անվանումներից՝ ստորոգելիական վերադիր և հանգույց, խուսափում են: Կարծում ենք՝ լեզվաբանի համար հետաքրքրական այս իրողությունը մի պատասխան ունի՝ եղանակիչ բայերը իմաստագուրկ՝ վերացական բայեր չեն, անորոշ դերբայով արտահայտվածի քերականական վերագրում կատարում են (այս դերով ավելի շատ նմանվում են նաև **եմ** և **լինել** օժանդակ բայերին), բայց նաև ունեն կերպավորիչ, եղանակավորիչ իմաստ, և այս կառույցի բաղադրիչները համապատասխանաբար վերադիր և հանգույց անվանելը ընդունված չէ, ահա թե ինչու այն անվանում են բայական բաղադրյալ ստորոգյալ, բարդ ստորոգյալ (անվանաբայական ստորոգյալ եզրույթակա-

²³ Հարությունյան Հ., նշվ., աշխ., էջ 191-193:

պակցություն ճիշտ կլինի այն լեզվաբանների համար, ովքեր Մ. Աբեղյանին հետևելով՝ անորոշ դերբայը համարում են գոյական և իբրև բայանուն զետեղում են գոյականների շարքում որպես «դերբայ գոյական» կամ «բայանուն»):

Հ. Հարությունյանը նշում է, որ **բայ + անորոշ դերբայ** կառույցում անորոշ դերբայը դրվում է «դիմավոր բայի» պահանջով՝ սեռի, ներխոսքիմասային իմաստի, և դրանք պետք է գնահատվեն նույն չափանիշներով, ինչպես գոյականով ստորադաս լրացում ունեցող կառույցները, մյուս կողմից չպետք է անտեսել **դերբայ + անորոշ դերբայ** կառույցը, որում լրացական այս հատկանիշը բայի դիմավորությամբ պայմանավորված չէ: Ի վերջո եզրակացնում է, որ **բայ + անորոշ դերբայ** կառույցը շարահյուսորեն վերլուծելի է, կազմված է երկու շարահյուսությունների կապակցությունից, և իբրև կապակցության եղանակ՝ բավականին հստակորեն գործում է կառավարումը՝ գերադաս բայի ներխոսքիմասային իմաստի պահանջով (կերպավորման, եղանակավորման), առանձին դեպքերում նաև սեռի պահանջով է դրվում անորոշ դերբայը: Նա նպատակահարմար է գտնում նման բայերի ընդհանուր իմաստից ելնելով դրանք կոչել եղանակավորիչ, կերպավորիչ՝ նկատի ունենալով նրանց արտահայտչական արժեքը, և **բայ + անորոշ դերբայ** կառույցների վերլուծական նկարագրությունը կատարում է ըստ կառավարվող անորոշ դերբայի հոլովական ձևավորման, որը հիշյալ կառույցների տարբերակիչ հատկանիշն է: Հաշվի առնելով կառավարվող անորոշ դերբայի հոլովական ձևավորումը՝ առանձնացնում է **բայ + անորոշ դերբայ** կառույցի հետևյալ մասնակաղապարները՝ **բայ + անորոշ դերբայի ուղղական մասնակաղապար**, **բայ + անորոշ դերբայի տրականով մասնակաղապար**, **բայ + անորոշ դերբայի բացառականով մասնակաղապար**, **բայ + անորոշ դերբայի ներգոյական մասնակաղապար**:

Մեր համոզմամբ՝ բայերի մի խումբ ի սկզբանե հենց իր ներխոսքիմասային իմաստով պայմանավորված, պահանջում է

անորոշ դերբայով լրացում (**ուզել, ցանկանալ, կամենալ...**), սակայն փաստն այն է, որ նման նշանակությամբ անորոշ դերբայի հետ կառավարմամբ զուգակցվող շատ դիմավոր բայեր աստիճանաբար ձեռք են բերում կամ կորցնում են այդ նույն իմաստը: Եթե անորոշ դերբայը այդպիսիների կողքին ուղիղ ձևով է, կարծես խնդիր չի առաջանում, բայց երբ պահանջում է թեք հոլովներով անորոշ դերբայ, ապա պետք է կասկածել, որ դրանք իրենց բառարանային նշանակությամբ են անորոշ դերբայի ուղիղ ձևեր պահանջում: Կարծում ենք, որ այս դեպքում սերող կաղապարը կազմվում է անորոշ դերբայի ուղիղ ձևով, և այս կաղապարի համաբանությամբ ստեղծվում են նորերը, չէ՞ որ, ինչպես իրավացիորեն գրում է Ն. Պառնասյանը, «Մարդը որոնում է նորանոր միջոցներ՝ իրականության առարկաների, երևույթների հարաբերությունը ավելի ճշգրիտ դրսևորելու համար: Դրա հետ կապված առաջանում են նորանոր ձևեր ու փոփոխություններ նաև լեզվական կառուցվածքի, հատկապես շարահյուսության մեջ»²⁴: Մեր լեզվի զարգացման միտումներից մեկը որոշ բայերի կերպավորիչ, եղանակավորիչ իմաստ ձեռք բերելն է, որի անժխտելի ապացույցն են խոսքիմասային տեղաշարժերը՝ տարարժեքային դրսևորումները, նրանց փոխանցումը հատկապես վերաբերականների դաշտը (**կարծես, ասես, բեր, արի, թող, տես** և այլն): Այս միտմամբ պայմանավորված՝ նման կապակցությունների զարգացման միտումը հենց այն է՝ եղանակիչ բայերին կամ այդպես ընկալվող բայերին հավելված անորոշ դերբայները միտում են ուղղականաձև դրվելու՝ պայմանավորված բայերի հենց այն առանձնահատկությամբ, այսինքն՝ դիմավոր բայի բառական իմաստը ազդեցություն չունի անորոշ դերբայի հոլովական ձևավորման հարցում, իսկ եղանակավորող իմաստն ունի, քանի որ այդ իմաստով բայը քերականանում է:

²⁴ **Պառնասյան Ն.**, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան, 1979, էջ 7:

Ս. Գյուլբուդադյանը կառույցի բաղադրիչները շարահյուսորեն արժեքավորելիս հիմնվում է դիմավոր բայի սեռի վրա՝ նշելով, որ ներգործական սեռի բայերի հետ զուգորդված ԱԴ-ն ուղիղ խնդիր է, իսկ մյուս բայերի հետ՝ բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ:

Ս. Ասատրյանը, անդրադառնալով «դիմավոր բայ + ԱԴ» կառույցի՝ ըստ նախադասության անդամների գնահատման հարցին, չի ընդունում այն որպես բաղադրյալ ստորոգյալ (Գ. Ջահուկյան, Ս. Աբրահամյան) և զարգացնում է այն դրույթը, որ դիմավոր բայի և ԱԴ-ի կապակցությունները շարահյուսորեն վերլուծելի են, հետևաբար չեն կարող դիտարկվել որպես մի միասնական ստորոգյալ, թեկուզև բաղադրյալ (Ռ. Իշխանյան, Հ. Հարությունյան): Նա եզրակացնում է՝ այս տիպի կառույցներում անցողական բայերից կախված ԱԴ-ն ուղիղ խնդիր է, իսկ անանցողական բայերից կախվածը՝ անուղղակի խնդիր:

Ռ. Իշխանյանն էլ ԱԴ-ն մնան բայերի համար լրացում է համարում, իսկ կառույցը՝ շարահյուսորեն վերլուծելի և ստորադասական կապակցությամբ: Նա կառույցի բաղադրիչներն արժեքավորելիս միասնական չափանիշով է ուղղորդվում՝ ԱԴ-ն լրացում է. վերլուծելիս հիմնվում է բայի սեռի վրա. ներգործական սեռի բայերի համար ԱԴ-ն դիտում է ուղիղ խնդիր, ոչ ներգործականների համար՝ անուղղակի, իսկ երբ անորոշն առնվում է ուղիղ ձևով՝ անորոշական կամ անորոշ խնդիր:

Հետաքրքրական է Վ. Քոսյանի տեսակետը. «Ավելի հաճախ անորոշ դերբայը հայցականաձև բաղադրիչ է դառնում մի շարք ներգործական բայերի հետ կապակցվելով, և ստացվում է մի բառակապակցություն, որտեղ բաղադրիչներն այլևս ինքնուրույն շարահյուսական միավոր չեն, այլ միասնական մի ամբողջություն, որը նախադասության մեջ հանդես է գալիս իբրև մեկ անդամ: Այսպես՝ **ուզում է մեռնել, փորձեց աշխատել** այլևս սովորական բառակապակցություններ չեն... Այսպիսի կառուցվածքը ավելի շատ բառակապակցությունից նախադասության անդամ,

ապա և ձևաբանական միավոր անցնող շղթայի մի օղակն է (առաջին աստիճանը): Սակայն պետք է նշել, որ մի շարք բայերի մոտ անորոշ դերբայը հայցականաձև չի լինում, և տվյալ բայի մոտ անորոշ դերբայն այլևս բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ չէ, այլ ինքնուրույն խնդիր: Այսպես՝ գործածվում են մի կողմից՝ **շտապեց կարծիք հայտնել** և մյուս կողմից՝ **շտապեց կարծիք հայտնելու, ձգտում է բարձր արդյունքների հասնել** և **ձգտում է բարձր արդյունքների հասնելու**: Երկրորդ դեպքում դրսևորվում է բայական բառակապակցություն, որտեղ լրացյալ բայը հանդես է գալիս իր խնդրառական հատկությամբ (մինչդեռ առաջին տեսակի կառուցվածքումայն խնդրառական հատկություն չունի, կամ ինչպես հին քերականներից ոմանք էին ասում՝ խնդիրն արգելվել է): Պետք է նշել, որ բայական ստորոգյալ (կամ նրան համարժեք կառուցվածք) կազմող գլխավոր բաղադրիչ լինում են հիմնականում ներգործական և չեզոք մի շարք բայեր: Այս իմաստով էլ մերժելի է կրավորական բայերի մոտ անորոշ դերբայի հայցականաձև բաղադրիչի գործածությունը: Օրինակ՝ **Սրահն սկսվեց դատարկվել**»²⁵: Վ. Քոսյանը անորոշ դերբայով արտահայտված իմաստները գերազանցապես խնդրային է համարում, սակայն վերլուծությունների ընթացքում **դիմավոր բայ + անորոշ դերբայ** կառույցները դիտում է բայական բաղադրյալ ստորոգյալ՝ դրանցից առանձնացնելով այն կառույցները, որոնցում անորոշ դերբայը գործածվում է տրական, բացառական, գործիական հոլովներով՝ դրանք համարելով «ինքնուրույն խնդիր»: Վ. Քոսյանն այն եզակիներից է, ով այսպիսի կառուցվածքը բառակապակցությունից նախադասության անդամ, ապա և ձևաբանական միավոր անցնող շղթայի մի օղակը կամ առաջին աստիճանն է համարում, նաև առանձնացնում է այն եղանակիչները, որոնք միան անորոշ դերբայով լրացում են պահանջում. գրաբա-

²⁵ Քոսյան Վ., ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 461-462:

րում այդպիսիք խիստ սակավաթիվ էին՝ **կարեն, ջանամ, սկսանիմ**: Հատուկ ուշադրություն է դարձնում անորոշ դերբայի անփոփոխ ձևով լրացում ստացող բայերի վրա: Ըստ նրա՝ դիմավոր բայի մոտ անորոշ դերբայի անփոփոխ ձևը երեք տիպի կապացություն է ստեղծում՝ բայական բաղադրյալ ստորոգյալի կառույց, **բայ+ խնդիր** կառույց, **բայ + պարագա** կառույց: Առաջին տիպի մասին գրում է. «Բայական բաղադրյալ ստորոգյալը սովորաբար կազմվում է երանգավորիչ բայի դիմավոր ձևով և անորոշ դերբայով: Երանգավորիչ իմաստ ունեցող բայերը սակավաթիվ են: Գրաբարում այդ դերն ունեին **աճապարիմ, իշխեմ, խրոխտամ, կամիմ, կարեմ, հաճիմ, հանդուրժեմ, մարթեմ, յոժարեմ, պարտիմ, ջանալ, սկսանիմ, սպառնալ, փութալ** և այլն... Մեծ մասամբ երանգավորիչ բայերը կարող են լրացումներ ստանալ նաև թեք հոլովաձևերով, նախդրավոր ու նախադրությամբ կառույցներով... Կան մի շարք բայեր, որոնք երանգավորիչ իմաստով գործածվում են քիչ դեպքերում, ինչպես՝ **ակնկալեմ, դադարեմ, դանդաղեմ, երկնչիմ, խորհիմ, ձեռնարկեմ, յանձն առնուլ, յուսալ, խորամանկեմ, կարգեմ, հաւանիմ, ճեպեմ, յաւելուլ, յապաղեմ, ցանկանալ** և այլն»²⁶: Ժամանակակից հայերենի համար Վ. Քոսյանը գրում է. «Ինչպես միջին հայերենում, այնպես էլ արևելահայերենում և արևմտահայերենում պահպանվում են դիմավոր բայի անփոփոխ ձևի կապակցությունների նշված երեք կառույցներն էլ, այն է՝ բայական բաղադրյալ ստորոգյալի կառույցը, բայ + խնդիր, բայ + պարագա կառույցները: Արևելահայերենում բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում երանգավորիչ իմաստ ունեցող բայերը, ինչպես՝ **աշխատել, կամենալ, կարողանալ, համարձակվել, ձգտել, ճգնել, ջանալ, ստիպել, փորձել, սկսել, ցանկանալ** և այլն: ... Ժամանակակից հայերենում նույնպես անորոշ դերբայը դիմավոր բայի մոտ կարող է խնդիր

²⁶ **Քոսյան Վ.**, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Երևան, 1990, էջ.149:

դառնալ: Օրինակներ արևելահայերենից՝ Նրանք տարիներ շարունակ սովորել էին տեսնել նրա մռայլ դեմքը (ՎԱԱ, 143): Մի համոզիր ինձ անհնազանդ լինել (ՊԶԱԵ, 107): Վասակը խուսափում էր արքային հանդիպել (ն. տ., 209): ...Սակավ դեպքերում դիմավոր բայի մոտ անորոշ դերբայը դրվում է նաև պարագա: Օրինակներ արևելահայերենից՝ Նա մղվեց համբուրել նրան (ՍԽՄՍ, 38): Հայրենաբաղձությունը նրան մղում էր պատմել հայրենիքի մասին (Բակ. 623): Մի կարծեք, թե ես պատրաստվում եմ պատմություններ անել պատերազմից (ՌԱԱԱ, 10)»²⁷: Տեսականորեն Վ. Քոսյանի արտահայտած տեսակետները գիտական են և ընդունելի, սակայն բերված նախադասություններում հետաքրքրող կառույցները գործառական առումով ասվածը չեն հաստատում: Խիստ կասկածելի են պարագայական կիրառությունները. այսօրվա նորմի տեսակետից **մղվել** բայի կողքին ճիշտ չեն ուղիղ ձևերը: Այստեղ նաև ժամանակի գործոնը կա:

Վ. Քոսյանը ուշադրություն է դարձրել նաև այն երևույթին, որ անորոշ դերբայ պահանջող բայերը կարող են գործածվել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ ձևով. այս դեպքում, իհարկե, բացառվում է կառույցը բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ կոչելու հանգամանքը:

Ըստ էության նույնպիսի շարահյուսական կիրառությամբ ԱԴ-ն հանդես է գալիս նաև այն դեպքում, երբ գործածվում է **պետք է, պիտի, հարկ է, կարելի է, անկարելի է, անհրաժեշտ է, հնարավոր է, անհնար է** և այլ նման նշանակություններ արտահայտող միավորների հետ: Հայ լեզվաբանության մեջ կառույցի առաջին՝ եղանակավորող մասն անվանվել է **միադիմի բայ, դիմագուրկ բայ, անդեմ նախադասության արժեք ունեցող միավոր**: Ահա թե ինչ է գրում Ա. Այտընյանը. «Միադիմի կամ Դիմագուրկ կ'ըսուին այն բայերն որոնց միայն եզակի երրորդ դեմքը կը գործածուի (անոր համար ալ կը կոչուին Միադիմի) և որոնք գործքին ընողն

²⁷ Քոսյան Վ., նշվ., աշխ., էջ 151-152:

ու ըլլողը չեն ցուցրներ (այս պատճառաւ Դիմագուրկ ալ կը կոչուին)»²⁸: Նա բուն միադիմի բայեր է համարում **պետք է, հարկ է, արժան է, հնար է, մեղք է, կը վայելէ, հերիք է, լավ է, ամոթ է, անկ է** և եզրակացնում է. «Հայերէն լեզուն հազիւ մեկ երկու հատ ունի բուն միադիմի կամ դիմագուրկ բայ: Կրնան շատ այլեայլ բայեր իբրեւ հասարակ դիմավոր բայ անուիլ: - **Ամօք է, պետք է, մեղք է**, այնպէս են՝ ինչպէս այլեայլ գոյականներով ըսէիր՝ **պարծանք է, պատիւ է, թշնամանք է** եւ այլն»²⁹:

Գ. Զահուկյանը **հարկավոր է գնալ, անհրաժեշտ է ասել, պետք է գնալ** կառույցները համարում է «անդեմ (միադեմ) կապակցութիւններ», առաջին մասում տեսնում է «կերպային, եղանակային և այլ կարգի լրացուցիչ իմաստ» և դրանց անդրադառնում է «Բարդ ստորոգյալ» վերնագրի տակ, այսինքն՝ նույնպէս համարում է բարդ ստորոգյալ՝ նշելով, որ այն կազմված է բաղադրյալ ստորոգյալի և անորոշ դերբայի զուգորդմամբ: Խոսելով միակազմ նախադասութիւնների, նրանց արտահայտած իմաստների մասին՝ լեզվաբանը գրում է, որ դրանց մի տեսակը պետք է համարել «եղանակիչ բայ + ԱԴ» կապակցութիւններով նախադասութիւնները. «...Եղանակային, հատկանշանային իմաստների այսպիսի տարբերակում առկա է նաև **հարկավոր է գրել, անհրաժեշտ է ասել, պետք է նշել** տիպի անդեմ (միադեմի) կապակցութիւնների դեպքում՝ այն տարբերությամբ, որ առաջին դեպքում ենթական դիտվում է որպէս ակտիվ կողմ, երկրորդ դեպքում՝ որպէս պասիվ կողմ (հմմտ. «Ես ուզում եմ գնալ» և «Ինձ հարկավոր է գնալ»), թեև հնարավոր են արտահայտության հակառակ ձևերը ևս (հմմտ. «Ես պարտավոր եմ գնալ»)»³⁰:

²⁸ Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 80:

²⁹ Այտընյան Ա., նշվ., աշխ., 81:

³⁰ Զահուկյան Գ., Սղայան Է. Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, պրակ Ա, Երևան, 1980, էջ 413:

Գ. Ջահուկյանը վերաբերողական-եղանակային բառերի ու բառախմբերի գործածության մեջ տարբերակում է անդեմ նախադասությունների արժեք ունեցող այնպիսի միադիմի ձևեր, ինչպիսիք են՝ **հասկանալի է, հաճելի է, ցանկալի է, ճիշտ է** և այլն: Հիշյալ միադիմի ձևերին ուղեկցում է ԱԴ-ն: «Բացի սրանից,- շարունակում է լեզվաբանը,- ոմանք անենթակա նախադասությունների շարքն են դասում նաև անորոշ դերբայով արտահայտված նախադասությունները. սակայն բուն «անենթակա» նախադասությունների շարքը կարելի է դասել միայն այն նախադասությունները, որոնց անորոշ դերբայն ուղեկցվում է դիմավոր ձևով («Քաղցր է հիշել», «Հարկավոր է պատմել» և այլն), բայ որ անորոշ դերբայով արտահայտված հրամայական, բացականչական նախադասությունները...»³¹: Մնում է եզրակացնել, որ լեզվաբանը չի տարրալուծում կառույցը: Գ. Ջահուկյանը հիշյալ կառույցի փոխակերպման արդյունք է համարում բայական անդեմ (անորոշական) նախադասությունները, որոնցում այն ստորոգական միավորի է վերածվում (հմմտ. Չի կարելի ծխել- Չծխել, Չի կարելի գնալ - Չգնալ, Հարկավոր է դուրս գրել - Դուրս գրել³²:

Այսպիսին չէ Մ. Աբեղյանի կարծիքը: Նա կառույցը համարում է շարահյուսորեն վերլուծելի, ԱԴ-ն դիտում է ենթակա, իսկ **պետք է, անհրաժեշտ է, հարկավոր է, քիչ է, լավ է** և այլն՝ ստորոգյալ: Չմոռանանք նշել, որ լեզվաբանը կառույցը շարահյուսական տեսակետից է առանձին դիտում, իսկ քերականորեն համարում է մեկ միավոր՝ սահմանական խոսք: Ահա՝ «Տրամաբանորեն, ուրեմն, այսպիսի խոսքերը՝ **կարող եմ գալ, կարող ես գալ, կարող է գալ** և այլն կարելիական-ենթադրական խոսքեր են, իսկ քերականորեն դրանք սահմանական խոսք են»³³: Նույն ձևով տրամաբանորեն հարկադրական խոսք է համարում **հար-**

³¹ **Ջահուկյան Գ., Աղայան Է. Առաքելյան Վ., Քոսյան Վ.**, նշվ., աշխ., էջ 394:

³² Տե՛ս՝ **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 406:

³³ **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 302:

կավոր է գնալ, պարտավոր է գնալ. «Նա պարտավոր է գնալ և նա կարող է գալ խոսքերը նշանակությամբ իրարուց խոշոր տարբերություն ունին, որ առաջանում է «պարտավոր լինել» և «կարող լինել» բայերի իմաստից. բայց քերականորեն այդ երկու խոսքերը միևնույն կազմությունն ունին, սահմանական են, և ոչ մի քերականական զանազանություն կարելի չէ դնել դրանց մեջ այն պատճառով, որ բայերը «պարտավոր է», «կարող է» տարբեր են»³⁴:

Գ. Սևակը ևս հիշյալ կառույցները համարում է շարահյուսորեն վերլուծելի. ածական + օժանդակ բայ միացությունը՝ ստորոգյալ, իսկ անորոշ դերբայը՝ ենթակա:

Հետաքրքրական է Ա. Աբրահամյանի մոտեցումը. գրաբարում նման կազմությունները «մտածողության մի հին և հետաքրքրական ձև» է համարում, ուր բաղկացուցիչ մասերի կապն այնքան սերտ է, որ կարելի է նույնիսկ «եղանակային ձև համարել»: Նա գրում է. «Սակայն բացի այս եղանակային ձևերից, հարկադրական եղանակի նշանակությամբ գրաբարում կազմվում են անալիտիկ սիստեմով կազմված զանազան ձևեր: Դրանցից մեկն այնքան տարածված է ու որոշակի, որ կարելի է նույնիսկ եղանակային ձև համարել: Դա կազմված է հարկադրական-պարտավորական անհրաժեշտության գաղափար արտահայտող միադիմի եղանակիչ-բայերի (**պարտ է**, **պիտոյ է**, **արժան է** և այլն), ինչպես նաև եմ օժանդակ բայի 3-րդ դեմքի միջոցով, որոնք դրվում են անորոշ դերբայի վրա՝ տրական հոլովով ենթակայի մոտ»³⁵: Այնուհետև շարունակում է. «Նման կազմություններ կան նաև աշխարհաբարում, սակայն այստեղ այդ կապակցությունների բաղկացուցիչ մասերի կապը սերտ չէ. անորոշ դերբայը վերց-

³⁴ Արեղյան Մ., նշվ. աշխ., էջ 302-303:

³⁵ Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 277-278:

վում է գոյականաբար, որպես ենթակա, տրական հոլովով դրված բառը՝ խնդիր, միադիմի բայը՝ ստորոգյալ...»³⁶:

Հիշյալ կառույցները շարահյուսական մեկ միավոր՝ բարդ ստորոգյալ է համարում նաև Վ. Առաքելյանը՝ գրելով. «Բարդ կոչում ենք այնպիսի ստորոգյալը, որը կազմվում է անվանական և բայական ստորոգյալների միասնությունից: Մի շարք այնպիսի ածականներ, որոնք գերազանցապես եղանակավորող կամ կերպավորող բայերի հիմքեր են ներկայացնում, **են և լինել** բայերի հետ կազմում են անվանական ստորոգյալ: Ինչպես եղանակավորիչ և կերպավորիչ բայերին, այնպես էլ սրանց հաճախ առնչվում է մի որևէ բայի անորոշ դերբայ, և երկուսը միասին կազմում են մի բարդ ստորոգյալ»³⁷: Հիմք ընդունելով այն, որ գործողությունն արտահայտվում է ԱԴ-ով, որը բաղադրվում է անունի և էական բայի հետ, Վ. Առաքելյանը կառույցը կոչում է **անվանաբայական** ստորոգյալ: Անվանաբայական ստորոգյալի առաջին մասը համարում է ստորոգելիական վերադիր-քարացած ձևեր, այսինքն՝ սրանք իրենց ուղիղ կամ հոլովված ձևով աստիճանաբար դադարում են այլ կիրառություն ունենալուց: Դրանց մի մասը համարում է արդեն քարացած, մյուս մասը՝ այդ ճանապարհին կանգնած:

Առաջ անցնելով նշենք, որ նույն աշխատության մեջ լեզվաբանն ինքն իրեն հակասում է՝ գրելով, որ ԱԴ-ն առանց հոդի ենթակա է դառնում նաև անդեմ նախադասությունների համար, որոնք սովորաբար ձևավորվում են մեկ ածականից և մեկ բայական հանգույցից, ու արտահայտում են հնարավորություն, անհնարինություն, անհրաժեշտություն, անկարելիություն և այլն:

«Հայոց լեզու» աշխատության երկրորդ հատորում նորից մատնանշվում է նույն իրողությունը (առանց հոդի ենթակա է դառնում **ծանր է, ուշ է, հարմար է** և այս կարգի մի քանի այլ

³⁶ Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 279:

³⁷ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 146:

ստորոգյալների հետ), և միայն ծանոթությամբ հավելում է տրվում, ըստ որի նման կառույցներում ԱԴ-ի ենթակայությունը թուլանում է, և հանգեցնում է այն ստորոգյալի մաս դիտելուն: Բայց և զանազանություն է որոնվում «պետք է գնալ» և «ինձ պետք է գնալ տուն» կառույցների միջև՝ առաջինում **գնալ-ը** համարելով ստորոգյալի մաս, **պետք է-ն**՝ եղանակիչ, երկրորդում՝ գնալ-ը՝ ենթակա այն դեպքում, երբ նման խորթ է ժամանակակից հայերենին. հայերեն չէ: **Կարող է գնալ** նախադասության մեջ անորոշը աներկբայորեն ստորոգյալի մաս է³⁸: «ժամանակակից հայոց լեզու» աշխատության հեղինակները սա անվանում են բաղադրյալ ստորոգյալ:

Ռ. Իշխանյանը կառույցը համարում է շարահյուսորեն վերլուծելի, իսկ ԱԴ-ները՝ ենթակա, իհարկե, նշելով, որ նման կառույցներում անորոշ դերբայն իբրև ենթակա փոքր-ինչ այլ բնույթ ունի: Հատկանշական համարելով ԱԴ-ի ետադաս գործածություններն էական բայի գոյացրած այնպիսի կապակցությունների հետ, ինչպիսիք են՝ **պետք է, կարելի է, անհրաժեշտ է, անհնար է** և այլն, բացառություն է դիտում **պետք է** կապակցությունը, որն այսօր հանդես է գալիս իբրև առանձին դիմավոր բայ, ունի մեկ բառի արժեք, անկանոն է (չունի դերբայական և մի շարք հարացուցային ձևեր), իսկ շարահյուսական մակարդակում՝ անվերլուծելի: Մնացած կապակցությունները համարում է շարահյուսորեն վերլուծելի, որոնց հետ ետադաս գործածությամբ անհոդ ԱԴ-ն ենթակա է լինում: Ինչպես ինքն է ասում, «անորոշ դերբայի ենթակա լինելը դժվար է ընկալվում, բայց դյուրին է ապացուցվում»: Իսկ ապացուցելու համար Ռ. Իշխանյանը հիմք է ընդունում փոխակերպումը:

Հիշյալ մեթոդով է առաջնորդվում Ս. Գյուլբուդադյանը և նշում, որ ոչ մի տարբերություն չկա «հարկավոր է դեղ» և «հար-

³⁸ Տե՛ս՝ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Երևան, 1975, էջ 140:

կավոր է բժշկել» ձևերի միջև. ինչո՞ւ առաջինում **հարկավոր է-ի** կողքին **դեղ-ը** համարել ենթակա, իսկ երկրորդում՝ նույն իրադրության մեջ՝ **բժշկել-ը**՝ ստորոգյալի մաս: Չէ՞ որ քերականորեն դրանք միջև տարբերություն չկա. երկու դեպքում էլ ենթակա են:

Կառույցն արժեքավորելիս, սակայն, երկմտություն է ի հայտ գալիս, երբ լեզվաբանը գրում է. «Բաղադրյալ ստորոգյալը կազմվում է ... Բ) Ստորոգելի+ են + անորոշ դերբայ կաղապարով (**Ուրախ են հայտնել: Պատրաստ են գեկուցել: Համաձայն են աշխատել**)...: Ստացվում է բաղադրյալ ստորոգյալ բարդ կառույցով՝ ստորոգելի + են և (ստորոգելի + են) + անորոշ դերբայ: Բայական այս երկու (ա և բ) կառույցներում էլ անորոշ դերբայը, լրացում լինելով հանդերձ, ստորոգյալի մաս է, բաղադրիչ»³⁹:

Կառույցը շարահյուսորեն վերլուծելի է համարում նաև Հ. Հարությունյանը. «Մեր կարծիքով, իսկապես, (ածական + օժանդակ բայ)+անորոշ դերբայ կառույցները շարահյուսորեն վերլուծելի են՝ կազմված երեք նվազագույն միավորներից՝ ածական, օժանդակ բայ և անորոշ դերբայ բաղադրիչներով, որոնք ստեղծում են երկու գումարելի՝ ածական + օժանդակ բայ և անորոշ դերբայ: Իսկ ինչու ենք ածական + օժանդակ բայ «կառույցը» դիտում որպես մեկ գումարելի և անորոշ դերբայը համարում այդ գումարելու լրացումը: Իհարկե, դա միայն մեր կարծիքը չէ... Ինչպես տեսնում ենք, հիշյալ ածականները շարահյուսական կապակցելիության որոշ հատկանիշներով տարբերվում են իրարից, սակայն մեզ հետաքրքրող կառույցներում նրանք ընդհանրանում են այն հատկությամբ, որ միանալով օժանդակ բային, կազմում են մի ամբողջություն, «վերլուծական շարահյուսությ» և պահանջում են անորոշ դերբայով արտահայտված լրացում, որը ոչ թե միայն ածականի լրացումն է, այլ ածական + օժանդակ բայ շարահյու-

³⁹ **Գյուլբուդադյան Ս.**, Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Երևան, 1988, էջ 105:

սույթի, այլ տերմինով՝ բաղադրյալ ստորոգյալի, մանավանդ որ, ինչպես ասացինք, որոշ ածականներ առանց օժանդակ բայի անորոշով արտահայտված լրացում չեն առնում»⁴⁰: Նա հակադրվում է այն կարծիքներին, որոնց հեղինակները դրանք անվանում են անդեմ. եթե այս կառույցներում անորոշ դերբայը ենթակա է, նշանակում է դրանք առանձին կամ նախադասության մեջ գործածված չեն կարող անդեմ (միադիմ) լինել: Հետո տողատակում հավելում է՝ անգամ եթե անորոշ դերբայը ոչ թե ենթակա, այլ ստորոգյալի մաս համարվի, միևնույն է, դրանք անդեմ համարել չի կարելի, քանի որ նախադասության մեջ դիմավոր բայ կա: Ինչ վերաբերում է այն կարծիքին, թե նման նախադասություններում անորոշ դերբայը համարվում է ենթակա միայն այն դեպքում, երբ գործածված է որոշյալ առումով, Հ. Հարությունյանը գրում է. «Կարծում ենք, հողը շարահյուսական հարաբերություններում, նախադասության անդամների տարբերակման հարցում որոշիչ դեր չունի, թեև որոշ դեպքերում հարաբերությունը դարձնում է ավելի որոշակի և այս իմաստով ունի ոճական-արտահայտչական արժեք»⁴¹:

Մ. Ասատրյանը «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության մեջ այս կառույցները համարում է բաղադրյալ ստորոգյալներ: Նա գրում է. «...«Ձգտում է ընդունվել», «Պատրաստվում է մեկնել», «Վախենում է ասել», «Ամաչում է ընդունվել» տիպի կապակցությունների մեջ անորոշ դերբայը գուրկ է հոլովի քերականական կարգից և դիմավոր բայի հետ կազմում է մեկ միասնական բաղադրյալ ստորոգյալ»⁴²: Իսկ պարտավորական, կարելիական, անհրաժեշտական և այս կարգի եղանակային իմաստներ արտահայտող **պետք է, անհրա-**

⁴⁰ Հարություն Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 276-278:

⁴¹ Հարություն Հ., նշվ. աշխ., էջ 280:

⁴² Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Կ. Բ., Երևան, 1973, էջ 243:

Ժեշտ է, կարելի է և նման ձևերի ու անհոդ անորոշ դերբայի կապակցությունների դեպքում ընդունում է հարցի արեղյանական լուծումը. նման դեպքերում ԱԴ-ն ենթակա է համարում:

Իսկ Ալ. Մարգարյանն այս առիթով գրում է. «Այսպիսի դեպքերում թեև, սովորաբար, անորոշը դիտվում է իբրև ենթակա, իսկ պարտավորական կամ կարելիական բառը՝ ստորոգյալ, բայց դա միայն ձևականորեն կամ ձևական տեսակետից է ճիշտ, որովհետև իրապես նրանք միասին ընդհանուրին վերաբերող անհրաժեշտական կամ կարելիական գործողություն են ցույց տալիս և նախադասության մեկ անդամ՝ ստորոգյալ են լինում»⁴³:

Կառույցը բաղադրյալ ստորոգյալ է համարում նաև Թ. Շահվերդյանը. «...Հետաքրքրական են նաև միադիմի բայ- անորոշ դերբայ կառույցները. այդպիսի կառույցներում **են, լինեն** բայերի հետ բայական հանգույց են դառնում այնպիսի բառեր, որոնք կամ սակավ են գործածվում առանց այդ բայերի, կամ բնավ չեն գործածվում առանց դրանց: Դրանք ծագում են նյութական նշանակություն ունեցող գոյականներից, ածականներից, մակբայներից, որոնք սակայն հեռանում են իրենց ծագման բառական նշանակությունից, առանձնանում են **են, լինեն** բայերի հետ, մի եղանանավորման միություն են կազմում, այսինքն՝ դառնում են եղանակավորիչ անվանական միադիմի բայեր և անորոշ դերբայի հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ: Մինչև իսկ դրանք հեռանում են խոսքիմասային իրենց պատկանելությունից և դառնում են միադիմի անվանական բայ կազմող բաղադրիչներ և եղանակավորման հիմնական իմաստը դրանք են տալիս ամբողջին»⁴⁴:

Ի վերջո, նման ձևերի շարահյուսական մեկ միավոր լինելը մատնանշվում է նաև «Ժամանակակից հայոց լեզվի» երրորդ

⁴³ Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 253:

⁴⁴ Հայոց լեզու և գրականություն (Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Պրակ 5-6), Երևան, 1985, էջ 293:

հատորում: Այնտեղ կարդում ենք. «Բաղադրյալ ստորոգյալ են կազմում պարտավորական, անհրաժեշտական, կարելիական կամ հնարավորական և այլ նշանակություն արտահայտող **պետք է, պիտի, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, անհնար է, անհնարին է, կարող է, դժվար է, հեշտ է, պատրաստ է, ապարոյուն է** և այլն ձևերը անորոշ դերբայի հետ: Սրանք, որ կազմվում են ածականից, մակբայից կամ այլ խոսքի մասից և բայական հանգույցից, հարադրվելով անորոշ դերբային, արտահայտում են մեկ գործողություն՝ հանդես գալով որպես բաղադրյալ ստորոգյալի անդամ նախադասությունների համար: Սրանց գործողությունը կապվում է ոչ թե որևէ դեմքի հետ, այլ վերաբերում է ընդհանուրին»⁴⁵:

Քննության հատուկ հարց համարելով անորոշ դերբայի՝ ստորոգյալի կազմում հանդես գալու խնդիրը՝ այնուամենայնիվ նման կաղապարով կառույցները «Անվանաբայական ստորոգյալ» ենթավերնագրի տակ են քննել «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» ուսումնական ձեռնարկի հեղինակները (Արտ. Պապոյան, Խ.Բաղիկյան): Նրանք գրում են. «Հայտնի է, որ այն իր մեջ համատեղում է թե՛ գործողության և թե՛ առարկայական հատկանիշներ և խոսքի մեջ հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, չի կորցնում, սակայն, իր բայ լինելու հատկանիշը: ... Որոշ լեզվաբաններ, հետևելով ռուսերենի քերականությանը, հայերենում նույնպես ընդունում են **բարդ ստորոգյալի** առանձին տեսակը: Թերևս ճիշտ պետք է համարել Մ. Ասատրյանի տեսակետը... Հայերենում միասնական կարծիք չկա նաև անհոդ անորոշ դերբայի և **պետք է, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, հնարավոր է, անհնար է, անհնարին է, հաճելի է, տհաճ է, հեշտ է, դժվար է, լավ է, վատ է** և նման տիպի բառերի կառուցվածքով ստորոգյալների վերաբերյալ:

⁴⁵ Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 161:

Նման կառույցները քերականական մի քանի աշխատություններում համարվում են բաղադրյալ ստորոգյալներ, իսկ դրանցով կազմված նախադասությունները՝ անդեմ նախադասություններ: Մինչդեռ Մ. Աբեղյանը այդպիսի կառույցներում անորոշ դերբայը համարում է ենթակա, իսկ նրա հետ հանդես եկող **պետք է, լավ է, վատ է, անհրաժեշտ է** և նման բառերը՝ ստորոգյալ: Նույն կարծիքին է նաև Մ. Ասատրյանը: Մեր կարծիքով սա վիճելի հարց է»⁴⁶: Հետագայում Խ. Բաղիկյանը գրում է. «Անվանաբայական են անորոշ դերբայ+խոնարհված բայ կառույցները, քանի որ անորոշ դերբայը խոսքում հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով. այսպես՝ **ցանկանում եմ աշխատել, մտադիր է վերադառնալ, ուզում է գնալ, պատրաստվում եմ ելույթ ունենալ, կաշխատեմ շուտ վերադառնալ** և այլն»⁴⁷:

Մեզ համար հիմնավորված է, ուրեմն և ընդունելի է Ն. Պառնասյանի միագիծ մեկնաբանությունը. հիշյալ կառույցները երկկազմ չեն, քանի որ չկա կառույցի բաղադրիչների քերականական համաձայնություն: Նա գրում է. «Որևէ գործողության կատարման հնարավորությունը, անհրաժեշտությունը արտահայտող միակազմ դիմավոր նախադասություններն ունենում են նաև **կարելի է, հնարավոր է, անհրաժեշտ է, պետք է, + անորոշ դերբայ** կառուցվածքը: Այստեղ ևս դիմային վերաբերությունը, որն արտահայտվում է էական բայի եզակի երրորդ դեմքով, չունի դիմային հարաբերակից եզր: Այդ է պատճառը, որ այս կառուցվածքի նախադասությունները ևս երբեմն համարվում են անդեմ: Կա նաև այն կարծիքը, որ սրանք երկկազմ են՝ անորոշ դերբայ ենթակայով, սակայն մեր կարծիքով դա ևս ընդունելի չէ, քանի որ այս կառույցներում չկա բաղադրիչների քերականական

⁴⁶ **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 105-106:

⁴⁷ **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2008, էջ 90:

համաձայնություն, որը հայերենում ենթակա-ստորոգյալ հարաբերակցության անհրաժեշտ նախապայմանն է»⁴⁸:

Անհրաժեշտ է նշել, որ արդի հայագիտական աշխատություններում նաև կառույցի հանգուցային բաղադրիչների արտահայտության հարցն է քննարկվել, և առավելապես դիմավոր բայով դրսևորվողներն են ուշադրության արժանացել:

Տարակարծությունները հիմնականում այն հարցին են վերաբերում, թե ի՞նչ հիմունքով են եղանակավորողներն առանձնանում (եղանակավորող, կերպային իմաստից բացի): Այս հարցը տարբեր կերպ է մեկնաբանվել. ոմանք կառույցի բաղադրիչների և ենթակայի հարաբերությունն են առաջնային համարել, ոմանք էլ՝ եղանակավորողի խնդրառությունը, կամ էլ՝ սրանց ներխուժմասային իմաստը: «Երբ եղանակավորիչ կամ կերպավորող բայը և անորոշ դերբայը միևնույն ենթակայի գործողությունները չեն, ապա միասին մի ստորոգյալ չեն կարող կազմել: Այս դեպքում անորոշ դերբայը դիտվում է իբրև խնդիր»⁴⁹:

Այսպես է մտածում նաև Ա. Աբրահամյանը. «Ստորոգելիական անորոշ դերբայով արտահայտված գործողության իրական կատարողը (սուբյեկտը) և քերականական ենթական համընկնում են: Մինչդեռ լրացական անորոշ դերբայով արտահայտված գործողության իրական կատարողը և քերականական ենթական նույնը չեն: Վերջինս կա՛մ մտածվում է և չի արտահայտվում, կա՛մ նախադասության մեջ դրսևորվում է որպես անուղղակի խնդիր (Ես հրամայեցի կրակել, ես հրամայեցի զինվորին՝ կրակել, այսինքն՝ ես հրամայեցի զինվորին, որ նա կրակի)»⁵⁰:

⁴⁸ **Պառնասյան Ն.**, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986, էջ 245:

⁴⁹ **Առաքելյան Վ.**, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 144:

⁵⁰ **Աբրահամյան Ա.**, Ժամանակակից հայերենի շարահյուսական մի քանի կառույցների մասին (Դասախոսների և ասպիրանտների 32-րդ գիտական նստաշրջանի թեզիսներ), Երևան, 1977, էջ 129:

Այս տեսակետը հիմնվում է ստորոգյալը միշտ սոսկ ենթակայի հետ հարաբերության մեջ դնելու արեղյանական դրույթի վրա, որն իր «Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները» հոդվածում հիմնավոր վերլուծություններով անընդունելի է համարում Գ. Զահուկյանը:

Նույն հարցի կապակցությամբ «Հայոց լեզու» աշխատության երկրորդ հատորում կարդում ենք. «Եղանակավորող **ուզել, կամենալ, ցանկանալ, փափագել, սկսել, կարողանալ** և այլ բայերի մոտ անորոշ դերբայը բաղադրյալ ստորոգյալի մաս է կազմում և ոչ թե խնդիր է: Այսպես՝ **Ուզում եմ խոսել: Կամենում եմ տուն գնալ: Փափագումես ներկա գտնվել: Իսկ հրամայել, պարտադրել, արգելել, հարկադրել, ստիպել, բռնադատել, առաջարկել, հորդորել** և նման ուրիշ բայերի մոտ անորոշ դերբայը ուղիղ խնդիր է: ...Երբ դիմավոր բայի և անորոշ դերբայի գործողությունը միևնույն ենթակայի հետ է առնչվում, անորոշը ստորոգյալի մաս է: Իսկ եթե դրանց ենթակաները տարբեր են, անորոշը դառնում է ուղիղ խնդիր»⁵¹: Նույն գրքում մեկ այլ տեղ գրված է. «Միակազմ նախադասություններ են կազմում **որոշել, արգելել, սահմանել, վճռել, առաջարկել, խնդրել, ընդունել, խորհուրդ տալ, պահանջել, հանձնարարել** բայերի կրավորական սեռը, ինչպես նաև **ստացվել, հաջողվել, վիճակվել** (ընկնել) բայերը: ...Այս միադիմի նախադասությունների հետ կիրառվող անորոշ դերբայը նույնպես բաղադրյալ ստորոգյալի մաս պետք է համարել»: Նույնն ասվում է **հրամայել, կարգադրել**, նաև **արժել** բայերի մասին. հաճախ սրանցով կազմված միադիմի նախադասությունները կապակցվում են մի անորոշ դերբայի հետ, որը, թվում է, թե դրանց համար ենթակա է, բայց այդպիսի անորոշը բաղադրյալ ստորոգյալի մաս է: Այստեղ ևս, ինչպես տեսնում ենք, հակասությունն ակնբախ է:

⁵¹ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Երևան, 1975, էջ 221:

Մ. Ասատրյանը պնդում է, որ նման կապակցություններում անցողական բայերից կախված ԱԴ-ն ուղիղ խնդիր է, իսկ անանցողական բայերից կախվածը՝ անուղղակի:

«Ժամանակակից հայոց լեզվի» երրորդ հատորում կարծես թե ընդհանրացվում է. «Դրանց մեջ կան նաև ներգործական սեռի բայեր, սակայն անորոշ դերբայը նրանց համար ուղիղ խնդիր չի դառնում, այլ երկուսը միասին բաղադրյալ ստորոգյալ են կազմում, որոնց մեջ դիմավոր բայն ունի կերպավորման արժեք, իսկ անորոշը՝ գործողության իմաստ: Այսպես՝ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ բայը ներգործական է, ուստի պահանջում է ուղիղ խնդիր (**շարունակում են գործս, զրույցս, բարեկամությունը** և այլն): Սակայն երբ նա հարադրվում է անորոշի հետ, դադարում է ստորոգյալ լինել առանձին վերցրած, ինչպես՝ **շարունակում են գրել**: Այս դեպքում միայն կերպավորվում է այդ գործողությունը՝ վերջինիս հաղորդելով տևականության, շարունակականության իմաստ, իսկ անորոշ դերբայն էլ նրա համար ոչ թե ուղիղ խնդիր է, այլ գործողության դրսևորողը: Որ իսկապես այդ դիմավոր բայերը ստորոգյալ չեն առանձին վերցրած, և անորոշն էլ ուղիղ խնդիր չէ նրանց համար, հաստատվում է նաև նրանով, որ դրանց մեջ կան նաև չեզոք բայեր»⁵²:

Նման կառույցը բայական բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ է համարում նաև Վ. Ավագյանը: Իհարկե, ժամանակի լեզվամտածողությամբ պետք է բացատրել նրա այն դիրքորոշումը, երբ շարահյուսական այս յուրահատուկ կառույցը իբրև այդպիսին անվանելը ինչ-որ տեղ պայմանական է համարում: Նա կարևորում է այն համգամանքը, որ եղանակավորող բայերն իրենց նյութական-բայական ինքնուրույն իմաստով չեն գործածվում. նրանց դերը ստորոգական է՝ ոճական նրբերանգներով, ենթատեսակային բաժանումներով: «Բայական բաղադրյալ կամ

⁵² Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 159:

բարդ է կոչվում այն ստորոգյալը, որը կազմված է անորոշ դերբայից և եղանակիչ բայից: Եղանակիչ բայերն իրո՞ք որ գործածվում են եղանակավորող-ոճական նրբերանգներով և ոչ թե նյութական-բայական ինքնուրույն իմաստով և դերով՝ ստեղծելով մի յուրահատուկ շարահյուսական կառույց, ինչպես՝ սկսում է խոսել, պատրաստվում է գնալ, դժվարանում են ասել, հարկադրված են լսել, ուզում են խոսել, պարտավոր է պահել, ի վիճակի չէ գնալ, համարձակվում է ելույթ ունենալ, ծգտում է հասնել... Սրանք միօրինակ չեն և կարող են ըստ բայական սեռի և կերպաեղանակիչ միավորի՝ խոսքիմասային արժեքի, ենթատեսակների բաժանվել: Այսպես. **ա)** Կան ներգործական սեռի բայից և անորոշ դերբայից կազմված ստորոգյալներ, ինչպես՝ ուզում է լսել, ցանկանում է գրել և այլն: Այսպիսի կառուցվածքները նույնիսկ կարելի է շարահյուսորեն բաժանել, ասենք՝ ուզում է՝ ստորոգյալ, լսել՝ ուղիղ խնդիր... Այնպես որ, այս կադապարը բաղադրյալ (բարդ) ստորոգյալ համարելը կարծես պայմանական է դառնում, կամ, համենայն դեպս, բավականին տարբերվում է մյուս տեսակներից: **բ)** Կան չեզոք և կրավորաձև չեզոք սեռի բայերից և անորոշ դերբայից կազմված ստորոգյալներ, ինչպես՝ համարձակվում է խոսել, ստիպված է լսել, հարկադրված է պատմել, դժվարանում է քայլել և այլն: **գ)** Կան նաև ածականից, էական բայից և անորոշ դերբայից կազմված ստորոգյալներ, ինչպես՝ պարտավոր է ասել, անհրաժեշտ է նշել, անկարելի է նստել, կարող է խոսել...»⁵³:

Հայագիտական աշխատություններում նաև եղանակավորողների դասակարգման հարցն է քննարկվել, բայց ոչ հանգամանորեն: Նորից ոչ բայական եղանակավորողները նվազ չափերով են ուսումնասիրության նյութ դարձել:

Վ. Առաքելյանը հետևյալ դասակարգում է կատարում.

⁵³ Ավագյան Վ., Շարահյուսություն (Օժանդակ ձեռնարկ ուսուցչի համար), Երևան, 1983, էջ 35-36:

- Որևէ գործողություն կատարելու կարողություն, հնարավորություն, ձգտում և այլն արտահայտող բայեր.

- Իմացական, զգացումային բայեր, որոնք արտահայտում են հակում, ներքին զգացումներ, իմացություն.

- Հարկադրանքի գործողության բայեր, որոնք ցույց են տալիս ենթակայի մի որևէ գործողություն կատարելու համար հարկադրված լինելը, չարչարվելը, միջոցներ որոնելը և այլն.

- Բայեր, որոնք արտահայտում են վճիռ, համարձակություն, խոստում, երդում մի բան անելու կամ չանելու.

- Բայեր, որոնք արտահայտում են գործողության սկսվելը, շարունակվելը, դադարելը և այլն⁵⁴:

«Հայոց լեզու» (2-րդ հատոր) և «Ժամանակակից հայոց լեզու» (3-րդ հատոր) գրքերում համապատասխանաբար ներկայացված են հետևյալ դասակարգումները.

Եղանակավորիչ բայերն արտահայտում են՝

ա) ՍԿՍՈՂԱԿԱՆ, ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ, ԴԱԴԱՐՈՂԱԿԱՆ նշանակություն...

բ) ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՄՔ, ՋԳՏՈՒՄ, ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ (կամական բառեր)...

գ) ՀԱԿՈՒՄ, ՆԱԽԱՊԱՏԿՈՒԹՅՈՒՆ, ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՍՈՎՈՐՈՒՅԹ, ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ և այլն...

դ) ՀԱՐԿԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՊԱՐՏԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ և այլն...

ե) ՎՃԻՌ, ՈՐՈՇՈՒՄ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ԽՈՍՏՈՒՄ և այլն...⁵⁵:

Բաղադրյալ ստորոգյալ կազմող եղանակավորող բայերը կարելի է բաժանել մի քանի խմբերի:

⁵⁴ Տե՛ս՝ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 140-142:

⁵⁵ Տե՛ս՝ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Երևան, 1975, էջ 157-159:

ա) Բայեր, որոնք արտահայտում են գործողության ՍԿԻԶԲԸ, ԸՆԹԱՑՔԸ, ԱՎԱՐՏԸ, այլև մի բան անելու ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ և այլն:

բ) Բայեր, որոնք արտահայտում են մի բան անելու ՁԳՏՈՒՄ, ՎՃԻՌ, ՀՐԱՄԱՆ, ՀԱԿՈՒՄ, ՈՐՈՇՈՒՄ, ԽՈՍՏՈՒՄ և այլն:

գ) Բայեր, որոնք արտահայտում են որևէ բան անելու ՀԱՐ-ԿԱՂՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՐՁԱ-ԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ և այլն:

դ) Բայեր, որոնք դրսևորում են ՄՏԱԾՈՒԹՅՈՒՆ, ՎԱԽ, ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ, ԽՆԴՐԱՆՔ և սրանց նշանակություններին առնչվող իմաստներ:

ե) Բայական բաղադրյալ ստորոգյալ են կազմում նաև **գերա-դասել, սպառնալ, տատանվել, դժվարանալ, սպասել, շտապել** և այս կարգի որոշ եղանակավորիչ բայեր անորոշ դերբայի հետ:

զ) ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ, ԱՆՀՐԱԺԵՇՏԱԿԱՆ, ԿԱՐԵԼԻԱԿԱՆ, ՀՆԱՐԱՎՈՐԱԿԱՆ և այլ ձևեր՝ **կարելի է, անհրաժեշտ է, կարող է** և այլն⁵⁶:

* * *

Մեր լեզվի զարգացման արդի շրջանում ևս շարահյուսական այս կառույցը նորից քննարկման նյութ է շարահյուսագիտական տարբեր աղբյուրներում, նորմատիվ քերականություններում (դասագրքերում, ուսումնական և գործնական ձեռնարկներում, զանազան հոդվածներում), նորից շարունակում է մնալ չլուծված, վիճահարույց խնդիր՝ հիմնականում նույն տարակարծիք մեկնաբանություններով, նույն վիճելի դրույթներով, տարամիտվող գնահատումներով: Այն նաև ժամանակակից պատմահամեմատական լեզվաբանության, բարբառագիտության ուսումնասիրության նյութերից մեկն է՝ անորոշ դերբայի գործառական յու-

⁵⁶ Տե՛ս՝ Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 159 -162:

րահատկությունների զանազան դրսևորումների, վերապրուկային մնացորդների վերհանման և լուսաբանման առնչությամբ: Քանի որ այսօր առավել ևս կարևորվում են լեզվի նորմավորման հարցերը, ապա այս կառույցը արդի լեզվաբանությանը առավել ևս հետաքրքրում է լեզվական նորմին համապատասխանելու առումով: Այս տեսանկյունից են հարցին անդրադարձել Պ. Բեդիրյանը, Արտ. Պապոյանը, Խ. Բադիկյանը, Լ. Թեյլանը, Հ. Ջաքարյանը, Գ. Ներսիսյանը և այլք, ովքեր իրենց՝ թեկուզ և տարամիտվող դիտողություններով առաջ են մղել մեր լեզվի առանձնահատուկ բնութագրիչ դարձած անորոշ դերբայի ուսումնասիրության և արժեքավորման գործը:

Խ. Բադիկյանը նման կառույցն անվանում է անվանաբայական ստորոգյալ՝ հիմք ընդունելով ԱԴ-ի գոյականական էությունը⁵⁷:

Ըստ Մ. Միրումյանի՝ բայական բաղադրյալ ստորոգյալ է կոչվում այն ստորոգյալը, որը ձևավորվում է խոնարհված բայով և անորոշ դերբայով: Գնահատման ելակետը նույնն է, սակայն չպարզաբանված է մնում ԱԴ-ի՝ եղանակավորողի գործողության շարունակություն լինելու հանգամանքի ընդգծումը (կարծում ենք՝ այս դեպքում հարցի ուսումնասիրությունը լեզվական այլ մակարդակ է տեղափոխվում՝ կապված լեզվի, խոսքի և մտածողության փոխհակադրամիասնության հետ): Ժամանակակից նորմատիվ քերականության այս աղբյուրում կարդում ենք. «Խոնարհված բայը դերբային հաղորդում է գործողության սկիզբ, ընթացք, ավարտ, գործողության կատարման ձգտում, ցանկություն, որևէ բան անելու պարտավորվածություն, համաձայնություն կամ սահմանափակություն, երբեմն էլ մտածական, հոգեկան գործընթացներ, իսկ անորոշ դերբայը նրա գործողության շարունակությունն է (սկսեց կարդալ, շարունակեց պատմել,

⁵⁷ Տե՛ս՝ **Բադիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2008, էջ 90:

պատրաստվում էր նվագել, ցանկանում էր օգնել, մոռանում է հարցնել, ուխտել եմ պաշտպանել, ձգտում է բարձրանալ, պարտավորվել է գտնել, վախենում էր նայել, ամաչում էր խոսել, սպառնում է պատժել և այլն)»⁵⁸:

«Բայական համակարգի ձևաբանական յուրահատկությունները մեզանում իսկապես ուսումնասիրված են լայնքով ու խորքով. և այս հարցում, կարելի է ասել, տարակարծությունները քիչ են. հայտնի չափով նկատելի է ընդհանուր ըմբռնումը: Ինչ վերաբերում է նրա ստորոգական առանձնահատկությանը, պետք է խոստովանել՝ որքան հետազոտող, այնքան էլ կարծիք կա: Տարակարծությունները վերաբերում են բայի ստորոգական կարգի բուն իսկ ըմբռնմանը և ավելի շատ՝ տեսակավորմանը, դասակարգմանը»⁵⁹, - գրում է Արտ. Պապոյանը: Այնուհետև շարունակում է. «Չենք կարող չնշել, որ բարդ կոչված ստորոգյալի ըմբռնման մեջ ևս առկա են վիճելի դրույթներ: Ոչ սակավ դեպքերում ստորոգյալները կազմվում են որպես սխալ ու մերժելի խնդրառության (կառավարման) արդյունք: Այսպես՝ «Անզոր էր հասկանալ» և «Ուրախ եմ ծանոթանալ» նախադասությունները համարված են ամբողջական մեկական բարդ ստորոգյալներ, մինչդեռ դրանք սխալ խնդրառության հետևանք են. պետք է լինեին՝ «Անզոր էր հասկանալու» և «Ուրախ եմ ծանոթանալու», այսինքն՝ սովորական բաղադրյալ ստորոգյալներ (ուրախ եմ, անզոր էր)՝ համապատասխան լրացումներով՝ դրված անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով: Ինչ վերաբերում է բերված բնագրային վկայություններին, թեև դրանք տարածված են, սակայն ակնհայտ օտարաբանություններ են, ռուսերենից բառացի պատճենման արդյունք, ուստի և մերժելի են: Բնավ կարիք չկա դրանք օրինականացնել, վրան էլ տեսություն մշակել»⁶⁰:

⁵⁸ Միրումյան Մ., Հայոց լեզու, Տեսական և գործնական դասընթաց, Երևան, 2013, էջ 31:

⁵⁹ Պապոյան Ա., Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, էջ 721:

⁶⁰ Պապոյան Ա., նշվ. աշխ., էջ 732:

Բնականաբար լեզվաբանը կառույցը համարում է տարրալուծելի: Այս հարցում մեզ համար ելակետային է Լ. Թեյլանի դիրքորոշումը. «կարիք կա դրանք օրինականացնելու, վրան էլ տեսություն մշակելու», որովհետև նման գործածությունները օրինաչափության են վերածվում, որովհետև դրանք շատ քիչ դեպքերում են բացատրվում օտարախոսությամբ կամ օտարամտածությամբ: Լեզվաբանը, ընդգծելով վերջին նախադասությունը, գրում է. «Քաղվածքի վերջին նախադասությունը ընդգծեցինք ուշադրություն հրավիրելու համար այն փաստի վրա, որ հենց այստեղ էլ մեծարգո լեզվաբանն ինքը գործածել է իր իսկ մերժելի համարած «օտարաբան» կապակցությունները (կարիք չկա ... օրինականացնել, ... մշակել), այնքան սովորական են դրանք հայերեն խոսքում»⁶¹: Հրապարակի վրա եղած լեզվագիտական տարբեր աղբյուրներից առանձնացրել ենք Լ. Թեյլանի «Բացարձակ աներևույթի գնահատման շուրջ» հոդվածը ոչ միայն այն պատճառով, որ կառույցի շարահյուսական արժեքի գնահատման հարցում հոդվածագիրը հակվում է այն չտարրալուծող լեզվաբանների թեկն և ունի հստակ դիրքորոշում, այլև այն տրամաբանությամբ, որ նշվածը հարցի քննության առումով կարող է դառնալ տարակարծիք մեկնաբանությունների և տարամիտվող գնահատումների լեզվախճանկարի լուծման ուղղորդիչ, որով առաջնորդվելիս արդի լեզվական նորմում կամրակայվի նորմափոխությամբ հաստատված նոր կանոն: Հարկ է նշել, որ ուշադրության կենտրոնում են հետևյալ հարցերը՝ բացարձակ աներևույթը, ընդհանրապես՝ անորոշ դերբայը՝ հետադասված, ուղղականաձև, անհոդ, բայական խնդրառության դրսևորման այստեսակ օրինաչափությունը, դիմավոր բայով կառույցների փոխակերպները, ԱԴ-ի՝ հարց առնել-չառնելու խնդիրը, կառույցի՝ մեկ ամբողջական միավոր լինելը (այլընտրանք չկա), ուսու-

⁶¹ Թեյլան Լ., «Բացարձակ աներևույթի» գնահատման շուրջ, Բանբեր Երևանի Համալսարանի, Հայագիտություն, 3, Երևան, 2015, էջ 51:

ցողական նպատակահարմարությունը և այլն: Լ. Թեյլանը գրում է. «...Մինչդեռ «բացարձակ աներևույթը... չի հակասում արդի հայերենի կանոնին և պետք է ներկայացվի որպես բայական խնդրառության մի օրինաչափ դրսևորում»⁶²: Նա սահմանազատում է «Ղիմավոր բայ + ԱՂ» կաղապարի հետևյալ երկու կարգի իրացումները. «ա. Անորոշ դերբայը խնդրառական հարաբերությամբ լրացնում է տարբեր արժեքի ղիմավոր բայերի (ուզում է գնալ, սիրում է նկարել, ձգտում է հասնել(ու), հրաժարվում է հանդիպել(ուց) և այլն) կամ էլ հիմնականում ածական վերադրով բաղադրյալ ստորոգյալների (պատրաստ եմ գնալ(ու), ուրախ եմ ծանոթանալ(ու) և այլն), բ) անորոշ դերբայը զուգորդվում է եղանակային այլևայլ երանգներ արտահայտող (կարելիական, անհրաժեշտական, գնահատողական, և այլն) միադիմի կապակցությունների հետ, որոնց կազմում հանդես է գալիս բայը՝ որպես հանգույց (պետք է գնալ, անհրաժեշտ է մեկնել, հարկավոր է զգուշացնել, հնարավոր է հասնել, հաճելի է տեսնել, դժվար է հավատալ և այլն)»⁶³: Լեզվաբանը հակադարձում է «ղիմավոր բայ + անորոշ դերբայ» կառույցը մեկ ամբողջական միավոր՝ ստորոգյալ համարել բացառողներին և բերում հակադիր փաստարկներ՝ հատկապես ղիմավոր բայերի նաև անդեմ ձևերով գործածվելու, անորոշ դերբայի՝ հարցի պատասխանելու դրույթների կապակցությամբ. «... Այսօրինակ հիմնավորումը, սակայն, տարակուսանք է հարուցում. չէ՞ որ բերվող դերբայական դարձվածները ղիմավոր բայով կառույցների փոխակերպներն են: Նման մոտեցմամբ կարելի է ժխտել բաղադրյալ ստորոգյալի գաղափարն ընդհանրապես, քանի որ դրանց վերադիրները ևս փոխակերպման արդյունքում կարող են դառնալ անդեմ բայի լրացումներ (հմմտ. Դարձավ ուսուցիչ – ուսուցիչ դառնալը...): Նույնքան տարակուսելի է նաև հետևյալ պնդումը. «... եթե բայ +

⁶² Նույն տեղում, էջ 54:

⁶³ Նույն տեղում, էջ 43:

անորոշ դերբայ կառույցը համարվում է մեկ միասնական բաղադրյալ ստորոգյալ, նախադասության մեկ անդամ, ապա անորոշ դերբայը առանձին հարցի չպետք է պատասխանի»: Բայց չէ՞ որ բաղադրյալ ստորոգյալի վերադիրը նույնպես պատասխանում է առանձին հարցի. դարձավ բժիշկ – ի՞նչ դարձավ... նրան ընկեր եմ համարում – ի՞նչ եմ համարում և այլն»⁶⁴: Հեղինակին առավել համոզիչ ու տրամաբանական և ուսուցողական առումով էլ նպատակահարմար է թվում դիմավոր բայի և դրան հետադասված ուղղականաձև անհոդ անորոշ դերբայի կապակցությունը համարել շարահյուսական մեկ միավոր՝ ստորոգյալ (բաղադրյալ կամ բարդ անվանումը տվյալ դեպքում սկզբունքային չի համարում): «Այս դիրքում և այսպիսի ձևավորմամբ անորոշ դերբայը, կարծում ենք, դրսևորում է իր բայական բնավորությունը, պետք է ընդունի **ի՞նչ անել** հարցը: Միայն դերբայի հետ զուգորդվող բայերի դեպքում (աշխատում է, կարողանում է, դժվարանում է, համաձայնում է, համարձակվում է, խորհուրդ է տալիս, հորդորում է) անորոշի հոդով կամ թեքված ձևերը հնարավոր չեն, և կառույցի՝ մեկ ամբողջական միավոր համարելը հավանաբար այլընտրանք չունի... Երևի ճիշտ կլինի նման մոտեցումով գնահատել նաև **պետք է, անհրաժեշտ է, հնարավոր է, կարելի է, հաճելի է, ցանկալի է** անորոշ դերբայ կապակցությունները՝ դիտարկելով դրանք որպես միակազմ նախադասություններ»⁶⁵:

* * *

Միանգամայն պարզ է, որ, վերջիվերջո, եղանակավորողների թվարկումն անհարժեշտություն է դառնում: Վ. Առաքելյանը եղանակավորողներ է համարում հետևյալները՝ **սկսել, հաճել, կարողանալ, կամենալ, մտադրվել, ցանկանալ, ձգտել, համարձակ-**

⁶⁴ Նույն տեղում, էջ 47:

⁶⁵ Նույն տեղում, էջ 48:

վել, վճռել, հանդգնել, փորձել, փափագել, աշխատել («ծգտել» իմաստով), ուզել, երագել, ջանալ, ուխտել, բարեհաճել, կարծել, հետաքրքրվել, վախենալ, ամաչել, քաշվել, տատանվել, դժվարանալ, սիրել, վարժվել, սովորել, գիտենալ, զգուշանալ, իմանալ, ճգնել, պարտավորվել, ստիպվել, երդվել, հարկադրվել, հետաքրքրվել, չարչարվել, խոստանալ, որոշել, համաձայնել, մոռանալ, հոժարել, գերադասել, ձևանալ, սպառնալ, սպասել, մերժել, շարունակել, դադարել, դանդաղել, պատրաստվել, անհրաժեշտ համարել, իրավունք ունենալ, սիրտ անել, հանձն առնել, մտադրություն ունենալ, արժան համարել, ցանկություն հայտնել, խոսք տալ, մտքով անցնել, անհարմար համարել, հարկավորություն համարել, կարող է, պարտավոր է, անկարող է, ուրախ է, մտադիր է, պատրաստ է, հոժար է, անզոր է ...⁶⁶:

«Հայոց լեզու» գրքի երկրորդ հատորում նշվածներն են՝ սկսել, դանդաղել, շարունակել, դադարել, ուզել, աշխատել, կամենալ, ցանկանալ, ծգտել, ջանալ, մտածել, երագել, սիրել, զգուշանալ, սովորել, վարժվել, համարձակվել, կարողանալ, քաշվել, ճգնել, ստիպվել, դժվարանալ, հարկադրվել, վճռել, որոշել, համաձայնել, խոստանալ, իմանալ, գիտենալ, գերադասել, մոտենալ, սպառնալ, երդվել, ձևացնել, սպասել, մերժել, նախատեսել: Իսկ օժանդակ բայի հետ եղանակավորող ձևավորող բառերից նշվում են՝ անհրաժեշտ, հարկավոր, դժվար, կարելի, կարող, անզոր, պարտավոր, մտադիր, պատրաստ, հոժար, ուրախ բառերը⁶⁷:

«Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական իրատարակության երրորդ հատորում եղանակավորող նշանակությամբ առանձնացված են՝ սկսել, շարունակել, դադարել, պատրաստվել, ցանկանալ, մտադրվել, փափագել, ուզել, կամենալ, երագել,

⁶⁶ Տե՛ս՝ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 139-148:

⁶⁷ Տե՛ս՝ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Երևան, 1975, էջ 157-176:

կարողանալ, ծգտել, աշխատել, փորձել, ջանալ, վճռել, հրամայել, հակվել, որոշել, ուխտել, խոստանալ, մոռանալ, ստիպել, հակադրվել, պարտավորվել, համարձակվել, համաձայնվել, մտածել, վախենալ, սարսափել, խնդրել, իմանալ, սիրել, զգուշանալ, գերադասել, սպառնալ, տատանվել, դժվարանալ, սպասել, շտապել, նաև՝ պետք է, պիտի, անկարելի է, անհնար է, անհնարին է, կարող է, դժվար է, հեշտ է, պատրաստ է, ապարդյուն է⁶⁸:

* * *

Վերը շարադրվածից ակնհայտ է դառնում, որ հատկապես վերջին շրջանում «եղանակավորող + ԱԴ» կառույցն առավել խորությամբ է ուսումնասիրվել: Միաժամանակ տարակարծություններն էլ են ավելի խորացել, հարցի լուծման երկբևեռությունն առավել ընդգծվել է: Ուշադրության կենտրոնում պետք է պահել այն հանգամանքը, որ անորոշ դերբայով կառույցներն այս կամ այն չափով կրում են տարբեր լեզուների ազդեցությունը և հատկապես այն լեզուների, որոնցից մեծ թվով թարգմանություններ են կատարվել և կատարվում: Գրաբարի համար այդպիսիք էին հունարենն ու լատիներենը, ժամանակակից հայերենի համար այդպիսիք են ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը:

Ըստ էության հասկանալի է, որ գործ ունենք բարդ լեզվաիրողության հետ թե՛ շարահյուսական արժեքի գնահատման, թե՛ գործող նորմով սահմանված օրինաչափություններին համապատասխանելու առումներով:

Բարդությունն սկսվում է հենց կառույցի անվանումից. ինչպե՞ս անվանել այն: Սովորաբար ընդունվում է «եղանակիչ + ԱԴ» անվանումը: Կարծում ենք՝ ավելի հարմար է ընտրել «եղանակավորող + ԱԴ» ձևակերպումն այն առումով, որ վերջինս ավելի լայն ընդգրկում ունի, քան մյուսները. այստեղ կարող են

⁶⁸ Տե՛ս՝ Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 159 -162:

ներառվել նաև նրանք, որոնք կորցնում են այդպիսի նշանակությունը՝ վերածվելով իմաստային հնաբանությունների. նաև նրանք, որոնք եղանակիչ դառնալու ճանապարհին են կամ նոր են նման նշանակություն ձեռք բերում:

Բարդ լեզվաիրողություն համարելու հիմնական պատճառները բխում են իրար շաղկապված, իրարով պայմանավորված հետևյալ հարցերի ոչ միօրինակ, երբեմն հակադիր մեկնաբանություններից.

ա) անորոշ դերբայի և դիմավոր կամ միադիմի բայերի զուգորդումները մեկ միասնական գործառույթ ունե՞ն, թե՞ ոչ. այսինքն՝ շարահյուսական տարբեր պաշտոններ կատարող միավորների կապակցությո՞ւն է, թե՞ ոչ, շարահուսո՞ւյթ է, թե՞ շարահուսույթների զուգորդում.

գ) բայիմաստի արտահայտման և բայական ձևավորվածության փոխհարաբերությունը՝ կապված ստորոգյալի ըմբռնման և ստորոգման ընկալման հետ.

դ) սեռային և խնդրառական հատկանիշներն ի՞նչ արժեք ունեն կառույցի և նրա բաղադրիչների քննության հարցում.

ե) անորոշի թեք հոլովածների փոխարեն ուղիղ ձևի գործածության կամ անորոշի գործառական երկվության իրողությունը. խնդրառական նորմից կատարված շեղումները սխա՞լ և մերժելի՞ համարել, թե՞ «բացարձակ աներևույթը» կանոնական դաշտ բերել:

զ) կառուցի բաղադրիչների միջև քերականական համաձայնություն կա՞, թե՞ չկա:

է) կառույցի ծավալման դեպքում լրացումները եղանակավորողների՞ն են լրացնում, ԱԴ-ի՞ն, թե՞ երկուսին միաժամանակ: Մյուս կողմից հետաքրքիր է իմանալ՝ տարբերության կա՞ լրացումներ առնելու հարցում: (Վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ եղանակավորողների լրացումներն առավել շատ եղանակական, արտահայտչասաստկական բառեր են՝ ձևի, չափի ու քանակի, մակբայներ, սաստկական, սահ-

մանափակման, կամային վերաբերականներ և այլն, որոնց նման իմաստները հավելվում են դիմավոր բայի եղանակական իմաստին և տարածվում նաև ԱԴ-ի վրա, իսկ ԱԴ-ին լրացնողները՝ բայական անդամի՝ լեզվական նորմով սահմանված լրացումներն են):

Տվյալ հարցը լեզվաբանական եզրույթաբանությամբ կարելի է այսպես ձևակերպել՝ քննության առարկա կառույցը մե՞կ շարահուսույթ է, թե՞ երկու շարահուսույթների գումար է:

Այսպիսով՝ կառույցն արժեքավորելիս, նրա բաղադրիչների փոխհարաբերությունները քննելիս հայտնված կարծիքները սկզբունքորեն բաժանվում են երկու խմբի՝

1. Մասնագետների մի խումբը կառույցը վերլուծելի է համարում, իսկ ԱԴ-ն՝ ենթակա կամ լրացում, խնդրի տեսակ, եղանակավորող՝ ստորոգյալ (Մ. Աբեղյան, Գ. Սևակ, Ռ. Իշխանյան, Ս. Գյուլբուդաղյան, Մ. Ասատրյան, Հ. Հարությունյան, Ա. Պապոյան, Գ. Ներսիսյան և ուրիշներ):

2. Մյուս խումբը կառույցը նախադասության մեկ անդամ է համարում շարահյուսական մեկ միավորի արժեքով, նախադասության մեջ՝ բաղադրյալ ստորոգյալ, չնայած այն անվանվում է տարբեր կերպ՝ բարդ ստորոգյալ (Գ. Ջահուկյան, Վ. Ավագյան), բարդ անվանաբայական ստորոգյալ (Վ. Առաքելյան), բայական բաղադրյալ ստորոգյալ (Ս. Աբրահամյան, Վ. Քոսյան, Լ. Թեյլյան), բայանվանական բաղադրյալ ստորոգյալ (Ա. Քյուրքչյան):

Կարող ենք մեկ այլ բաժանում էլ կատարել, հաշվի առնելով միասնականության սկզբունքը՝

1. Լեզվաբանների մի խումբը բոլոր դեպքերում եղանակավորող իմաստ ունեցող բայի և ԱԴ-ի զուգորդումների դեպքում առաջնորդվում են մեկ միասնական, թեկուզ և հակադրվող սկզբունքով՝ մի դեպքում՝ բարդ ստորոգյալ են ոչ միայն անորոշի ուղիղ ձևի, այլև դրա տրական և բացառական հոլովների զուգորդումները դիմավոր բայի կամ բաղադրյալ ստորոգյալի հետ (Գ. Ջահուկյան և ուրիշներ), կամ բոլոր դեպքերում՝ անկախ

եղանակավորող բայի սեռից և անորոշի հոլովական ձևավորումից կառույցի բոլոր իրացումները շարահյուսորեն վերլուծելի են (ուղիղ խնդիր, հանգման, անջատման անուղղակի խնդիրներ, անորոշ խնդիր) (Ռ. Իշխանյան, Հ. Հարությունյան, Ա. Պապոյան):

2. Մյուս խումբը տարբեր սկզբունքներով կամ «եթե»-ներով է գնահատում կառույցը: Այսպես՝

ա) Եթե միևնույն ենթակայի գործողություններն են, կազմում են բաղադրյալ բայական ստորոգյալ, եթե միևնույն ենթակայի գործողությունները չեն, ստորոգյալ չեն կազմում, անորոշը խնդիր է (Վ. Առաքելյան):

բ) Ներգործական սեռի բայերի հետ գործածված անորոշ դերբայը ուղիղ խնդիր է, մյուս բայերի հետ գործածված անորոշ դերբայը դիմավոր բայի հետ կազմում է բաղադրյալ ստորոգյալ (Ս. Գյուլբուդադյան):

գ) Եթե անորոշ դերբայի հոլովաձևը կախված է խնդրառու բայից, խնդիր է, եթե զուրկ է հոլովի կարգից, միասին կազմում են բաղադրյալ ստորոգյալ (Մ. Ասատրյան):

դ) Թեք ձևերի փոխարեն անորոշի ուղիղ ձևերով տարբերակները մեկ միավոր են՝ բաղադրյալ ստորոգյալ (Ս. Գյուլբուդադյան, Մ. Ասատրյան)և այլն:

Նրանք, ովքեր ընդունում են կառույցի վերլուծելի լինելը, աշխատում են հիմնավորել իրենց տեսակետը:

ա. Այսպիս զուգորդումներում անորոշ դերբայը պատասխանում է առանձին հարցի, նշանակում է՝ այն նախադասության առանձին անդամ է և չի կարող դիտվել մեկ միասնական ստորոգյալի մաս:

բ. Եթե «եղանակավորող + ԱԴ»-ն ստորոգյալ է, իսկ ստորոգյալ նշանակում է ենթակա ունեցող անդամ, ապա ո՞ւր է ենթական, ուրեմն այն ստորոգյալ չէ:

գ. ԱԴ-ի կողքին եղանակավորող իմաստ ունեցող բայերը կարող են գործածվել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ ձևով,

հետևաբար բացառվում է կառույցը բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ անվանելը:

դ. Նման կառույցները ստորոգյալ են դիտվում ռուսերենի ազդեցությամբ. ռուսերենում անորոշ բայածկը (инфинитив) գոյականի հատկանիշներ չունի, սոսկ բայական է և նման կառույցներում ենթակա լինել չի կարող, իսկ հայերենում այդպես չէ:

ե. Հայերենի ԱԴ-ն ունի գոյականի ընդգծված հատկանիշներ. անդեմ բայ լինելով զգալապես նաև գոյական է. հոլովվում է, մի խոսքով՝ հանդես է գալիս գոյականական արժեքով և լինում է ենթակա կամ լրացում:

զ. ԱԴ-ն կառույցում կարող է՝ փոխակերպվել գոյականով, դերանունով: Նույն դիրքում վերջիններս ենթակա են կամ լրացում, հետևաբար համանման կառույցներում առանձին անդամ է նաև ԱԴ-ն:

է. Երբ փոխվում է շարադասությունը, ԱԴ-ն դառնում է նախադաս և որոշիչ հոդ է ընդունում, ստացվում է, որ տվյալ դեպքում ենթակա է. ինչո՞ւ ետադաս գործածությամբ ևս ենթակա լինել չի կարող:

Հակառակ կողմը պնդում է.

ա. Կառույցի գնահատման հարցում առանձին հարցի պատասխանելը ելակետային չէ. քերականական ավանդույթով նախադասության անդամները որոշում են հարց տալու միջոցով, բայց ոչ բոլոր դեպքերում է այս միջոցը գերակայում. օրինակ՝ բաղադրյալ ստորոգյալի վերադիրը և կապակցական, բառակապակցական շատ միավորներ ևս պատասխանում են առանձին հարցի. տարրալուծե՞լ դրանք...

բ. Եթե ստորոգյալ նշանակում է միայն ենթակա ունեցող անդամ, ապա ի՞նչ են նշանակում միակազմ նախադասությունների ստորոգյալները:

գ. Իսկապես, դիմավոր բաղադրիչները կարող են հանդես գալ անդեմ ձևերով՝ կառույցը վերածելով դերբակայական դարձվա-

ծի, բայց դրանք դիմավոր բայով կառույցների փոխակերպական տարբերակներ են:

դ. Հայերենում նման կառույցների գոյությունը ռուսերենի ազդեցությամբ բացատրելը սխալ կլինի, քանի որ հիշյալ կառույցներն հանդիպում ենք 5-րդ դարից սկսած (**կարեմ... , մարթիմ... , պիտի...**): Այլ բան է, երբ ասում ենք, որ ԱԴ-ի գուգաձևերը ռուսերենի սխալ ազդեցությամբ միակերպվում են:

ե. Հայերենում ԱԴ-ի՝ ընդգծված գոյականական հատկանիշներ ունենալը դեռևս չի նշանակում, թե ԱԴ-ն զուրկ է բայական հատկանիշներից: Ճիշտ է՝ ԱԴ-ն հոլովվում է, բայց այն ամենից առաջ բայ է:

զ. Ինչ վերաբերում է ԱԴ-ի նախադաս կամ ետադաս գործածվելուն, ապա նախադաս լինել չի նշանակում հոդ ունենալ նաև, չնայած ընդունելի է, որ անհոդը երբեմն խորթ է հայերենի համար: Ինչևէ, հնարավոր է ԱԴ-ի թե՛ հոդով, թե՛ անհոդ կիրառությունը նախադաս և ետադաս դիրքերում: Միայն թե հոդն այստեղ շարահյուսական տարբերակիչ գործոն է դառնում: Հոդով կիրառվելիս ԱԴ-ն գոյականի նման դառնում է ենթակա, լրացում, իսկ անհոդ կիրառվելիս, երբ առավելապես ընդգծվում են բայական հատկանիշները, ստորոգյալի մաս է: Տվյալ դեպքում շարահյուսական նշույթի արժեք ունի նաև շարադասական փոփոխությունը:

է. Որոշ դեպքերում շարահյուսական նշույթի դեր ունի նաև համաձայնությունը: Մի կողմից՝ «եղանակավորող + ԱԴ» կառույցի բաղադրիչների միջև քերականական համաձայնություն չկա: Մյուս կողմից՝ ըստ ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնի՝ բազմակի ենթակաները կապվում են հոգնակի թվով արտահայտված ստորոգյալի հետ. այդ դեպքում ինչպես բացատրել համաձայնական կանոնական շեղումը հետևյալ կառույցներում՝ **Կարելի է տեսնել, հիշել..., անհնար է մոռանալ, չհիշել, ջնջել...**: Հետևաբար, սրանք միակազմ նախադասություններ են ձևավորում, որոնցում «անհրաժեշտ է, կարելի է,

անհնար է (և այլն) + ԱՂ» կապակցությունները մեկ միասնական ստորոգյալի արժեք ունեն:

Այո՛, ընդունել են, և ընդունում ենք ԱՂ-ի յուրահատուկ լինելը դերբայների շարքում, նրա երկակի էությունը, ընդգծված գոյականական հատկանիշներ ունենալը, հոլովվելու ունակությունը, հոդառության կարելիությունը. տրական և բացառական հոլովներով, ինչպես նաև ուղղականաձև անորոշ դերբայների և եղանակավորող երանգներ դրսևորող բայերի կապակցությունները շարահյուսորեն վերլուծելի են, բայց կիրառական աշխարհում այն չենք կարող զրկել նաև իր հիմնական էությունը՝ բայական էությունը դրսևորելուց. ընդհանրապես եղանակավորողների հետ հանդես գալը և ստորոգյալի մաս դառնալը նրա բայական արժեքի դրսևորումներից մեկն է: Հեղինակավոր է Մ. Աբեղյանի կարծիքը, նաև՝ հասկանալի, սակայն ժամանակի գործոնն անտեսել չի կարելի. նրա, և ասենք, Գ. Ջահուկյանի մոտեցումների տարբերությունը ժամանակների տարբերություն է: Մ. Աբեղյանի ժամանակ հիշյալ կառույցների վերացարկումը չէր հասել անտարրալուծելիության աստիճանի (դրա համար էլ դիտում էին առանձնաբար), բայց ինչու մոռանալ, որ վերացական բայերի մասին խոսելիս, Մ. Աբեղյանը ընդգծում էր. «Կան բայեր, ինչպես դառնալ, կոչվել, համարվել և այլն, որոնք մենակ հաճախ բավարար չափով որոշ բայիմաստ չունեն. դրանց հետ սովորաբար դրվում է իբրև բայիմաստի լրացում մի գոյական կամ ածական, որ բայերին տալիս է ավելի որոշ բովանդակություն»⁶⁹: Նշանակում է, որ այս դեպքում ևս բավարար չափով որոշ բայիմաստ չունեցող բայերի կողքին իբրև բայիմաստի լրացում կարող է դրվել նաև անորոշ դերբայը՝ որպես ստորոգելի, իսկ Ջահուկյանի (մեր) ժամանակներում դրանք շարահյուսական մեկ միավորի արժեք ունեն: Ընկալման երկվությունը բացատրվում է անցման շրջանի երկվությամբ: Այսօր առավել ևս, երբ գնալով ավելանում

⁶⁹ Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, 1974, էջ 300:

է բայական և ոչ բայական եղանակավորողների թիվը, երբ առավել նկատելի է դառնում նրանց կողքին ԱԴ-ի ձևի միակերպության հակումը (սխալ, թե՞ ճիշտ՝ երևի թե նորից ժամանակի խնդիր է դառնում), օրինաչափության վերածվելու միտումը, ավելի գիտական կլինի «եղանակավորող + ԱԴ» կառույցը նախադասության մեկ անդամ՝ ստորոգյալ համարելը՝ միայն թե արտահայտված վերլուծական, նկարագրական եղանակով՝ եղանակավորողով և ԱԴ-ով («եղանակավորող + ԱԴ»), ուր հիմնական գործողությունն արտահայտվում է անորոշ դերբայով, իսկ դիմավոր բայը կամ միադիմի կապակցություններն ունեն եղանակավորիչ արժեք:

ՍՏՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՈՐՊԵՍ «ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ + ԱԴ» ԿԱՌՈՒՅՑԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ- ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Նորագույն հայ լեզվագիտության հիմնահարցերից մեկը ստորոգման ըմբռնումն է, ստորոգման՝ որպես քերականական կարգի ընդհանուր պատկերացումներն ու մեկնաբանությունները, ստորոգման ժամանակ հանդես եկող քերականական կարգերը: Ստորոգման ուսումնասիրությունը անմիջականորեն կապվում է նախադասության՝ որպես լեզվի առավելագույն միավորի, նաև որպես խոսքի մշակույթի՝ նվազագույն միավորի քննության հետ: Լեզվաբանների՝ ստորոգման հարցում տարակարծություններն առավելապես հետևանք են այն բանի, որ ստորոգումը, որպես նախադասության էական հատկանիշ, ոչ միայն հայագիտության, այլև ընդհանրապես լեզվաբանության մեջ ոչ միշտ է ճիշտ ընկալվում ու մեկնաբանվում: Ոչ միշտ են հստակորեն տարբերակվում նախադասության և, համապատասխանաբար, ստորոգման բովանդակության ու արտահայտության պլանները, նրանց ներքին էությունը և դրսևորման միջոցները: Ոչ բոլոր դեպքերում է ստորոգումն առնվում քերականական զանազան կարգերի և նախադասության՝ իրականության և արտահայտողի հետ ունեցած հարաբերությունների մեջ. նրա էությունը սովորաբար նեղացվում է և վերաբերում միայն ենթակային ու ստորոգյալին:

Ժամանակակից հայերենում օրինաչափ է, երբ ԱԴ-ով բայական բաղադրյալ ստորոգյալ է ձևավորվում, սակայն դրանք բոլոր դեպքերում «եղանակավորող + ԱԴ» տիպի ստորոգյալներ չեն. «խոնարհված բայ + ԱԴ»-ն ավելի լայն ընդգրկում ունի, ար-

տահայտվում է կամ իրացվում է տարբեր ձևերով (այսպես՝ Մի գաք մեզ վրա, այս լեռներին **խաբել չի լինի** (ՍԽԱ, 360): Հա՛գույգ փռշտա, **մրսելը մրսել, Հազալն էլ հազալ է մնում** (ՊՍ, 1, 258): Կարող է մայրը խլանալ հանկարծ, Իսկ մայրությունը **խլանալ չունի...** Կարող է մայրը կուրանալ հանկարծ, Իսկ մայրությունը **կուրանալ չունի** (ՀՄԴԾ, 193:):

Նկատի առնենք նաև, որ կա «դիմավոր բայ + ԱՂ» ձևաբանական մեկ արժեքով կազմություն՝ **տալ** բայի հարադրությամբ պատճառականը (Ես ցույց կտամ այդ սևավորին, - բորբոքվեց իշխանը, - **բանադրել կտամ, կարգալույծ անել կտամ** (ՄՍԳՆ, 279):

«Եղանակավորող + ԱՂ» ստորոգյալ-կառույցը «խոնարհված բայ + ԱՂ» ստորոգյալի մի կարևոր դրսևորումն է:

Եղանակավորողով և ԱՂ ստորոգելիով ստացվում է մի կառույց, ուր եղանակավորող իմաստն արտահայտվում է կապակցության առաջին մասով, իսկ բուն գործողությունը՝ երկրորդով: Ըստ որում կապակցության ձևերից յուրաքանչյուրն առանձին-առանձին չի կարող արտահայտել ստորոգյալի ողջ նշանակությունը: Կապակցության երկու եզրերը փոխադարձաբար կախվածություն ունեն իրարից՝ իմաստային և քերականական, ստորոգյալի հիմնական նշանակությունն արտահայտում է ԱՂ-ն, որը քերականորեն կախում ունի եղանակավորողից: Կառույցը նաև մի յուրահատկություն ունի. եղանակավորողը միաժամանակ օժտված է անորոշի փոխարեն ուրիշի ուղղակի խոսք ներմուծելու կարողությամբ:

Լեզվաբանների՝ այս հարցում միակարծիք չլինելը, նրանց տարակարծություններն առավելապես հետևանք են այն բանի, որ ստորոգումը, որպես նախադասության էական հատկանիշ, ոչ միայն հայագիտության, այլև ընդհանրապես լեզվաբանության մեջ ոչ միշտ է ճիշտ ընկալվում ու մեկնաբանվում: Հայ քերականագիտության մեջ ստորոգման տեսությունը առաջինը տվել է Մ. Աբեղյանը: Գործողությունը ևս իբրև հատկանիշ ընկալելով՝

նա եզրակացնում է. «Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածողությունն է, որի մեջ ստորոգում է լինում, այսինքն՝ մի առարկայի վերագրվում է մի հատկանիշ... Խոսքի (նախադասության) էությունը ստորոգումն է: Առանց ստորոգման խոսք չկա»⁷⁰: Բնականաբար, արեղյանական տեսությունը վկայվում է տարբեր լեզվաբանների տարբեր աշխատություններում. «Ստորոգում՝ ահա այն կախարդական գավազանը, որը սովորական բառին կամ բառակապակցությանը մի հատուկ կյանք ու էություն է ներշնչում՝ դրանք դարձնելով մտքի ձևավորման ու հաղորդակցման միջոց»⁷¹, կամ՝ բառակապակցությունները, նաև բայական վերահիմաստավորված բառակապակցությունները՝ դարձվածքները «ստանալով ստորոգման զորեղ հատկանիշը՝ վերածվում են նախադասությունների»⁷²: Փիլիսոփայական երանգավորում ունի Է. Աթայանի կարծիքը. նա ստորոգումը կամուրջ է համարում լեզվական և արտալեզվական աշխարհների միջև. ստորոգումը աշխարհի պատմական ճանաչումն է, որն իր խորքային մակարդակում համընկնում է տրամաբանական դատողության⁷³: Ն. Պառնասյանը «Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ խոսում է ստորոգման իրացման մասին՝ իր ասածը տեսանելի դարձնելով ստորոգման քերականական կարգերի (հաստատում-ժխտում, եղանակավորում, ժամանակ, դեմք, թիվ) գծապատկերով⁷⁴: Ս. Աբրահամյանը ևս հաստատում է, որ ստորոգման միջոցով է հատկանիշը վերագրվում առարկային՝ ավե-

⁷⁰ Աթեյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 359-360:

⁷¹ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 1987, էջ 119:

⁷² Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 51:

⁷³ Տե՛ս՝ Աթայան Է., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 193 - 202:

⁷⁴ Պառնասյան Ն., Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986, էջ 79:

լացնելով, որ նրա դերը որոշակիորեն երևում է հատկապես բաղադրյալ ստորոգյալների մեջ, ինչպես և բայի բաղադրյալ ժամանակներով արտահայտված ստորոգյալներում: Նա խոսում է ստորոգման արտահայտման միջոցների մասին, կարևորում բայի դերն այս հարցում. ստորոգումը կարող է արտահայտվել օժանդակ բայի, բայի քերականական վերջավորությունների, վերացական բայերի միջոցով: Եվ որքան էլ այդ միջոցները իրենց դրսևորման ձևերով տարբեր են, այնուամենայնիվ դրանց մեջ կա շատ էական ընդհանրություն, այն է՝ դրանք բոլորն էլ բայական ձևեր են: Ստորոգումը սերտորեն կապված է բայի քերականական կարգերի հետ, բայց միաժամանակ նշում է, որ ոչ բոլոր կարգերն են կարևոր ստորոգման ձևավորման համար: Այսպես՝ բայի սեռի կարգը ստորոգման ձևավորման համար կարևոր չէ: Ստորոգման համար կարևոր են բայի մասնավորապես եղանակային ձևերին հատուկ քերականական կարգերը՝ եղանակ, դեմք, ժամանակ, թիվ. դրանք բոլորը հավասար դեր չունեն ստորոգման համար: Այս հարցում առավել զգալի դերը պատկանում է եղանակի կարգին: Ստորոգումը շարահյուսական կարգ է և հիմնականում ձևավորվում է բայի ձևաբանական նշված կարգերի հիմքի վրա: Բայց լեզվաբանը ստորոգման ձևաբանական հիմքերի կողքին առանձնացնում է և շարահյուսական հիմքերը: Այնուհետև ընդգծում է, որ «այս ձևաբանական կատեգորիայի և ստորոգման շարահյուսական կատեգորիայի միջև հավասարության նշան դնել չի կարելի: Եվ այդ՝ հետևյալ պատճառներով: Նախ, նախադասության մեջ վերաբերմունքը ավելի բարդ է ու բազմազան ձևերով է արտահայտվում, քան բայի եղանակային ձևերին հատուկ վերաբերմունքը: Ստորոգման կամ, ավելի ընդհանուր ձևով ասած, նախադասության մեջ արտահայտվող վերաբերմունքը դրսևորվում է տարբեր ու բազմազան միջոցներով ու ձևերով՝ նախադասության ինտոնացիայով (որն իր հերթին ունենում է բազմազան երանգներ), եղանակավորող բառերով, այդպիսի դեր կատարող բառակապակցություններ-

րով և այլն»⁷⁵: Իհարկե, լեզվաբանը չի անդրադառնում հիշյալ կառույցին և նրա բաղադրիչների դերին՝ ստորոգման հայեցակետից, բայց այն կարևորում է անդեն նախադասությունների համար:

Ստորոգման հարցն ավելի լայն առումներով քննում է Գ. Ջահուկյանը: Շարահյուսական նրա ըմբռնումը տարբերվում է հայ (և ոչ միայն հայ) լեզվաբանների ավանդական ըմբռնումներից: Ըստ էության հանգելով Մ. Աբեղյանի դատողությանը՝ նախադասության էական հատկանիշը ստորոգումն է. առանց ստորոգման նախադասությունը լոկ բառակապակցություն է, նա ավելի է խորացնում ու ընդարձակում ստորոգման տեսությունը. «Ոչ միշտ են հստակորեն տարբերակվում նախադասության և, համապատասխանաբար, ստորոգման բովանդակության ու արտահայտության պլանները, նրանց ներքին էությունը և դրսևորման միջոցները...: Ոչ բոլոր դեպքերում է ստորոգումն առնվում քերականական զանազան կարգերի և նախադասության՝ իրականության և արտահայտողի հետ ունեցած հարաբերությունների մեջ, նրա էությունը սովորաբար նեղացվում է և վերաբերում է միայն ենթակային ու ստորոգյալին», - գրում է Գ. Ջահուկյանը և վերջին մոտեցումը անընդունելի համարում: Ըստ նրա նախադասությունը հանդես է գալիս որպես բայական բառակապակցություն + ստորոգման (հաղորդակցման իրադրության) դրսևորման բոլոր միջոցները և ստորոգման արտահայտության հիմնական միջոցներ է համարում՝

- 1) հնչերանգը (ծայնի ելևէջումը),
- 2) շարահյուսությունը,
- 3) հանգույցը (օժանդակ բայը),
- 4) բայական վերջավորությունն ու վերլուծական ձևերի՝ վերջավորության արժեք ունեցող զուգորդումները (կոմպլեքսները):

⁷⁵ Արթուրյան Ս., Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, էջ 27-28:

խոսելով քերականական կարգերի անբաժանելի բաղադրիչների, «եզրերի կամ քերականությունների» մասին՝ մատնանշում է նաև ստորոգման եզրերը. «Դրանք, բնականաբար, որոշվում են արտահայտության համապատասխան միջոցների ստեղծած իմաստային հակադրությամբ. ըստ այսմ կարելի է տարբերակել ստորոգման երեք եզր՝ 1) ընկալական կամ կրական, որ ներկայացվում է զրո ձևությամբ և արտահայտվում է հնչերանգով..., 2) վերագրական, որ արտահայտվում է էական բայով..., 3) եղելական, որ արտահայտվում է բայական վերջավորություններով և սրանց փոխարինող վերլուծական ձևերով»⁷⁶: Ի վերջո՝ եզրակացնում է. «Ստորոգումը, նախադասության իրադրացման կամ ստորոգայնության դրսևորումն է: Իրադրայնացումը նախադասության բոլոր մասերի հարաբերումն է արտալեզվական իրականությանը և հանդես է գալիս այնպիսի կարգերով, ինչպիսիք են եղանակավորությունը, սեռայնությունը, իրադրական ժամանակայնությունը, դիմացայնությունը. սրանք դրսևորվում են ինչպես բայի եղանակի, սեռի, իրադրական դեմքի և ժամանակի, այնպես էլ ուրիշ միջոցներով»⁷⁷: Նման ծավալով մեջբերումն ամենևին էլ ինքնանպատակ չէ. ակնհայտ է դառնում, որ ստորոգման կարևորագույն միջոցներից մեկն էլ եղանակավորումը կարող է լինել, իսկ այն, նրա խոսքերով ասած, «նախադասության բովանդակության հարաբերությունն է արտահայտվող անձին, վերջինիս վերաբերմունքի դրսևորում»⁷⁸:

Ստորոգման նման ըմբռնումով էլ հաստատվում է այն բայերի եղանակավորող էությունը, որոնց գործողության կատարողը ԱԴ-ով արտահայտված գործողության կատարողը չէ: Շարույթի ըմբռնման մասին խոսելիս նա ստորոգումը նախադասության համար էական, պարտադիր հատկանիշ է դիտում, իսկ շարույթի

⁷⁶ **Զահուկյան Գ.**, Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Երևան, 1985, թ.1., էջ 30:

⁷⁷ Նուն տեղում, էջ 30:

⁷⁸ Նույն տեղում:

համար՝ ոչ, շարույթն ու նախադասությունը հակադրում է ստորոգման պարտադրականության հատկանիշով:

Ստորոգումը հատկանիշի վերագրումն է առարկային: Իրականության մեջ օբյեկտիվորեն առարկաները գոյություն չունեն առանց հատկանիշների: Սակայն մարդկության մտածողության վիթխարի նվաճումն այն է, որ մարդը կարողանում է վերանալ իրականությունից, անջատել, բաժանել առարկան հատկանիշից և դիտել իբրև ինքնուրույն, առանձնաբար գոյություն ունեցող բաներ...

Քննության նյութ դարձած կառույցի արժեքավորման հարցում պակաս կարևոր չէ եղանակավորության կարգի ըմբռնումը: Այն ևս հստակ և լիարժեք ներկայացված չէ: Գ. Ջահուկյանը այսպես է բացատրում եղանակավորման էությունը: Բայական եղանակը սովորաբար համարվում է արտահայտության բովանդակության հարաբերությունը դեպի իրականությունը: Եղանակավորությունը սահմանվում է որպես հասկացական կարգ, որ ցույց է տալիս խոսողի հարաբերությունը արտահայտության բովանդակության և արտահայտության բովանդակության հարաբերությունը՝ իրականության հետ (հաղորդման հարաբերությունը նրա ռեալ իրականացման հետ) և իրականացվում է քերականական ու բառային տարբեր միջոցներով (ինչպես բայի եղանակը, եղանակավորող բառերը, հնչերանգը և այլն): Վերնալով եղանակավորման դրսևորման միջոցներից՝ դժվար չէ պարզել, որ եղանակավորման մեջ մտնում են զգայական, կամային և սուբյեկտիվ գնահատման դրսևորումները: Այս բոլոր դեպքերում մենք գործ ունենք իրական ու սուբյեկտիվ պրոցեսների փոխհարաբերությունների հետ: Այլ կերպ ասած՝ առկա է օբյեկտիվի (իրականի) և սուբյեկտիվի անմիջական հարաբերություն:

Եղանակավորման կարգի մասին բավական մանրամասնորեն խոսում է Ն. Պառնասյանը: Նա նշում է, որ եղանակավորման կարգն էլ պիտի քննել նույն սկզբունքներով, ինչ մնացած կարգերը: Համեմատություն է անցկացնում թվի քերականական

կարգի հետ: Թվի կարգի իմաստային հիմքը կարող է արտահայտվել եզակի և հոգնակի թվերի ցուցիչներով, ինչպես նաև բառական միջոցներով (մեկ, երկու, մի քանի, շատ): Վերջիններս, սակայն, չեն կարող համարվել թվի քերականական կարգի արտահայտության միջոցներ քերականական մակարդակում: Ճիշտ նույն ձևով եղանակավորման արտահայտության քերականական միջոցները պետք է տարբերակել եղանակային երանգավորում ու իմաստ ունեցող բառերից ու արտահայտություններից, որոնք թեև երևան են գալիս նախադասության մեջ, սակայն որոշիչ չեն նախադասության եղանակի կարգի դրսևորման համար: Այդպիսիք են, օրինակ, **ուզենալ, ծագել, ենթադրել, կարծել, ավստել, դժգոհել, հրամայել, ուրախանալ**, նաև՝ **սիրել, ատել** և բազմաթիվ այլ բառեր, որոնք իրենց բառական իմաստներով արտահայտում են հուզական-զգացմունքային, կամային, նաև գնահատողական վերաբերմունք իրականության զանազան երևույթների նկատմամբ, սակայն չեն կարող համարվել եղանակի քերականական կարգի ձևաբանական ցուցիչներ ճիշտ այնպես, ինչպես թվի քերականական կարգի ցուցիչներ չեն թվականները և թվային իմաստ ունեցող շատ բառեր: Կարելի է ենթադրել, որ այս կառույցում տեղի է ունենում եղանակավորման լայն և նեղ ըմբռնումների համատեղում՝ մի կողմից՝ գործողության սուբյեկտի և գործողության միջև եղած եղանակային հարաբերությունն է, մյուս կողմից՝ օբյեկտիվ իրականության մեջ առկա և հաղորդման նյութ հանդիսացող առարկայի և գործողության միջև եղած հարաբերության բնույթը ցույց տվող և բառական միջոցներով արտահայտված եղանակավորումն է՝ սահմանված խոսողի կողմից, որը չի ազդում նախադասության ընդհանուր եղանակավորման վրա: Մեր համոզմամբ այս կառույցը ստորոգման արտահայտության ձև է, և, թեև եղանակավորություն արտահայտում է, բայց եղանակավորման կարգի դրսևորում չէ հենց թեկուզ այն պարզ պատճառաբանությամբ, որ կառույցը կա-

րող է եղանակային փոփոխությունների ենթարկվել, ունենալ իր հարացույցն ըստ եղանակի կարգի, բայց չփոփոխել, պահել կառույցին վերագրված եղանակավորման բնույթը: Մեզ հետաքրքրող կառույցի մասին Ն. Պառնասյանը գրում է. «Հաճախ նախադասության եղանակավորման կարգի մեջ են մտցնում նաև գործողության սուբյեկտի և գործողության միջև եղած եղանակային հարաբերությունը, որն արտահայտվում է այսպես կոչված եղանակավորող բայերի ու գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի հարադրությամբ: Սա, ճիշտ է, լայն առումով իրոք եղանակավորում է, և մտնում է լեզվի եղանակավորման համակարգի մեջ, սակայն, մեր կարծիքով, չի կարող համարվել նախադասության քերականական կարգ, քանի որ վերջինս սահմանվում է խոսողի կողմից և ոչ թե գործողության սուբյեկտի: Երբ ասում ենք **Նա ուզում է գնալ, Նա կարող է գնալ, Նա անհրաժեշտ է համարում գնալ** և այլն, գործողություն կատարողի և գործողության միջև իրոք կա եղանակային կապ, սակայն այդ կապը խոսողի տեսանկյունով դիտվում է որպես մեկ ընդհանուր գործողություն, իրողություն և կարող է տարբեր կերպ եղանակավորվել (**Նա ուզում է, նա կուզի, պիտի որ ուզի, երանի ուզի ... գնալ**): Այստեղ մոտավորապես նույն հարաբերությունն է, ինչ կա չեզոք և հուզական եղանակավորման մեջ (հմմտ. «Ես մեծ ցանկություն ունեմ նրան տեսնելու» և «Ինչքա՞ն եմ ուզում նրան տեսնել»): Այսպիսով, պետք է տարբերակել եղանակավորումը լայն առումով և եղանակավորումը նեղ առումով: Եղանակավորումը լայն առումով լեզվական այնպիսի երևույթ է, որ արտահայտում է մի կողմից՝ խոսողի վերաբերմունքը (մտածական, զգացական) հաղորդածի նկատմամբ, մյուս կողմից՝ ըստ խոսողի խոսքի սուբյեկտի հարաբերությունը գործողության նկատմամբ: Առաջին դեպքում մենք ունենք բուն եղանակավորումը, որը հենց հաղորդման, հետևաբար նախադասության, անբաժան տարրն է, նրա էական հատկանիշներից մեկը և արտահայտվում

է բառական, քերականական և հնչերանգային միջոցներով, երկրորդ դեպքում եղանակավորումը պայմանավորված է միայն օբյեկտիվ իրականություններույթների միջև եղած հարաբերություններով, ունի համեմատաբար օբյեկտիվ բնույթ և արտահայտվում է բառերի, հատկապես բայական բառույթների (այսպես կոչված՝ եղանակավորող բայերի) միջոցով: Այսպես, նա ձգտում է (ուզում է, փափագում է, աշխատում է, ենթադրում է) արագ կատարել այդ աշխատանքը նախադասության մեջ մենք ունենք երկու տիպի եղանակավորում՝ առաջինը նախադասության եղանակավորման կարգն է, որի օգնությամբ խոսողը նախադասության բովանդակությունը ներկայացնում է որպես ռեալ իրականություն և որը արտահայտվում է բայի սահմանական եղանակի միջոցով, ու, այսպես կոչված, չեզոք, պատմողական հնչերանգով: Երկրորդը օբյեկտիվ իրականության մեջ առկա և հաղորդման նյութ հանդիսացող առարկայի և գործողության միջև եղած հարաբերության բնույթը ցույց տվող եղանակավորումն է (իհարկե, այդ բնույթը ևս որոշվում, սահմանվում է խոսողի կողմից), որն արտահայտվում է միայն բառական միջոցներով (ձգտում է աշխատել) և չի ազդում նախադասության ընդհանուր եղանակավորման վրա: Դրա լավագույն ապացույցն այն է, որ այդպիսի եղանակավորում պարունակում են ոչ բոլոր նախադասությունները և ապա՝ այդպիսի եղանակավորում ունեցող նախադասությունները կարող են ենթարկվել նախադասության եղանակային փոփոխությունների, ունենալ իրենց հարացույցը ըստ եղանակի կարգի (որի դեպքում չի փոփոխվում հիշյալ եղանակավորման բնույթը), օրինակ՝ «նա ձգտում է, կծգտի, պիտի ձգտի կատարել այդ գործը», կամ՝ «Ձգտո՞ւմ ես, ձգտի՞ր կատարել այդ գործը»»⁷⁹:

⁷⁹ Պառնասյան Ն., Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986, էջ 140-142:

Կառույցի վերլուծական նկարագրությունը

Եղանակավորությունը լայն առումով իրականացվում է քերականական ու բառային տարբեր միջոցներով՝ բայեղանակով, զգացական և եղանակավորող բառերով, հնչերանգով, նաև՝ եղանակավորող բայերով: Վերջիններս խնդրո առարկա կառույցի առաջին բաղադրիչներն են լինում:

Տվյալ դեպքում գործ ունենք մի կապակցության հետ, ուր բաղադրիչներից մեկն արտահայտում է բուն բայական հատկանիշը (գործողության հատկանիշը), իսկ մյուսը՝ եղանակային ու այլ կարգի (դեմք. թիվ, ժամանակ և այլն) լրացուցիչ իմաստներ, տեղի է ունենում հիմնական և լրացուցիչ իմաստներ արտահայտող միավորների զուգորդում: Արդյունքում «եղանակավորող + ԱԴ» ստորոգյալն է՝ արտահայտված վերլուծական-նկարագրական եղանակով:

Իսկ ինչպե՞ս բացատրել նման կառույցի ի հայտ գալը:

Բացատրությունները տարբեր են: Գ. Ջահուկյանն ընդունում է եղանակավորողների լրացուցիչ իմաստի ձեռքբերման հետևանքով առաջացած լինելը, Վ. Առաքելյանը՝ ԱԴ-ի ազդեցությունը: Ալ. Մարգարյանն ԱԴ-ի և եղանակավորողի կապի ազդեցությամբ է բացատրում եղանակավորողի նախնական իմաստի մթագնումը: Վ. Քոսյանը նման կառույցի դրսևորումը բառակապակցությունից նախադասության անդամ, ապա և ձևաբանական միավոր անցնող շղթայի օղակ է համարում⁸⁰:

Ասել, թե միայն ԱԴ-ի ազդեցությամբ է պայմանավորված կառույցի ձևավորումը, ճիշտ չի լինի. ինչո՞ւ այլ բայերի կողքին ԱԴ-ն նույն դերով հանդես չի գալիս: Մյուս կողմից «մեղքը» միայն եղանակավորողների վրա բարդելը թերի կլինի:

⁸⁰ Գուցե հարցի լուծումն առավել հեշտանա, եթե դիմենք բարբառներին և խոսակցական լեզվին: Այո՛. նրանցում նման կառույցներ չկան: Եղանակավորողների կողքին դիմավոր բայեր են՝ **Ուզում եմ գնամ: Լավ է մոռանամ:** Փոխակերպման օրենքով նրանց նախատիպերն են՝ **Ուզում եմ, որ գնամ: Լավ է, որ մոռանամ:**

Կարծում ենք, որ կառույցի ձևավորման պայմաններից են՝

ա) Կառույցի առաջին բաղադրիչի եղանակավորող իմաստ ունենալը. եղանակավորողն իր նյութական, բառային իմաստը պետք է կորցրած լինի՝ հոգուտ եղանակավորման իմաստի: Բառաքերականական իմաստի նման մթագնումը լեզվի մեջ բնական երևույթ է (հմմտ. եղանակավորող բառերի առաջացումը):

բ) Կառույցի երկրորդ բաղադրիչը պետք է ԱԴ լինի: Այն կառույցի իմաստակիր միավորն է:

գ) Կառույցի առանձին բաղադրիչների իմաստային և քերականական արտահայտությունների ամբողջացումը մեկ միասնական ստորոգյալի մեջ:

Մեզ համար կառույցի գնահատման հիմքը ստորոգման և եղանակավորման ջահուկյանական ըմբռնումն է:

Կառույցը նախկինում շարահյուսական ազատ կապակցություն է եղել, հետագայում է նման արժեք ձեռք բերել. շարահյուսական ազատ կապակցությունից առաջացած լինելը հավաստվում է առանձին-առանձին լրացումներ ունենալու հանգամանքով:

Շարահյուսական մեկ միավոր դառնալը հանգեցնում է և կառույցի ընդհանուր լրացումներ ունենալուն:

Անհրաժեշտ է նշել, որ բաղադրիչների ստորադասական հարաբերությունը սոսկ ներկառուցային, ստուգաբանական արժեք ունի: Նման հարաբերություն կա նաև բարդ բառերում: Իմաստային տեսակետից (խորքային կառույցում) ԱԴ-ն կա՛ն նպատակի պարագա է եղել, կա՛ն անջատման, հանգման անուղղակի, կա՛ն էլ ուղիղ խնդիր: Անկախ արտահայտած շարահյուսական հարաբերություններից՝ բաղադրիչներից մեկն ստորոգելի է, մյուսը՝ հանգույցի համարժեք:

Ճիշտ է նկատում Վ. Քոսյանը՝ կառույցն անցողիկ օղակ է: Սոսկ ավելացնենք՝ «եղանակավորող + ԱԴ» կառույցն ոչ միայն բառակապակցությունից, այլև բարդ ստորադասական նախա-

դասությունից նախադասության անդամ, ապա և ձևաբանական միավոր տեղաշարժվող շղթայի անցողիկ օղակ է:

Ժամանակակից հայերենում ԱԴ-ն ուղղական հոլովով առնելու նկատելի միտում կա: Այս են վկայում «եղանակավորող + ԱԴ» կառույցի տարբերակները՝ նույն եղանակավորողի կողքին ԱԴ-ի ուղղականով և տրականով, ուղղականով և բացառականով, ուղղականով, տրականով և բացառականով ձևերը: Բանն այն է, որ տարբերակային ձևեր ունեցողները գոյականով լրացում առնելիս կանոնավորապես պահանջում են միայն տրականով, միայն բացառականով դրվածներ, սակայն երբ գոյականի փոխարեն նույն բայերի կողքին ԱԴ-ներ են դրվում, հոլովառությունը տատանումներ է տալիս՝ հօգուտ ուղղականի: Նշանակում է՝ սա որոշակի միտում է:

«Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» գրքում խոսելով սեռային տեղաշարժերի և ԱԴ-ի խնդրառական կիրառությունների մասին՝ Գ. Գարեգինյանը նշում է, որ ԱԴ-ն ավելի ու ավելի է հոլովական անհամաձայնություն ցուցաբերում իր գերադաս բայի նկատմամբ՝ հանդես գալով իր ուղիղ ձևով, ըստ որում որոշ բայերի սեռափոխության կամ կրկնասեռության հարցում դեր ունի նաև ռուսերենը: Հետաքրքրական է, որ նկատվում է նաև հակառակ երևույթը, այսինքն՝ ներգործական սեռի բայի ԱԴ-ով արտահայտված խնդիրը գործածվում է ոչ թե ուղիղ ձևով (հայցական հոլովով), այլ տրական հոլովով... «Այստեղ արդեն ոչ թե քերականական գործոններն են դեր խաղում, այլ, որքան էլ զարմանալի է, ոճական. պարզապես խուսափել են անորոշ դերբայի կրկնությունից, ուստի և երկրորդ անորոշները օգտագործել են թեք հոլովով: Ներկա փուլում աստիճանաբար նվազում են կամայական բայ + ըղծական եղանակի ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքի կառուցվածքները, ինչպես՝ «Ուզեց երկիրն ազատի» (ԵԶ, ԵԺ, 2. 158), «Ուզեց կանչի, համոզի (նտ,

163), «Ուզում է պայթի» (ՎԱՀ, 4), որոնք այժմ միայն ժողովրդական բնույթի գործերում են հանդիպում»⁸¹:

Մ. Ասատրյանն այս մասին գրում է. «Ժամանակակից հայոց լեզվում մի շարք դեպքերում փաստորեն կանոնական է անորոշի սեռական-տրական (բուն տրական) ձևի հետ միաժամանակ նաև ուղիղ ձևի գործածությունը, և այսպիսով, անորոշի ուղիղ ձևը և սեռական-տրական հոլովածը որոշ կապակցությունների մեջ շարահյուսական համանիշներ են»⁸²:

Թեք հոլովածի փոխարեն ուղիղ ձևով գործածվող անորոշը կոչում են «բացարձակ անորոշ» կամ «բացարձակ աներևույթ»:

Այո՛, գնալով ավելի շատ եղանակավորողների կողքին ԱԴ-ներն իրենց ուղիղ ձևով են դրվում. սա լեզվում մշտապես գործող «նմանակության» օրինաչափության արտահայտությունն է: Նաև արտաքին ազդեցության հետևանք է. անորոշի ուղիղ ձևն ավելի հաճախ մեխանիկորեն արտահայտվում է թարգմանական գրականության մեջ: Այսօրվա լեզվի նորմերի տեսակետից ճիշտ չէ անորոշի թեք ձևերի փոխարեն ուղիղ ձևերի գործածությունը: Բայց և այնպես, քանի դեռ եղանակավորողը (**պատրաստվել, վախենալ...**) թեք հոլովածներով ԱԴ է պահանջում, չենք կարող պնդել նրա եղանակավորող լինելը:

Կառույցի վերլուծական նկարագրությունը տարբեր լեզվաբաններ տարբեր հայեցակետերով և սկզբունքներով են կատարել և կատարում՝

- ըստ դիմավոր բայերի սեռերի.
- ըստ դիմավոր բայերի կազմության (սերող և սերված).
- ըստ տիպարների (անցողական և անանցողական),
- ըստ երկու բայերի գործողությունները կատարողի. ա) կառույցներ, որոնցում անորոշ դերբայի և նրա լրացյալի ցույց

⁸¹ Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973, էջ 318:

⁸² **Ասատրյան Մ.**, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973, էջ 240:

տված գործողությունները վերաբերում են նույն ենթակային, բ) կառույցներ, որոնցում անորոշ դերբայի և նրա լրացյալի ցույց տված գործողությունները կատարում են տարբեր ենթականեր. կառավարող բայի ենթական իր գործողությունով մեկ ուրիշի կատարել է տալիս անորոշ դերբայով արտահայտված գործողությունը, և վերջինիս «ենթական» կառույցում հանդես է գալիս որպես գերադաս բայի խնդիր կամ կարող է բառական արտահայտություն չունենալ. դրանք հիմնականում կամային վերաբերմունք կամ հարկադրանք արտահայտող բայեր են: Նման բայերի կատավարման տիրույթը սովորաբար եռանդամ է՝ «բայ + խնդիր + անորոշ դերբայ»՝ **ստիպեց կոճակ կոճկել...**):

- ըստ անորոշ դերբայի հոլովական ձևավորման (բայ + ուղղականաձև անորոշ, բայ + տրականաձև անորոշ, բայ + բացառականաձև անորոշ և բայ + ներգոյականաձև անորոշ) և այլն:

Աշխատանքում կառույցի նկարագրությունը հիմնականում կատարվել է հարաբերակցության սկզբունքով՝ եղանակիչ բայերի իմաստային խմբեր առանձնացնելու ճանապարհով և անորոշ դերբայի հոլովական ձևավորումից ելնելով:

«Եղանակավորող + ԱԴ» կառույցում եղանակավորողի դերում հանդես են գալիս՝

Ա. բայաձևերը՝ դիմավոր, անդեմ (նաև հարադրական բայը),

Բ. այլ խոսքի մասեր (գոյական, ածական, մակբայ)՝ էական բայի հետ:

Առաջին դեպքում եղանակավորողները կանվանենք բայական, երկրորդ դեպքում՝ ոչ բայական կամ անվանաբայական:

ԱԴ-ի կողքին բայական եղանակավորողները ձևավորում են հետևյալ ենթակառույցները՝

1. **«դիմավոր բայ եղանակավորող + ԱԴ».**
2. **«հարադրական բայ եղանակավորող + ԱԴ»**
3. **«դերբայ եղանակավորող + ԱԴ»:**

Իսկ ոչ բայական եղանակավորողներով ձևավորվում են հետևյալները՝

1. **«գոյական + էական բայ եղանակավորող + ԱԴ»,**
2. **«ածական + էական բայ եղանակավորող + ԱԴ»,**
3. **«մակբայ + էական բայ եղանակավորող + ԱԴ»:**

Արդի արևելահայերենում ավելի շատ տարածված է «դիմավոր բայ եղանակավորող + ԱԴ» ենթակառույցը:

«Եղանակավորող + ԱԴ» կառույցը պետք է ուսումնասիրել՝ ելնելով նախ նրա բաղադրիչների, ապա ընդհանրապես կառույցի էությունից:

Քննությունն ամենից առաջ թելադրում է կառույցի երկու եզրերի «քայքայում»։ մի դեպքում՝ եղանակավորողի, մյուս դեպքում՝ ԱԴ-ի: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս այն երեք տեսանկյունով ուսումնասիրելու՝

Ա. եղանակավորողի հետազոտությամբ.

Բ. ԱԴ-ի քննությամբ.

Գ. կառույցի ամբողջական քննությամբ:

Եղանակավորողի քննությունը հանգեցնում է մի քանի ենթահարցերի քննության: Դրանցից են՝

1. եղանակավորողների իմաստային դասակարգումը կամ իմաստային դաշտերը.

2. եղանակավորողների իմաստային կառուցվածքը (մենիմաստ և բազմիմաստ).

3. եղանակավորողների ձևը (բայական և ոչ բայական).

4. եղանակավորողների ժամանակագրությունը (հին, նոր).

5. եղանակավորողների գործածության հաճախականությունը, վիճակագրությունը.

6. եղանակավորողների հարացուցային ձևերի լիակատար կամ պակասավոր լինելը.

7. եղանակավորողներից յուրաքանչյուրի ինքնատիպությունը՝ ըստ խոսքիմասային պատկանելության (օր.՝ ածականը՝ համեմատության աստիճաններով և այլն):

8. եղանակավորողների գործառույթը, ոճական արժեքը:

ԱԴ-ի տեսանկյունից քննարկումը ևս մի քանի ենթահարցեր է թելադրում՝

1. ԱԴ-ի հոլովական ձևավորումը.

2. ԱԴ-ի կառուցվածքը.

3. ԱԴ-ի հոդառությունը:

Կառույցի ամբողջական քննության հետ առնչվում են՝

1. կառույցի բաղադրիչների արտահայտած գործողությունների նույն կամ տարբեր ենթակաների ոլորտն ընդգրկելու հարցը.

2. բաղադրիչների ներկառուցային հարաբերությունների հարցը, որը սերտորեն առնչվում է ԱԴ-ի հոլովական ձևավորման հետ.

3. շարադասական, ոճական, փոխակերպական և այլ հարցեր:

Ժամանակակից գրական հայերենի շարահյուսական համակարգում առանձնակի ուշադրության է արժանի «դիմավոր բայ եղանակավորող + ԱԴ» կառույցը: Հին է հարցի քննությունը, շատ են կուտակված նյութերը, օրեցօր ընդլայնվում է արժեքավոր դիտողությունների շրջանակը, սակայն, ինչպես տեսանք, դեռևս չկա հարցի միասնական ըմբռնում ու գնահատում: Տարբեր են քերականական մոտեցումները. յուրաքանչյուր լեզվաբան յուրովի է մոտենում հարցին, և արդյունքում կառույցի ոչ միատեսակ, ոչ նույնատիպ ըմբռնումն ու արժեքավորումն է:

Այսօր էլ կան մինչև վերջ չլուծված կամ լրացման ու խորացման կարիք ունեցող կետեր, իրարամերժ կարծիքների առիթ տվող մանրահարցեր: Չկա միասնական կարծիք կառույցի գնահատման, նրա բաղադրիչների փոխհարաբերության, կապակցման եղանակի մասին. չկա եղանակավորող բայերի ընդհանուր դասակարգում. հստակ չէ ԱԴ-ի ուղիղ և թեք, ձիշտ և սխալ ձևերի սահմանազատումը:

Հարցի ուսումնասիրությունը չի հստակեցնում անգամ կառույցի համալեզվական իրողություն լինելու հանգամանքը: Ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում խոսքը կարելիական, հրակադրական, ցանկական, հրամայական և նման այլ բնույթներ է ստանում, երբ ԱԴ-ն հանդես է գալիս նման նշանակություն ունեցող բայերի հետ: Օրինակ՝ ռուսերենում՝ Я **хочу** **читать**. (Ես **ուզում եմ** կարդալ), He **couldn't** **smoke** so much. (Նա այդքան շատ **չէր կարող** ծխել):

Փաստն այն է, որ գործողության նկատմամբ իր վերաբերմունքը խոսողն արտահայտում է ոչ միայն զուտ եղանակային ձևե-

րով, այլև գործածում է եղանակավորող բայեր, որոնք շատ ավելի որոշակի են դարձնում այդ վերաբերմունքը: Եղանակավորող բայերը կապակցվում են ԱԴ-ի հետ և կազմում մի եռաշղթա, որի օղակներն են դառնում զգայական, կամային, եսական գնահատման դրսևորումները, ԱԴ-ով արտահայտված գործողությունն ու առարկայական իրականությունը. բոլոր դեպքերում մենք գործ ունենք իրական և սուբյեկտիվ պրոցեսների փոխհարաբերության հետ: Տվյալ դեպքում եղանակավորողով արտահայտվածը եսական կողմն է, իսկ ԱԴ-ով՝ առարկայական:

Եղանակային կամ մոտ նշանակություն արտահայտելով՝ բա-
յաձևերն ԱԴ-ի հետ շարահյուսական անխզելի ու սերտ կապի մեջ են մտնում, մի կապ, որը մթագնել է տալիս բայերի նախնա-
կան իմաստը և նրանց բառային արժեքից զրկելով՝ եղանակա-
վորողի է վերածվում:

Դեռևս հայոց լեզվի գրաբարյան շրջանից սկսած որոշ դիմա-
վոր բայեր (համեմատաբար քիչ թվով) իրենց իմաստային նրբե-
րանգի շնորհիվ ԱԴ-ի կողքին թուլացրել են բայական լիարժեք
հատկանիշները, իսկ ԱԴ-ն էլ, դառնալով նման բայերի խնդիր,
որոշակիորեն թուլացրել է դրանց բառային իմաստը և վերածել
եղանակավորողների: Այդ շրջանում նման իմաստով գործածվել
են մի շարք բայեր՝ *պարտիմ, իշխեմ, ցանկամ, կամիմ, ունիմ, հասանեմ, փութամ, գորեմ* և այլն (Օրինակ՝ Ջայս տեսեալ թա-
գաւորըն Քուշանաց՝ *ոչ հանդուրժէր ելանել*⁸³ ընդառաջ նորա
պատերազմաւ... (Եղ. 36)):

Արդի արևելահայերենի բայական եղանակավորողները, նրանց գործառական հաճախականությունը

Արդի արևելահայերենում եղանակավորող են դառնում մի
շարք բայեր: Ստորև ներկայացնում ենք գործուն եղանակավո-

⁸³ Այսուհետև՝ «Եղանակավորող + ԱԴ» կառույցները կնշվեն թավ, եղանակա-
վորողը՝ նաև շեղ գրությամբ, օրինակ՝ *ուզում եմ տեսնել*:

րող բայերն ըստ գործառնության հաճախականության. հիմքը մեր ձեռքի տակ եղած քարտարանն է:

ԵՂԱՆԱԿԱ- ՎՈՐՈՂ ԲԱՅ		ԵՂԱՆԱԿԱ- ՎՈՐՈՂ ԲԱՅ		ԵՂԱՆԱԿԱ- ՎՈՐՈՂ ԲԱՅ		ԵՂԱՆԱԿԱ- ՎՈՐՈՂ ԲԱՅ	
ուզել / ուզենալ)	427	դադարել	41	խանգարել	16	թերանալ	3
սկսել	374	խուսափել	37	սարսափել	16	փափագել	3
կարողա- նալ	295	հանդգնել	35	մղել /մղվել)	15	ծուլանալ	3
փորձել	291	խոստանալ	34	պարտավոր- վել	13	հաճել	2
պատրաստ- վել	109	առաջար- կել	32	թողնել	9	համառել	2
շտապել	109	սիրել	32	սպառնալ	9	հապաղել	2
հրա- մայ/վել/	97	հաջողվել	29	աղաչել	7	հորդորել	2
կամենալ	93	պատվիրել	25	խորշել	7	ծանծրա- նալ	2
ցանկանալ	89	ծգտել	24	համոզվել	7	պար- տադրել	2
շարունակել	69	ձգնել	23	բարեհաճել	6	սոսկալ	2
աշխատել	67	կարենալ	22	հարկադրել	6	տքնել	2
խնդրել	64	վճռել	22	ալարել	5	երկմտել	1
գիտենալ /գիտեմ/	61	երդվել	21	զորել	5	խրատել	1
որոշել	61	մերժել	21	ակնարկնել	5	կոչել	1
վախենալ	60	համաձայն- վել	19	թույլատրել	4	հայցել	1
համարձակ- վել	52	հրաժարվել	19	կարգադրել	4	հրահանգել	1
ստիպել	51	մոռանալ	19	նախընտրել	4	չարչարվել	1
հասցնել	45	ուխտել	19	մաշվել	4	պնդել	1
պահանջել	43	արգելել	17	ակնկալել	3	թերանալ	1

արժե	42	հրավիրել	17	աղերսել	3		
ջանալ	42	մտածել	17	դանդաղել	3		

Բոլոր եղանակավորողները միևնույն հաճախականությունը, միևնույն գործառական կարողությունը չունեն: Մի խումբը շատ է հանդիպում, մյուսը՝ քիչ, երրորդները՝ ավելի քիչ, մի քանիսն էլ դիպվածային գործածություններ են, անգամ հեղինակային:

Հարցի քննության ժամանակ պետք է նկատի ունենալ եղանակավորողների առանձին բառական նշանակությունը, դրանց գործածության հաճախականության հանգամանքը: Ուրեմն՝ արևելահայերենում եղանակավորողները լինում են մեծ, միջին, փոքր հաճախականության: Հաճախականության հետ սերտորեն առնչվում է եղանակավորողների գործառույթը (կարողականությունը). ըստ դրա էլ եղանակավորողները լինում են ուժեղ, միջին և թույլ:

Չի կարելի անտեսել նաև կայուն կապակցությունների առաջացումն ու ամրակայումը լեզվում:

Մեծ հաճախականություն ունեն և ուժեղ եղանակավորողներից են՝ *ուզել, սկսել, կարողանալ, փորձել, շտապել, շարունակել, կամենալ, ցանկանալ, գիտենալ (գիտեմ), որոշել* և այլն: Միջին հաճախականություն և միջին կարողականություն ունեցողներից են՝ *առաջարկել, արգելել, ձգնել, ձգտել, ջանալ, կարենալ, պատվիրել, համաձայնվել, հասցնել, խանգարել* և այլն: Փոքր հաճախականությամբ թույլ եղանակավորողներից են՝ *ալարել, չարչարվել, տքնել, հայցել, համառել, փափագել, հաճել, ծանծրանալ, աղերսել* և այլն:

Հարկ է նշել, որ ոճական առումով հաճախակի գործածվածները սովորական կառույցներ են կազմում, մի տեսակ կաղապարային ձևեր են դառնում: Իսկ սակավ գործածվածները, հատկապես հեղինակի լեզվամտածողությամբ կազմվածները, նորություն են և խոսքին ուրույն արտահայտչականություն են հաղորդում:

Եղանակավորող բայերի իմաստային դասակարգումը (իմաստային դաշտերը)

Արդեն նշվել է, որ հայ լեզվաբանական աշխատություններում եղանակավորող բայերի իմաստային դասակարգման հարցն առանձնակի ուշադրության չի արժանացել: Սուսկ թվարկվել են եղանակավորող բայերի որոշ իմաստային խմբեր, նրանց մեջ ընդգրկվել առավել գործածական և սովորական դարձած եղանակավորող բայեր: Կարելի է ասել՝ այսքանով սահմանափակվել է հարցի մինչայծմյան քննությունը, մինչդեռ ժամանակի թելադրանքով գնալով մեծանում է բայերի երկրորդական, եղանակավորող իմաստ ձեռք բերելու միտումը: Լեզվագիտության մեջ եղած դասակարգումներից օգտվելով՝ տարբերակում ենք դրանց հետևյալ իմաստային խմբերը (դաշտերը)⁸⁴․

1. ցանկական, կամային
2. կարողական
3. ձգտման
4. հրամայական
5. հարկադրական
6. իմացական
7. հայցողական
8. խոստման և դրան մոտ իմաստ արտահայտող
9. գործողության կատարման սկիզբ, ընթացք և նման իմաստներ արտահայտող
10. որոշում, վճիռ, փորձ, հրավեր և նման ու մոտ իմաստներ արտահայտող
11. տրամադրվածություն, հակում արտահայտող
12. ոչ կամային, բացասական իմաստ արտահայտողներ:

⁸⁴ Իմաստային խմբերի անվանումներն ընդհանրապես խիստ պայմանական են. միայն երիտթերականների ատոմիզմին չհանգեցնելու սկզբունքով ենք աշխատել կատարել դրանք:

1. ԱՂ-ն ցանկական, կամային և դրանց մոտ իմաստներ արտահայտող եղանակավորողների հետ

Ցանկական կամ կամային եղանակավորողները ցույց են տալիս գործողությունը կատարելու ցանկություն, կամք և դրվելով ԱՂ-ի կողքին՝ այն օժտում են ցանկության ամենաբազմազան նրբիմաստներով (ցանկալի, բաղձալի...): Օրինակներ՝ Ես **ուզում եմ** խոսքեր գրել անձրևի երաժշտության համար. **Հանգավորե՛լ եմ ուզում** աշնան քամին. **Ուզում եմ նվագել** այն երգը, Որ խշշում են աշնան ծառերը. Եվ... **բերանացի անել** ջրի կարկաչը (ԳԷ, 2, 92): Ես **կամենում եմ** (և ձե՛ր փոխարեն) Ո՛չ թե լոկ **մոռալ** կամ **գոմռալ**, Այլ գազանի պես **մոնչալ** ազդու (ՊՍ, 2, 208): Գարունն **սպառել տենչացի**, ախ, ես, Որ ինքքս կրկին մնամ անսպառ, Չմեռն **սպառել ցանկացա** կրկին, ամառն **սպառել ցանկացա** նորից (ՈՂԲԲ, 133): Ընդգծված կապակցություններում գրել, հանգավորել, նվագել, բերանացի անել, մոռալ, գոմռալ, մոնչալ, սպառել ԱՂ-ներն **ուզել, կամենալ, տենչալ, ցանկանալ** եղանակավորողների շնորհիվ ցանկական, կամային երանգ են ստացել:

Ժամանակակից արևելահայերենի ցանկական եղանակավորողներից են՝ **ուզել (ուզենալ), կամենալ, տենչալ, փափագել, ցանկանալ, երագել, կարոտել**: Նշվածներից առանձնանում է **ուզել (ուզենալ)** եղանակավորողը: Բայը, մեր լեզվի հին շրջանում, ինչպես հայտնի է, չի գործածվել. եղանակային նման նշանակություն է ունեցել **կամիմ**-ը: Արդի արևելահայերենում այն հավասարապես գործածվում է և՛ նյութական, և՛ եղանակավորող իմաստներով: Ստորև ներկայացնում ենք նյութական նշանակությամբ գործածության օրինակներ՝ Ավելի մեծերը հաց **էին ուզում**, փոքրերը իրենց մայրերին, ծծկերները՝ մայրական կուրծք (ՄՍԳՆ, 161): Էլի դրամ **էր ուզում** ագահը (նտ, 115): Առաջին վիշտը աշխարհի վրա Չէր կարող մենակ, **ուզում էր** ընկեր (ՍՊԲ, 1057):

Ուզել-ը համեմատաբար «երիտասարդ» եղանակավորող է. Աստղերն **էին ուզում շոյել** Բարդիները վերում (ՎԴ, 1, 166): Աշնան քամու տակ անտառը կրկին նագում էր շիկնած, **ուզում էր պարել** (նտ, 353/: Սիրուն տղա, **սիրե՞լ կուզես** (ՄՍԳՆ, 77): **Ուզում էր գռալ**, որպեսզի գրավի նրա ուշադրությունը (ՊԶԱԵ, 140): Եվ **ուզում էր** կրկին **փարվել** հայրենիքին (ՊՍ, 4, 55): Ճյուղավոր թախիծն **ուզում էր** դեռ **պատվել** նաև սաղարթով (ՊՍ, 2, 118):

Ուզել-ը եղանակավորող իր էությունը դրսևորում է նաև արևմտահայերենում. Անհուսության դալուկն հագած տոճո՞ւյն վարդեր, Ջեզ հավետ պիտի սիրեմ ես սրտագին. Ու միշտ **սիրել-պիտի չուզե** իմ դառն հոգին (ՄՍ, 24): **Կ'ուզեմ** բոլոր շրթներեն լսել լոկ ե՛րգը սրտիս, Ու երգին մեջ այդ խնդուն՝ **գտնել** սի՛րտը բոլորին... **Կ'ուզեմ** **կենալ** ճամփու մեջ և անցորդին առաջին **Պատմել** հեքիաթը սիրույս ու **թողուլ** որ ձեռքերն Հոգվույս էջերը թերթեն ու երագովն իր ապրին (ԳԱԵ, 51): **Ուզել** եղանակավորողով և ԱԴ-ների կապակցությամբ է հյուսվել նաև «մահվան համբույրն զգացած» վաղամեռիկ Բանաստեղծի ցանկությունների շղթան՝ Ես **ուզեցի** քննարով մի Լոկ **սիրել** հոս, հոս դալկահար, **Պաշտել**, **գրկել** միայն քնար, Սիրող էակ **ճանչել** - զանի, Ըստ իմ քնաց **լարել** աղի, Եվ **սրտակցիլ** սիրողաբար (ՊԴ, 1, 49): Կամ՝ Ես **ուզեցի** միշտ **քովն ըլլալ**, **Մտիկ ընել** թնդյուն սրտին, **Շնչել**, **խմել** ներա հոգին, Եվ **շոշափել** լոկ ծյուն ու փայլ (նտ, 50):

Ուզել եղանակավորողն **ասել** Ադ-ի և **ինչ, դրանով** դերանունների հետ կազմում է մի կապակցություն, որն ունի դարձվածքային արժեք՝ «ասելն ավելորդ է», «ինքնին հասկանալի է» իմաստներով. **Ինչ ասել կուզե**, Որ մենք՝ Օրենքի և Իրավունքի ծառաներըս, Ունենք օրենքի պաշտամունք, այո՞ (ՊՍ, 2, 70): Ինչո՞ւ, և՛ դարձյալ, և՛ կրկին ինչո՞ւ, Եվ **ի՞նչ է ուզում դրանով ասել**. Իր ո՞ւժն է շեշտում, կարողությունը (ՊՍ, 4, 149): Ես չհարցրի, թե դրանով **ինչ ասել կուզեիր** պարոն հյուպատոսը (ՍԽԱ, 162):

Կառույցի գործածությամբ առավել հնչեղ է դառնում Վ. Դավթյանի, Ս. Կապուտիկյանի պոեզիան՝ Ու ես **ուզում եմ** մինչև վերջ **հարբել**, Խանդի մրուրը մինչև վերջ **պարպել**, Եվ **գալ** հողմի հետ, քո դուռը **բանալ**: Մտնել հոգուդ մեջ, **խառնել** ամեն ինչ, Քեզ նորից **անել հեզ ու հպատակ**, Եվ արցունք **տեսնել** աչքերում քո ջինջ, Եվ արցունք **տեսնել** ձեռքերին մի տաք (ՎԴ, 1, 120): **Ուզում եմ** միայն, միայն **մարդ լինել**, պայծառ բանաստեղծ, ծիածանի պես ժպտո՜ւն, անխտի՛ր. **Գրկել** իմ տառապած հողագունդը, - Եվ, ոչ, **չթեքել**, երես **չթեքե՛լ** Մարմարա ծովի շողում կապույտից: Անձրևի նման **տեղալ** աշխարհի բոլոր դաշտերին Եվ **չկսկծալ**, որ Արտամեսի չոր խնձորենում Լաց իսկ ցողելու իրավունք չունեն: Շիտակ գոհությամբ իմ **սիրտն** ու **ծայնը** Տալ նյուրնբերգյան արդար ատյանին, Եվ **ծառս չլինել**՝ այն աններելի ներմանն ի տես (ՍԿԳՀՄ, 226): **Ուզել** եղանակավորողով ինքնատիպ կառույցներով հարուստ է հատկապես Պ. Սևակի պոեզիան՝ «**ուզում է** իր կրունկներով ողջերթ **նվազել**» (ՊՍ, 1, 279), «**ուզում է** իր ճիշտ քաշն **իմանալ**» (նտ, 293), «**ուզում եմ** մի տեղից այլ տեղ, սրտից սիրտ **քոչել**» (նտ, 486), «**ուզում եմ մաքրել** աշխարհքը համայն» (նտ, 500), «երազել է տալիս մութը, իսկ երազել մենք **չենք ուզում**» (ՊՍ, 2, 18), «ջրածնային արկերն **են ուզում** մեր երակների կարմիր արյունից ճերմակ ջուր **ծնել**» (նտ, 86), «**ուզում է** ասես իր ոտք-կարկինով **Չափել** իր անցած-անցնելիք ուղին» (նտ, 114), «գմբեթի ճեղքում բուսած տուղտի պես **ուզում եմ ապրել** անչար ու բարի» (նտ, 139), «**կուզեի դարձնել** կանոն անկանոնությունը» (նտ, 209), «**ուզում եմ** մեր քրքրված ջղերն իրար **կպցնել**» (նտ, 219): Կառույցի հետաքրքիր կիրառությամբ շեշտվում է Պարույր Սևակ բանաստեղծի յուրօրինակ մտածելակերպը. Թե կուզես՝ **ուզի՛ր** է՛լ **չուզել** – իզո՛ւր, թե կուզես՝ **ուզի՛ր** է՛լ **չապրե՛լ** – իզո՛ւր... (ՊՍ, 1, 318): Կամ՝ Ես **ուզում եմ**. Եթե **գերվել**՝ ոչ թշնամուց, այլ խելքահան աղջիկներից: Եթե **մերվել**՝ ապա երբեք չթթվելով: Եթե **լարվել**՝ ապա միայն ստեղ-

ծելիս: Եթե **ճարվել**՝ ապա փրկել մահամերձին: Եթե **ներվել**՝ է՛լ չվիճել, էլ չկռվել, Եթե **սիրվել**՝ միայն մեկի՛ց և մե՛կ անգամ... (ՊՍ, 1, 35): Հատկապես չափածո խոսքում կրկնվում է կառույցը, որով և առավել ևս ընդգծվում են ուզել-չուզենալու սահմանները. – **Չե՛մ ուզում** տրվել ամեն մի կրքի, **Չե՛մ ուզում** տրվել. – **Չե՛մ ուզում** կռվել հիմարների հետ, **Չե՛մ ուզում** կռվել. – էլ ջիղ չմնաց... (ՊՍ, 1, 431):

Երբեմն էլ բարդ նախադասության ստորոգյալ է դառնում երկրորդական նախադասության մեջ ստորոգյալ դարձած «**Ուզել** + ԱԴ» կառույցի հարադրված դերբայը՝ արդեն դիմավոր ձևով. Թե **ուզում ես թողնել գնալ**, Թո՛ղ ինձ, գնա՛, ի՛նչ սիրելի (ՀՀԻԴ, 34):

Ուզել-ը մեծ հաճախականություն ունեցող եղանակավորողներից է. մեր հավաքած օրինակների շարքում այն հանդիպել է 427 անգամ: Նշված թիվը ոչ միայն վկայում է նրա գործածության ծավալը, այլև մղում է մի նոր հետևության. այս եղանակավորողն առանձնանում է նաև իր կապակցելիությամբ. եղանակավորող է դառնում առանց սահմանափակման՝ ցանկացած իմաստային դաշտի պատկանող ԱԴ-ների համար: Օրինակներ՝ **Ուզում ես խոսել**, Իսկ բառե՞ր... չկա՛ն (ՊՍ, 2, 203): Եվ հոգու խորքում ծվարած զգացումը **չուզեց մեկնել, մանրացնել, դարձնել** անշապիկ մի բառ ու խոսք և բոբիկ-բոբիկ **կանգնեցնել** այդ ցուրտ մայրի վրա, իր կողքին (ՄԳՊ, 54): Ես **չեմ ուզում** քեզ **հավատալ** Ու **հասկանալ** միայն հետո. Ես **ուզում եմ** նախ **հասկանալ**, Եվ նոր միայն քեզ **հավատալ** (ՀՀԻԴ, 53): Կինը՝ ճրագ, Մայրն արեգակ, Բայց արի տես, որ ճրագս **Վանել կուզեք** արեգակս (ՀՇ, 3, 145):

Ուզել-ը եղանակավորող է դառնում առավելապես «կամենալ, ցանկանալ», «որևէ գործողություն կատարելու ներքին պահանջ ունենալ» իմաստներով (Ես **երգել եմ ուզում** (ՎԴ, 1, 279): Երբեմն էլ իր եղանակային էությունը դրսևորում է տարբեր նրբիմաստներով: Այսինքն՝ **ուզել**-ում կարող է ընդգծվել, շեշտվել՝

1. «Ձգտել» իմաստը. Արքան *ուզում էր* իր ուժն *ստեղծել*, ռամիկների ու շինականների հետ *դաշնակցել*, *ուզում էր* հզոր թիկունք *ունենալ* (ՊԶԱԵ, 174-175):

2. «Փափագել, սաստիկ ցանկանալ» իմաստը. Այնպես *եմ ուզում* ինչ-որ հնարով ձեր ցավը *կիսել*, *Մեղմել* մորմոքը ձեր անչափելի (ՍԿԳՄՀ, 433): *Այնպես* դերանունն առավել ևս շեշտում է հիշյալ նրբիմաստը:

3. «Երագել» իմաստը. Հայ գաղթականն *ուզում է վերադառնալ* իր տունը (ՍԽԱ, 433):

4. «Խնդրել» իմաստը. Նա միայն *սիրել* ու *սիրվել էր ուզում* (ՍՍԳՆ, 332):

5. «Համաձայն լինել» իմաստը. Եթե ինձ ծնողը *չի ուզում պահել*, Թող որքանոց հանձնի, վնաս չունի (ՊՍ, 2, 91):

6. «Պատրաստվել, հակվել» իմաստը. Սիրուն քույրը մի հատ խնձոր տարավ և *ուզեց վառել* վառարանը (ՀՄ. 2, 91):

7. Ժխտական ձևերով՝ «հարկավոր չէ, պետք չէ, կարիք չկա» իմաստը. Կշտամբանքի խոսքեր ես *չեմ ուզում ասել* (ՊՍ, 3, 117):

«*Ուզել* + Ադ» կառույցը գործածվում է թե՛ արձակ, թե՛ չափաօր խոսքում: Ադ-ով արտահայտված գործողությունը ցանկական երանգ է ստանում *ուզել*-ի քերականական տարբեր ձևերով, հարացույցի ողջ դրսևորումով (եղանակային տարբեր ժամանակաձևերով, դիմաթվային բոլոր ձևերով). *Ուզում եմ քայլել* (ՎԴ, 1, 362): *Ուզում էր չհիշել*: *Ուզում էր հետ դառնալ* (ՍՍԳՆ, 278): Անհավատալին *ուզում ենք* հավատալի *տեսնել* (ՍԽԱ, 417): *Չեք ուզում պահել* (նտ, 409): Ծաղիկները զարմացած ասես չունեն դեռ անուն Եվ *ուզում են մկրտվել* (ՎԴ, 1, 392): Եվ *ուզեց քամել* Հուրն արեգական Եվ *ըմպել* ու *զննել* Եվ հյուրը հողի (նտ, 402): Հիշեց այն մեկին, Որ տաք մատների այրող պոռթկումով *Ուզեց* իր վզի կոճակը *քանդել* (Մ, 187): Շատ *կուզեի չհավատալ*, Թե իմ կատվանման անցումներից Պատահել է գեթ մի ավտոկթար (ՊՍ, 1, 340): Սակայն հարկ է նշել, որ մեծ մասամբ եղանակավորող

են դառնում **ուզել**-ի ներկա և անցյալ անկատար ձևերը: Իսկ վաղակատարով ձևերը կարծես թե խորթ են գրական հայերենի համար, ինչպես՝ Նրան **չեմ ուզել նվաճել** անսեր, **Գրավել** երկիր, **թողնել** սև հուշեր, Ո՛չ, ես սիրել եմ, սիրել խելագար (Մ, էջ 183): Մերթ թվացել է այնքան մտերիմ, Որ ես **ուզել եմ վազել** նրա մոտ (նտ, էջ 184):

Ուզել եղանակավորողը նաև ընդհանուր լեզվական կիրառություն ունի. այն եղանակավորող է դառնում շատ լեզուներում. օրինակ՝ ռուսերենում՝ **хочу видеть, хочу читать**, անգլերենում՝ **I want to go, I want to read**:

Ուզենալ-ը եղանակավորող իմաստով իր հաճախականությամբ շատ է զիջում **ուզել**-ին. զիջում է նաև քերականական ձևերով. Շատ **կուզենայի** ձեզ **հյուրասիրել** (ՍԽԱ, 441): **Կուզենալացել**, Արցունքներ չկան, **Կուզենա** գոնե վերջապես **մեռնել**, Բայց... մա՞հ էլ չկա (ՊՍ, 4, 205): Նա **չէր ուզենա** բառը **կրկնել** (ՊԶԱԵ, 511): Ես չեմ տրտնջում, բայց այնուհանդերձ **կուզենայի** քեզ **հիշեցնել** կամաց (ՍԿԳՄՀ, 282): **Ուզենալ**-ը **ուզել**-ից տարբերվում է շարունակական կերպային իմաստով. ԱՂ-ով արտահայտված գործողության կատարումն իմաստային այս երանգով է օժտում: (Բանաստեղծական բառախաղի պես է հնչում՝ Ու ես **չեմ ուզում** ոչի՛նչ **ուզենալ** (ՊՍ, 1, 317):

Տարածված եղանակավորող է նաև **կամենալ**-ը. ինքնուրույն բառային գործածությանը զուգահեռ (Օրինակ՝ Ո՞վ է կռիվ **կամենում** (ՍՊԲ, 305):). այն ցանկական երանգով է օժտում գործողությունը՝ Երգերս **ննջել չեն կամենում**, Մարգարիտ (ՄԳՊ, 462): **Կամեցալ** երեսին խաչ հանել (ՍԽԱ, 446): Եկո՛ւր, եկո՛ւր... հոգիս համբարձվել է **կամենում** (նտ, 284): Ես մեր սերն **եմ կամենում** փրկել: **Կամենում եմ** ապրել սիրո համար, **մեռնել** սիրելով (նտ, 46): Որոնում է նա, ով **կամենում է** ինչ-որ բան **գտնել** (ՊՍ, 1, 478): Շատ անգամ **եմ** ես **կամեցել** դառնալ գերիդ (ՆՏ, 256): **Կամենալ**-ը թեպետ իր հաճախականությամբ զիջում է **ուզել**-ին, բայց դարերի ճանապարհ է անցել. **կամիմ**-ը գրաբարի և միջին

հայերենի ամենագործածական կամային, ցանկական եղանակավորողն էր. Եթե *կամիս լինել* խորհրդակից կենաց, հարցցիս յանդիման հրապարակաւ, և պատմեն քեզ (Եղ, 316): Այլ վասն արեգական եթե *կամիցիս ուսանել*, զճշմարիտն ասացից քեզ (նտ, 334): Եկին ոմանք ի յԱղեքսանդրաց Եւ *կամէին* զնա ձգել ի փառաց... (ՌԻՄՀԲ, 1, 28): Դրախտէն ամենաւոր ես հանց իմացայ, երեսդ ի վեր նայիլ *կամեցայ*... (նտ, 165): ...Ոտանց *կամին* զիս ուտել (ՆԲ, 69):

19-րդ դարում արդեն *կամիմ*-ը ձևափոխվեց *կամենալ*-ի (Կարծես յուր գիշերվա անքնությունը *կամենում էր* նա լրացնել ցերեկվա հանգստությամբ (Ր, 148): Դուք, ուրեմն, *կամենում եք* սպանել ձեր աղջիկը (նտ, 78): Այսօր էլ գրական հայերենում հանդիպում է *կամել* ձևը, որը, սակայն, հնացած է. Ով ապրել *կամի*, թող պաշտպանի... (ՍԽԱ, 361):

Կամենալ եղանակավորողը «ցանկություն ունենալ, ուզել, ցանկանալ» իմաստին զուգընթաց դրսևորում է նաև «համաձայնվել» նրբիմաստը. Բայց ես *կամեցա* կատարել քո ցանկությունը (ՄՍԳՆ, 339): Եղանակավորողի ժխտական ձևերը հարցական երանգով գործածվում են «բարեհաճել կամ չբարեհաճել» իմաստով. *Չեք կամենում* բացել դարպասը, կխորտակենք (ՄՍԳՆ, 230):

Կամային և ցանկական երանգ է արտահայտում նաև *ցանկանալ* եղանակավորողը. Խոսել ոչ ոք *չէր ցանկանում* (ՄՍԳՆ, 307): Նա ոչ մի կերպ և ոչնչով *չի ցանկանում փոխել* իր սերը (նտ, 36): Եզնիկ Կողբացուն հիշի՛ր, աղջիկս, ասում է՝ ով *ցանկանում է նայել* արեգակի ճառագայթներին, պիտի սրբի և հեռացնի աչքերի պղտորությունը (ՍԽԱ, 283): Այն թեպետև հին եղանակավորող է, արդի հայերենում, հակառակ իր արտահայտած իմաստի թելադրանքի, փոքր հաճախականություն ունի: Արևմտահայերենում կա *ցանկալ* ձևը (գրաբարից). Ժայռերու զով շուքին տակ Կանաչ խոտի խուրձ մը կար՝ Որ ուզենալ *կը ցանկար* Քարին գույնը կապուտակ (ՄՄ, 123): Ունի նաև ինքնուրույն

բառային արժեք. Ցանկանում եմ գորավարական մեծ փառք և մեր ոսոխների դեմ հաղթանակներ (ՄՍԳՆ, 167): Թշնամին ցանկանում է մեր լեզուն, մեր հավատը, և սրանցով ապրող մեր կենդանի ոգին (նտ, 201):

«Ախորժել, հավանել» «գերադասել» իմաստներով ցանկական եղանակավորող է դառնում նաև ***սիրել*** բայը. Ճերմակ մազերին ***է*** փառքը ***սիրում*** նստել (ՊՍ, 1, 117): ***Սիրում էի*** ծեր տան բակում ***խաղալ*** «տուն-տուն», Միայն քեզ հե՛տ, քեզ հե՛տ ***խաղալ*** (նտ, 121): ***Սիրում էր*** ասել, որ ինքը ծագումով Բագրատունի է (ՍԽԱ, 58): Հետաքրքրականն այն է, որ նրանում գրեթե հավասար դիրքերում են թե՛ եղանակային, թե՛ նյութական իմաստները: Սկզբնապես այն հիմնականում իր նյութական արժեքով է գործածվել, ինչպես օրինակ՝ Աշխարհում նա իր աշխարհին ***է սիրում*** (ՍՊՔ, 305): ***Սիրի՛ր*** քո աղջկան, խմի՛ր քո գինին և այս կյանքը ***սիրի՛ր***, այս կյանքը (ՌԴՔԲ, 173): Արդեն 19-րդ դարում սկսում է դրսևորել եղանակավորող նշանակություն. Օրիորդը շատ ***էր սիրում*** ման գալ լուսնյակ գիշերով (Ր, 68): Արևմտահայերենում ևս նմանատիպ գործածություն ունի. ***Կը սիրեմ*** ես թափառիլ քու հոգիդ գիշերին մեջ, ո՞վ կին (ՄՄ, 1356): ***Սիրեմ*** քեզի պես ես ալ ***Գրավվիլ, լըռել*** ու ***խոկալ*** (ՊՂ, 1, 52): Որքան ատեն որ ***կսիրես*** դուն դեռ ***քալել***՝ Բիբերես ներս քաղաքն անհուն, Դեռ ***կսիրես գրել*** արևատենչ՝ Մայթին վրա ու քարերին (ԳԱԵ, 128):

Համեմատաբար փոքր հաճախականություն ունեն ***երազել, տենչալ, ախորժել, փափազել*** բայ-եղանակավորողները: Սրանք սկզբնապես ունեցել են զուտ բառային գործածություն. Գետն էլ կամուրջ ***է*** միայն ***երազում*** (ՍՊՔ, 918): Ու ծվատված ձանձրույթն ամենքիս մեջ ***Երազում է*** հիմա հնավաճառ միայն (ՊՍ, 1, 102): Նույնն ***է տենչում*** զուլալ հոսող ամեն ջուր (ՍՊՔ, 395): Մինչդեռ Մասիսի լանջը կուսական մատներ ***է տենչում*** (նտ, 920): Իսկ գեղեցկապատշար բաղեղը կանաչ, Որ ***չի ախորժում*** տգեղություններ, Լուռ մազլցում է քարափներն ի վեր (նտ, 915): Մերօրյա հայերենում դառնում են նաև եղանակավորողներ և Ադ-ով արտա-

հայտված գործողությունն օժտում են ցանկական, կամային երանգներով. *Երազում էր* մի աներագ, Խոր, անզգա քուն ունենալ, Հոգսից, ծայնից, Ելումուտից թեթևացած տուն ունենալ (ՀՀԻՂ, 93): *Երազում էր* դիմացի պատին հասնել, գեթ մի պահ դեմքը դնել խոնավ քարերին (ՊԶԱԵ, 595): *Տենչացել էր* առավելն իմանալ (ՄՍԳՆ, 30): Սակայն Անդրանիկը *տենչում էր* գնալ Արևմտյան Հայաստան և նետվել ազատագրական պայքարի ալիքների մեջ (ԽՀ, 252): Ու *տենչացի լինել* արժանավոր գավակ, Հասնել սրանց սիրուն՝ փնթի ու կույր (ՍԿԳՄՀ, 396): Նրան ինչ, թե կա աշխարհում մի կին, Որ *փափագում էր* հոտոտել նրա Օձիքը տաքուկ (Մ, 15): Նշված եղանակավորողներից *փափագել*-ը հարազատ է նաև արևմտահայերենին. Ուր իր ցավը կը տանի լուռ խարակներուն, Որոնք ընդմիշտ կարհամարիեն զայն անտարբեր, *փափագելով* կարծես անկե խուսիլ հեռուն (ՄՄ, 102). (տվյալ դեպքում եղանակավորող է դարձել անդեմ ձևով):

Ցանկական երանգ ունեն *ակնկալել, ակնարկել, բարեհաճել* բայերը: *Ակնարկել*-ը, որը նշանակում է «աչքով ցույց տալ, հայացքով նշան անել», «հիշեցնել», բանաստեղծական խոսքում ունի նաև «մի բան ցանկանալ, ակնկալել» իմաստը: Եղանակավորողի հակումներ է դրսևորում վերջին նշանակությամբ. Աղջիկն *ակնարկում էր* սիրո գաղտնիքը բացել: *Ակնկալել*-ը եղանակավորող է դառնում «հուսալ, մի բանի ցանկություն ունենալ» իմաստով. Գործուղման մեկնելով Սպիտակ՝ երկաթգծի կայարանում *ակնկալում էին տեսնել* եռուզեռ, լարվածություն (ԽՀ, 259): *Բարեհաճել* բայը «շնորհ անել, որևէ գործողություն կատարելու բարեհաճություն ցուցաբերելու» իմաստին զուգահեռ որոշակիորեն ներառում է նաև «ցանկանալ» նրբիմաստը. Եկե՛ք, *բարեհաճեցե՛ք* մեզ բռնել, քանզի գողություն ենք կատարել (ՄՍԳՆ, 305):

Ցանկական երանգավորում ունի *ծգտել* բայը ևս. Եվ ... *ծգտում են* կախվել կանանց թարթիչներից (ՊՍ, 3, 186): Եվ

ցա՞վն է արդյոք վտանգավոր, Թե՞ հենց այն դեղը, Որով *ծգտում ենք* ցավը *դարմանել* (ՊՍ, 2, 22):

Գրաբարյան *ախորժիմ* կամային եղանակավորողը գրական արևելահայերենում գործածվել է մինչև 20-րդ դարի սկիզբը (Կարծես թե նա *ախորժում էր* յուր ուղեղը մշտական գրգռման մեջ *պահել* (Ր, 104):) Իսկ արևմտահայերենում մինչև այժմ էլ գործածական է. Տիկի՛ն, ըսի, պարապ տեղը *երթալ գալեն չեն ախորժիր* (ԳԶ, 20): Սա ունի «դուր գալ» իմաստը. հոմանիշ է անգլերեն *to like* բային: Պահանջում է բացառական հոլովով ԱԴ:

Արևմտահայերենում ցանկական, կամային եղանակային կիրառություն ունեն նաև *ըղծալ, բաղծալ* բայերը (որոնք, սակայն, գործածական չեն արևելահայերենում). Բայց չէ կերպեր տակավին բառն առաջին, Քանզի *կըղծա* անհունին մեջ միշտ *մնալ* (ՄՄ, 119): Ու ջուրերուն եզրը կեցած երբեմն ալ երկար ատեն *Կը բաղծա* հոն *մենանալ* (նտ, 32):

2. ԱԴ-ն կարողական և մոտ իմաստներ արտահայտող եղանակավորողների հետ

Կարողական եղանակավորողներն արտահայտում են որևէ գործողություն կատարելու սուբյեկտի կարողությունը, կարող լինելը, ի գործու լինելը, քաջությունը: Մի շարք բայերի կարողական եղանակավորող իմաստը դարերի պատմություն ունի: Գրաբարում էլ է դրսևորվել կարողական երանգավորումը, և եթե համեմատելու լինենք, կարող ենք ասել, որ այն ժամանակ ավելի շատ եղանակավորողներ են դրսևորել կարողական նշանակություն, քան այսօր: Գրաբարում կարողական երանգավորում են ունեցել *կարեն, մարթեն (մարթիմ), ունիմ, զօրեն, գիտեն, իշխեն* բայերը: Թվարկվածների շարքում տարակուսանք կարող են առաջացնել *գիտեն, ունիմ* եղանակավորողները: Սակայն ըստ ՆՀԲ-ի՝ *ունիմ*-ը ունեցել է նաև «կարել, մարթել» իմաստը, իսկ

գիտեմ-ը նշանակել է նաև «կարող լինել»: Օրինակներ՝ Եւ որոյ աստուածոյ արարածքն պատկանելիք են և եղծանելիք՝ նմա անեղծ Աստուած *չմարթի ասել* (Եղ. 66): Նաև ոչ շարժական կամ շնչական *ունիմ անուանել* (Նար, 66): *Ոչ գիտացին ընտրել* զոսկերս հեթանոսաց և հավատացելոց (Խոր, 289):

Արդի արևելահայերենում կարողական երանգավորում են արտահայտում *կարողանալ, կարենալ, զորել, համարձակվել, հանդգնել* բայերը. *Չեմ կարողանում մոռանալ* եկեղեցում կատարվածը (ՄՍԳՆ, 69): Ա՛խ, թե *կարենայինք* մենք մտածել այնքան, որ մտածումն ինքը մաշվեր, ցնդեր (ՌԴԲԲ, 213): *Չի համարձակվում* Անդրանիկին *հայտնել*, որ Մխոն չկա (ՍԽԱ, 292): Եվ *հանդգնում են* այդ մասին *խոսել* բարձրաձայն (ՄՍԳՆ, 317):

Հիշյալ եղանակավորողներից իր հաճախականությամբ առանձնանում է *կարողանալ (կարենալ)* եղանակավորողը: Ներկայացնում ենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը՝ Եվ ինչո՞ւ *չի կարողանում զսպել* ոտքերի արագ ընթացքը, *չի կարողանում սանձել* իր ներքին տագնապը (ՊԶԱԵ, 202): Ոչ ոք *չէր կարողանում լուծել* տարիքի առեղծվածը (նտ, 136): *Չկարողացա՞ն նետահարել* (ՄՍԳՆ, 143): Ես *չեմ կարողանում մոռանալ* Դրախտիկին (նտ, 123): Միտքը դողդողում էր, շփոթվել ու *չէր կարողանում ավարտել* իր խոսքը (նտ, 230): Բայցևայնպես մերպեսները *կարողացան* Պատիվն իրենց *պահել* մաքուր՝ աղի նման ձերմակ, Եվ խիղճն իրենց *պահել* մաքուր՝ աղի նման (ՊՍ, 2, 80): Ես նա եմ, հենց նա՛, Ով մարդկանց *մերժել չի կարողանում* (նտ, 37): ... Եվ այնպես *ապրել կարողանայի*, Որ ինձ ազգանուն բաշխելուդ համար Դու երբևիցե անհարմար չզգաս (ՊՍ, 1, 504): Չխլես երբեք այս թրթիռն անքուն, Որ *կարողանամ* դեռ սիրահարվել (ՎԴ, 1, 237): Դուք *կկարողանաք* քաջաբար պաշտպանել ձեր լեռներն ու ձեր զավակներին (ՍԽԱ, 428): Աշխարհով մեկ ցրված լինելու մեր դժբախտությունը այսօր *պիտի կարողանանք վերածել* առավելության (Դպր, 60):

«*Կարողանալ* + ԱԴ» կառույցը հոմանիշ է «*կարող է* + ԱԴ»-ին, բայց, հատկապես ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերով, կերպային տարբերություն ունի. հակադրվում է երկրորդին շարունակական իմաստով: Հմտ.՝ *Չկարողացան* քեզ մեզնից *խել*, Եվ պարզ է հիմա, հստակ ու որոշ, Որ *չե՛ն* էլ *կարող* քեզ մեզնից *խել*, Ինչպես *չեն կարող խել* մի դրոշ (ՊՍ, 1, 509): Մեծ մարդասերը հեշտությամբ *չկարողացավ* որոշել, *չէր* էլ *կարող* որոշել իր տեղն այդ պայքարում (ՄՍԳՆ, 16):

Կարողանալ (*կարենալ*) եղանակավորողին համարժեք գրաբարյան *կարեմ*-ը մեծ հաճախականություն ուներ և ԱԴ-ն եղանակավորում էր «կարենալ», «կարող լինել», «գորել» իմաստներով: Արդեն 5-րդ դարում այն «մաքուր» եղանակավորող էր՝ մթազնված բառային նշանակությամբ. Եթէ գայդ երեսին *կարես առնել*, ապա զկրակ *կարես սպանանել* (Եղ, 352): Հիմունք նորա եղեալ են ի վերայ հաստատուն վիմի, ոչ ներքին *շարժել կարեն*, ոչ վերինք *դրդուեցուցանել* (նտ, 94): *Կարեմ*-ն այս դերով իշխող էր նաև միջին հայերենում. Խօշ եարիկ, *կարե՞ս գիտել* դու զիմ գալլս քեզ գիշերով (ՆԲ, 73): Հինգ հարիր ու վեց հազար նախշարար ի մեկտեղ եկուն, Մեկըն *չկարաց գրել* զիմ եարին սուրաթն ի նըման (նտ, 61): Ես *ոչ կարեմ գրել* ի գիրս, Չպատուհասս, որ դիպեցան... (ՈՒՄՀԲ, 1, 20): 19-րդ դարից արդեն *կարեմ*-ը տեղի էր տալիս *կարողանալ* եղանակավորողի առջև: Ժամանակը գործածությունից զրկեց *մարթիմ*, *մարթեմ*, *ունիմ* կարողական եղանակավորողները, *գիտեմ*-ը իմաստափոխվեց եղանակային առումով և մնաց միայն իմացական եղանակավորողների շարքում, *իշխեմ*-ը պահպանվեց միայն բարբառներում (*չեն իշխեր* կամ *իշխնար ըսել*), իսկ *կարեմ*-ը ձևափոխվեց՝ դառնալով *կարողանալ*, *կարենալ*, արևմտահայերենում՝ *կրնալ*: *Կրնալ*-ը արևմտահայերենի ամենագործածական եղանակավորողներից է. Ամպրոպ մը սաստ ցնցեց հոգիս, գոչեց – *սիրել չես կրնար* զիս (ՊԴ, 1, 51): Հիմա թուքը *չի կրնար կլլել*, – Հիմա *չի կրնար պոռալ* (ՄՄ, 108): Եվ ի՞նչ տեսիլ *կրնար թելադրել* իրեն գիշերային այս

մենությունը, եթե ոչ անորը (նտ, 147): Կամուրջ չհասած կեցավ, *չկրցավ անցնիլ*, տասը փարա չուներ (ԳՁ, 16): Եթե թույլ մալ ուշանաս, *կրնա* հանկարծ Հաջորդ գնացքն անդարձ *մեկնիլ*, *Կրնաս մնալ* դու ծեռնունայն (ԳԱԵ, 97): Գիտես նույնքան, Բայց *չես կրնար, Չես կրնար* դուն *մոռնալ* երեկն անջնջելի, *մոռնալ* ո՞ղբ ու ավե՛ր, ավա՛ր, *մեկնիլ* դեպի ափեր հեռու և *նորոգվիլ*, Ո՛չ, ուրանալ հայր ու որդի, հող ու երկինք, Ու *վերածվիլ* Խեղկատակի մ'անողնաշար, *Պատռել* բոլոր գրքերը քու ուղեղիդ մեջ, *Պատռել* բոլոր մեսրոպատառ վանկերն անգամ (նտ, 70): Չարե՛նց, *կրնայիր* դուն հիմա *խմել* հայոց գինին, Եվ քու խոսքիդ վաթսունամյա իմաստությամբ Բաժակները *լեցնել* կրկին (նտ, 114): Հարկ է նշել, որ երբեմն *ըլլալ* Ադ-ի կողքին *կրնալ* բայն առանձին եղանակավորողիմաստ չի դրսևորում. այս դեպքում մենք գործ չունենք «կրնալ + ԱԴ» կառույցի հետ, այլ երկուսը միասին դառնում են կայուն կապակցություն. *կրնա ըլլալ*, որ նշանակում է «կարող է պատահել, հնարավոր է, գուցե»:

Ժամանակակից արևելահայերենում *կարողանալ* եղանակավորողը մեծ հաճախականություն և անսահմանափակ կապակցելիություն ունի: Ավելին, այն այսօր իր բառային նշանակությամբ գրեթե չի էլ գործածվում: Առանձնանում է նաև նրանով, որ միայն ԱԴ-ի հետ է զուգորդվում: Ահա թե ինչու այդքան շատ է հանդիպում «*կարողանալ* + ԱԴ» կառույցը: Մեր լեզվում, ասացինք, *կարողանալ* եղանակավորողը գրեթե զրկված է իր բառային նշանակությունից և զուտ եղանակային (մոդալ) արժեք ունի: Անշուշտ, լինում են դեպքեր, երբ նա մենակ է հանդես գալիս. *Չկարողացա*, փաշա՛, *չկարողացա*, էն աստվածը վկա...(ՍԽԱ, 17): Սակայն նրան նախորդող նախադասությունը, ավելի ճիշտ՝ խոսքային միջավայրը հուշում է, որ նրա կողքին պետք է լինի մի ԱԴ (տվյալ դեպքում՝ *չկարողացա տանել*): Այդպես էր նաև մեր լեզվի նախորդ շրջանում. Վարի վաղձինակդ եմ ես, Արգելէ, ո՛վ մարդ, թէ *կարես*, Թըռչիմ, այլ երամ խառնիմ, գաս ի հետ կանչել, Թէ *կարես* (ՆՔ, 76): (Այս դեպքում՝ թէ *կարես արգելել*՝ արգելի,

թե *կարես կանչել*՝ կանչի): Այսպես է նաև արևմտահայերենում. Եթե *կրնաս*, Վերջակետ դիր այս տողերում (ԳԱԵ, 64): (Այս դեպքում՝ եթե *կրնաս վերջակետ դնել*՝ վերջակետ դիր): Սրանք յուրահատուկ կիրառություններ են:

Ի տարբերություն *կարողանալ*-ի՝ նրան հոմանիշ *կարենալ*-ը քիչ է գործածվում: Եթե մեր հավաքած օրինակներում *կարողանալ*-ը հանդիպել է 291 անգամ, ապա *կարենալ*-ը՝ ընդամենը 22 անգամ: Օրինակներ՝ Ու *կարեցար* աստծո գովքի Եվ ինքնասպան քո ողբի մեջ Աստծուն *դարձնել* տկար մի է, Ինքդ *դառնալ* աստվածային (ՀՀԻՂ, 121): Երանի թե մարդ *կարենար* նայել կյանքին ու աշխարհքին Թումանյանի լույս հայացքով, Թումանյանի սրտով անգին (նտ, 97):

Ոչ տարածված մի օրինակի ենք հանդիպել Ս. Կապուտիկյանի ստեղծագործության մեջ, երբ եղանակավորողն ու ԱԴ-ն իրարից բաժանված են, և այդ տարածությունը լցված է 6 երկրորդական նախադասությամբ ու 6 անուղղակի խնդիրներով՝ արտահայտված ծավալուն բառակապակցությամբ. ընդհանրապես բարդ ոճ է: Ահա այն՝

Ինչպե՞ս *կարեցար*

Պղնձե ժանգոտ այն դրամներից,

Որ գտնում էի մանկության իմ խեղճ մայրերի վրա,

Երկար շղթայից,

Որի ճռինչով ծագեց լուսաստղը իմ պատանության,

Թուջից, խև թուջից,

Որ լավայի պես պրծավ ու ծածկեց

Կանացի ծաղիկ երազանքներս,-

Անագից առատ,

Որ կլայեկեց իմ կյանքն ամբողջ,-

Տեսակ չունեցող տառապանքներիս անհայր տարրերից,

Որ չե՞ն գետեղվել Մենդելեևյան աղյուսակի մեջ,

Ես, զարմանալի մի ալքիմիկոս,

Ինչպե՞ս *կարեցար* ստանալ ոսկի (ՍԿԳՄՀ, 279-280):

Կարենալ-ը, **ուզենալ**-ի նման, արևելահայերենում ավելի գործածական է ըղծական, պայմանական եղանակաձևերով:

Ի վերջո, այն ընդհանուր հայերենյան է: Նույն արժեքով գործածական է նաև արևմտահայերենում. Ազնիվ Օֆելիա, Մեղք, որ չափտի **կարենամ** գալ հող՝ օդափոխության համար (ՄՄ, 207): Ինչպե՞ս ընել, որ **կարենամ** առանց քեզի **գոյատևել** թոպե մ'անգամ, **Անցնի՜լ** բարի՜ այս քաղաքի փողոցներեն Ու տրտմորեն, Բաժանունին ցավը **չապրիլ** ամեն վայրկյան, **Չփաթթվիլ** մայթն եզերող այս ծառերուն իրենց որոնումով, Ամեն տանի մեջ հանկարծ **գտնել** Հրազդանի ափին ժպտող իմ տնակիս գորովն ու սերն անպարագիծ, Ամեն դրան վրա **տեսնիլ** նաիրական ողկույզներուն ցուլքը վճիտ, Ու պատերուն վրա խոժոռ **Չքանդակել** Երևանի դեմքը ծիծղուն ու լուսածիր (ԳԱԵ, 104): Գրական հայերենի այս տարբերակում **կրնամ** և **կարենամ** եղանակավորողները տարբեր կիրառություն ունեն. երկրորդն ապառնիի իմաստով է գործածվում (հիմա կրնամ, վաղը թե կարենամ)⁸⁵:

«Քաջություն ունենալ» իմաստով եղանակավորող են դառնում և գրեթե նույն հաճախականությունն ունեն նաև **համարձակվել**, **հանդգնել** բայերը. **Չհամարձակվես** պայծառ օրերիս երկինքը **պղծել** Քո նամակների այս խաբող սիրով (Մ, 40): **Խոսել** ոչ ոք **չէր համարձակվում** (ՄՍԳՆ, 307): Ոչ ոք **չհամարձակվեց հետևել** նրան (ՍԽԱ, 397): Տե՛ր, մեղավոր իմ բերանով **հանդգնում եմ** քեզ **կոչել** արթնության (ՄՍԳՆ, 378): Ջգում էի, ուսուցչապե՛տ, բայց **չէի հանդգնում բանաձևել** (նտ, 177): Ուրեմն ասեմ, ամենից առաջ, **Հանդգնեմ ասել**, որ ես աշխարհում Անխտորական եմ՝ նվագի նման (ՊՍ, 1, 441): Ոչ ոք **չի հանդգնում ժխտել**, որ շինականը շինական է, արքան՝ արքա (ՊԶԱԵ, 150): Եթե **հանդգնել** բայը գործածվում է իր նյութական նշանակությամբ (Ես քո ոտների փոշին, **հանդգնում եմ** քո դեմ (ՄՍԳՆ, 187), Հետո **հանդգնեց** և վաճառողին հարցրեց գինը (նտ, 103)), ապա **համարձակվել**-ն

⁸⁵ **Կարենալ**-ը, բացի դրանից, հատուկ ուժ է կազմում (Մեծ ջանքեր են պետք կարենալ հաղթություն ձեռք բերելու համար):

առանց ԱԴ-ի չի գործածվում (ծայրահեղ դեպքում վերջինս խոսքային միջավայրից հասկացվում է):

Համարձակվել-ն եղանակավորողի դերում հանդիպում է դեռևս Ռաֆֆու ստեղծագործություններում. Ես այլևս *չհամարձակվեցա առնել* նորա թևքը (Ր, 69): *Հանդգնել*-ը նաև արևմտահայերենի եղանակավորողներից է. Մանավանդ ...ծեռքերն, ա՛խ, ծեռքե՛ր, ծեռքե՛ր, Ու *կը հանդգնին* ութ հարյուր տողով Առտուն *գլտորել* իմ կուրքիս կողով (ՄՄ, 126): Այլ որ շուրթերն *հանդգնին Հպել* հրաշից այդ լուսե (ՊԴ, 1, 67):

Կարողական երանգավորում ունի նաև *գորել* բայը: Այն գրաբարի ամենագործական եղանակավորողներից էր. Եւ ոչ գթիվ մի բարդելոցն անօրենութեանց *Ջօրեցից* ընդ գրով սահմանի *գրաւել* (Նար, 64): Բառն ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ նշանակում է «ուժը պատել, կարողանալ». Որովհետև սեր խաղացող աղջկան մենք *Չե՛նք գորելու նստեցնել* մեր ծնկներին (ՊՍ, 2, 18): Մեր քարտարանում միայն 2 օրինակ կա *գորել*-ի եղանակավորող կիրառությամբ:

3. ԱԴ-ն ձգտման և նման իմաստ ունեցող եղանակավորողների հետ

Իմաստային առումով կարողական եղանակավորողներին են հարում մի շարք բայեր, որոնց խումբը պայմանականորեն կարելի է անվանել «ձգտման» եղանակավորողներ: Որոշ առումով մարդկային կարողության դրսևորում է դառնում նաև նրա ձգտումը: Ուստի և պատահական չէ, երբ կարողական և ձգտման եղանակավորողներն երբեմն անվանում են ընդհանուր ձևով՝ «կարողական-ձգտման»: Մեր լեզվի հին և միջին շրջաններում նույնպես կենսունակ են եղել մի շարք եղանակավորողներ, որոնք ԱԴ-ին հաղորդել են ձգտման երանգ: Դրանցից են՝ *իշխեմ, ջանամ, փութամ, ժտիմ, ժպրհիմ*: Առավել տարածված էր *իշխեմ* եղանակավորողը, որն էլ գործածվել է երկու իմաստով՝ և՛ «կարողանալ, հանդգնել», և՛, առավելապես, «ձգտել»: *ժպրհիմ*-ն ու *ժտիմ*-ը նույնպես ունեցել են և՛ «համարձակվել», և՛ «ջանալ»

իմաստները: Օրինակ՝ Յոյնք երանի ետուն վասն նոցա աշխարհին Հայոց և բազում բարբարոսք *փութացան տեսանիլ* զնա մարմնով (Եղ., 386): Արդ *փութամ տեսանել* զօրն, և յաւուր անդ զժամն եկեալ հասեալ ի վերայ մեր (նտ, 312): *Փութան մերկանալ* զայդ փառք անարգեալ (ԴՔ, 115): Իբրև տեսին զմեծ սքանչելիսն դահիճքն, յոյժ զարմացան ընդ իրան, այլ ոչ ինչ *իշխեցին հարցանել* զնա (Եղ, 316): Աղուոր, քեզ բան մի կ'ասեն՝ *հորդ ահուն չեն իշխեր ասել* (ՆՔ, 47): Եթե *ժպրհիցի* ոք *ասել*, զանձն տգիտաբար կորուսանէ (Եղ., 336):

Ժամանակակից արևելահայերենում ձգտման և դրան մոտ իմաստ են արտահայտում *ձգնել, ջանալ, ձգտել, համառել, աշխատել* եղանակավորողները: Օրինակ՝ Եվ ցա՞վն է արդոյք վտանգավորը, թե՞ հենց այն դեղը, Որով *ձգտում ենք* ցավը դարմանել (ՊՍ, 2, 22): Տեղյակ եմ ... Դատարկ բաներից տխրելուն նաև, Որ միշտ *ջանում* ու *ձգտում են* ասել Առանց ավելորդ որևէ բառի (ՊՍ, 1, 466): Գրիգորը *ջանում էր մոռանալ* Դրախտիկին և *կենտրոնանալ* իր առաքելությանը (ՄՍԳՆ, 292): *ձգնում ենք* գոյի իմաստը բացել, *ձգնում ենք* միտքը դնել կյանքի դեմ (ՌԴՔԲ, 70): Կտրուկ քարափով վերջացող լանջը ... *Համառում է կտրել* երկնքի կապտաջիղ կողը (ՊՍ, 2, 38): Չիերը *համառում են* թեք տախտակամածով բարձրանալ վագոն (ՍԽԱ, 191): *Աշխատեց* ձեռքում երկար պահել նրա մանրիկ կոշիկները (նտ, 103): Սրանք բառային գործածությունն էլ ունեն: Օրինակ՝ Եվ ինչպե՞ս են *ջանում* առանց հոգնելու, առանց իրենց խնայելու (ՄՍԳՆ, 209): Հսկիչները *ձգտում էին* վիճակի պարզեցման (նտ, 230): Միայն *աշխատում էր* զարմանալի թռիչքներով (նտ): Հոգիս *ձգտել է* կապույտ մի երկինք՝ Սիրով անաչառ (Մ, 184) և այլն:

Ձգտել-ի, *ձգնել*-ի հետ համեմատած *ջանալ* եղանակավորողն արևելահայերենում նվազ գործածական է. ընդհակառակը՝ հաճախադեպ է արևմտահայերենում: Օր.՝ Մենք ամեն կերպ *ջանացել ենք* *օգնել* օտար երկրում հայեցի կրթություն ստացող երեխաներին, նաև ուսուցիչներին (Դպր., 60): *Ջանում են* սանձել

ժխտողը նրանց (Մ, 24): Եվ հորդեց գործը սև իթթիհատի, Որ *ջանաց ձգմել* լեռն Արարատի (ՀՇՀԴ, 192): Ու ես էլ ահա ... *Ջանում եմ կտրել* մի պատառ աշուն (ՊՍ, 2, 38):

Ձգտման երանգ ունի, շատ էլ գործածական է *աշխատել* եղանակավորողը. Ներսեսը ծանոթ էր այդ անցքերին և միշտ *աշխատել էր խուսափել* այդ մարդուց (ՊԶԱԵ, 138): Եղանակավորող նշանակությամբ սկսել է գործածվել 19-րդ դարից (Երկար նա *աշխատում էր հեռացնել* և *մխիթարել* ինձ (Ր, 73): *Կաշխատեմ* ձեզ *մոտեցնել* այդ ընտանիքին (նտ, 164): Մերօրյա հայերենում եղանակավորող է դառնում տարբեր նրբիմաստներով՝

1. Ավելի հաճախ և ընդհանրապես նրա մեջ գերիշխում է «ջանալ, ջանք թափել, ձգնել» իմաստը. *Աշխատում էր* դարաբաղյան խոսվածքը *հասկանալի դարձնել* (ՍԽԱ, 374): Դու ստախոս ես և ամբաստանող, և մարդիկ *աշխատում են հեռու մնալ* քեզանից (ՄՍԳՆ, 208):

2. Ունի «ձգտման» իմաստ. Ներքի գյուղն *աշխատում էր* ավելի ճոխ *ընդունել* նրան (ԱԲ, 68): Արքան *կաշխատի* անպայման ժամանակ *կորզել* և ճատրակ *խաղալ* նրա հետ (ՊԶԱԵ, 208):

3. Ցանկական նրբերանգ էլ է դրսևորում. Այն տարբերությունը, Որ հիմա էլ, երբ արդեն հնար չունի, *Աշխատում էր* մի կերպ ինձ *ներշնչել*, Թե խոսելը նույնն է, ինչ... ստելը (ՊՍ, 2, 91):

4. Ունի «փորձել, փորձ անել» իմաստը. Մեր բազմաթիվ տերերն *աշխատում են* ուժի միջոցով *փակել* այն աչքերը, որոնք գեղեցկությունը տեսնելու տաղանդ ունեն (ՄՍԳՆ, 289):

Սակայն բոլոր դեպքերում գերիշխում են «ձգտել», «ջանալ» իմաստները:

Ձգտման երանգ հազվադեպ արտահայտում են նաև *տքնել*, *չարչարվել* բայերը. Գյուլագին *տքնում էր* օրվա հոգսը հոգալ: Կանայք *չարչարվում էին* ամուսիններից ետ չմնալ: «Մի բան իմաստ ունենալու» իմաստով եղանակավորող է դառնում նաև *հավակնել* բայը (ունի «հանդգնել» իմաստը ևս)... Դոլարնե-

րի վարկով Եվ նորագույն արնոտ ատոմային արկով Երկրագնդի բախը **կշռե՞լ է հավակնում** (ՊՍ, 1, 46): Անհատական, հեղինակային գործածության արդյունք է **տառապել**-ի եղանակավորող արժեքը՝ «աշխատել, չարչարվել» իմաստով. Փորձի՛ր, **տառապի՛ր** ինքդ **լեզու գտնել** բարձրյալի հետ (ՄՍԳՆ, 65):

Արևմտահայերենում նման իմաստով եղանակավորող են դառնում առավելապես **ջանալ**, **ճգնիլ** բայերը, սակավ դեպքերում՝ **ժայրհիլ**-ը: Հուսեմի աղան հիմա այս խնդիրները կը հարուցաներ իր մտքին մեջ, **լուծելուկը ջանար** (ԳԶ, 14): Սորվիմ աղոթք Բառնալ քեզի երբ խութիցոնք իմ հանդիպի Սև սատանին, Որ **ճգնի** միշտ **Դյութել** գիոգին, Իմ մութ, Ի վիշտ (ՊԴ, 1, 47): Աստված, խոկն հըսկա փշրե հյուլեիս, Որ **ժայրհի ձգտիլ**, **սուզիլ** խորն երկնի, **ելնել** աստղերու սանդուղքն ահալի (նտ, 60):

Ոչ վաղ անցյալում **ձգտել**, **ջանալ**, **ճգնել** բայերի կողքին ճիշտ էին ԱԴ-ի տրական հոլովով ձևերը. մերօրյա հայերենում այդպիսիք ընդունելի չեն:

4. ԱԴ-ն հրաման, հարկադրանք, պահանջ և սրանց մոտ իմաստ արտահայտող եղանակավորողների հետ

Գործողությունը կարող է կատարվել ստիպողաբար, հարկադրաբար, կարգադրությամբ, հրամանով ու պահանջով, կարող է խանգարվել, արգելվել, մերժվել ինչ-որ մեկի կողմից: Մի խոսքով՝ գործողությունը կատարվում է կամ չի կատարվում (դադարեցվում է) հարկադրանքով, ստիպողաբար, ոչ կամային: ԱԴ-ով արտահայտված գործողությանը նման և մոտ երանգ են հաղորդում հետևյալ եղանակավորողները՝ **հրամայել** (**հրամայվել**), **ստիպել** (**ստիպվել**), **պահանջել** (**պահանջվել**), **հարկադրել** (**հարկադրվել**), **արգելել** (**արգելվել**), **սպառնալ**, **մղել**, **խանգարել**, **գրկել**, **մերժել**, **պնդել**: Օրինակներ՝ Նա զինվորներին **հրամայեց** նաև աննկատ **գնալ**, **հետապնդել** փախստականներին, տեղնուտեղը **սպանել** և ուշ գիշերին **բերել** **զցել** քաղաքի սահմանագլխին (ՊԶԱԵ, 413): Միակ փրկությունը ստամոքսի ծակոց-

ներն էին, որ *ստիպում էին* դեռևս մինչև վերջ *չհրաժարվել* իրենից, *հարկադրում էին* ցավ զգալ, մտահոգվել ու զբաղվել իր անձով (նս, 506): Տարիքը. Խիստ է նա չափազանց. Նա *պահանջում է* իրեն *հարգել* (ՍԿԳՄՀ, 299): Նա հիմա խնձոր էր դասավորում հատ-հատ կողովի մեջ և որդուն *հրահանգում էր* քիչ *ծխել*, գրելիս խնձոր *ուտել*, գիշերները *չգրել* և կուշտ-կուշտ *քնել* (ՀՄ, 2, 11): *Կարգադրեց* կանչել Ֆիդա Մխոյին (ՍԽԱ, 205): Այն ո՞վ է լուսաստղով հմայվում եվ *արգելում էր* երգ *ծոնել*. Աղբյուրի ա-կունքից ջուր խմում եվ գրում՝ «*Արգելված է խմել*» (ԳԷ, 2, 57): Իրեն կորցրած սրբազանը հայիոյում էր և *սպառնում* հուր ու մոխրի *վերածել* Նարեկը (ՄՍԳՆ, 318): Մերոնցից շատերը բոլորովին *մերժում են* ապստամբ լինել (ՍԽԱ, 232):

Հարկադրական, արգելական իմաստային դաշտին պատկանող եղանակավորողների և ԱԴ-ների մատնանշած գործողությունները չեն ընդգրկվում միևնույն ենթակայի ոլորտը. իրամայում, ստիպում, կարգադրում, պահանջում, արգելում, խանգարում, մերժում կամ զրկում է մեկը, պահանջվող գործողությունը կատարում է մեկ ուրիշը: Բացառություն են կազմում գուցե միայն *ստիպվել* և *սպառնալ* բայերը: Բնականաբար տարակարծությունները մեծ մասամբ այս դաշտին են վերաբերում. ելակետը ստորոգման ջահուկյանական ըմբռնումն է...

Այս խմբի բայերից կրավորակերպ չեզոք ձևերով եղանակավորող են դառնում նաև *հրամայվել*, *ստիպվել*, *կարգադրվել*, *պահանջվել*, *արգելվել* բայերը, ըստ որում՝ հատկապես հարակատար ժամանակաձևերով⁸⁶, մեծ մասամբ՝ միադիմի. *Հրամայված է վերադառնալ* վրանների մոտ (ՍԽԱ. 286): Իսկ եթե *ստիպված եմ*, այսուհանդերձ, *ստել*՝ Մեղավորը ես չեմ (ՊՍ, 1, 293): Արդյունքը եղավ այն, որ *արգելվեց* մեր առաքիչներին որևէ բան *ուղարկել* (ԽՀ, 1989 թ. 252): Բացառությամբ «ստիպված է

⁸⁶ Այս դեպքում համարում են սահմանական եղանակի ժամանակաձև՝ «եղանակավորող դիմավոր բայ + ԱԴ» կաղապարով, հակառակ դեպքում՝ «հարակատար դերբայ + էական բայ + ԱԴ» կաղապարով:

+ԱԴ» կառույցի, մնացածները՝ «*հրամայված է* + ԱԴ», «*արգելված է* + ԱԴ» և այլն, բայական բաղադրյալ ստորոգյալ են դառնում անենթակա նախադասությունների կազմում (թեև կարող են հին մտածողությամբ սրանց կողքի ԱԴ-երը ենթակա համարվել՝ իբր՝ ի՞նչ է հրամայված կամ արգելված):

Իմաստային այս խմբի ամենատարածված եղանակավորողը *հրամայել*-ն է. մյուս եղանակավորողների համեմատությամբ առանձնանում է իր հնությամբ, լայն գործառնությունը և կապակցելիությամբ: Իր եղանակային էությունը դրսևորել է մեր լեզվի զարգացման բոլոր շրջաններում. Իսկ զՎասակն հանդերձ գլխավոր քրիստոնեիւքն ի Դուռն *հրամայեաց կոչել* (Եղ, 260): Որպէս զի քաղցրացաւ իսկ մտաց թագաւորին, *հրամայեաց* զամենեսեան *ածել* զառաջեաւ (նտ, 336)⁸⁷: Այնուամենայնիվ, նա զսպեց յուր բարկությունը և *հրամայեց* մեզ տուն *տանել* (Ր, 69): *Հրամայեց վեր կենալ* և *սկսել* գործը (նտ, 14): Ավելացնենք նաև, որ այն «մաքուր» եղանակավորող է. առանց ԱԴ-ի գրեթե չի գործածվում: Իսկ եթե կան դեպքեր, երբ միայնակ է, երբ նրա կողքին ԱԴ չկա, ապա խոսքային միջավայրը հուշում է վերջինիս առկայության մասին. Ես անում եմ այն, ինչ *հրամայում ես* դու (ՄՍԳՆ, 225): *Հրամայիր*, սրբազան, և մենք կկատարենք քո ասածները: Խոսքային միջավայրը թելադրում է, որ կռահենք «հրամայում ես + անել» և «հրամայիր + կատարել» կառույցները: Համեմատաբար անկախ է գործածվում հեղինակի խոսքում (ուրիշի ուղղակի խոսքի կողքին). Ինքն իրեն հրամայեց՝ հանգիստ /ՄՍԳՆ, 206):

Ճկունությամբ և կարողականությամբ *հրամայել* եղանակավորողին է մոտենում *ստիպել*-ը՝ գործառական միջին հաճախականությամբ. Քո պապերը հրով ու սրով *ստիպեցին* մոռանալ (ՊԶԱԵ, 179): Տիկնիկն էլ է հոգնում, Երբ ետևից բեմի ինչ-որ թելեր նրան *ստիպում են* ապրել (ՊՍ, 1, 292): Եվ *ստիպում է* ռուն-

⁸⁷ Հայտնի է, որ գրաբարը նախընտրում էր *հրաման տալ* հարադրականը. Բայց *հրաման տալ* բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական... (Խոր, 46):

գո՞վ էլ **զգալ**, Որ մենակ ես դու իբրև մի Իգրեկ (ՊՍ, 2, 128): Մերօրյա հայերենում **ստիպել** բայն ունի նյութական նշանակությամբ գործածություն ևս, բայց նման դեպքերում էլ հաճախ զգացվում է ԱԴ-ի «պակասը» (Զի՛ հանձնի, հա՛յր սուրբ, կստիպենք, և ճարահատյալ կհանձնի (ՄՍԳՆ, 154) - կստիպենք հանձնել):

Հնօրյա հայերենում սխալ չի համարվել **ստիպել** եղանակավորողի կողքին ԱԴ-ի տրական ձևերի գործածությունը. Բայց ես **կստիպեմ** քեզ իմ առաջարկությունները **ընդունելու** (Ռ, 10): Սակայն հենց Րաֆֆու երկերում էլ հանդիպում են նույն դիրքում ԱԴ-ի ուղիղ ձևերը. Ի՞նչ էր գլխավոր շարժառիթը, որ **ստիպեց** օրիորդի ծնողներին նրան **կուսանոց տալ** (Ռ, 75): 19-րդ դարի վերջերից սովորական է դառնում այդ բայի հետ ԱԴ-ի ուղիղ ձևերի գործածությունը (Սովը ... **ստիպում է** մարդուն **ուտել** ամեն բան (ՀԹ, 3, 123): Արդի արևելահայերենում ճիշտ չեն թեք ձևերը: Այս հանգամանքը հավաստում է, որ **ստիպել** բայը վերջնականորեն եղանակավորող դառնալու ճանապարհին է: Թեք ձևերով գործածությունն զգալի չէ, թեպետև կան հնաբանության դեպքեր. Հրով ու սրով **ստիպեցին** մարդկանց **ընդունելու** իր բերած բարիքները (ՊԶԱԵ, 182): Տղան նայում էր հիացումի հետ ամաչկոտ մի խոնարհումով, որ վարպետին **ստիպում էր հպարտանալու**, ավելի խոր **ճանաչելու** շինարարի իր տաղանդը (ՄՍԳՆ, 95-96): Վեր կացավ, ճնկոտեց մարմինը, **ստիպեց** ոսկորներին ու մկաններին **ցավելու**, **արթնանալու** (նտ, 287): Այսօրվա լեզվամտածողությամբ, կարծում ենք, ճիշտ պետք է համարել ոչ թե «**ստիպեց + հպարտանալու** (ճանաչելու, ցավելու, արթնացնելու)», այլ «**ստիպեց + հպարտանալ** (ճանաչել, ցավել, արթնացնել)», թեպետև որոշ լեզվաբաններ ճիշտ հակառակ կարծիքին են:

Ըստ «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ **ստիպել**-ը նշանակում է և՛ «հարկադրել, պարտադրել», և՛ «որևէ արարքի

պատճառ դառնալ, մղել, դրդել»։ Համապատասխան իմաստա-
յին կիրառությունն էլ երևի թելադրում է ԱԴ-ի ձևը։

«**Ստիպել** + ԱԴ» կառույցի գեղեցիկ ու հետաքրքիր կիրառու-
թյան ենք հանդիպել բանաստեղծ Ռ. Դավոյանի «Քարե բարձ»
ժողովածուում։ Գեղեցիկ՝ ԱԴ-ով ձևավորված փոխաբերական
արտահայտություններով՝ **ստիպել** + գետին ուղղահայաց **հոսել**,
հունդը **ցանել** խարկած, **քանդել** տաճարները և տեղը գոմեր **շի-
նել**, **կորցնել** հանձարներին և տեղը շներ **պահել**։ Հետաքրքիր՝
կառույցի ընդմիջարկվածությամբ, բազմակի ԱԴ-երով.

Գուցե քար էլ մնան
գլուխները քարե,
թե չէ հանկարծ կելնի
քարե մի մարգարե
և **կստիպի** գետին՝
ուղղահայաց **հոսել**,
և դա քիչ է, մարդու
ուժի մասին **խոսել**,
երգիչներին՝ այսու
երգել միայն պառկած,

տունը կորիզ **տնկել**,
հունդը **ցանել** խարկած.-
և դեռ **փառաբանել**
քարե միտքն էլ վսեմ...
քանդել տաճարները,
տեղը գոմեր **շինել**,
կորցնել հանձարներին,
տեղը **պահել** շներ...
(ՌԴՔԲ, 218-219)

Միջին հաճախականություն ունի նաև **պահանջել** եղանակա-
վորողը. Սուրենը, որ սկզբում գալարվում էր, լալիս էր ցավից,
աղերսում, **պահանջեց դադարեցնել** խոշտանգումը (ՍԽԱ, 300):
Եղանակավորողը, հրամայական երանգ արտահայտելուց զատ,
ԱԴ-ին նաև ցանկական նրբիմաստ է հաղորդում. Այդ պատճա-
ռով էլ **պահանջումենք** նրան **հանձնել** մեր դատին (ՄՍԳՆ, 233):
Արդի արևելահայերենում հաճախ են օգտագործվում «**պահան-
ջում է** + ասել», «**պահանջում է** + խոստովանել» մանրակառույց-
ները (հատկապես **ճշմարտություն** ենթակայի կողքին)։ Օր.՝
Ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ դու, դո՛ւ ես սո-
վորեցրել ինձ հարգել ու գնահատել շինականի դառն ու հոգնա-
տանջ տքնանքը (ՄՍԳՆ, 349)։ Պատմական **ճշմարտությունը**,

սակայն, *պահանջում է ասել*, որ դա բացահայտ զրպարտություն է (ԽՀ, 261): Սա, որ տարածված է, արդեն կայուն ոճ է դարձել: *Պահանջել* բայը հավասարապես գործածական է նաև իր ինքնուրույն բառային արժեքով: Մեծ հարցեր վճռող կոիվները, բնականաբար, պահանջում են մեծ զոհեր (ՄՍԳՆ, 342): Երեկոյան, հուրախություն շրջապատող մարդկանց, ուտելիք պահանջեց (նտ, 331):

Տարածված կիրառություն ունեն *արգելել*, *սպառնալ*, *հարկադրել*, *գրկել*, *մղել*, *կարգադրել*, *մերժել*, *հրահանգել* եղանակավորողները: Բերված բայերի կիրառության երեք եղանակ է նկատելի.

1. Երբ դրսևորում են իրենց նյութական նշանակությունը: Սա նրանց հիմնական գործածությունն է. Աստծո տունը զինավառ մտնելն արգելվում է (ՄՍԳՆ, 314): Ինչո՞ւ են իրար խանգարում երկու աստվածությունները՝ սերն ու հավատը (նտ, 38): Ինձ հանդգնության է մղում սերը, Դրախտիկի սերը (նտ, 187): Նա իր մեղքերով սպառնում է աշխարհի գեղեցկությանն ու քեզ (նտ, 212): Ինքնամաքրումով, ինքնահպատակվելով նա մերժում է թույնն ու վարակը (նտ, 285): Մի՛ գրկիդ քեզ քո հոգու հարստությունից (նտ, 353): Երբ ուշքի բերին, նա կարգադրեց, որ դրսից հավաքեն վրանը (նտ, 161):

2. Երբ ԱԴ-ի կողքին դրսևորում են եղանակավորող արժեք, համապատասխան երանգով օժտում ԱԴ-ով արտահայտված գործողությունը: Օր.՝ Մի կոտրած բազկաթոռ էր ընկել նրանց արանքում, որը, ինչպես նրան թվաց, *խանգարում էր* միմյանց գիրկը *նետվել*: Անդրանիկը *մղվում էր ձեռք բանալ*, երկու կիսել թշնամու հետևակն ու նորից *փախուստի մատնել* (ՄԽԱ, 250): Իմանում է մայրս ահա Եվ *սպառնում* հորս *հայտնել* (ՊՍ, 1, 167): Եթե ես կռվողներին *արգել եմ վրեժխնդիր լինել* թշնամուց, արդյոք չե՞մ մեղադրվի թոնդրակյան խառնակության մեջ (ՄՍԳՆ, 155): Տասներկու տարեկան հասակում Հուսիկին *հարկադրեցին* ամուսնանալ Տիրան արքայորդու աղջկա հետ

(ՊԶԱԵ, 86): *Կարգադրեց բեռնաթափել* վագոնները ու մեկնել ուղքով (ՍԽԱ, 205):

3. Երբ գուգակցվում են թե՛ բառային, թե՛ եղանակավորող նշնակությունները. նման դեպքերում դժվար է դառնում որոշելը՝ բայը ԱԴ-ի հետ խնդրային հարաբերությամբ է կապված, թե՞ եղանակավորում, երանգավորում է նրանով մատնանշված գործողությունը: Այնուամենայնիվ, քանի դեռ սրանց կողքին հնարավոր են ԱԴ-ի թեք ձևերով գործածությունները, չենք կարող պնդել եղանակավորող լինելը (ինչպես օրինակ՝ Նման հանդիպումները ոգեշնչում, օգնում են մեզ և *մղում ապրելու...* (ՄՍԳՆ, 280): Բայց էլի ինչ-որ բան *խանգարում է* մինչև վերջ *հավատալու* սեփական ուժերին (ՊԶԱԵ, 181):

Մեզ հանդիպած մի օրինակում եղանակավորող կիրառություն է դրսևորել *պնդել* բայը՝ «ստիպել, պահանջել» իմաստը հաղորդելով ԱԴ-ով արտահայտված գործողությանը. Եվ *պնդում են դատապարտել* ոչ թե Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի շրջափակումը, այլ շրջափակումն ընդհանրապես (ԽՀ, 274): Նման իմաստով գործածությունները տարածվելու միտում ունեն:

5. ԱԴ-ն իմացական, մտածական և դրանց մոտ իմաստ արտահայտող եղանակավորողների հետ

Իմացական եղանակավորողներն արտահայտում են սուբյեկտի գիտելիքներն ու իմացությունը, խոհերն ու մտածմունքը ԱԴ-ով դրսևորված գործողության նկատմամբ. անորոշ դերբայի առկայությունը բացահայտում է նմանիմաստ բայերի մտադրական՝ մտածական բովանդակությունը, քանի որ մտադրության իրադրությունը ենթադրում է գործողություն: Ժամանակակից հայերենի իմացական եղանակավորողներից են՝ *գիտեմ (գիտենալ), իմանալ, մտածել, օգնել, վարժեցնել, խրատել*: Օրինակներ՝ Դու խոսել *գիտես*, Հակոբի՛կ (ՄՍԳՆ, 167): Անդրանիկը *մտածում էր* գիշերով *շարունակել* պատերազմը (ՍԽԱ, 62): Թող դետուդեն

չերկարացնի ձեռքերը և ավտոբոսակն էլ **զսպել իմանա** (ՊԶԱԵ, 173): Երկի՛նք, **օգնի՛ր** ինձ **լինել արթուն** (ՄՍԳՆ, 299): Առու և վտակ Ամեն ձորակից Մի կաթիլ ջրով բարիք անելու հորդոր են կարդում... Թիթեռը **հուշում գոհ լինել** թեկուզ մի օրվա կյանքից... (ԳԷ, 2, 197): Ինձ էլ **վարժեցրու** Պաիկը դարերի կշռույթով **չափել** (ՍԿԳՄՀ, 223):

Պետք է նկատել, որ **խրատել** և **վարժեցնել** բայերի եղանակավորող գործածությամբ բերված օրինակները եզակի դեպքեր են կամ անհատական գործածության հետևանք: Հիշյալ բայերը սովորաբար գործածվում են իրենց բառային նշանակությամբ (**Հայրը խրատեց** որդուն, Կրկեսուն շներին **էին վարժեցնում**), իսկ եղանակավորող իմաստ են արտահայտում «ուսուցանել, սովորեցնել» իմաստով:

Իմացական եղանակավորողների շարքում առանձնանում է **գիտեմ (գիտենալ)** բայը. առանձնանում է թե՛ իր հնությամբ, թե՛ կիրառական առանձնահատկությամբ ու հաճախականությամբ: Գրաբարում էլ **գիտեմ** բայը, նյութական իմաստով գործածվելուն զուգահեռ, դրսևորել է եղանակավորող նշանակություն և, ըստ ՆՀԲ-ի, ոճերում նշանակել է «կարող լինել»: Օր.՝ Քանզի **ոչ գիտացին ընտրել** զոսկերս հեթանոսաց և հավատացելոց (Խոր, 289): Ժամանակը սույն բառը չգրկեց եղանակավորող իմաստից: Աշխարհաբարում (ներառյալ արևմտահայերենը) պահպանեց իր ձևը՝ **գիտեմ** (արևելահայերենում՝ պակասավոր հարացույցով). զուգահեռաբար գործածվում է նաև **գիտենալ** (արևմտահայերենում՝ **գիտնալ**) բայը:

Գիտեմ բայն աշխարհաբարի երկու տարբերակում էլ պակասավոր է. ունի միայն սահմանական ներկա (գիտեմ...) և անցյալ անկատար (գիտեի...) ձևերը: Իսկ Էդ. Աղայանի բառարանում տեղ է գտել բայի անորոշ ձևը՝ **գիտել**, որը, սակայն, կիրառական չէ: Այն այսօր հավասարապես գործածվում է թե՛ իր ուրույն բառային (**Զգիտեմ** երբ, չեմ հիշում ով Անցնում է լուռ այս աշխարհով (ՍՊՔ, 1044): Իսկ թե ոնց եմ սիրում, դու գիտենաս պիտի,

Բայց քեզնից առաջ քո թշնամին գիտի (նտ, 896): Հակոբը գիտեք իր ուսուցչի պատմությունը (ՄՍԳՆ, 290:), թե՛ եղանակավորող արժեքով: Արդի հայերենի գործածության մեծ հաճախականություն ունեցող եղանակավորողներից է: Օրինակներ՝ Նույնիսկ են էլ գիտեմ ճառել Ու խրատել գիտեմ անշո՛ւշտ (ՊՍ, 2, 216): Ասա՛, հիմա ո՞ւր գնա քո ծառան, Ոչ լողալ գիտե, ո՛չ էլ ունի թև (ՍՊՔ, 556): Սուր բանեցնել գիտե՞ս (ՍԽԱ, 447): Ներսեսը նաել չգիտեր, խոսել չգիտեր (ՊԶԱԵ, 143): Դու, որ գիտես լոկ բուրել, Գիրգ սրտերու վե՛րք փորել (ՊԴ, 1, 34): Ունեի ես իմ սիրուհին, Որուն թեպետ աչքն էին սև, Սակայն սըգալ Չը գիտեին (նտ, 69): Բայց սերը հուսահատիլ գիտե՞ (ՄՄ, 150): Եթե միայն ան գիտնա Գիրքը կարդալ իմ սրտիս, Թերթել էջերը անգոր բառերու տակ գտնել գիս, Ու գտնելով գիս՝ արդեն գտնել երազն իր բերրի, Գուցե աղջիկն այդ քնքուշ դնե ձեռքն ավիս մեջ (ԳԱԵ, 55): Ես չեմ գիտեր հեգել ու թոթովել նույնիսկ (նտ, 133):

Անշուշտ կան դեպքեր, երբ միևնույն նախադասության մեջ գիտեմ բայը նույն դրությամբ կարող է ընկալվել իր և՛ բառային, և՛ եղանակավորող արժեքներով: Այս դեպքում արդեն որոշակի դեր է կատարում ԱԴ-ի առկայությունը. այն մի տեսակ թուլացնում է գիտեմ-ի նյութական արժեքը: Օր.՝ Թող գան, խնդրեմ, բոլոր նրանք, ովքեր գիտեն փայլատակել կարմիր գինու թնդությունից, Ուրախանալ և՛ օտարի խնդությունից (ՊՍ, 1, 423):

Անսահման է մարդկային իմացությունը, անհատնում՝ գիտելիքների աշխարհը. գիտեմ եղանակավորողն էլ թելադրում է բազմաբնույթ ԱԴ-ներ: Օր.՝ Նրանք գիտեին սիրել ու ատել, Գիտեին խորհել ու համեմատել, խույս տալ ցավերից, դավերից ծալտյալ, ծարավել լույսին, արևին ժպտալ (ՊՍ, 4, 180): Նա կգտնի այստեղ նրա՛նց, Ովքեր գիտեն երգել-պարել, գրել-փարել, գերել-սիրել, ինչպես նաև հյուրասիրել (ՊՍ, 1, 424): Առաջին նախադասության մեջ գիտեմ եղանակավորողի կողքին կա 7 ԱԴ, երկրորդ նախադասության մեջ՝ 4. բոլորն էլ տարբեր իմաստային դաշտերի պատկանող բայեր են:

Իսկ երբ տարբեր ԱԴ-երի հետ կրկնվում է եղանակավորողը, հատկապես չափածո խոսքում, սա ոճական նոր արժեք է ստանում. Եվ նրանց, ովքեր **Վերծանել *գիտեն*** ու ***գիտեն* կարդալ** Անծանոթ կնոջ գաղտնագիրը լույս, Եվ նրանց, ովքեր ***չգիտեն կարդալ*** և մոլորվում են ...Եվ նրանց, ովքեր **զարմանալ *գիտեն*** խոտով, անձրևով ու ճառագայթով, Եվ ***գիտեն*** քամու շշուկների մեջ Վաղուց մոռացված մարգարեների հառաչը **լսել** (ՎԴ, 1, 241): Ուրույն ձևով է գործածել կառույցը ժամանակի փիլիսոփա բանաստեղծը՝ Պ. Սևակը: Խոսքը եղանակավորողի կողքին ԱԴ-ների թվի մասին չէ, այլ այն մասին, որ նա օգտագործել է կառույցը՝ ցույց տալու համար մարդկային հոգու երկվությունը: Բանաստեղծը կարծես ԱԴ-երով թերթում է մարդու հոգու ծալքերը՝ բացահայտելով մի կողմից նրա իմաստության անսահմանությունը, իսկ մյուս կողմից՝ լավի և վատի, բարու և չարի համատեղումը միևնույն հոգում:

***Գիտի՛* կործանել՝**
Բայց և գո՛րծ անել,
 Մատնություն գրած
 նույն ի՛ր ձեռքերով՝
 Աշխարհը **լցնել** շռայլ
 բերքերով:
 Նո՛ւյն այդ ձեռքերով՝
 Ե՛վ ճրագ մարել,
 Ե՛վ խարույկ վառել:
 Նո՛ւյն այդ ձեռքերով՝
 Եվ դանակ խրել,

Ե՛վ վեպեր գրել:
 Նա ***գիտի՛*** զարկել,
 Ու գրկե՛լ ***գիտի*,**
 Բայց ***գիտի*** գրկել
 Ու փրկե՛լ ***գիտի*,**
 Նա ***գիտի*** կեղծել
 Ու սրբապղծել,
 Առավել և ըս՝
Գիտի ստեղծե՛լ
 (ՊՍ, 1, 405):

Կամ՝ ...Փառաբանեմ մարդուն՝ այն էակին միակ, Որ **ծիծաղե՛լ *գիտի***, որ արտասվե՛լ ***գիտի***, Թող որ ***գիտի*** նաև իմ նմանին դարձնել անշնչացած դիակ, Բայց և ***գիտի*** գրկել, ***գիտի*** գրել գրքեր, **հերկե՛լ** գիտի (նստ, 356):

Գիտեն եղանակավորողն ԱԴ-ին կարող է հաղորդել տարբեր նրբիմաստներ՝

1. «Իմանալ, տեղյակ՝ իրազեկ լինել»։ Անծանոթը **գիտեր** որտեղ **գիշերել**։

2. «Սովորած լինել, յուրացրած լինել»։ Ծերունին **գիտեր** **կարդալ** մարդկանց հոգիները։

3. «Հասկանալ, գիտակցել»։ Կինը **գիտեր ճիշտ** ժամանակին հեռանալ։

4. «Մի բան անելու ընդունակ լինել, կարողանալ»։ Ա՛խ, միայն դու լալ **գիտեիր** հայերեն, Արցունքներս թարգմանելու ո՞ւմ տանեն (ՍԿՊՀ, 318)։

5. «Մի բանում համոզված լինել»։ Սողոմոնը կնճռուտեց ճակատը, զայրացավ ու կրկնեց. - ... Ես **երգել գիտեմ**..., հայերեն **երգել գիտեմ**... (ՄԳՆ, 13)։

6. Ժխտական ձևով՝ «անելիքը չիմանալ, անորոշ դրության մեջ լինել, վարանել»։ **Չգիտենք** ի՞նչ անել (ՄՍԳՆ, 282)։ Ղառնացած էր. **չգիտեր** ի՞նչ անել, որ իր վիճակը պարզվի (նտ, 191)։ Դրա համար էլ **չգիտեր** ինչպես վարվել (ՊՁԱԵ, 410)։ Առաջին և երկրորդ նախադասություններում անորոշ իմաստը սաստկացրել է **ի՞նչ** հարցական դերանունը, իսկ երրորդում՝ **ինչպես**-ը։

Գործածական եղանակավորող է նաև **սովորել (սովորեցնել)** բայը։ Այն իր հնությանը նմանվում է **գիտեմ**-ին, սակայն տարբերվում է գործածության հաճախականությամբ. առաջինը շատ ավելի քիչ է հանդիպում։ 5-րդ դարից սկսած այս բայն էլ, իր բառային նյութական իմաստին զուգահեռ, ունեցել է և եղանակիչ նշանակություն։ Մերօրյա հայերենում այն գործածվում է առավելապես իր նյութական նշանակությամբ (Եվ Անանիան ... կրթեց՝ սովորեցրեց ամենայն ինչ, որ հարկավոր է մեր ժամանակների կրթված և ուսյալ մարդկանց (ՄՍԳՆ, 302))։ Այն եղանակավորող է դառնում «վարժվել, սովորություն դարձնել» իմաստով։ Օր.՝ Տանջանքը գուցե ծնվեց այն պահի՞ն, Երբ համր շունը **սովորեց** **հաչել** (ՍՊՔ, 1057)։ Եվ, սակայն, ավա՛ղ, դեռ **չեմ սովորել** **խոսել**

այնպիսի վսեմ պարզությամբ, Ինչպես խոսում էր քո սքանչելի Դավիթ պատանին (ՎՂԱ, 73):

Սովորեցնել բայի ուրույն կիրառություն կա արձակագիր Պ. Զեյթունցյանի այս տողերում. Նա **կսովորեցներ** որդուն՝ ինչպես **հետապնդել** որսին, ինչպես **թռչել** նրա մտքին, ժանիքները **խրել** վզի մեջ և **սեղմել-սեղմել**, մինչև որ ոտքերը թուլանան ու գետին տապալվեն: Եվ ինչպես մի չար **հաճույք** **ստանալ** սեփական դաժանությունից, որպեսզի չզգա արյան հոտը և չսարսռա վախից: Ու ինչպես **պատառոտել** որսը և **ուտել սովորել** (ՊԶԱԵ, 371): Հեշտությամբ կարելի է նկատել, որ վերոբերյալ օրինակը կարելի է դիտել երկու տեսանկյունով: Նախ և առաջ կարող ենք հասկանալ այսպես՝ **կսովորեցներ** ինչպես **հետապնդել**, **թռչել**, **խրել**, **սեղմել-սեղմել**, **հաճույք** **ստանալ**, **պատրաստել**, **սովորել**⁸⁸, այսինքն՝ «**կսովորեցներ** + բազմակի ԱԴ-ներ (իրենց լրացումներով)»: Երկրորդ դեպքում հիշյալ ԱԴ-ները կարող ենք դիտել որպես ուղիղ խնդիրներ, իսկ **կսովորեցներ** բայը՝ իր նյութական իմաստով գործածված:

Արևմտահայերենում ևս **սորվիլ**-ը եղանակավորող նշանակություն ունի. Խնդալը մոռցած էր ան, **խնդալ չէր սորված** թերևս (ԳԱԵ, 166): Եվ **սորվեցուր** Հայուն դու **Սիրել**, օգնել իրարու (ՊԴ, 1, 27): **Մի՛, մի՛ սորվիր** գաղջ արևեն ձըմեռվան **Մոռնալ** հյուղն (նտ, 30): Ես դեռ մանուկ **Սորվեցա** քեզ **թերթել** հույսիս ժպտուն ձեռքով (նտ, 99):

Նորից տիպականացման խնդրով է պայմանավորված **սովորել** եղանակավորողի փոխարեն **սորվիլ**, **սորվեցնել** ձևերի գործածությունը Ս. Խանգաղյանի և Ս. Կապուտիկյանի հետևյալ տողերում. Մեր գյուղի տերտերից անունս **գրել սորվեցա** (ՍԽԱ, 15): Ինձ **սորվեցորո՛ւ** քեզ **նման լինել** (ՍԿԳՄՀ, 223): (Այս ձևը ո՛չ արևմտահայերեն է, ո՛չ արևելահայերեն):

⁸⁸ Այս դեպքում ունենք եռաստիճան կառույց՝ **կսովորեցներ** **ուտել սովորել**. «**կսովորեցներ** + **սովորել**» և «**սովորել** + **ուտել**»:

Եզակի դեպքերում հանդիպել ենք *սովորեցնել*-ին հոմանիշ *ուսուցանել* բայի եղանակավորող կիրառության: Մեծ մասամբ գործածվելով իր նյութական նշանակությամբ (...Մարդկանց կրթների վրա ուսուցանում էր կետադրություն (ՍՊՔ, 992))՝ երբեմն-երբեմն դրսևորում է և եղանակավորող արժեք. *Ուսուցանիր* ինձ ժայռով *սալարկել* հրաբուխներս (ՍԿԳՄՀ, 222): Նման գործածություն կա նաև արևմտահայերենում. Եվ մարդկային վեհ սրտերուն *Ուսույց սիրել* գեղն ու բարին (ՊԴ, 1, 11): Տիպականացման նպատակով է պայմանավորված գրաբարյան *ուսո* ձևի գործածությունը Ս. Խանգադյանի լեզվում. -Առաջնորդեա՛մեզ, Տեր մեր ողորմած, և *ուսո՛ղնալ* մեզ ճանապարհս քո արդարությամբ (ՍԽԱ, 55):

Մտածել բայն էլ, իր նյութական նշանակությանը զուգահեռ (Ու ես մտածում եմ, որ Հիրավի, ժամացույցից պիտի շինել շաքար (ՍՊՔ, 935), Կմտածենք այլ ճարուճամփա գտնելու շուրջ (ՄՍԳՆ, 283), հանդես է բերում եղանակավորող արժեք. Կարծես մեկը դիտմամբ *Մտածել է* խոտից *սարքել* Մեծ ու Փոքր Մասիսների Հսկայական երկու մակետ (ՊՍ. 3, 12): Մենք հիմա *մտածում ենք* արքային *լարել* Գնելի դեմ (ՊԶԱԵ, 196): *Մտածում էր մեկնել* Երևան (ՍԽԱ, 356): Մեր պապերը որովայնին հագուդ տալուց առաջ *մտածել են* հագուդդ տալ իրենց ճաշակին (ՄՍԳՆ, 287): *Մտածել* եղանակավորողը (գրաբարում՝ *զմտաւածեմ*) դրսևորում է «դատողություններ անել», «կարծել», «միտք հղանալ, մտադրվել, որոշել» իմաստային երանգները⁸⁹:

Գրաբարում «մտածել» իմաստով եղանակավորողի դերում հանդես էր գալիս նրան հոմանիշ *խորհիմ*-ը. Արդ՝ անոթիկ, որ և ոչ անձանց *խորհեցան բարի առնել* և անուն յիշատակի յաշխարհի *թողուլ* (Խոր, 10, 11): Մերօրյա հայերենում *խորհել*-ն առավել-

⁸⁹ Հատուկ ուժի մեջ դրսևորվում է *մտածել* բայի եղանակավորող կիրառությունը. Զթագաւորն դաւաճանութեամբ *մտածեոր կորուսանել* (ՆՀԲ, 2, 304):

լապես բառային գործածություն ունի. խորհում էր հոգու ինքնամաքման շուրջ (ՄՍԳՆ, 34):

Արևմտահայերենում նույն իմաստով եղանակավորող է դառնում *կարծել* բայը: Օր.՝ Նա իր շնչովն իսկ **գոհ ընել կը կարծեր** (ՊԴ, 1, 23): Ու *կը կարծեր* փուշեր **ժողվել** (ՄՄ, 131): Ան, գորերեկ *կարծեցի* ես Ջինք **չտեսնել** ալ բնավ, փնտրելո՞ւ սպառիլ, սպառիլ հո՛ւյս ու ճրագ (ԳԱԵ, 98): «*Կը կարծեմ* + ԱԴ» կառույցին զուգահեռ գործուն է նաև «Կը *կարծեմ* + հարակատար դերբայ + ԱԴ» կառույցը. *Կը կարծեմ* զինք **տեսած ըլլալ**: Նույն եղանակավորող նշանակությունն ունի «*Կը թվիմ* ... + ԱԴ» կառույցը (նաև՝ «*կը թվիմ* ... + հարակատար դերբայ + ԱԴ». *կը թվիմ* **տեսած ըլլալ**). ...Եվ հատնումով խելագար *Կը թվիմ* **խենթ** մը դառնալ Ցնորքներու մեջ դրժխեմ (ՄՄ, 111):

Փոքր հաճախականություն ունի նաև *իմանալ* եղանակավորողը: Արդի գրական արևելահայերենում իր ինքնուրույն գործածությանը զուգահեռ (Եկողները թող չիմանան Սոված օրեր ու սև տարի (ՀՄԴԾ, 43))՝ նոր-նոր է եղանակավորող արժեք ձեռք բերում, թեպետև նրա իմաստային բազմազանությունը մեծ հաճախականություն է թելադրում: *Իմանալ*-ը կարող է եղանակավորող դառնալ՝

1. «Գիտենալ, տեղյակ լինել» իմաստով. Նա *իմանում էր զանազանել* չարն ու բարին:

2. «Վարժված լինել» իմաստով. Թոռնիկն *իմանում էր* կարդալ տատի մտքերը:

3. «Կարողանալ» իմաստով. Երանի՜ թե մենք՝ հայերս ևս **խաբել**, սուտ **երդվել** *իմանայինք* (ՍԽԱ, 252):

Երբեմն-երբեմն եղանակավորող արժեքով հանդես է գալիս *օգնել* բայը: Սովորաբար այն պահանջում է տրական հոլովով ԱԴ լրացում. Երկնային տե՛ր, օգնի՛ր մարդկանց քեզ նմանվելու, քեզ ավելի լավ հասկանալու (ՄՍԳՆ, 124): Օգնի՛ր ինձ, տե՛ր, ... հաղթահարելու իմ շփոթված հոգու երկվությունը (նտ, 62): Եղանակավորող է դառնում «աջակցել, զորավիզ լինել» իմաստով:

Հետաքրքիր է *օգնել* բայի եղանակավորող կիրառությունը (Նարեկացու բացահայտ հետևողությամբ) բանաստեղծ Գ. Էմինի հետևյալ տողերում (ԱԴ-ի ուղիղ ձևերով)։

Օգնի՜ր ինձ կյանքում ուղիղ ընթանալ,
Եթե քնած եմ՝ քնից արթնանալ,
Թե դուռը բաց է՝ իզուր չբանալ,
Եղածով երբեք չհանգստանալ,
Եվ չասել, թե իմ արածն արեցի՝
Չասել, թե արդեն փառքին տիրեցի,
Ու երգը մտքում՝ չասել գրեցի,
Դեռ քարը հանքում՝ չասել կրեցի,
Առանց հիմք՝ չասել, թե տուն շինեցի,
Եվ վայելում եմ տունն բախտավոր։
Զթվալ արդար, եղած մեղավոր,
Մեղավոր պահին հանցանքը քավել,
Քավելու համար չըղծալ հատուցում,
Եվ հատուցումով չհպարտանալ...

Օգնի՜ր ինձ լինել ու ոչ թե թվալ,

Օգնի՜ր ինձ կյանքում ուղիղ ընթանալ...(ԳԷ, 2, 5)։

Դիպվածային է նաև *հուշել* բայի եղանակավորող այս կիրառությունը. Ու հազար անգամ, հազար տեսիլով *Հուշում ես* քեզ-նից ինքս *հեռանալ*, Ինքդ քո ներսում քեզնով *դիմանալ* (Մ, 194)։

6.ԱԴ-ն հայցողական և դրան մոտ իմաստ արտահայտող եղանակավորողների հետ

Հայցողական և նման իմաստ արտահայտող եղանակավորողները ցույց են տալիս, որ ԱԴ-ով արտահայտված գործողությունը կատարվում է խնդրանքով, աղաչանքով, աղերսով, հորդորով կամ էլ համոզելով։ Դրանցից են *խնդրել*, *աղաչել*, *աղերսել*, *հորդորել*, *հայցել*, *համոզել* բայերը։ Ես *խնդրեցի* աստծո լեզ-

վով «Նարեկ» կարդալ (ՄՍԳՆ, 3): Ողկույզներն իրենց ճարահատ լացով *խնդրում են դառնալ* գինու քաղցր ծոր եվ կամ մի պուտ օղի (ՊՍ, 4, 141): Արկածախնդրությունից դրդված այդ անառակը *խնդրել, աղաչել էր* Ներսեսին՝ նրա շքախմբի մեջ մտնել որպես ծառա (ՊԶԱԵ, 139): Մարմինն ասես ճշում ու *հայցում էր* իրեն փրկել հանդերձանքի կաշկանդումից (ՊՍ, 2, 141): Բուժակ Վաղարշյանը, երբեմն նաև դոկտոր Խաչատուր Բոնապարտյանը, Անդրանիկին *հորդորում էին բարձրանալ* լեռները (ՍԽԱ, 330):

Հին հայերենում հայցողական իմաստ են արտահայտել շատ բայեր՝ *աղաչեմ, աղերսեմ, հայցեմ, խնդրեմ, ժտեմ*: Վերջինս նշանակել է և՛ «ուժգին թախանձել, խնդրել», և՛ «համարձակվել, իշխել»: Օր.՝ *Հայցեին* կըցորդակից ինքեանց *լինել* (ՆՀԲ, 2, 34): Թագաւորն Յունաց եւ իշխանն հարաւոյ Տենչանօք *խնդրէին տեսանել* զաերն (ԴՔ, 63): Ժամանակակից հայերենում հիշյալ բայերն առավելապես իրենց նյութական նշանակությամբ են գործածվում. ես խոսք *եմ հայցում* քեզանից, տե՛ր իմ (ՄՍԳՆ, 79): *Աղաչում եմ* քեզ, մի՛ խանգարիր այս առասպելն ստեղծելու (ՊԶԱԵ, 545): Ի՞նչ *էիր աղերսում* Դրախտիկից (ՄՍԳՆ, 46): *Խնդրեց* հոր՝ Խոսրովի և ուսուցչապետի համաձայնությունը (նտ, 54): Մենք գողեր չենք, մեզ համոզել են (նտ, 307): Իսկ ես տնքոցով մի բութ Ասում եմ, ինչպես *պաղատում եմ* գութ (ՍՊՔ, 1023):

Այս շարքի եղանակավորողներն առանձնանում են նրանով, որ դրանցով արտահայտված գործողության տերն ԱԴ-ով մատնանշած գործողության կատարողը չէ. մեկը մյուսին խնդրում է, հայցում, համոզում, հորդորում այս կամ այն գործողությունը կատարել: Բոլորն էլ ԱԴ-ի ուղիղ ձև են թելադրում:

Համեմատարար շատ գործածական եղանակավորող է *խնդրել*-ը⁹⁰: Այն եղանակավորող է դառնում «աղաչել», նաև՝ «պահան-

⁹⁰ *խնդրում եմ(ենքի)*-ի կողքին պետք է անպայման ԱԴ դնել: *խնդրել*-ը վերաբերականի (միջանկյալ բառի) արժեք ունի ըղծականի առաջին դեմքով, սահմանական եղանակի ներկայի առաջին դեմքով՝ *խնդրեմ, խնդրում եմ*,

ջել», «առաջարկել» իմաստներով. Զիավորը դեռ հեռվից *խնդրեց չկրակել* (ՍԽԱ, 382): Լևոնը *խնդրեց երգել* (նտ, 345): *խնդրում եմ լռել*, սրամտություններ չանել (ՄՍԳՆ, 108):

Աղաչել, աղերսել բայերը քիչ գործածական եղանակավորողներ են. ավելի քիչ են հանդիպում *հորդորել, հայցել* եղանակավորողները: Օր.՝ Այն, ինչ երդմամբ են տալիս ու լացով, Ինձ... *խլել են աղաչում* (ԳԷ, 2, 74): Նա հայտնագործել էր իր աստվածուհուն, որի լուսեղեն կերպարը *աղերսում էր վերածվել* հարության տաղի, *վերածվել* լույսի ու ոգեղեն հրավառության, *վերածվել* հիմնի ու *լցնել* մարդկանց հոգիները սիրո և երկնային մեղեդիներով (ՄՍԳՆ, 41):

Նմանակության օրենքն էլ այստեղ դեր ունի. «սաստիկ խնդրել, աղաչալից խնդրել» եղանակավորող իմաստով կարող են գործածվել նաև հոմանիշ *պաղատել, թախանձել* բայերը: Մեր քարտարանում մնան օրինակներ չկան, բայց իմաստաբանական առումով ճիշտ են նաև «*պաղատել*+ ԱԴ (հեռանալ, գնալ, մոռանալ...))» և «*թախանձել* + ԱԴ (այցելել, հիշել, երգել)» կառույցները:

«Շատ խնդրել, թախանձագին խնդրել» իմաստով եղանակավորող է դառնում նաև *համոզել*-ը. Ինչ-որ կտորներ ինձ *կհամոզի հանել* նաև խմբագիրը (ՎԿՀԲԱ, 461): *Համոզում էր փախչել* հեռու մի վայր (ՄՍԳՆ, 291):

7. ԱԴ-ն խոստման, երդման իմաստ արտահայտող եղանակավորողների հետ

Խոստում, պարտավորություն, երդում և սրանց մոտ իմաստ արտահայտող եղանակավորողներից են՝ *խոստանալ, երդվել, պարտավորվել, ուխտել*: Օր.՝ *Երդվում ենք* մինչև վերջ

խնդրում ենք. Բարի՛ մարդիկ, *խնդրում եմ*, աղջկաս գնողը թող ինձ էլ վերցնի (ՄՍԳՆ, 113): *խնդրում եմ*, հայր Անանիա, շանը հանձնեցեք մեր ձեռքը (նտ, 232):

հավատարիմ մնալ մեր ուխտին: *Երդվում ենք* մեր կռիվը շարունակել մինչև մեր ազգի ազատ գոյության ստեղծելը (ՍԽԱ, 122): Ես *խոստանում եմ կործանել* այս տաճարի ողջ միաբանությունը, ողջ ոճրաբույնը (ՄՍԳՆ, 56): Եթե դու *ուխտել ես ծառայել* երկնային տիրոջը, ես էլ այսօրվանից ուխտ եմ անում դառնալ նրա ջերմեռանդ ստրկուհին (նտ, 44): Ես *ուխտել եմ* նրա նվիրյալը դառնալ, *ուխտել եմ մերժել* նրա բոլոր շփերթությունները (նտ, 46): Հայաստանը *պարտավորվում է* հենց վաղվանից *գնդակահարել, կախել, մորթել, ոչնչացնել...* (ՍԽԱ, 319):

Հիշյալ եղանակավորողներով ձևավորված կառույցները համեմատաբար քիչ են գործածվում:

Միջին հաճախականություն ունի *խոստանալ* բայը: Իր նյութական արժեքով գործածությանը զուգահեռ (Ես ձեզ *խոստանում եմ* արդարացի դատ մեղավորի նկատմամբ (ՄՍԳՆ, 232), երանգավորում է ԱԴ-ով արտահայտված գործողությունը. Եվ *չես խոստանում հրաժարվել* զրպարտչական խժոժություններից (ՄՍԳՆ, 360): *խոստացավ* այցելել Նարեկ (նտ, 312): Չէ՞ որ *խոստացար* զանգ չտալ երբեք, երբեք *չհիշել* (ՎԴ, 1, 426): Ախ, սրտի տեղ եթե լիներ լեզուն, Որ *խոստացավ* հանգիստ քեզ *չսիրել* (ՊՍ, 3, 133): *խոստանալ*-ը հին եղանակավորող է. Եվ անտի գյարդարութիւն մերոյ ազգաբանութեանս *խոստացաք* յանդիման *կացուցանել* (Խոր, 7): *խոստացաւ* տալ նոցա զհւրաքանչիւր ըստ կարգի հայերենի պատւոյն և արծակե զնոսա յաշխարհն օրինօք քրիստոնէությանն, յորոյ վերայ և մեծապես էին չարչարեալ (Եղ, 396): Պատահում է, որ *խոստանալ* եղանակավորողի կողքին դրվում է նույն բայի ԱԴ-ն, որով կառույցը սաստկական երանգ է ստանում. *խոստանում եմ* ոմանց նման իզուր տեղը *չխոստանալ* (ՊՍ, 1, 394): Սա դիպվածային մի կիրառություն է: *խոստանալ*-ը թելադրում է տարիմաստ ԱԴ-ներ: Այս առումով հետաքրքրական է Պ. Սևակի բանաստեղծություններից ընտրված հետևյալ հատվածը.

խոստանում եմ լինել ոչ թե
հարկհավաքը,

Այլ զավակը
Դժվար դարի

Ինչպես նրան՝ և ինքս ինձ

Հավետ *մնալ հավատարիմ*,-

Թեկուզ կրել և մահացու
ցավը դարի,

Մեռնելիս էլ ոչ թե *տանել*,

Այլ *կտակել* լավը դարի,

Լինել բոցը նրա հրի,

Բերք հասցնող նրա տոթը,

Ոչ թե նրա անցնող քամին ու
մոխիրը:

Լինել նրա ո՛չ չորացած,

Ո՛չ էլ անգամ կանաչ խոտը
(ՊՍ, 1, 390):

Փոքր հաճախականություն ունեն *երդվել*, *ուխտել* եղանակավորողները, թեպետև իրենց նյութական նշանակությամբ գործածվելու դեպքում անգամ զգացվում է ԱԴ-ի «շունչը»։ Եպիսկոպոսը *երդվել էր* աստծո առջև (ՄՍԳՆ, 107): Որդին *ուխտել էր* մոր շիրմաքարի առջև ծնկած:

8. ԱԴ-ն գործողության սկիզբ, շարունակում և դրանց մոտ իմաստներ արտահայտող եղանակավորողների հետ

Եղանակավորողների մի խումբ ցույց է տալիս ԱԴ-ով արտահայտված գործողության կատարման ելակետային վիճակը, ընթացքի մեջ լինելը, իրականանալը կամ կատարվելու հնարավորությունը: Այս դեպքում գործողության տերը շահագրգռված է, նախատրամադրված տրված գործողությունը կատարելու, այն սկսելու, ավարտին հասցնելու: Նման իմաստով եղանակավորող են դառնում *սկսել*, *շտապել*, *պատրաստվել*, *շարունակել*, *հասցնել*, *հաջողեցնել* (*հաջողել*-հնացած ձև) բայերը: Օր.՝ Հակոբի արյունն *սկսեց* մխալ տրտում ու տաք (ՎԴԱ, 153): Այստեղ այնտեղ ծածկն *սկսում է* կաթկթել (ԳՄԾՓ, 57): *Շտապեց* պահել դրամը (ՍԽԱ, 433): Ես *պատրաստվում եմ* վանական դառնալ (ՄՍԳՆ, 43): Ագռավը *շարունակում էր* կռավել (ՍԽԱ, 254): Այսպես՝ մի ժամով «Հավերժ քաղաքը»՝ Հռոմն են առնում, Աթիլլա-յաբար *հասցնում* մտնել, Բայց *չեն հասցրնում* կրակի մատնել

(ՊՍ, 1, 285): Գրիգորին *հաջողվեց կանխել* բամբասանքները (ՄՍԳՆ, 267): Եթե *հաջողեն կանխել* վտանգը, Սիսիանի վրայով կգան Գորիս (ՍԽԱ, 337):

Վերոհիշյալ եղանակավորողների շարքում առանձնանում է *սկսել*-ը: Այն սոսկ եղանակավորող չէ. ունի և ինքնուրույն գործածություն. հավասարապես գործածվում է թե՛ եղանակավորող, թե՛ նյութական նշանակությամբ: Ներկայացնում ենք նյութական նշանակությամբ գործածության օրինակներ՝ Լիճն *սկսեց* մեղմօրոր իր ծփանքը (ՄՍԳՆ, 299): Սա վերցրեց դանակը, բոլորի աչքի առջև դրեց իր գրպանը և *սկսեց* իրոք իր աճաբարությունները (նտ, 98): *Սկսել*-ը եղանակավորող է դառնում «որևէ գործողություն կատարելու, ձեռնարկելու» (Եվ իմ ներսի խաղաղությամբ մի բութ *Սկսում է ձնշել* ու *մամլել* ինձ այնպես (ՊՍ, 2, 41), «որևէ գործում առաջին քայլերն անելու, հմտություն ձեռք բերելու» իմաստներով (Եվ մանուկ օրը, Աշակերտի պես *Սկսի հեգել* գրքերը կյանքի (նտ, 23): Մի խոսքով՝ ցույց է տալիս գործողության սկիզբը՝ հաճախ տևականության, շարունակականության երանգով: Մերօրյա հայերենում գործածության մեծ հաճախականություն ունեցող եղանակավորողներից է: Նաև առանձնանում է իր կարողականությամբ. կապակցվում է բոլոր կարգի ԱԴ-ների հետ: Եղանակավորողի բարձր հաճախականությունից և մեծ կարողականությունից ելնելով բերում ենք բազմաթիվ օրինակներ. Թույլ, անվա կապույտը *սկսեց* մեկիկ-մեկիկ *կլանել* աստղերը (ՄՍԳՆ, 55): Եվ նորից գրիչն *սկսեց գեղեցկացնել* մագաղաթի անաղարտ ձերմակությունը (նտ, 383): Հեկեկո՞ւմ է միշտ այս աղբյուրը ջինջ, Թե՞ նոր *սկսեց* այսպես *հեկեկալ* (ՎԴ, 1, 46): Եվ *սկսեց* իմ արյան մեջ *Վերուվարել* քաղցր մի թույն (ՎԴԱ, 199): Երբ աստվածներն են խռովում իրարից, Մարդիկ իրար *հասկանալ են սկսում* (ՊՍ, 2, 21): Եկեղեցու զանգերն *սկսեցին* դողանջել (ՊԶԱԵ, 151):

Սկսել-ը նաև հին եղանակավորող է: Գործածական է եղել գրաբարում (*սկսանիմ*), հասել է մինչև մեր օրերը. Դարձեալ միս

անգամ անդրին **հարցանել սկսան** յարքունիքն (Եղ, 256): Եւ յայնմ հետեւ **սկսավարկանել** սէր ընդ նոսա իբրև ընդ սիրելիս Աստուծոյ (նտ, 392): Մութն **սկսավ** հետզհետեւ **թանձրանալ** (Ր, 21): Արշալույսը դեռ նոր **սկսել էր ոսկեզօծել** յուր թշերը վարդի և քրքումի գույներով (նտ, 41): Թութապերն **սկսել էին** երկնքից փոքր առ փոքր **նոսրանալ** (նտ, 88):

Սկսիլ ձևով հատուկ է նաև արևմտահայերենին. Ու գինով անոր աղմուկեն վայրէջ **կըսկսեր մոռնալ** ինքնզինքն էջո էջ (ՄՄ, 126): Մեկը լարեց ժամացույցը, մտածումը **սկսավ աշխատիլ** դարձյալ (ԳԱԵ, 209):

Դեռ 19-րդ դարում էլ **սկսել** եղանակավորողի կողքին դրվում էր ԱԴ-ի թեք ձևը (-ելու, -ալու). Հայկական շները ոչ միայն դադարեցան հաչելու, այլև խածնելու փորձն **սկսան փորձելու** (ՀՀ, 9): Այսօր ԱԴ-ի նմանաձև գործածությունը հնացած է և ոչ ճիշտ:

Սկսել-ը նաև համալեզվային երևույթ է: Այն եղանակավորող է դառնում այլ լեզուներում ևս (ռուսերենում՝ **начало светать - սկսեց լուսանալ**, անգլերենում **began to read – սկսեց կարդալ**):

Գործածության առումով **սկսել**-ին նմանվում է **շարունակել** բայը: Այն նույնպես հավասարապես գործածվում է թե՛ նյութական (Հայր սուրբ, թող **շարունակեն** այս ծանր բանավեճը (ՄՍԳՆ, 10): Շարունակի՛ր քո գործը, Գրիգոր (նտ, 205):), թե՛ եղանակավորող նշանակությամբ (**Եվ շարունակում էր ծաղկել, արարել** (ՄՍԳՆ, 184), Արշալույսն **էր շարունակում ածել** փողն իր ծիրանի (ՊՍ, 2, 11): Ի տարբերություն **սկսել**-ի՝ **շարունակել**-ը համեմատաբար երիտասարդ» եղանակավորող է: Գործողությունն առանց դադարի կատարելու, գործողության ընթացքի տևականության իմաստը ձեռք է բերել արդի շրջանում և հասցրել է նույնիսկ եղանակավորող նրբիմաստներ դրսևորել: Մի դեպքում այն եղանակավորող է դառնում գործողությունը վերստին սկսելու իմաստով (Վասակը գլուխը թափ տվեց ու **շարունակեց քայլել** պալատի դատարկ միջանցքներով (ՊԶԱԵ, 158): Նայեցե՛ք, **շարունակում է մեռնել** մի քաջարի ժողովուրդ (ՍԽԱ,

429):), մի այլ դեպքում՝ որևէ գործողության կատարումը պահպանելու, չդադարեցնելու իմաստով (Ներսեսը դեռ *շարունակում էր թափառել* պալատում (ՊԶԱԵ, 188): Կիսախելագարը *շարունակեց ճչալ* (ՍԽԱ, 289): Արևմտահայերենում էլ նույնը կա. Ու պայուսակը *կը շարունակեի կրել* ձեռքը (ԳԶ, 12): Մնացողները *կշարունակեն ապրիլ* աներևութացած էականերու հետ (ԳԱԵ, 253): Մայրը *շարունակեց խոսիլ* (նտ, 168):

Ճիշտ են *սկսել*, *շարունակել* բայերի՝ վ-ով գործածության ձևերն այն դեպքերում, երբ սրանց ոչ բայ է հաջորդում: Օր.՝ Եթե *շարունակվեի* այս դժվարին փորձությունը, Գրիգորն անապաման կուշաթափվեի (ՄՍԳՆ, 102): Տազնապ էին հնչեցնում, և նախճիրը *շարունակվում էր* առավել ու առավել (նտ, 104): Սև աչքերը մերթ կկոցում, մերթ լայն բացում, Մերթ փակում է, - *Սկսվում է ...* գուշակումը (ՊՍ, 1, 347): Բայց երբ այս բայերին հաջորդում են ԱԴ-ներ, արդեն սխալ են վ-ով ձևերը: *Սկսվում էր* սպին *նվալ* (ՊՍ, 1, 90): *Շարունակվում էր օրորվել*: Սխալ են, որովհետև հարադրված *սկսել*, *շարունակել* բայերի հետ ստուգաբանորեն (ուղիղ) խնդրային հարաբերությամբ են կապվում: Խոսքը եղանակավորողների մասին է, իսկ նրանց կողքին կարող են դրվել նաև վ-ով ԱԴ-ներ. *Կսկսի հետաքրքրվել* Հայաստանի լեռների հարստությամբ (ՍԽԱ, 169): *Սկսեց օրորվել* գնացքի ընթացքից (նտ, 161): Մինչդեռ խստորեն *շարունակում էր ծավալվել* Նարեկավանքի կրոնավորների վեճը (ՄՍԳՆ, 41):

Արդի արևելահայերենում եղանակավորող է դառնում նաև *շտապել* բայը, որն ունի «աշխատել», «ձգտել» իմաստները և: Նյութական իմաստին զուգահեռ (ես *չեմ շտապում*, *Շտապում է* նա, Ով ուշանում է (ՍՊՔ, 949), *Շտապեցին* դեպի սրբազանի նստավայրը (ՄՍԳՆ, 303)՝ ԱԴ-ով արտահայտված գործողությունը երանգավորում է ժամանակի հարկ եղած պահից առաջ կատարելու իմաստով. *Մի շտապիր* ինձ վնդել (ՄՍԳՆ, 340): *Շտապեց բաց անել* դուռը (ՍԽԱ, 290): Զուր *շտապեցի* ես ներբողներ գրել Եվ գովել գարնան անձրևն առաջին (ԳԷ, 2, 120):

Գրաբարում «շտապել» իմաստով եղանակավորող էր *փութամ*-ը, որը «ճեպել», «աճապարել» իմաստներից բացի նշանակել է նաև «կարողանալ, ջանալ»։ Արդ *փութամ տեսանել* զօրն (Եղ, 312)։ Յոյնք երանի ետուն վասն բարբարոսք *փութացան տեսանել* զնա մարմնով (նտ, 389)։ *Փութան մերկանալ* զայս փառս անարգեալ Քու զանոտութիւն նորին նոր ուսեալ (ԴՔ, 115)։

Արևմտահայերենում նույն իմաստով եղանակավորող են դառնում *աճապարել*, *փութալ*, հազվադեպ՝ *շտապել* բայերը։ Ու փախստական հոր ետենն, որ *կը աճապարեր հեռանալ*, կը շարունակեր իր չնչին խնդրանքներու անհատնում շարքը (ԳԶ, 15)։ Աքասիաներ, զինով լույսե ու տապե, Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան, Մինչ կը ծյունե ծաղիկն իրենց հոտևան՝ Ջոր խոլաբար հովը *գրկել կը շտապե* (ՄՄ, 35)։

Հետաքրքիր է *պատրաստվել*⁹¹ չեզոք բայը։ Ունի առավելապես նյութական գործածություն։ Գրիգոր, դու պատրաստվում ես մեծ փորձության (ՄՍԳՆ, 122)։

Այս բայով և ԱԴ-ով ձևավորված կառույցներում կարելի է տարբերակել երեք աստիճան։

1. Երբ կառույցում գերիշխում է եղանակավորող իմաստը։ Այն որևէ գործողություն կատարելու, մտադրվելու, տրամադրվելու իմաստով դառնում է եղանակավորող. *Պատրաստվում էին գետն անցնել ու հարձակվել մեզ վրա* (ՍԽԱ, 58)։

2. Երբ կառույցում խնդրային հարաբերություն է նշմարվում։ Բայց մենք չենք պատրաստվում ներելու Վարդապետ Ղազարոսին (ՄՍԳՆ, 233)։

3. Երբ խնդրապարագայական հարաբերություն է դրսևորվում։ Հետո հյուրերը վեր կացան և պատրաստվեցին ճանապարհ ընկնելու (ՄՍԳՆ, 73)։

⁹¹ Այս եղանակավորողին վերապահությամբ պետք է մոտենալ. քանի դեռ նրան կողքին ԱԴ-ի թեք ձևն է գործածվում, չենք կարող անդել եղանակավորող արժեք ունենալը։

«Պատրաստվում է + ԱԴ» կառույցը համարժեք է «պատրաստ + էական բայ + ԱԴ» կառույցին: Առաջինը տարբերվում է տևականության, շարունակականության իմաստային երանգով (այս մասին կխոսվի իր տեղում՝ անվանաբայական եղանակավորողների շարքում):

Եղանակավորող են դառնում, ինչպես նշվել է, նաև *հասցնել*, *հաջողվել* (*հաջողել*) բայերը: Հասցնել-ը նյութական նշանակությունից գատ (Ինչպե՞ս *հասցնեմ* քեզ զղջման երգն իմ այս – ՍՊՔ, 894), եղանակավորող է դառնում «վիճակվել», «հաջողեցնել», «նպատակը, մտադրությունը կարողանալ իրականացնել» իմաստներով. Մեր դժխեն բախտից՝ նա *չհասցրեց* իր օպերայում Թշվառ Անուշին *խելացնորել* (ՊՍ, 4, 213): Նա *չհասցրեց զոհել* Վարդանին Գոռ Ավարայրի ճակատամարտում (նտ, 212): Թափառելու ժամ չի մնում, *Չենք հասցնում ծանծրանալ* (ՊՍ, 2, 219):

Քիչ է հանդիպում *հաջողվել*-ը: Միադիմի բայ է և եղանակավորող է դառնում որևէ գործողություն «հնարավոր դարձնել, կատարել» իմաստով. Բայց *հեռանալ չհաջողվեց* (ՍԽԱ, 102): Ո՞ւմ *կհաջողվի* ինը տարվա ծաղիկ *տեսնել*(նտ, 339): Հայր մարդպետը հասկացավ, որ իրեն *հաջողվել էր կասեցնել* նրա հարձակումը (ՊԶԱԵ, 429):

Հնաբանություն է և սահմանափակ կիրառություն ունի *հաջողել*-ը: Այն ունի նաև «կարողանալ» նրբիմաստը. *Կհաջողի* ժամանակին *տեղ հասնել* (ՍԽԱ, 255): Իր այս միտքը խաչագողին ասաց մի երկու բառով՝ *կհաջողե՞ն* Վան *հասնել* (նտ, 57): Արևմտահայերենում էլ կա *հաջողիլ* եղանակավորողը և շատ գործածական է. Երիտասարդը մեծ ճիգով *հաջողեցավ* իր գիրկին մեջ *բռնել* զայն (ԳԶ, 23):

9. ԱԴ-ն որոշում, վճիռ, պատրաստականություն, փորձ,
հրավեր, նման և մոտ իմաստներ արտահայտող
եղանակավորողների հետ

Եղանակավորողների մի խումբ ցույց է տալիս գործողության կատարման հիմունքը, այսինքն՝ ինչի՞ց ելնելով է կատարվում այն, որոշումո՞վ, թե՞ առաջարկով, պատվերո՞վ, վճիռո՞վ, հրավերո՞վ, թե՞ թելադրանքով, հանձնարարությամբ, փորձի՞ց ելնելով:

ԱԴ-ի մատնանշած գործողության համար նման և մոտ իմաստներով եղանակավորող են դառնում՝ *փորձել, որոշել, վճռել, առաջարկել, պատվիրել, հանձնարարել, հրավիրել, գերադասել, նախընտրել, պայմանավորվել*: Օր.՝ Դրսում երևի կենտ-կենտ լույսերը *փորձում են խախտել* նախապատմական վեհ լռությունը Մեծն Խավարի (ՊՍ, 2, 64): Մենք *որոշել ենք կռվել* մինչև հաղթանակ (ՍԽԱ, 372): Գիտե՞ք, *վճռել են* դառնալ խաղալիք սարքող (ՊՍ, 2, 52): Իսկ եթե նա քեզ *առաջարկի* իր կինը *դառնա՞լ* (ՊՋԱԵ, 301): Մեր թշնամին *գերադասում է* մեզ *չհանդիպել* (ՄՍԳՆ, 137): Սերում են նրանք և այն ծերուկից, Որ *նախընտրում էր քնել* տակառում (ՊՍ, 1, 322): Լևոնը կառապանին *պատվիրեց կանգնել* (ՍԽԱ, 168): Մտավ շուկայի մոտի հյուրանոցը, ապա տիրոջը *հանձնարարեց* իրերը *սեղափոխել* (նտ, 95): Փոխարքան, սակայն, ժպտաց, *հրավիրեց* նստել սեղանի մոտ՝ իր դիմաց (նտ, 16): *Պայմանավորվել էին* հանդիպել աղբյուրի մոտ (ՄՍԳՆ, 187):

Եղանակավորողների այս խումբը ժամանակային առումով տարբերվում է գործողության կատարման սկիզբ, շարունակում և նման իմաստներ արտահայտող եղանակավորողներից. գործողության տերը (սուբյեկտը) նախ որոշում է, վճռում, փորձում, նախընտրում, հանձնարարում, ապա նոր սկսում, պատրաստվում, շարունակում, շտապում, հասցնում կատարել գործողությունը:

Հաճախականությամբ առանձնանում է *փորձել*-ը: Այն մաքուր եղանակավորող չէ. ունի նաև ինքնուրույյն գործածություն. Աստված մարդու խիղճն է փորձում (ՄՍԳՆ, 102): Ոմանք փորձում էին գործիքների հնչեղությունը, ոմանք նվագում էին (նտ, 100): Ինչո՞ւ *ես*, տե՛ր, սիրով հավատը փորձում և հավատով՝ սերը (նտ, 225): Եղանակավորող է դառնում «որևէ բան անելու փորձ կատարելու» իմաստով. Նույնիսկ *փորձում էր կատակել* (ՄՍԳՆ, 300): *Խոսել* ոչ ոք *չէր փորձում* (նտ, 307): Փոխաբերական իմաստով գործածվելիս ունի «համարձակվել, հանդգնել» եղանակավորող նշանակությունը. Հին օրերի մտերմությամբ Պչրանքներ *էր փորձում ցրել* (ՎԴԱ, 16): Ապա մի *փորձիր ձեռք տալ*, կտեսնես:

Փորձել-ը եղանակավորող է եղել նաև գրաբարում. *Փորձեցեր* ամբողջ *պահել* զամենայն ինչ (ՆՀԲ, 2, 956): Արևմտահայերենում էլ նույնիմաստ կիրառություն ունի. Ես *կը փորձեմ* պահ մը գոնե *չհիշել* քեզ, Պահ մը *ապրիլ* ուրիշ կյանքով (ԳԱԵ, 105): Ողբ չէ, դիմակ է, բայց *կը փորձեմ* զայն *սպաննել* կրկին անգամ (նտ, 228):

Փորձել-ը խոսքային տարբեր միջավայրերում կարող է դրսևորել ջանքի, ձգտման, կարողական նրբիմաստներ. Եվ իրենք առաջինն էին, որ *փորձել էին իջնել* ձորը (ՄՍԳՆ, 53): Մութը *փորձում էր* նրան *խճճել*, Խավարն *էր փորձում* հայացքը *ջնջել* (ՌԴՔԲ,):

«Վճռել, մտադրվել» իմաստով եղանակավորող է դառնում *որոշել*-ը. Վեսօրից հետո ես հաստատ *որոշում եմ սկսել* իմ օրը (ՌԴՔԲ, 172): *Որոշել* եղանակավորողն իր գործառույթի հաճախականությամբ զիջում է լիիմաստ բային. Վերջինս շատ ավելի հաճախ է գործածվում (Օրինակ՝ Եթե հաստատապես *որոշեմ* իմ տեղը, կշահեմ մեկ թշնամի և մեկ բարեկամ (ՄՍԳՆ, 126): Գրիգորը *չէր որոշել* իր սիրո ապագայի հարցը (նտ, 197):

Սովորաբար այն եղանակավորողները, որոնք գործառական ձկունություն ունեն, նաև բարձր հաճախականություն են ի հայտ

բերում: Նույնը չի կարելի ասել *որոշել* եղանակավորողի մասին. այն ունակ է կառույց կազմելու բոլոր բայերի սկզբնաձևերի հետ, բայց արդի հայերենում այդ դերով քիչ գործածական է: Պատճառը երևի այն է, որ «երիտասարդ» եղանակավորող է և դեռ նոր միայն ձգտում է մեծ հաճախականության:

Նյութական իմաստին զուգահեռ եղանակավորող իմաստ է դրսևորում նաև *վճռել* բայը. Դու *պետք է վճռես* ում կողմը բռնել (ՊԶԱԵ, 146): *Վճռել են* այսօր ձեզ *զվարճացնել* (ՊՍ, 2, 149): Ռուսերենի ազդեցությամբ, բացի որևէ գործողության համար որոշում, լուծում ընդունելու իմաստից, *վճռել*-ը եղանակավորող է դառնում նաև «համարձակվելու, հանդգնելու, մի բան անելու քաջություն ցուցաբերելու» իմաստով. Հազվագյուտ մարդիկ են մտորում, թե ինչու Ղարաբաղն առաջինը *վճռեց թոթափել* բռնության կապանքները (ԽՀ, 206): Առաջարկել բայը (*Առաջարկում էք* ամուսնություն (ՄՍԳՆ, 291):) եղանակավորող է դառնում տարբեր նրբիմաստներով՝

1. «Հրավիրել» - *Առաջարկեց* նստել:
2. «Պահանջել» - *Առաջարկում էր* չկորցնել սերը, թեկուզ դժոխք ընկնելու պայմանով (ՄՍԳՆ, 291):
3. «Կարգադրել» - Գուցե *առաջարկեն համբուրել* նրանց արյունոտ ձեռքերը (ՄՍԳՆ, 155):

Գերադասել, նախընտրել բայերը հոմանիշներ են և բառային իմաստով գործածվելուն զուգահեռ (Նրանք մահը գերադասում էին նվաստացումից – ՄՍԳՆ, 159: Դուք ո՞րն էք նախընտրում – նո, 151) եղանակավորող են դառնում «նախապատվություն տալ» իմաստով. Նման պայքարում *նախընտրում են մարտիկ լինել*, քան դիվանագետ (ՄՍԳՆ, 310): Որովհետև մերպեսները *նախընտրում են* գլխից զրկվել, քան խոնարիել գլուխն իրենց (ՊՍ, 2, 80):

Պատվիրել բայն էլ նյութական նշանակությամբ գործածություն ունի, բայց և հին եղանակավորող է. (Յայնժամ էր աստուած նախանձոտ, թէ *չէր պատուիրեալ* չուտել ի ծառոյ անտի

(Եղ, 62): Արդի արևելահայերենում տարբեր նրբիմաստներով է եղանակավորող դառնում՝ հորդորելու, հանձնարարելու, խնդրելու, հրահանգելու, կազադրելու: Օրինակ՝ Անդրանիկը Լևոնին *պատվիրեց* լիուլի *հոգալ* հյուրերի կարիքները (ՍԽԱ, 218): Անդրանիկն աղջիկներին *պատվիրել էր մնալ* գյուղում (նտ, 242): Ծիածանին *պատվիրեցին հեռագրել* Երզնկա (նտ, 221):

Երբեմն-երբեմն եղանակավորող երանգ են դրսևորում *հանձնարարել (հանձնարարվել)*, *հրավիրել* բայերը. *Հանձնարարեցին հեռացնել* որդուն: Նրան *հրավիրեցի* նստել (ՍԽԱ, 158):

Եզակի դեպքերում եղանակավորող նշանակություն է դրսևորում *ապսպրել* բայը, որը հոմանիշ է *հանձնարարել*-ին, *պատվիրել*-ին. Երևի նրան *ապսպրել էին լուռ մնալ*... (ՄՍԳՆ, 70): Բայը գործածական է արևմտահայերենում, բայց առանձին արևելահայ հեղինակներ գործածում են այն:

10. ԱԴ-ն տրամադրվածություն, հակում, հավանություն և նման իմաստներ արտահայտող եղանակավորողների հետ

Եղանակավորող են դառնում նաև *արժե*, *համաձայնվել (համաձայնել)*, *թողնել*, *թույլատրել*, *ներել (ներվել)*, *հակվել*, *տրամադրվել* բայերը, որոնք ԱԴ-ի հետ կառույց կազմելիս այն երանգավորում են տրամադրվածություն, հակում ունենալու, հավանություն տալու նման և մոտ իմաստներով: Արժե առանձին խոսել *արժե* եղանակավորողի մասին: Արդի հայերենում պակասավոր այս բայը եղանակավորող իմաստով միադիմի է. գործածվում է միայն *արժե*, *արժեք* ձևերով: «Արժեք ունենալու, գնով որևէ բանի հավասար լինելու» իմաստով հանդես է գալիս որպես լիարժեք բառ՝ նախադասության ինքնուրույն անդամ դառնալով. Ո՛վ բարի մարդ, որքա՞ն արժե այս հրաշքը (ՄՍԳՆ, 104): Ինչե՛ր, ինչե՛ր չարժեն այս ձեռքերը (ՍՊՔ, 900): Ղատարկ բան, - կասեմ, - Ընդամենը արժի մի անցած կյանք (նտ, 991): Եղանակավորող է դառնում «անհրաժեշտ է», «տեղին՝ պատշաճ՝ վայել՝ արժանի է» իմաստներով, և նրանով ձևավորված կառույցը համարժեք

«անհրաժեշտ է + ԱՂ», «պետք է + ԱՂ», «հարկավոր է + ԱՂ», «վայել է + ԱՂ», «պատշաճ է + ԱՂ» կառույցներին: Տարածված եղանակավորող է. Այս անձրևի խշշոցը լսելու և հնձած խոտի բուրմունքը շնչելու համար թեկուզ *աքժե աքսորվել* (ԳՄԾՓ, 58): Լավ, մարդկային կյանքի համար *աքժե զոհվել*, Գրիգոր (ՄՍԳՆ, 111): *Աքժե՞ր* հոգիս *փորձել* այդպես Ղաթանորեն ու ցավագին (ՀՀԻՂ, 37): Եվ *աքժեք* խաղում *կույր լինել*, *պարտվել* (ՊՍ, 1, 125):

Հարացուցային սահմանափակությունից, միադիմությունից է բխում այն, որ նրանով ձևավորված կառույցներն իրենց շրջապատով մեծ մասամբ ասացվածքային, դարձվածային, փոխաբերական, խրատական նշանակություն են ունենում: Օրինակ՝ Սակայն *աքժե՞ աղ ցանել* վերքին (ՊՍ, 1, 458): Թե ողջն այս էր նույնիսկ՝ կյանքը քաղցր է հավետ եվ ապրելու համար *աքժե մեռնել* անգամ (նտ, 138): Ուրեմն՝ կառույցի կիրառությունն առավելապես ոճական նկատառումներով է պայմանավորված:

Սովորաբար *աքժե*-ն կրում է հարցական կամ բացականչական նշան: Հարցական երանգ արտահայտելիս ձևավորում է հռետորական հարցում. Բայց *աքժե՞* արդյոք հայելի ծախել կույրերի թաղամասում (ՊՍ, 4, 309): Ծերությունն է արդյոք մոտեցել, թե՞ ես ինձ ... գտնում եմ. Բայց *աքժե՞* այդ մասին մտածել - Ես թախծոտ ժպտում եմ (ԳԷ, 2, 218): *Աքժե՞* այս գնով հետևել քո խորհրդին (ՊԶԱԵ, 354): Բացականչական երանգով հաստատվում է ասվածը. Լոկ այն գիտեն հիմա, Որ լոտոսի համար *չաքժե՞ սարքել* ճահիճ եվ ծով *չորացնել*՝ ակվարիումի համար (ՊՍ, 1, 305):

Բավական հաճախական էր *համաձայնել* բայի եղանակավորող իմաստով կիրառությունը. Սեպուհը *համաձայնել է կատարել* քո խնդրանքը (ՄՍԳՆ, 144): Նազարբեկյանը հարցրեց՝ Արդյոք Անդրանիկը *կհամաձայնի՞* նոր զորամաս ընդունել (ՍԽԱ, 270): Սակայն նրան զուգակից *համաձայնվել*-ը գործածական առումով աստիճանաբար աշխուժանում է (*համաձայնվեց հեռա-*

նալ, հանդիպել և այլն), իսկ *համաձայնել*-ն էլ աստիճանաբար վերածվում է ոչ գործուն եղանակավորողի:

«Համաձայնվելու» նշանակությամբ թույլ եղանակավորող է նաև *հոժարել*-ը, մեր օրերում՝ գրեթե անգործածական. Ինչպե՞ս եք անվերջ հանձնվում դավին, Երեսուն արծաթն ազդո՞ւ է այդպես, Որ *հոժարում եք ուրանալ* դյուրին, Օ՛, ինքներդ ձեզ, ամենից շատ՝ ձե՞զ (ՍԿԳՄՀ, 438):

Եղանակավորող իմաստ է դրսևորում նաև *թողնել* բայը: «Շարունակել», «հրաժարվել», «ազատ արծակել» իմաստներով գործածվելիս լիարժեք բառ է (*Թողեք* հիմար-հիմար խոսելը – ՄՍԳՆ, 306:), իսկ «թույլ տալ, հնարավորություն տալ» իմաստով եղանակավորող է. –Չէ՛, *չեմ թողնի խմել*,– գոռաց նեղացած վրացին (ՄՍԳՆ, 797): Նույն իմաստով եղանակավորող էր նաև գրաբարում. Եւ գոք ի կարաւանէ անտի *ոչ թողին տեսանել*, ոչ ի Հայոց և ոչ յամենայն քրիստոնէիս, և ոչ բնաւ յարտաքին հեթանոսաց (Եղ, 322):

Ներել բայը հիմնականում գործածվում է նյութական նշանակությամբ. Եվ Աստված *ներում է* մեր մեղքերը (ՄՍԳՆ, 288): Հասկացի՛ր և *ների՛ր* ինձ, *ների՛ր* մեզ (նտ, 45): Մեկին դիմելու քաղաքավարական ձև է, և այս գործածությամբ բառարաններում հղված է որպես վերաբերական. *Ներեցե՛ք*, կարելի՞ է հարցնել... «Թույլատրել, հնարավորություն տալ» իմաստով եղանակավորող է դառնում, սակայն, կարծում ենք, մնան գործածությունները խորթ են արդի գրական հայերենին. Ուրեմն *ներեցեք* ինձ *հարցնել* մի քանի հիվանդի մասին (Ռ, 60): Հետո – ոչինչ, բարեկա՛մ, *ների՛ր* պատմության համն այս *բանալ* (ԳԷ, 2, 85): Թող *ներվի* *ասել*, որ իմ արյունը Հենց համարյա թե նույն ծագումն ունի, Ինչ ունի նավթը (ՊՍ, 1, 442) Վերջինս առանձին կայուն ոճ է:

Եղանակավորող են դառնում նաև *հակվել*, *թույլատրել* բայերը. Մինչդեռ խուլ, անլուր և կամ չարալուր Ականջներն օտար *հակված էին* Հայոց երգի մեջ *լսել* պարսկազենդական, Հայոց

տաղերում **որսալ** մեղեդին հույն-բյուզանդական (ՊՍ, 4, 64): Տղային **թույլատրեցին հեռանալ**: Պետք է նկատել, որ **թույլատրել**-ը նմանիմաստ գործածությամբ աստիճանաբար ուժեղանում է, որ նրան զուգահեռ աշխուժանում է **թույլատրվել**-ով ձևավորված սեռատարբերակային կառույցը:

11. ԱԴ-ն ոչ կամային, բացասական երանգավորում (վախ, երկյուղ, վարանում, զգուշություն և նման իմաստներ) արտահայտող եղանակավորողների հետ

Իրականության մեջ հաճախ նպատակաուղղվածություն չի ստանում այս կամ այն գործողության կատարումը. նույն իրականությունը թելադրում է վախ ու վարանք, երկյուղ և դժգոհություն: Այլ խոսքով՝ սուբյեկտի բացասական զգացմունքների պատճառով օբյեկտիվորեն անհրաժեշտ գործողությունը կան չի կատարվում, կան դանդաղում է նրա ընթացքը: ԱԴ-ով արտահայտված օբյեկտիվ գործողությունը նման և մոտ իմաստներով երանգավորում են հետևյալ եղանակավորողները՝ **վախենալ, սարսափել, երկյուղել, երկնչել, խուսափել, հրաժարվել, քաշվել, փախչել, դադարել, ամաչել, հոգնել, խորշել, զգվել, մերժել, գարշել, դժվարանալ, գլանալ, հապաղել, թերանալ, ալարել, դանդաղել, ծուլանալ, տատանվել, երկմտել, զգուշանալ, ընկճվել, մոռանալ, ծանծրանալ, կաշկանդվել, բացառել** և այլն⁹²: Օրինակ՝ **Վախեցար ենթարկվել** (=ենթարկվելուց) մի մարդու, որը ըստ էության գոյություն էլ չուներ (ՊԶԱԵ, 416): Ներսեսն ապշած նա-

⁹² Խոսքը ժխտական ձևերի մասին չէ: Ըստ որում սրանց մեծ մասը ԱԴ-ի թեք ձևեր են պահանջում, հետևաբար նյութական իմաստն է դեռ կենդանի: Ուստի և ընտրված են այն օրինակները, որոնցում համեմատաբար եղանակավորող իմաստը զգալի է (այս բայերի շարքին մեծ վերապահությամբ պետք է մոտենալ. եղանակավորող իմաստ դրսևորողների կողքին էլ մեծ մասամբ ԱԴ-ի ուղիղ ձևերն են, որոնք լեզվական նորմի տեսակետից ճիշտ չեն. գործածական մեծ հաճախականությունը և հետզհետե էլ ավելի տարածվելը պահանջում են վերնայել կանոնը: Կողք կողքի նշումը մեկ այլ նպատակ ևս ունի՝ համեմատել, հակադրել և ընտրել տարբերակային ճիշտ ձևը՝ ըստ խոսքային միջավայրի):

յում էր փակ դռանը և *խուսափում էր* իրեն խոստովանել (=խոստովանելուց), որ գուցե ճիշտ է արքան (նտ, 137): Անհնարին է աղետը կանխել, երբ զինվորը *հրաժարվում է կռվել*: Այն, ինչ որ *քաշվում են ասել* (=ասելուց) մեկին, Ազատ բացում են իմ երգերում (ՍԿԳՄՀ, 199): Խաչատուրն *ամաչում էր* նայել (=նայելուց) Անդրանիկի երեսին (ՍԽԱ, 89): *Հոգնել են* կյանքում *համեմատել*: *Դժվարանում են ասել* (Նորք, 1990 թ., 12, 34): *Չեն գլանում* երբեք *ընթերցել* այն, ինչ գրվում է ինձ համար՝ Կանանց՝ գորովանքից մշուշված աչքերում (ՊՍ, 1, 55): Իսկ մարդուն տվել են քո պատկերը, սակայն հոգու մեջ *զլացել* աստվածայինն ու կատարյալը *դնել* (ՄՍԳՆ, 212): Կապույտ ձի, *չձանձրացար* մենակ ման գալ (=ման գալուց) (ՊՍ, 3, 47): Այնքան անամոթ ես դու, որ *չես երկնջում լրտեսել* (=լրտեսելուց) նույնիսկ սիրային հանդիպումները (ՄՍԳՆ, 207): Բայց *կաշկանդվում էր* մտքինն *ասել* (=ասելու) (ՄԳՊ, 7): Եվ նրա զարմանքն ու զայրույթը սաստիկ մեծ եղան, երբ համոզվեց, որ իր տգետ ու հաստավիզ նախարարները, իր ճարպակալած իշխանները *հապաղում են կատարել* (=կատարելու) արքայական հրամանը (ՊԶԱԵ, 148): Կյանքն էն գլխից մի հարցում Մի մեծ սխալ է արել Եվ իր սխալը *շտկել թերանում է* դեռևս (ՀՍԴԾ, 134): Եվ չնայած այդ ամենին՝ *չի տատանվել մեռնել* ընկերոջ համար (ՎՊՀԲԱ, 35): Զինվորներն անհարգի են նրանց նկատմամբ, *ալարում են բարևի կանգնել* (բարևի կանգնելու) (ՍԽԱ, 172): Մենք մեզանից Հեռացանք կամաց-կամաց, Մեկմեկու *հիշել* անգամ *Թերացանք* կամաց-կամաց (ՀՍԴԾ, 160):

Գրաբարում եղանակավորող են եղել՝ *գարշիմ, դադարեմ, դանդաղեմ, մոռանամ, յապաղեմ*. Իսկ այն օր և ոչ մի ինչ յայսցանե ամենևին ինչ ոչ յիշեաց այլ իբրև չգարադև մի՝ *ոչ դադարէր յուզել և շարժել* զբութ ծմերայնոյ (Եղ, 88): ... *Ոչ յապաղեն երթալ* առ նոս (նտ, 346): Վասն որոյ և զբոլոր իսկ զՅոյսն *ոչ դանդաղիմ* մայր կամ դայակ *ասել* իմաստից (Խոր, 9):

Նմանիմաստ եղանակավորողներ կան նաև արևմտահայերենում՝ Գրություններ կան, որոնցմե մարդ մեջբերում **մը ընելու կը վարանի** (ՄՄ, 158): ...Մաշած ու ուժագուրկ մարմինը **մերժե ծառայել** իր տխրաբեկ այլ խղճահանգիստ մտածումին (նտ, 159):

Որպես օրինաչափություն հարկ է նշել, որ այս իմաստային դաշտի եղանակավորողների քանակը թեև մեծ է, սակայն նրանք կիրառական լայն ծավալ չունեն: Համեմատաբար հաճախ են հանդիպում **վախենալ, զգվել, խուսափել, հրաժարվել, ամաչել, դադարել, արգելել, մոռանալ** եղանակավորողները, մնացածները սահմանափակ կիրառություն ունեն, հազվադեպ են եղանակավորող իմաստ դրսևորում (**զլանալ, կաշկանդվել, զրկել, ծանծրանալ, բացառել, զգուշանալ, հապաղել, գարշել, հոգնել**):

Սրանք իրենց հերթին երեք ենթախմբի կարելի է բաժանել.

1. Եղանակավորողներ, որոնց իմաստը պայմանավորված է օբյեկտիվ իրականությամբ. այստեղից է ծնվում այս կամ այն գործողության նկատմամբ վերաբերմունքը: Այդպիսիք են՝ **վախենալ, սարսափել, երկյուղել, տոկալ, զգվել, խորշել, գարշել**:

2. Եղանակավորողներ, որոնց արտահայտած իմաստը պայմանավորված է սուբյեկտի կամ մեկ այլ անձի ժխտողական, բացասական վերաբերմունքով. **խանգարել, հրաժարվել, արգելել, մերժել, զրկել, բացառել** (սրանք նաև հարկադրական, հրամայական երանգ ունեն):

3. Եղանակավորողներ, որոնց արտահայտած իմաստը պայմանավորված է սուբյեկտի անկարողությամբ, անվճռականությամբ, կամքի բացակայությամբ կամ էլ հոգու երկվությամբ. մի խոսքով՝ նման պարագաներում օբյեկտիվ իրականությունը «մեղք չունի». **ամաչել, զլանալ, ծանծրանալ, հապաղել, թերանալ, մոռանալ, կաշկանդվել, քաշվել, դժվարանալ, ալարել, դանդաղել, ծուլանալ, տատանվել, խուսափել, երկնտել, զգուշանալ**:

Միայն *խանգարել, արգելել, զրկել, բացառել* եղանակավորողներն են, որոնք հարադրված ԱԴ-ի հետ նույն ենթակայի ոլորտը չեն ընկնում. գործողությունների կատարողները տարբեր են:

Հաճախականությամբ առանձնանում է *վախենալ*-ը: Ունի բառային գործածություն. ես վախենում եմ, Շատ եմ վախենում Բյուրավոր ու բութ հավատացյալից (ՄՊՔ, 977): Ես Աստծուց չեմ վախենում, զի սիրում եմ նրան (ՄՍԳՆ, 440): Կան կիրառություններ, որոնց կողքին ԱԴ-ն ինքնուրույն անդամ է՝ ներգործման անուղղակի խնդիր, այսինքն՝ *վախենալ*-ը եղանակավորող չէ, ինչպես օրինակ՝ Արքան, չգիտես ինչու, շատ վախեցավ այդ անակնկալ հանդիպումից, իր վերջին օրերն ապրող այս ծերունու հետ դեմ առ դեմ կանգնելուց (ՊԶԱԵ, 553): Երբեմն էլ դժվար է լինում որոշելը՝ *վախենալ*-ը ԱԴ-ի միջավայրում եղանակավորող է, թե՞ ինքնուրույն անդամ: Վերցնենք հետևյալ նախադասությունը. Եվ ամենից շատ վախենում եմ ես՝ Հոգիս բաղադրող բառարանի մեջ Այս նեղ բայերի առաջացումը Չնկատելուց (ՍԿԳՄՀ, 278): Այնուամենայնիվ *վախենալ*-ը նաև եղանակավորող է. Թռչունները շվարած ճախրում, թռչում են վրան և *վախենում են թառել* (=թառելուց) (ՎԴ, 1, 392):

Տարածված եղանակավորող է *խուսափել*-ը. Վասակը *խուսափում էր* արքային *հանդիպել* (=հանդիպելուց)⁹³ (ՊԶԱԵ, 316):

Ղաղարել բայը, նյութական իմաստից զատ (Հետո, հանկարծ, ասես հրամանով ղաղարեց զանգերի դողանջը – ՄՍԳՆ, 59), «վերջացնել, հանգիստ առնել» իմաստով եղանակավորող կիրառություն ունի. Ճերմակ հողմը լռել, *ղաղարել էր ողբալ* (=ողբալուց) (ՎԴ, 1, 416): Արևմտահայերենում եղանակավորող է դառնում բայի *ղաղրիլ* տարբերակը. Ու *կը դաղրիմ* սերերու շուրջ *թափառելեն* (ՄՄ, 39): Հետզհետ *ղաղարեցավ* նայելե կնո-

⁹³ ԱԴ-ի՝ բնագրային օրինակներում ուղիղ ձևերի կողքին նշում ենք ճիշտ ձևերը [=] նշանով՝ մի կողմից պահպանելով լեզվական կանոնները, մյուս կողմից խնդրառական տատանումները նշելու և միտումներն ընդգծելու:

ջը, կինը *դադրեցավ* նայելէ իրեն (ԳԱԵ, 74): *Ղադրել* ձևն օգտագործել է Պ. Սևակը՝ արևմտահայերենի ազդեցությամբ (*դադրիլ*)։ Բայց երդվելուց թե *դադրեցի՞ն* (ՊՍ, 4, 38):

Սոռանալ-ը եղանակավորող է դառնում «չհիշել, աչքաթող անել» իմաստով. *Չմոռանաք հաղորդել* արքայից արքային (ՊԶԱԵ, 362): *Չմոռանաս ավելացնել*՝ մինչև լո՛ւյս... (նտ, 174): Հավասարապես գործածվում է իր բառային նշանակությամբ. Ես կմոռանամ աստղեր, լուսին, Ես կմոռանամ իմ սերը բողբոջ, Ես կմոռանամ խաչված Հիսուսին, Ու երկնաթափառ երազները ողջ, Ես կմոռանամ մայրիկիս անգամ, Ճակատագիրս, Ես կմոռանամ ինձ անգամ՝ ի սեր հայրենիքիս (ՍՊՔ, 577):

Դժվարանալ-ը, բառային կիրառությանը զուգահեռ (Զէ՛, չէ՛, Աստված իմ, *դժվարացել* է մտածելն ինձ համար – ՄՍԳՆ, 299), «տատանվել, երկմտել» իմաստով դառնում է եղանակավորող. Գործում էր, բայց *դժվարանում էր* իր գործին տալ հարմար անուն (ՊՍ, 4, 63):

Միջին գործածություն ունեն *քաշվել, խորշել, զգվել* եղանակավորողները. Ես վախենում եմ քնքուշ խոսքերից, *Քաշվում եմ լինել* (=լինելուց) հորդ ու անկեղծ (ՍԿԳՄՀ, 159): Նույնիսկ *չէր խորշում* բանն այնպես *ներկայացնելու* (=ներկայացնել, ներկայացնելուց), որ լսողը կարծեր, թե... (ՊԶԱԵ, 453): Երևի կինը *զգվել էր* ապրել:

Ամաչել բայն էլ, բառային գործածությանը զուգահեռ (Ամաչում եմ բարեկամներից, ամաչում եմ չարականներից, ամաչում եմ ինքս ինձնից – ՄՍԳՆ, 316-317:) հավասարապես դրսևորում է իր եղանակավորող էությունը՝ «քաշվել» իմաստով. *Ամաչում էր* հոգևորականի սքեմով և վեղարով *երևալ* (=երևալուց) գյուղում (ՄՍԳՆ, 193): Իսկ Սիմոնը կանգնել էր մի կողմ և *ամաչում էր ասել* (=ասելուց)՝ կինը ձերը չէ, իմն է (ՀՄ, 2. 14):

«ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ + ԱԴ» ԿԱՌՈՒՅՑԸ

Հարադրական բայերը համադրական բայերի պես ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ ստորոգյալ են կազմում. սրանք, իբրև առանձին բառային միավորներ, եղանակավորող են դառնում և ԱԴ-ի հետ բայական բաղադրյալ ստորոգյալ կազմում: Դիմավոր բայ եղանակավորողի և հարադրյալ ԱԴ-ի նույն քերականական հարաբերությունն է դրսևորվում նաև «հարադրական բայ եղանակավորող + ԱԴ» կառույցում:

Հարադրական բայերը, որոնք հաստատում են մեր լեզվի ձկունությունը, հարստությունն ու բառակազմական մեծ հնարավորությունները, լեզվական-բառական-քերականական մեծ արժեք ու դեր ունեն: Նրանք և՛ համադրական բայերի պականս ու թերին են լրացնում, և՛ բազմատեսակ գործողություններ անվանելով՝ ավելի հարուստ ու ճոխ են դարձնում բայական խոսքի մասն ու նրա քերականական կարգերի բովանդակությունը: Հայ հին գրական լեզվի, միջին հայերենի, մերօրյա գրական հայերենի բազմահարուստ փաստերը վկայում են, որ իրենց մեծ մասով ժողովրդական մտածողության այդ ուրույն ու «աշխույժ», սեղմ ու պատկերավոր արտահայտության ձևերն առատորեն գործածվում են գրական լեզվում՝ կենդանություն ու շունչ հաղորդելով նրան: Օրինակներ՝ Իսկ մենք՝ թոնդրակյաններս՝ կոչ ենք անում կենսասեր ու իրապաշտ գաղափարներ (ՄՍԳՆ, 345): Արի՛ ինքներըս մեզնից բարձրանանք՝ թույլ տանք արարքներ ինքնաժխտումի (ՍՊՔ, 928): Կանգնած ավերակ մի վանքի առաջ՝ Ահա միտք ես անում գլխիկոր (մտ, 572): Մենք կարիք

ունենք նրանից ժառանգելու այն հիրավի զարմանալի հավատը, որը հաճախ հնարավոր է դարձրել անհնարինը (ՎՊՀԲԱ, 29):

Հարադրական բայերը դուրս չեն մնացել հայ լեզվաբանական մտքի տեսադաշտից: Դեռևս ուշ միջնադարում նրանք գրավել են հայ քերականների ու բառարանագիրների ուշադրությունը: Նոր ժամանակներում դրանց ուսումնասիրությամբ զբաղվել են լեզվաբաններ Մ. Աբեղյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Մուրվալյանը, Ալ. Մարգարյանը և ուրիշներ:

Հարադրական բայերի բաղադրիչները՝ հարադիրն ու բայը, միասնաբար իբրև բառային մեկ միավոր ըմբռնելով՝ քերականները զբաղվել են դրանց իմաստային, ձևաբանական կառուցվածքի, բաղադրիչների ներքին կապի, շարահյուսական հարաբերությունների և կիրառությունների, իմաստաբանական արժեքի լուսաբանմամբ:

Գնահատելով հայ լեզվաբանների մատուցած ծառայությունները՝ հարկ ենք համարում նշել, որ հարադրական բայերից շատերի մի կարևոր՝ եղանակավորող դերի հարցն ուսումնասիրության նյութ գրեթե չի դարձել: Ձեռնամուխ լինելով հարցի քննությանը՝ մեր առաջնակարգ խնդիրն ենք համարում ցույց տալ հարադրական բայ-եղանակավորողների պատկերն արդի հայերենում, որոշ չափով անդրադառնալ նրանց պատմական զարգացմանը, ներկայացնել «հարադրական բայ եղանակավորող + ԱԴ» կառույցի բաղադրիչների ներքին իմաստային կապերն ու ներկառուցային շարահյուսական հարաբերությունները, դարձվածային, ոճական արժեքն ու շարահյուսական կիրառությունը:

Հայոց լեզուն, ուրեմն, չի սահմանափակվում պարզ եղանակավորողների գործածությամբ. շատ հարադրական բայեր ժամանակի ընթացքում եղանակավորող կիրառություն են ձեռք բերել և շարունակում են ձեռք բերել: Նրանք լրացնում են համադրական բայ եղանակավորողների պակասը, առավել

հարուստ ու ճոխ են դարձնում «եղանակավորող + Ադ» կառույցը թե՛ իմաստային, թե՛ քերականական առումներով:

Նման հարադրական բայերի թիվը գնալով ավելանում է, ուստի և «հարադրական բայ եղանակավորող + ԱԴ» կառույցի ուսումնասիրությունը կարևոր ու հետաքրքրական է դառնում՝ տեսական թե գործնական առումներով:

Հայ լեզվաբաններից քչերն են անդրադարձել հարադրական բայերի մի մասի եղանակավորող էությանը, այն էլ հարևանցի, այլևայլ խնդիրների կապակցությամբ:

Ելնելով շարահյուսական նկատառումներից՝ Վ. Առաքելյանը գրում է. «Եղանակավորիչ և կերպավորիչ բայերը կարող են լինել դարձվածքային կապակցություններ, այսինքն՝ բայական հարադրություններ: Այս կարգի բայական հարադրությունները նույն քերականական և իմաստային դերն են կատարում, ինչ որ տեսանք պարզ բայերը քննելիս: Դրանք էլ են ցույց տալիս հայցում, հարկադրանք, ցանկություն, ներքին զգացմունքներ, ընդունակություն, ի վիճակի լինել, գործողության սկսումը և այլն: Պետք է նշել, որ այս նշանակությունները գերազանցապես ոչ թե հարադրության մաս կազմող բայի մեջ են լինում, այլ բայի հարադիրի միջոցով են արտահայտվում: Այս դեպքում էլ ստորոգյալը մնում է իբրև բայական բաղադրյալ ստորոգյալ»⁹⁴:

Ալ. Մարգարյանն իր «Հայերենի հարադիր բայերը» աշխատության մեջ այս առիթով գրում է. «Եվ, իրոք, կան որոշ թվով հարադրավոր բայեր, ինչպես **սիրտ առնել – համարձակվել, խոսք տալ – խոստանալ, հանձն առնել – պարտավորվել, ջանք անել – ջանալ** և այլն, որոնք եղանակավորիչ բայի նշանակություն ունեն և հետևաբար՝ իրենց հերթին կարող են անորոշ դերբայ առնել ու դրա հետ նույնպես բայական բաղադրյալ ստորոգյալ կազմել»⁹⁵:

⁹⁴ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 149:

⁹⁵ Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 249-250:

Այո՛, ժամանակակից գրական արևելահայերենում եղանակավորող է դառնում հարադրական բայերի մի մասը: Այնուամենայնիվ, կրկին ու կրկին անգամ մեծ վերապահությամբ պետք է մոտենալ ԱԴ-ի թեք ձևեր պահանջող հարադրական բայ եղանակավորողներին՝ *ի վիճակի լինել, ի գորու լինել, ճիգ անել, փորձ անել, ցանկություն ունենալ, քաջություն ունենալ* և այլն. սրանցում զգալապես նյութական իմաստն է գերիշխող: Ստորև ներկայցնում ենք օրինակներ մերօրյա գրական արևելահայերենից՝ Եվ *թույլ տուր խոսել* Գրկելուց առաջ, Փարվելուց առաջ, *Թույլ տուր* քեզ *նայել* մի փոքր հեռվից (ՊՍ, 3, 145): Բայց *ի վիճակի՞ է* ինքն *ապրել* (=ապրելու) առանց Դրախտիկի սիրո (ՄՍԳՆ, 228): Հիմա դու, փա՛ռք Աստծո, *ի վիճակի ես մաքրվելու* մեղքերից և *դեն նետելու* այն մեղադրանքները, որ շարտում են քո դեմքին (նտ, 243): Ու քանի՜ անգամ, Ա՛խ, քանի՜ անգամ Ինձ *խոսք եմ տալիս* լալկվել, կապվել, *Քաշվել* մի անկյուն, ինձ համար *ապրել* (ՍԿԳՄՀ, 390): Հետևաբար *հնարավոր կլինի* նվիրվել այն մեծ գործին, որ ուխտել եմ կատարել (ՄՍԳՆ, 259): Քամին մտել քարայր, *Սիրտ չէր անում* իր տաք գլուխը *հանել* (=հանելու) (ՎԴ, 1, 182): *Խորհուրդ կտամ չգալ՝* ո՛չ զենքով, ո՛չ սպառնալիքով (ՍԽԱ, 360): Մենք *կոչ ենք անում* հավատալ մեր երկրային կյանքին և հանդերձյալ կյանքի հորինվածքը *դեն շարտել* (ՄՍԳՆ, 345): Ինքն էլ *ժամանակ չունեցավ* նրանց *վարժվել* (=վարժվելու) (ՍԽԱ, 133): Բարությունս մատաղ արիք, Ինձ կոչեցիք չար ու չկամ, *Շնորհ արիք* ինձ էլ *կանչել*, Ներող եղեք, եթե չգամ (ՀՍԴԾ, 109):

Հարադրական շատ բայեր եղանակավորող գործածություն են ունեցել մեր լեզվի զարգացման տարբեր շրջաններում: Գրաբարում՝ *Հաճոյ թուէր* բազմաց ի նոցանէ *լսել* զբանս քաղցրութեամբ (Եղ, 258): *Չտայր թոյլ* զօրացն հայոց *անցանել* ընդ Եփրատ (Խոր, 132): Միջին հայերենում՝ ... *Տամ հրաման* քեզի կրկին *Սպանանել* զոխպայր քոյին, *Գալ* օգնութիւն պատերազմին (ՈՒՄՀԲ, 1, 328): Քանզի գութ մարդասիրին *Ոչ երեստ թոյլ*

Կաֆայ քաղաքին **Մատնել** ի ծեռս Թաթարին, Այն անօրէն և չար ազգին (նտ, 329): **Ջանք արա** զքեզ **հանել** ի մեղաց տղմի, Ունայնութեանց զբանն Սողոմոնի (նտ, 345): 19-րդ դարում՝ Մոր բացակայությունն **առիթ տվեց** նորան **խոսել** (=խոսելու) այդ առարկայի մասին (Ռ, 66): Բայց ես, իբրև բժիշկ, ամենայն **իրավունք ունեմ** նորան **դուրս հանել** (=հանելու) յուր սպանդանոցից (նտ, 78): Ես լսեցի, որ ամառանոցից դառնալուց հետո դուք **նպատակ ունիք հեռանալ** (հեռանալու) մեզնից (նտ, 187): Ներեցե՛ք, պարոն, չէ կարելի, որովհետև այսօր **թույլ տված չէ** հիվանդներին **այցելություն անել** (նտ, 45): Արևմտահայերենում՝ Բայց **հարկ կար**, սիրելի՜, լեղի դեղահատով մը **դարմանել փորձել** այս դժվարությունը (ՄՄ, 207): Բայց երբ **հարկ ըլլա** մեզ **գտնել** տարտամ, Ես կարավանին առջևեն կերթամ (նտ, 127): Եվ այդ ամբողջ լույսին տակ **ոյուրի՜ն պիտի ըլլա** հաստատել, թե հայրենասիրությունը բնավ չի հակադրվիր համամարդկային զգացումներուն (ԳԱԵ, 285):

Միանգամայն պարզ է, որ ոչ բոլոր հարադրական բայերն են եղանակավորող դառնում: Ստորև ներկայացնում ենք արդի արևելահայերենում եղանակավորող դերով հանդես եկող հարադրական բայերի խումբը՝ միաժամանակ նշելով դրանց գործառական հաճախականությունն ըստ մեր ծեռքի տակ եղած քարտարանի՝ ամենևին էլ չկարծելով, թե աղյուսակում տեղ են գտել եղանակավորող բոլոր բայերը կամ էլ չկան վիճահարույց կետեր (իսկ ԱԴ-ի թեք ձևեր պահանջողների մասին արդեն վերապահում արվել է):

թույլ տալ – 53

իրավունք ստանալ – 47

ուժ ունենալ – 28

ուխտ անել – 27

խորհուրդ տալ – 23

ի վիճակի լինել – 21

ի գործու լինել – 19

սիրտ անել – 19

իրավունք ունենալ – 17

խոսք տալ – 17

ճիգ անել – 17

փորձ անել – 16

հնարավոր լինել – 16

միտք անել – 15

նպատակ ունենալ – 14
 ստիպված լինել – 14
 առիթ տալ – 13
 անզոր լինել – 11
 առիթ ունենալ – 9
 ժամանակ ունենալ – 9
 հարկ կա (չկա) – 9
 հարկ լինել – 9
 անկարող լինել – 8
 մտքով անցնել – 8
 կարիք կա (չկա) – 7
 կարիք ունենալ – 7
 հնար լինել – 7
 հնարավորություն տալ – 7
 ջանք անել – 7
 ցանկություն ունենալ – 6
 գործություն ունենալ – 6
 ավելորդ համարել – 5
 երդում տալ – 5
 կոչ անել – 5
 խույս տալ – 5
 հնարավորություն ունենալ – 5
 պարտք համարել – 5
 ջանք գործադրել – 5
 ուժ գտնել – 5
 քայլ անել – 5
 բարի լինել – 4
 գլխով անել – 4
 իրավունք վերապահել – 4
 իրավունք կա (չկա) – 4
 կարողություն ունենալ – 4
 հրաման ստանալ – 4

հույս ունենալ – 4
 հարմար գտնել – 4
 մտադրություն ունենալ – 4
 քաջություն ունենալ – 4
 առիթ փնտրել – 3
 ակնարկ անել – 3
 աղաչանք անել – 3
 բախտ ունենալ – 3
 իրավունք շնորհել – 3
 կարելի լինել – 3
 հրաման տալ – 3
 հարկ համարել – 3
 միտք անել – 3
 պահանջ զգալ – 3
 սովորույթ ունենալ – 3
 վատ լինել – 3
 ցանկություն հայտնել – 3
 ցանկություն առաջանալ – 3
 խելք անել – 3
 անհրաժեշտություն զգացվել
 – 3
 իրավասու լինել – 3
 իրավունք ստանալ – 3
 կարիք ունենալ – 3
 կարգադրություն անել – 2
 կարող լինել – 2
 հանձն առնել – 2
 հնարավորություն ստեղծել – 2
 հանգ անել – 2
 մտքում դնել – 2
 տրամադրություն ունենալ – 2
 ավելորդ լինել – 2

ազնվություն ունենալ – 2
անհետաքրքիր լինել – 2
բարվոք համարել – 2
գերադաս համարել – 2
ընդունակ լինել – 2
իմաստ ունենալ – 1
լիազորություններ ունենալ – 1
խնդիր դնել – 1
հիմք ունենալ – 1

հավակնություն ունենալ – 1
միտք հղանալ – 1
միտում ունենալ – 1
նշան դնել – 1
շնորհ անել – 1
որոշում հանել – 1
ուշ լինել – 1
քթին դնել – 1
օրինակ տալ – 1

Ակներև է, որ թվարկված հարադրական բայերը եղանակավորող դառնալու հավասար հնարավորություն չունեն: Եթե *թույլ տալ*, *իրավունք ստանալ*, *ուխտ անել*, *խորհուրդ տալ*, *խոսք տալ*, *փորձ անել*, *ճիգ անել*, *ի գործու լինել*, *ի վիճակի լինել*, *իրաման տալ* եղանակավորող հարադրական բայերը գործառական մեծ հաճախականություն ունեն, ապա նույնը չի կարելի ասել *նշան դնել*, *շնորհ անել*, *քթին դնել*, *խնդիր դնել*, *հանգ անել* և մի քանի ուրիշների մասին, որոնք եզակի օրինակներում, այն էլ յուրահատուկ խոսքային միջավայրում են դրսևորում իրենց եղանակավորող էությունը:

ԱԴ-ի կողքին եղանակավորող կարող են դառնալ նաև այլ հարադրական բայեր, որոնցով, սակայն, մեր ձեռքի տակ օրինակներ չկան. չկան նաև այն պատճառով, որ հիմնականում ժողովրդախոսակցական երանգ ունեն: Օրինակ՝ *թող անել* (Որդուն *թող արեց* մոտենալ:), *իմաց անել* (Հարևանին *իմաց արին* հեռանալ տանից:), *վիզ առնել* (Տղան *վիզ առավ* ճանապարհել ընկերոջը:), *գլխի գցել* (Կինը *գլխի գցեց* պատուհանից դուրս նայել:), *լեզու թափել* (Երիտասարդը *լեզու թափեց* հետևել իրեն:), *խորհուրդ անել* (*խորհուրդ արեցին չընդունել* եկվորներին:), *խնդիրք անել* (Գյուղացին *խնդիրք արեց* մի քանի օր համբերել:), *երդում ուտել* (Աղջիկը *երդում կերավ* չհանդիպել սիրած տղայի հետ:), *ծեռք տալ* (Նրան *ծեռք էր տալիս* չհիշել գյուղի բարեկամներին:), *մտահան անել* (Տառը *մտահան արեց* պատմել տեսածի մա-

սին), *աղաչանք-պաղատանք անել* (Մայրը *աղաչանք-պաղատանք արեց* հեռանալ վատ ճանապարհից:), *երդում-կրակ ուտել* (Սար բարձրացողները *երդում-կրակ կերան* չմատնել նրան), *աչքով-ունքով անել* (Գյուղապետն *աչքով-ունքով արեց* չխանգարել իրենց :) և այլն:

Հետաքրքրականն այստեղ այն է, որ «հարադրական բայ եղանակավորող + ԱԴ» կառույցում իմաստի կրկնակի մթագնում է տեղի ունենում: Առաջին աստիճանում հարադրյալն է զրկվում իր նյութական նշանակությունից, կորցնում լիարժեք բառային իմաստը, իսկ երկրորդ աստիճանում թե՛ հարադիրը, թե՛ հարադրյալը ԱԴ-ի կողքին իմաստափոխվում են՝ ստանձնելով եղանակավորող դեր: Այս դեպքում արդեն եղանակավորող իմաստն ու քերականական կարգերն արտահայտվում են հարադրական բայով, իսկ բուն գործողությունը մատնանշում է հարադրվող ԱԴ-ն:

Եղանակավորող հարադրական բայերը մեծ մասամբ ունեն իրենց համադրական զուգահեռ ձևերը (հոմանիշները), որոնց նկատմամբ բացի կառուցվածքային-քերականականից նաև իմաստային, ոճական տարբերություններ են դրսևորում: Համադրական բայ եղանակավորողները վերացարկման ավելի բարձր աստիճանի են:

Ներկայացնում ենք եղանակավորող դերով հանդես եկող հարադրական բայերի զուգահեռ ձևերը, որոնք մեկ անգամ ևս հավաստում են մեր լեզվի ճոխությունն ու բազմերանգությունը: Ավելացնենք, որ մի դեպքում թե՛ համադրական, թե՛ հարադրական բայ եղանակավորողները կարող են նույն իմաստն արտահայտել, մի այլ դեպքում՝ իրար մոտ իմաստներ.

ձիգ անել – ձգնել

ձիգ թափել – ձգնել

փորձ անել – փորձել

ուխտ անել – ուխտել

սիրտ անել – համարձակվել

ցանկություն ունենալ – ցանկանալ

ցանկություն հայտնել – ցանկանալ

քաջություն ունենալ –
 համարձակվել
 խույս տալ – խուսափել
 ի վիճակի լինել –
 կարողանալ
 զորություն ունենալ –
 կարողանալ
 կարողություն ունենալ – կա-
 րողանալ
 կարող լինել – կարողանալ
 ուժ գտնել – կարողանալ
 միտք անել – մտածել
 հրաման տալ – հրամայել
 թույլ տալ – թույլատրել
 պարտք համարել –
 պարտավորվել

մտադրություն ունենալ –
 մտադրվել
 շնորհ անել – բարեհաճել
 պահանջ դնել – պահանջել
 երդում տալ – երդվել
 միտում ունենալ – միտել
 ջանք անել – ջանալ
 ջանք գործադրել – ջանալ
 որոշում անել – որոշել
 առաջանք անել – առաջել
 կարգադրություն անել –
 կարգադրել
 անկարող լինել – չկարո-
 դանալ և այլն:

Հարադրական բայ եղանակավորողների մի խումբ համապա-
 տասխան նշանակությամբ համադրական զուգահեռներ չունի,
 ինչպես օրինակ՝ *խորհուրդ տալ, միտք ունենալ, հանգ անել,
 պահանջ զգալ, առիթ տալ, իրավունք ունենալ, իրավունք վերա-
 պահել, իրավունք շնորհել, կարիք ունենալ, հարկ լինել*:

Եղանակավորող հարադրական բայերի ընդհանուր եղանա-
 կավորող իմաստը մեծ մասամբ իր մեջ ներառում է հարադրի
 իմաստը, սակավ դեպքերում՝ բայական բաղադրիչի բովանդա-
 կությունը, սակայն կան մի շարք եղանակավորող հարադրական
 բայեր, որոնց ընդհանուր եղանակավորող նշանակությունը չի
 բխում բաղադրիչների նշանակությունների գումարից, այլաբե-
 րական, փոխաբերական բնույթ է կրում: Դրանք յուրահատուկ
 դարձվածային նշանակություն են արտահայտում. դարձվածքի
 արժեքով եղանակավորող հարադրական բայեր են: Սրանք քա-
 նակապես քիչ են.

զլխի գցել (հուշել, հասկացնել)

գլխով անել (հասկացնել, հավանություն տալ)

խելքին փչել (հանկարծակի մտածել)

խոսքը մեկ անել (մտադրվել)

սիրտ անել – (համարձակվել)

աչքով անել (հասկացնել)

մտքով անցնել (ենթադրել)

քթին դնել (բարեհաճել) և այլն:

Ամերկբա է, որ «հարադրական բայ եղանակավորող + ԱՂ» կառույցը հոմանիշ է «պարզ բայ եղանակավորող + ԱՂ» կառույցին: Սակայն տարբերվում է՝

ա. կառուցվածքային-քերականական առումով (վերլուծական կառուցվածք ունի).

բ. իմաստային-ոճական առումով.

գ. գործածությամբ.

դ. պաշարով (քիչ է).

ե. շարահյուսական հարաբերությունների երկակիությամբ:

«Հարադրական բայ եղանակավորող + ԱՂ» կառույցը կարելի է բնութագրել՝ տարանջատելով այն կազմող բաղադրիչները, մի կողմում եղանակավորող հարադրական բայն ուսումնասիրելով, մյուսում՝ ԱՂ-ի հետ առնչվող հարցերը քննելով: Երկրորդ եզրով այն հիշեցնում է «եղանակավորող + ԱՂ» կառույցի ԱՂ բաղադրիչին, այսինքն՝ նույն հարցերն են առաջանում.

ա. հոդառությունը

բ. հոլովական ձևը

գ. կազմությունը:

Նշված նմանությունը հանգեցնում է այն հետևության, որ «հարադրական բայ եղանակավորող + ԱՂ» կառույցի նման առանձնահատկությունն ու իմաստային, ոճական արժեքը պայմանավորված են հատկապես առաջինով, դրանց վերլուծական-նկարագրական կառուցվածքով: Ահա թե ինչու կարևոր է դառնում դրանց քննությունը:

Հարադրական բայ եղանակավորողները կարելի է դասակարգել՝

1. ըստ նրանց իմաստային դաշտերի.
2. ըստ հարադիրի խոսքիմասային պատկանելության.
3. ըստ բայական բաղադրիչի.
4. ըստ գործածության
5. ըստ առաջացման ժամանակի:

Ըստ իմաստի հարադրական բայ եղանակավորողներ ցույց են տալիս՝

Ա. Գործողությունը կատարելու կարողություն, գործություն, կամք և սրանց մոտ իմաստներ (*ճիգ անել, քաջություն ունենալ, ի վիճակի լինել, ի գործու լինել, ուժ գտնել, ուժ ունենալ, կարողություն ունենալ, կարող լինել, կորով ու խիզախություն ունենալ, ջանք թափել, ջանքա անել ...*):

Բ. Ցանկություն, հույս և սրանց մոտ իմաստներ (*ցանկություն ունենալ, ցանկություն առաջանալ, ցանկություն հայտնել, հույս ունենալ...*):

Գ. Գործողությունը կատարելու մտադրություն, հնարավորություն, թույլտվություն (*թույլ տալ, իրավունք ունենալ, իրավունք ստանալ, իրավունք տալ, իրավունք վերապահել, հնարավոր լինել, հնար լինել, հնարավորություն տալ, հնարավորություն ունենալ, հնարավորություն ստեղծել, առիթ տալ, մտադրություն ունենալ...*):

Դ. Գործողությունը կատարելու հրաման, կարգադրություն, կոչ (*հրաման տալ, հրաման ստանալ, կարգադրություն անել, կոչ անել...*):

Ե. Մատնանշում են մտածմունք, խորհուրդ, երդում, պարտք, փորձ և սրանց մոտ իմաստներ (*մտքով անցնել, միտք հղանալ, խելք անել, ուխտ անել, երդում տալ, խորհուրդ տալ, խորհուրդ անել, խոսք տալ, պարտք համարել, փորձ անել, հանգ անել, նշան անել, որոշում հանել, որոշում կայացնել...*):

Զ. Արտահայտում են հնարավորություն, անխուսափելիություն (*հարկ լինել, հարկ կա, հարկ համարել, հարմար գտնել, հանձն առնել, բարվոք համարել, իմաստ ունենալ, անխուսափելի դառնալ, կարիք կա...*):

Է. Մատնանշում են համարձակություն, միտում, սովորություն, տրամադրվածություն (*սիրտ անել, նպատակ ունենալ, միտում ունենալ, քայլ անել, պահանջ զգալ, սովորություն ունենալ, պարտադրվածություն ունենալ, հավակնություն ունենալ...*):

Ը. Արտահայտում են անզորություն, անկարողություն, դժվարություն, անպատշաճություն և սրանց մոտ իմաստներ (*խույս տալ, ուշ լինել, ցավ ունենալ, անզոր լինել, անկարող լինել...*):

Ո՞ր բայերն են հարադրական բայ եղանակավորողներ ձևավորում և ի՞նչ չափով: Փաստերը վկայում են, որ եղանակավորող հարադրական բայերը ձևավորվում են **անել, տալ, զգալ, ունենալ, հայտնել, առաջանալ, լինել, դառնալ, գտնել, համարել, վերապահել, ստանալ, դնել** և նման մի շարք բառերով: Այս շարքում մեծ կարողություն ունի **ունենալ**-ը. նրանով քերականական ձևավորում է ստացել շուրջ 25 հարադրական բայ եղանակավորող: **Լինել** և **անել** հարադրյալներով գրեթե հավասարապես են հարադրական բայ եղանակավորողներ ձևավորվել: **Տալ** և **համարել** հարադրյալներով ձևավորվածները ևս մեծ թիվ չեն կազմում: Քիչ է **դառնալ, ստանալ, դնել** հարադրյալն ունեցող եղանակավորողների թիվը: Մնացած հարադրյալները, կարելի է ասել, սահմանափակ գործածություն ունեն այս դերով:

Սովորաբար եղանակավորող հարադրական բայերի ամբողջական իմաստը բխում է հարադրի իմաստից: Հետևաբար կարևոր է դառնում, թե ի՞նչ խոսքի մասով է արտահայտվում «Հարադրական բայ եղանակավորող + ԱԴ» կառույցի առաջին բաղադրիչը: Եղանակավորող հարադրական բայերի հարադիրն արտահայտվում է գոյականով, ածականով, կախյալ բայարմատներով և այլն:

Գոյական հարադիր ունեցող հարադրական բայ եղանակավորողներ

Եղանակավորող են դառնում այն հարադրական բայերը, որոնց հարադիրն արտահայտվում է՝

1. –**ություն** ածանցն ունեցող **ցանկություն**, **քաջություն**, **թույլտվություն**, **զորություն**, **անհրաժեշտություն**, **լիազորություն**, **մտադրություն**, **կարգադրություն**, **հնարավորություն**, **տրամադրություն** և նման այլ գոյականներով: Օրինակ՝ Պորուչիկի մեջ **ցանկություն առաջացավ** համբուրել (=համբուրելու) նրա ձեռքը (ՍԽԱ, 136): Արքան հանկարծ **ցանկություն հայտնեց** տեսնել (=տեսնելու) որդուն: Նույնիսկ **քաջություն չեմ ունեցել** խոստովանել (=խոստովանելու) ինքս ինձ (ՄՍԳՆ, 217): Այլևս **զորություն չունեմ** փառաբանել (=փառաբանելու) նրան: Ամենևին **մտադրություն չունեմ** խոստովանել (=խոստովանելու) որևէ մասնավոր դիպվածի առթիվ (ԽՀ, 206): Դա **հնարավորություն կտա** մարդկանց լայնորեն **ներգրավել** (=ներգրավելու) մեր լեզվի տարածման հայրենասիրական գործին (նտ, 246): **Հնարավորություն էին ստեղծում** Սասունում ու Տարոնում նորից **բարձրացնել** (=բարձրացնելու) պարտիզանական դրոշը (նտ, 252): Անդրանիկը **թույլտվություն խնդրեց** գնալ (=գնալու) Ջուղա (ՍԽԱ, 95): Սրբազանը **կարգադրություն է արել** հարդարել ուրիշ անկողին (ՄՍԳՆ, 136):

2. Խոսք, ուխտ, սիրտ, կոչ, խորհուրդ, միտք, փորձ, քայլ, ուժ, պահանջ, իրավունք, խնդիր, նպատակ, իմաստ, բախտ, ժամանակ, միտում, նշան, ջանք, ճիգ, աղաչանք, պարտք գոյականներով: Օրինակ՝ Եվ քանի՜ անգամ Ինձ **խոսք եմ տալիս** Հոգով **խաղաղվել, ու սրտով՝ պաղել, էլ չխռովել, էլ չպղտորվել** (ՍԿԳՀՄ, 390): **Ֆիդա Մխոն սիրտ չէր անում** նույնիսկ **քորել** (=քորելու) գլուխը (ՍԽԱ, 49): Բեկի աղջիկ է հարցնում, տեղն ո՞վ **ասել սիրտ կանի** (ՀՇ, 3, 255): Մենք **կոչ ենք անում** հավասար իրավունքներ տալ հոգում ու մարմնին, **չարհամարիել** կյան-

քը, **հոգալ** նրա կարիքները (ՄՍԳՆ, 345): Իսկ դուք մեզ **խորհուրդ եք տալիս** մարգանքով **կարգավորել** խախտված ռիթմը շնչառության (ՌԴԲԲ, 32): Ի միջի այլոց, **խորհուրդ կտամ**, հայր սուրբ, մարդու կյանքը **չդնել** աստվածության մեծարին, **չթանկացնել** սրիկաների, եղծվածների գինը, այլ **դնել** զորական մեծարին (ՄՍԳՆ, 140): Մերպեսները նախընտրում են զրկվել գլխից. Քան խոնարհել գլուխն իրենց նրա՛նց առջև, Ովքեր լուրջ-լուրջ **փորձ են անում Ուղեղ հատել**՝ դրամի պես, Ու **միտք դաջել**՝ լաթի նման (ՊՍ, 2, 80): **Քայլ արեց մոտենալ** (=մոտենալու) ծիուն (ՍԽԱ, 379): Գիտեմ, որ խռոված ես ինձանից, որ **ուժ չունեցա պահել** (=պահելու), **պահպանել** (=պահպանելու) մեր սերը (ՄՍԳՆ, 335): Իսկ այսօր ժամանակը **պահանջ է դնում վերականգնել** (=վերականգնելու) լավագույն ավանդույթները: Հարագատը **կարիք չունի** հարազատին խոնարհվելով՝ անվերջ իր սերը **հորդորել** (=հորդորելու) (ՍԿԳՄՀ, 181): Տատի տարօրինակ պատմությունը, որ **նպատակ ուներ** երկյուղած տրամադրություն **ստեղծել** (=ստեղծելու) թռռան սրտում, վատ ազդեց երեխայի վրա (ԱԲ, 87): Ա՛յ թե **հնար լիներ չզգալ** նաև, Որ աչքերն են մարդու ամենաթաց տեղը (ՊՍ, 1, 311): Եվ այդ ժամանակներից էլ **սովորույթ էր մնացել** հաճար **ցանել** ավազ հողում, քլունգով **փորել** ոսպատեղը... (ԱԲ, 49): Իմ բարոյական պարտքն եմ համարում Ե՛վս երկու բառ **ասել** ըստ հարկի (ՊՍ, 2, 75): Չգի՛ր գլուխս ու վե՛ր բարձրացրու Եվ **օրինա՛կ տուր**՝ Տառապանքի մեջ մնալ **վեհանձն**, Եվ գերության մեջ տիրակալ **լինել** (ՍԿԳՄՀ, 222): Տղան **նշան արեց հեռանալ**: Եվ հավանաբար **ջանք էր անում** մտքում պահել (=պահելու) այդ կրակված բառը: Արևը **ձիգ էր անում** գլուխը **հանել** լեռան թիկունքից: Նահանգապետը Մելիքյանին հարցրեց՝ գո՞հ է, որ **հրավունք ստացավ** նորից հրատարակել (=հրատարակելու) իր թերթը (ՍԽԱ, 140):

3. Գոյականի թեք և այլ ձևերով՝ **քթին դնել, խելքին փչել, մտքով անցնել, ձեռքով անել, մտքում դնել, աչքով տալ, աղաչանք-պաղատանք անել, կորով ու խիզախություն ունենալ, աչ-**

քով-ունքով անել, ուխտ ու պայման անել, խոսքը մեկ անել և այլն: Օրինակ՝ Ախոռապետը տեսավ նրանց և ոչ մի ուշադրություն չդարձրեց, անգամ *քթին չդրեց* վեր կենալ (ՊԶԱԵ, 459): Մի քանի ամիս էր, *խելքին փչեց* ջրադաց մտնել (ՎՊՀԲԱ, 332): Չէ՛, նման նվեր *մտքովս* էլ *չի անցել* ստանալ (ՄՍԳՆ, 104): Նա *մտքում դրել էր* սար գնալուց առաջ Անժիկի հետ մատուռ *գնալ* (ԱԲ, 86): ... Անոնց հետ *ուխտ ու պայման ըրած էինք*՝ թիկունք թիկունքի տված *կռվել* ու *զլուխ չծռել* թշնամիին (ՍԽԱ, 418):

Ածական հարադիր ունեցող և կախյալ բայարմատներով ու բառերով ձևավորված հարադրական բայ եղանակավորողներ

Հատկանշական է, որ այս դեպքում միայն որակական ածականներն են էական դեր կատարում: Նշենք նաև, որ եթե գոյական հարադիրների եղանակային էության բայական ձևավորումը կատարում էր հիմնականում *ունենալ*-ը, ապա ածական հարադիրի հետ հիմնականում եղանակավորող են ձևավորում *լինել*, *դառնալ* բայերը: Մեր ուսումնասիրած օրինակներում եղանակավորող են դարձել այն հարադրական բայերը, որոնց հարադիր դերում հանդես են եկել *վատ*, *բարի*, *հնարավոր*, *անհնար*, *անգոր*, *բնական*, *գերադաս*, *անխուսափելի*, *կարող*, *անկարող*, *դժվար*, *հարմար*, *անպատշաճ*, *ընդունակ*, *ծեռնտու*, *կարելի* և այլն՝ առավելաբար *եմ* (*լինել*) բայի հետ: Օրինակ՝ Իսկ թե մոռացել է, *վատ չէր լինի* գուցե *հիշեցնել* նրան... (ՊՍ, 1, 74): *Բարի եղիր* հենց հիմա *հրաժեշտ տալ* (=տալու) մեզ (ՊԶԱԵ, 525): Ես ասում եմ, որ *հնարավոր կլինի* Կանադայից էլ երեխաներ *հրավիրել* (ՎՊՀԲԱ, 195): Այն, ինչ անվանում ենք *վիրավորանք*, *Անհնար է դառնում* երկար *պահել* (ՊՍ, 3, 191): *Անգոր եղա* ես քո անափ Լուսն ու մութը *զատել*, *Անգոր եղա* քեզ *հասկանալ*, *Անգոր եղա* ատել (ՎԴ, 1, 84): Եվ որովհետև այդ օրը Պանինը անտառ չափտի գար, Ավին *գերադաս համարեց* մի շալակ ցախ տանել տուն (ԱԲ, 30): *Ավելորդ չէր լինի* հիշատակել այն, որ եր-

կու ճարտարապետներից մեկը խորհրդավոր տան բարդ նախագծի հեղինակն է (ԳՄԾՓ, 120): Գրիգորը, խածելով շրթունքները, հազիվ *կարող եղավ* ձիչը *զսպել* (=զսպելու) (ՄՍԳՆ, 35): Իշխանական գնդերը *անկարող եղան կանգնեցնել* սովյալների գրոհները (նտ, 134):

Միայն *ուշ լինել* հարադրական բայ եղանակավորողն է, ուր հարադրի դերով հանդես է գալիս *ուշ* մակբայը (այն նաև ածականական իմաստ ունի). Այլևս *ուշ կլինի* կանխել վերահաս վտանգը (ՄՍԳՆ, 282):

Եղանակավորող հարադրական բայերի հարադիր են լինում նաև այնպիսի կախյալ բայարմատներ ու բառեր, բառաձևեր, ինչպիսիք են՝ *հանձն*, *խույս*, *հանգ*, *ի զորու*, *ի վիճակի*, *թույլ*, *պետք*, *շնորհ*, *բարվոք* և այլն: Հիշյալ հարադիրներով ձևավորվում են՝ *հանձն առնել*, *խույս տալ*, *հանգ անել*, *ի զորու լինել*, *ի վիճակի լինել*, *թույլ տալ*⁹⁶, *հարկ համարել*, *պետք ունենալ*, *շնորհ անել*, *բարվոք համարել* և այլն: Օրինակներ՝ Անձնադատորեն նա *հանձն է առնում* Արդյունավորվել միմիայն այսպես... (ՊՍ, 1, 514): Խաչատուրը *հանգ արեց* գոռալ, պոռթկալ (ՍԽԱ, 408): *Թույլ տվեք* Ձեզնով հիանալ անխոս, Սակայն Ձեզ չերգել (ԳԷ, 2, 58): Նա անմիջապես *հարկ համարեց* աղջկան զգուշացնել առանձին, իսկ տղաներին «դաստիարակել» ամբողջ դասարանի առաջ (ՎՊՀԲԱ, 43): *Շնորհ արիք* ինձ էլ կանչել (ՀՄԴԾ, 109): Նա *բարվոք համարեց* իրեն հանձնել երջանիկ անգիտության (ԳՄԾՓ, 178): Եղանակավորող է լինում նաև *ստիպված լինել* հարադրական բայը. այն այս արժեքով կարծես թե կայունացել է. Պատանիները *ստիպված էին* այլևս չխոսել (=չխոսելու) միմյանց հետ (ՎՊՀԲԱ, 43): Գրիգոր, դու շուտով *ստիպված կլինես* ճակատամարտ տալ (=տալու) այդ ուժերի դեմ (ՄՍԳՆ, 177):

⁹⁶ *Թույլ տուր, թույլ տվեք* ձևերը հարգական արտահայտություններ են նաև՝ գրուցակցին, ունկնդիրներին դիմելու համար. դիմելաձևեր են:

Հարադրական բայ եղանակավորողները կարելի է դասակարգել նաև հետևյալ կերպ.

1. հարադրական բայ եղանակավորողներ, որոնք միայն եղանակավորող դեր ունեն *(իրավունք ունենալ, սիրտ անել, թույլ տալ...)*.

2. հարադրական բայ եղանակավորողներ, որոնք այդպիսին դառնալու ճանապարհին են *(նպատակ ունենալ, քաջություն ունենալ, հարկ լինել...)*.

3. հարադրական բայ եղանակավորողներ, որոնք միայն տվյալ խոսքային իրադրության մեջ եղանակավորող արժեք ունեն. դիպվածային են *(նշան անել, օրինակ տալ...)*:

Հարադրական բայ եղանակավորողների էությունը ճիշտ ըմբռնելու համար պետք է նկատի առնել, որ դրանց մեջ կան այնպիսիք, որոնց բաղադրիչների շարահյուսական կապը վաղուց մթագնված է, և, ընդհակառակը, կան և այնպիսիները, որոնք դեռևս պահպանում են այդ իմաստը: Իմաստապես ծուլված բաղադրիչներով եղանակավորող հարադրական բայերը ԱԴ-ի հետ շարահյուսական մեկ պաշտոն են կատարում: Իսկ այն հարադրական բայերը, որոնց բաղադրիչներն ընդհանուր նշանակություն ունեն, սակայն շարահյուսորեն զգալիորեն կապված են մնում, նայած խոսքային միջավայրի՝ կարող են եղանակավորող իմաստ դրսևորել և ԱԴ-ի հետ դառնալ նախադասության մեկ անդամ, և տարբեր պաշտոններ կատարեն թե՛ հարադիրը, թե՛ հարադրյալը, թե՛ ԱԴ-ն: Երկրորդ դեպքում կառույցը քայքայվում է:

«Հարադրական բայ եղանակավորող + ԱԴ» կառույցը «պարզ բայ եղանակավորող + ԱԴ» կառույցից տարբերվում է նրանով, որ առաջինում ստուգաբանորեն դրսևորվում են երկակի շարահյուսական հարաբերություններ (մի կողմից՝ հարադիրի և հարադրյալի, մյուս կողմից՝ հարադրական բայի և ԱԴ-ի միջև):

Նրանց շարահյուսական կապը մեռած ձև չէ լեզվի մեջ, ոչ էլ անսովոր. այստեղից էլ բխում են ներկառուցային հարաբերությունների բարդությունը և ԱԴ-ի ձևի անմիօրինակությունը:

Գոյական հարադիր ունեցող հարադրական բայ-եղանակավորողներում բաղադրիչները կապվում են գոյականի և բայի սովորական շարահյուսական հարաբերություններով. ածական հարադիրը դրսևորում է ստորոգելիական հարաբերություններ:

Ավելացնենք, որ կառույցում էլ եղանակավորողի և ԱԴ-ի միջև դրսևորվում են բազմազան և շատ ավելի բարդ հարաբերություններ:

Հասկանալի է, որ եղանակավորիչի հետ բաղադրվելով և դառնալով նախադասության մեկ անդամ՝ ԱԴ-ն չի կորցնում և չի էլ կարող կորցնել քերականական այն արժեքը, որ երբևէ ունեցել է կառույցից դուրս. շարունակում է պահել, բայց ներքին հարաբերության մեջ: Ուրեմն՝ կառույցի բաղադրիչների կապերն ու հարաբերությունները նախադասության մեկ անդամի՝ ստորոգյալ կազմող լեզվական միավորի մեջ դրսևորվող կապեր ու հարաբերություններ են՝ խնդրային կամ պարագայական:

Մինչ այժմ ուսումնասիրված կառույցները խոսքի մեջ միանշանակ դեր էին կատարում. բայական բաղադրյալ ստորոգյալ էին դառնում: Սակայն այսքանով սահմանափակել «բայական եղանակավորող + ԱՂ» կառույցի շարահյուսական արժեքը ճիշտ չի լինի, քանի որ եղանակավորողի դերում հանդես են գալիս նաև անկախ դերբայները: Այսինքն՝ ԱՂ-ի համար եղանակավորող դերում հանդես են գալիս բայի և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևերը: Երկրորդ դեպքում գործ ունենք «դերբայ եղանակավորող + ԱՂ» կառույցի հետ: Ահա համապատասխան օրինակներ՝ Աշխարհում ոչ մի կին արարած դեռ չգիտի, թե որքան քնքուշ կարող են լինել տղամարդու ձեռքերը, թե ինչպես է տիրոջ մեջքը ամուր կպել, սեղմվել թիկնակին՝ կարծես *ճգնելով ծուլվել* նրա հետ (ՊԶԱԵ, 155): Ինչպես մոռանաս նրա գոռոզությունն ու ամբարտավանությունը, որ նա ցուցաբերեց Տիգրիսն անցնելիս՝ *հրամայելով այրել* ամբողջ նավատորմիդ (նտ, 448): Նեղուցները, Պարսից ծոցը փակ պահիր դեպի Հայաստանի Եփրատն *իջնել փորձող* ռուսների առջև (ՍԽԱ, 27): Եվ կայծակում էր ամպը ոսոխի՝ Անունն հայ հողի, անունն Արարատ, Որ դրախտ էին, դարձան անապատ՝ *թաղել ջանալով* անունն հայ ցեղի (ՀՇՀԴ, 335):

Նման կառույցներ կան նաև արևմտահայերենում. Եվ ամեն կողմ *երթալ ուզող* գերթ մանուկ Առտուն իմ ալ թևես բռնեց ու տարավ (ՄՄ, 76): Մունջ կեցած էր հոն՝ *չհամարձակելով* առջի բառն ինքն *արտասանել* (ԳԶ, 7):

«Եղանակավորող + ԱՂ» կառույցը շարահյուսական մեկ միավոր՝ ստորոգյալ չընդունող լեզվաբանները (Հ. Հարությունյան. Գ. Ներսիսյան և ուրիշներ) նաև տարբերակային այսպիսի գոր-

ծածուկուններն են դարձնում կռվան. անորոշ դերբայով խնդիր (լրացում) պահանջող բայերը կարող են գործածվել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ ձևով, հետևաբար բացառվում է կառույցը բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ կոչելու հանգամանքը:

Տրամաբանական է, որ եղանակի քերականական կարգը բնորոշ է բայի դիմավոր ձևերին, բնականաբար անորոշ դերբայը եղանակավորել կարող են դիմավոր բայերը. աստիճանաբար նման կառույցները վերածվում են բառակապակցությունների, և անդեմ բայ եղանակավորող + ԱԴ» կառույցը սերում՝ ծագում է «դիմավոր բայ եղանակավորող + ԱԴ»-ից՝ որպես վերացարկման ավելի բարձր աստիճան:

Հետաքրքրականն այն է, որ «դերբայ եղանակավորող + ԱԴ» կառույցի առաջին բաղադրիչները մեզ ծանոթ դիմավոր բայ եղանակավորողների անդեմ ձևերն են: Այս հանգամանքից էլ ելնելով՝ Վ. Քոսյանը նշում է. որ նման դեպքերում էլ երևան է գալիս այս կառուցվածքի բառակապակցության առանձնահատկությունը: Նա գրում է. «Դերբայական կառույցները նախադասության մեջ կարող են հանդես գալ շարահյուսական այս կամ այն դերով, այսինքն՝ նախադասության այս կամ այն անդամի պաշտոնով: Ընդ որում տարբերակվում է երկու գործածություն. մի դեպքում անորոշ դերբայը հանդես է գալիս եղանակավորիչ իմաստով գործածվող դիմավոր բայի հետ՝ կազմելով այսպես կոչված բայական բաղադրյալ ստորոգյալ, ինչպես՝ «Նա ուզում է դաս սովորել», «Չի կարողանում այդտեղից հեռանալ»: Ինչպես կտեսնենք, այս գործածությունը միայն պայմանականորեն կարելի է բայական բաղադրյալ ստորոգյալ համարել, քանի որ հնարավոր են նաև նման կառույցների դերբայական կիրառությունները, ինչպես՝ «Չկարողանալով նրան օգնել՝ հեռացավ այդտեղից»: Այս դեպքում դերբայական կառույցը բաղադրյալ է, ավելի ճիշտ առկա է կրկնակի դերբայական դարձված»⁹⁷:

⁹⁷ Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976, էջ 44:

«Դերբայ եղանակավորող + ԱԴ» կառույցը «դիմավոր բայ եղանակավորող + ԱԴ» կառույցի գործառական փոխակերպման արդյունքն է, կառույց-փոխակերպ, որը հանդես է գալիս նախադասության որևէ անդամի դերով, որը կարող է ծավալուն դերբայական դարձվածի գերադաս անդամը դառնալ:

«Դիմավոր բայ եղանակավորող + ԱԴ» և «դերբայ եղանակավորող +ԱԴ» կառույցները նմանվում են նախ և առաջ եղանակավորողների իմաստային նույնությամբ. նույն բայերն են, որ դիմավոր և անդեմ ձևերով երանգավորիչ նշանակություն են հաղորդում ԱԴ-ին, ապա՝ երկրորդ բաղադրիչով՝ ԱԴ-ի առկայությամբ: Ուրեմն՝ իմաստային առումով հիշյալ կառույցները նույնական են. բաղադրիչների քերականական հարաբերությունն էլ նույնն է. տարբերվում են եղանակավորողի ձևով (դիմավոր և անդեմ) և նախադասության մեջ ունեցած դերով. դիմավոր բայ եղանակավորող կառույցները դառնում են միայն և միայն ստորոգյալ, իսկ անդեմ եղանակավորող ձևավորվածները՝ նախադասության այլ անդամ⁹⁸: Որպես տարբերություն կարելի է նշել նաև «դերբայ եղանակավորող +ԱԴ» կառույցի՝ մյուսի համեմատությամբ մի քանի անգամ քիչ գործածությունը: Հետևությունը պարզ է. «դերբայ եղանակավորող +ԱԴ» կառույցը «դիմավոր բայ եղանակավորող +ԱԴ»-ի փոխակերպման նոր աստիճան է, նոր, հետևաբար քիչ գործածվող. մեր քարտարանում դրանք 93-ն են:

Հարկ է նշել, որ տեսականորեն բոլոր «դիմավոր բայ եղանակավորող +ԱԴ» կառույցները կարող են ունենալ իրենց համապատասխան «դերբայ եղանակավորող +ԱԴ» կառույցները, սակայն գործնականում այդպես չէ, և այս դեպքում դերբայ եղանակավորողի դերում հիմնականում մեծ հաճախականություն ունեցող բայերն են հանդես գալիս, ինչպես՝ *կարողանալ, աշխատել,*

⁹⁸ Ընդհանրապես բայի երկու ձևերն էլ, միասին բայական բառույթի բարդ համակարգը կազմելով, գործողության կամ եղելության տարբեր բնույթի նշանակություններ են ունենում: Ըստ այդմ էլ լեզվի մեջ հանդես են գալիս չարահյուսական տարբեր կիրառություններով:

կամենալ, ցանկանալ, ջանալ, փորձել, ճգնել, հրամայել, պատվիրել, որոշել, դադարել, ամաչել, վախենալ... Ստորև ներկայացնում ենք համադրական օրինակներ.

1. Հանեցե՞ք ձեր դիմակները, Որ գեթ մի քիչ դյուրին **շնչե՛լ կարողանաք** (ՊՍ, 2, 58): Ու հետո քարշ եմ տալիս ամեն տեղ՝ **չկարողանալով** քեզ համար մի խաղաղ բույն **ստեղծել** (ՍԽԱ, 193):

2. Նա **կաքավել էր ցանկանում**, նա ուզում էր զարդարել իմ այսօրվա սեղանը (ՄՍԳՆ, 50): Փախուստի ճանապարհին, **ցանկանալով** դույզն-ինչ **փրկել** իր տատանվող հեղինակությունը և պարտության խայտառակությունը, նա փորձեց գրավել Քեղա ամրոցը (նտ, 11): Գրում եմ աշնան մասին, **չուզենալով** **սկսել** այն, ինչ արդեն արթնանում է հիշողությանս մեջ (ՎՊՀԲԱ, 220-221):

3. Հարյուր տարուց ավելի է, ինչ հետմահու կյանքով **շարունակում եմ ապրել** (ՄՍԳՆ, 340): Նահանգապետը հյուրերին ընդառաջեց դեպի ճաշասենյակ՝ **շարունակելով խոսել** Մելիքյանի հետ (ՍԽԱ, 139):

Երանգավորիչ իմաստ ունեցող դերբայի հետ բաղադրված ԱԴ-ն շարահյուսական դերով նմանվում է միայնակ հանդես եկող դերբային և նախադասության մեջ կարող է հանդես գալ կա՛ն առանձին, անկախաբար (Նեղացած հայացքն ընկավ Դրաստամատի վրա, էլ ավելի մռայլվեց, լարեց ուղեղը՝ **ճգնելով հասկանալ**, թե ինչ է կատարվում —ՊԶԱԵ, 599), կա՛ն դերբայական դարձված կազմած, ինչպես օրինակ՝ **Չուզենալով օտար ծովերի մեջ թաղվել**՝ Մոլորվում է այնտեղ ու ճահճանում (ՊՍ, 1, 46): Առաջին նախադասության մեջ նպատակի պարագայի դերով հանդես է եկել միայն «**ճգնելով հասկանալ**» կառույցը, իսկ երկրորդում առկա է «**չուզենալով օտար ծովերի մեջ թափվել**» դերբայական դարձվածը: Ավելացնենք նաև, որ «դերբայ եղանակավորող +ԱԴ» կառույցի դեպքում առավել ցայտունորեն է զգաց-

վում ԱԴ-ի հիմնական գաղափար արտահայտելը (եղանակավորողի լրացուցիչ իմաստ ստանալը), նաև՝ դերբայ եղանակավորողի թելադրանքով ԱԴ-ի ձևը:

Յուրաքանչյուր դերբայ գործողության կամ եղելության յուրահատուկ գաղափար է արտահայտում, հետևաբար ԱԴ-ին յուրահատուկ երանգ է հաղորդում, որով և որոշվում է նախադասության մեջ կառույցի շարահյուսական դերը:

«Դերբայ եղանակավորող +ԱԴ» կառույցն ունի իր մասնակառույցները՝

1. «անորոշ դերբայ եղանակավորող +ԱԴ»,
2. «ենթակայական դերբայ եղանակավորող +ԱԴ»,
3. «հարակատար դերբայ եղանակավորող +ԱԴ»,
4. «համակատար դերբայ եղանակավորող +ԱԴ»:

«Անորոշ դերբայ եղանակավորող +ԱԴ» մասնակառույցն ամենից շատ է հանդիպում: ԱԴ-ն հոլովվում է, որով և ընդլայնվում է կառույցի շարահյուսական գործառնությամբ: Եղանակավորողի դերում առավելապես գործիականի հոլովով է հանդես գալիս. Փողոցով կանցնի մի բարակ քամի՝ **Ջանալով ավել** ստվերն իմ ու շան (ՊՍ, 2, 99): Ու երբ ցուրտը երիտասարդ ցույց է տալիս իր ուժն արդեն՝ **Ստիպելով** շապիկ **կոճկել** ու **մրմնջալ** խոսքեր դժգոհ... Միամիտ եմ դառնում նորից (նտ, 104): Բամբասասեր առուն անվերջ քչքչում է, անցնում վռազ՝ Կասկածամիտ թփերի հետ **բացատրվել խուսափելով** (ՊՍ, 1, 167): Իմ մանուկն է այդ նկարից ժպտում, Որ, **չուզենալով** ոչ մի խոսք **լսել**, Իմ վիզն էր գրկել թաթիկով իր թույլ (ԳԷ, 2, 84):

Այս մասնակառուցում էլ շատ է հանդիպում «**չիմանալով** + ԱԴ» տիպը, որը և երկբայական երանգ է հաղորդում խոսքին. Գրիգորն զգաց, որ չափն անցել է, և կանգ առավ՝ այլևս **չիմանալով** ի՞նչ **անել** (ՄՍԳՆ, 164): Զինվորները լցվեցին քաղաքի փողոցներն ու կանգ առան՝ **չիմանալով** ինչ **անել** (ՊԶԱԵ, 555):

Կանգ առավ, հարցական նայեց որդուն՝ *չիմանալով ծիծաղել*, թե՞ *արտասպել* (նտ, 371):

Անորոշ դերբայ եղանակավորողի ուղիղ ձևերի համադրմամբ կիրառությունը հայերենում այնքան էլ տարածված ոճ չէ, ինչպես օրինակ՝ Ուրեմն *կարողանալ պարզից պարզ դարձնել*, թե հանուն ինչի՞ ես դու գրում, *կարողանալ հրաժարվել* նաև գուտ ճշմարտությունից (ՎՊՀԲԱ, 464):

Սեռական-տրականով անորոշ դերբայ եղանակավորողով կառույցները քիչ են հանդիպում. Նրա կրծքի տակ որպես մի թույլ կանթեղ վառվում էր Անժիկին *աղոթել սովորեցնելու* ցանկությունը (ԱԲ, 86): Անդրանիկը Երվանդին ուղարկեց քաղաք՝ հրետանու պետ Տվերդոխլեբովին *խնդրելու* հեռահար հրանոթներից *կրակ բանալ* Կեզ և Իլիջիա գյուղերի դիմացի բլուրների վրա (ՍԽԱ, 249):

Բացառական հոլովով անորոշ դերբայը ևս կարող է եղանակավորող դառնալ, սակայն նման կառույցներն ավել շատ բարբառային և խոսակցական երանգ են ունենում:

«Անորոշ դերբայ եղանակավորող +ԱՂ» կառույցը նախադասության անդամ է դառնում նաև կապի խնդրի դերում. Պիես *գրել կարողանալու համար* հարկավոր է առնվազն տաղանդ լինել, իսկ այն *բեմադրել կարողանալու համար*՝ հանձար (ՎՊՀԲԱ, 397): Նույն ձևով ձիշտ են՝ *աղոթել սովորելու նպատակով*, *քայլել կարողանալուց հետո*, *կառուցել ցանկանալու մասին*, *երգել ցանկանալու պատճառով* և այլն:

Հարցի ուսումնասիրությունը երևան է հանում մի հետաքրքիր իրողություն. «դիմավոր բայ եղանակավորող +ԱՂ» և «դերբայ եղանակավորող +ԱՂ» կառույցները հոդավորվում են: Սակայն հետաքրքիրն այն է, որ առաջինում հոդ է ընդունում ԱՂ-ն, հոդավորվելիս էլ քայքայվում է շարահյուսական առանձին անդամների, իսկ երկրորդում հոդ է ընդունում եղանակավորողը, և կառույցն էլ չի քայքայվում: Օրինակ՝ Կամավոր *բանտարկվել ցան-*

կացողը՝ ցնցոտիների մեջ կոլոված մի մուրացկան կանգնեց հսկիչի դիմաց (ՄՍԳՆ, 101):

Մյուս մասնակառույցները համեմատաբար քիչ են հանդիպում. ժամացույցի սլաքներն ասես գամվել մի տեղում Ու երազի մեջ **վազել *ցանկացող***, Սակայն ոչ մի տեղ չկարողացող Մարդու տանջանքով տվայտում էին (ՎԴ, 1, 428): Այսօր բացեմ գաղտնիք մի խորունկ, որ անշուշտ պիտի խիստ ցավ պատճառի Ինձ **ցավ պատճառել *ցանկացող*** մարդկանց (ՊՍ, 1, 482): Ապրող, **ապրել *կամեցող*** ժողովուրդը իրավունք չունի ապավինելու անբարոյականությանը (ՄՍԳՆ, 285): Տները խորտակվում էին կարծես իրար հաջորդող աղետներից հոգնած, **կանգուն մնալուց զգված** (ՍԽԱ, 341): Եվ **չհասցրած հրաժեշտ ասել** Գյուղին, ինքն իրեն և այս աշխարհին, ... Քարը գնում է ոտքերի տակից (ՀՍԴԾ, 197):

«Համակատար դերբայ եղանակավորող +ԱԴ» մասնակառույցով օրինակներ չկան մեր քարտարանում, սակայն հնարավոր են նմանատիպ կիրառություններ, ինչպես օրինակ՝ **Երգել *ցանկանալիս*** հիշի՛ր քո ուսուցչին:

Դերբայ եղանակավորողների կողքին անորոշ դերբայն էլ դրվում է այն հոլովով, որ հոլովով պիտի դրվեր դիմավոր բայ եղանակավորողների կողքին. այնուամենայնիվ այս դեպքում ևս թեք հոլովածնակով անորոշ դերբայ պահանջող եղանակավորողների կողքին գերիշխում են այպես կոչված «բացարձակ» ձևերը. գուցե այսպիսի դեպքերում ԱԴ-ն տվյալ գործածությամբ կորցնում է իր բայական արժեքը և վերածվում է գոյականի:

Այսպիսով՝ արդի արևելահայերնում գործուն է նաև «դերբայ եղանակավորող + ԱԴ» կառույցը, որը թեպետ քիչ է հանդիպում, սակայն իր յուրահատկություններով ավելի բազմազան է դարձնում «եղանակավորող + ԱԴ» կառույցի շարահյուսական դաշտը, հարստացնում խոսքը, ուրույն երանգ հաղորդում նրան:

«ՈՉ ԲԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱԿՈՐՈՂ + ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԸ

Ուսումնասիրված օրինակները հավաստում են, որ ժամանակակից հայերենում լայն կիրառություն ունեն այն կապակցությունները, որոնցում որևէ ածականի, գոյականի կամ այլ ոչ բայ խոսքի մասի և էական բայի հետ են հարադրվում ԱԴ-ները: Սրանք միօրինակ չեն և կարող են ըստ կերպաեղանակիչ միավորի՝ խոսքիմասային արժեքի, ենթատեսակների բաժանվել: Ներկայացնում ենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը՝ Այնպես *քաղցր է զգալ* թևածումդ, գարուն, Այնպես *քաղցր է ապրել* հուզմունքդ պերճ (ՊՍ, 1, 19): Եվ քո մերժումի սուտ-սուտ խոսքերից *կարող եմ խրտոնել* ես այնպես դյուրին, Ինչպես քարեղեն այս թռչունները (ՊՍ, 2, 132): Իսկ ի՞նչ ստացվեց, Որ *կարելի է* աշխարհում *ապրել* Եվ առանց գլխի՞, Միայն գլխարկո՞վ (նտ, 70): Ավելի բուրումնավետ անկողին *անհնար էր պատկերացնել* (ՄՍԳՆ, 298): Հայր սուրբ, ես *պարտավոր եմ* նրա մոտ լինել (նտ, 369): Քո օրինակին հետևելով մենք *պարտ էինք մաքրվել*, սակայն, ավա՜ղ, ավելի կեղտոտվեցինք (նտ, 235): Մեղա՜ տեր, մեղա՜, *ամոթ է հիշել* (ՎԴԱ, 227): ...Չէ՞ որ մեծագույն *հաճույք է* ոտքով *քայլել* ծորում, *զգալ* բնության ներկայությունը (ՎՊՀԲԱ, 99): *Բախտ էր* մեզ համար *խաղալ* ջրերում Ու *երջանկություն ցեխտել* իրար (ՊՍ, 1, 247):

Հիշյալ կառույցի քննությունը առավելապես ածականների խնդրառության հետ կապված հարցերին է առնչվում: Քննվող կառույցի բաղադրիչների հարաբերության մասին խոսելիս պետք է նշել, որ ածականներն արտահայտում են սոսկ մի բան անելու ցանկություն, հնարավորություն, կամք, ունակություն

ունենալը կամ չունենալը, ի վիճակի լինելը և այլն, իսկ անորոշ դերբայն արտահայտում է այն գործողությունը, որի կատարման ցանկություն, հնարավորություն, կամք, ունակություն ունենալը, կատարման ի վիճակի լինելը ցույց է տրվում ածականով և էական բայով:

Ընդհանրապես անորոշ դերբայի հետ զուգորդվելու տեսանկյունից ածականները բաժանում են երկու մեծ խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն ածականները, որոնք ինքնուրույն գործածության դեպքում կարող են առնել անորոշ դերբայով արտահայտված լրացումներ, բայց ոչ ուղղական հոլովով (**սովոր քանդելու, տրամադիր լսելու, պարտավոր բացատրելու, պատրաստ մեկնելու, անկարող խոսելու** և այլն): Երկրորդ խմբի մեջ այն ածականներն են, որոնք առանց էական բայի գործածվելիս անորոշ դերբայով լրացում առնել չեն կարող (**անհրաժեշտ, դյուրին, անհնարին, իրավասու, կարելի, անկարելի, հարկավոր, հաճելի, հեշտ, դժվար, ցանկալի** և այլն): Սրանց մի մասը կարող է նաև գոյականով լրացում առնել (**անհրաժեշտ, հարկավոր, հաճելի, հեշտ, դժվար** և այլն): **Ածական + օժանդակ բայ** բաղադրությունների մի մասը առնում է նաև երկրորդական նախադասությամբ արտահայտված լրացում, որը կատարում է, ենթակայի պաշտոնն՝ **պարտավոր է, որ..., մտադիր է, որ ...** և այլն:

Երկրորդ խմբի մեջ մտնող ածականներն իբրև բաղադրիչ ունեցող կառույցներն իրենց հերթին ըստ էական բայի քերականական դիմաթվային հատկանիշների բաժանվում են երկու մասի՝ ա) կառույցներ, որոնցում ածականին միանում է օժանդակ բայի միայն եզակի թվի երրորդ դեմքով հատկանշվող էական բայը, այսինքն՝ նկատելի է դիմային և թվային սահմանափակություն՝ միադիմություն, միաթվություն (**կարելի է + ԱՂ, հաճելի է + ԱՂ, հարկավոր է + ԱՂ, դժվար է + ԱՂ, անհրաժեշտ է + ԱՂ, իզուր է + ԱՂ, հնարավոր է + ԱՂ, անհնար է + ԱՂ, հեշտ է + ԱՂ, զարմանալի է + ԱՂ, ցանկալի է + ԱՂ, քաղցր է + ԱՂ, լավ է + ԱՂ, տհաճ է + ԱՂ**): բ) Կառույցներ, որոնցում էական բայը դի-

մային և թվային սահմանափակություն չունի, այսինքն՝ հանդես է գալիս իր ողջ հարացույցով (**Պատրաստ եմ, ես է, ենք, եք, են + ԱՂ, ընդունակ եմ.... + ԱՂ, սովոր եմ...+ ԱՂ, մտադիր եմ...+ ԱՂ, կարող եմ... + ԱՂ** և այլն): Նշված կառույցների, նաև «եղանակավորող դիմավոր բայ + ԱՂ» առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանց մի մասը արտահայտության պլանում կարող է գործառնվել և՛ իբրև նախադասություն, և՛ իբրև նախադասության բաղադրիչ: Հասկանալի է, որ մեզ համար ընդունելի չէ Ռ. Իշխանյանի «Լեզվաբանական վերլուծության սահմանը արդի հայերենի շարահյուսական մակարդակում» հոդվածում արտահայտված այն միտքը, թե հիմք չկա այս կապակցությունները այսպես կոչված միասնական ստորոգյալ համարելու. ամբողջ նախադասությունը ստորոգյալ լինել չի կարող:

Սկզբից եթե ասենք, որ հիշյալ կառույցը տարբեր ձևերով է կադապարվում՝ «ածական + էական բայ + ԱՂ», «գոյական + էական բայ + ԱՂ», «մակբայ + էական բայ + ԱՂ»՝ ընդունելով հանդերձ, որ ԱՂ-ն մեծ մասամբ «ածական + էական բայ» կադապարին է հարադրվում:

«Ոչ բայական եղանակավորող + ԱՂ» կառույցի վերաբերյալ ևս արվել և արվում են արժեքավոր դիտողություններ, լրացումներ, բայց հարցի ուսումնասիրությունը դեռևս չի ամբողջացել: Չկան վերջնական եզրահանգումներ, չկա միասնական կարծիք: Ավելին, եղած կարծիքներն ու դիտողությունները նորից այնքան հակասական են, այնքան ծայրահեղ, որ երբեմն անգամ տարակուսում են՝ արդյոք նույն հարցին են վերաբերում:

Առավել քան պարզ նկատվում է, որ «եղանակավորող բայ + ԱՂ» և «ոչ բայական եղանակավորող + ԱՂ» կառույցները նմանատիպ լեզվաիրողություններ են: Հետևաբար նույն հիմնահարցն է մեր առջև նորից դրվում: Այսինքն՝ ինչպե՞ս արժեքավորել կառույցը, դիտել որպես մե՞կ անդամ, թե՞ համարել շարահյուսորեն վերլուծելի, կամ ինչպիսի՞ն է բաղադրիչների հարաբերությունը. նրանց միջև կախվածություն կա՞, թե՞ ոչ: Այս մասին

Լ. Թեյլանը գրում է. «Երևի ճիշտ կլինի նման մոտեցումով գնահատել նաև պետք է, անհրաժեշտ է, հնարավոր է, կարելի է, հաճելի է, ցանկալի է + անորոշ դերբայ կապակցությունները՝ դիտարկելով դրանք որպես միակազմ նախադասություններ: Այս դեպքում էլ անորոշ դերբայի հոդով կիրառությունները (խոսելն անհրաժեշտ է, ինձ պետք է քո գնալը և այլն) միանշանակորեն ենթակայի պաշտոն են կատարում, մինչդեռ այդպիսիք չեն կարող համարվել դրանց հետադաս անհոդ կիրառությունները. այստեղ ևս անշուշտ գերազանցապես իր բայական բնույթն է դրսևորում: Ասվածը կարող է հիմնավորվել թեկուզ և նրանով, որ այս դիրքում հանդես եկող բազմակի անորոշ դերբայները կապվում են եզակի թվով դիմավոր բայերի հետ, ինչը հակասում է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնին (հմմտ. մի կողմից՝ Անհրաժեշտ է տեսնել նրան և վերցնել գրքերը, կարելի է գնալ և անձամբ համոզվել, մյուս կողմից՝ ինձ անհրաժեշտ են քո ներկայանալը և ելույթ ունենալը, Նրա նվագելը և երգելը հաճելի էին մեզ)»⁹⁹:

Սխալ կլիներ կարծել, թե ունենալով նույն խնդիրները՝ երկու կառույցները նույնանում են: «Բայական եղանակավորող + ԱԴ» և «ոչ բայական եղանակավորող + ԱԴ» կառույցները նման են իրար այնքանով, որքանով երկուսն էլ իրենց կազմում ունեն եղանակավորող մաս և ԱԴ, երկուսն էլ ստորոգյալ են դառնում: Վ. Առաքելյանը նմանության մի այլ եզր էլ է նշում՝ ասելով, որ ուսումնասիրվող կառույցի եղանակավորող մասը մեծ մասամբ այն ածականներն են, որոնք գերազանցապես կերպավորիչ եղանակավորող բայերի հիմքեր են ներկայացնում:

Երկու կառույցները նմանվում են նաև եղանակային և բայական հատկանշային իմաստների տարբերակման առկայությամբ:

Կառույցներն իրարից տարբերվում են իրենց՝

⁹⁹ Թեյլան Լ., «Բացարձակ աներևոյթի» գնահատման շուրջ, ԲԵՀ, հ. 3 /18/, Երևան, 2015, էջ 48:

1. ձևային արտահայտությամբ.
2. իմաստային կողմով
3. իմաստից բխող ոճական առանձնահատկություններով
4. դիմային, եղանակային, ժամանակային կարգերն արտահայտելու կարողականությամբ
5. կառույցի նկատմամբ ենթակայի դերով,
6. հաճախականությամբ:

Մանրամասնենք մեր խոսքը: Եթե «բայական եղանակավորող + ԱԴ» կառույցը կազմված է դիմավոր բայից և ԱԴ-ից, ապա երկրորդը կազմված է լինում ածականից, գոյականից, մակբայից և էական բայից ու ԱԴ-ից: Մեկը երկբաղադրիչ է, մյուսը՝ եռաբաղադրիչ: Այլ կերպ՝ հիշյալ կառույցները կարող ենք կադապարել հետևյալ ձևերով. առաջինը՝ «պարզ ստորոգյալ + ԱԴ», երկրորդը՝ «բաղադրյալ ստորոգյալ + ԱԴ (իհարկե, պահպանելով բաղադրիչների կապակցման նույն եղանակը): Իսկ երբ խոսքը վերաբերում է հիշյալ կառույցների իմաստային և վերջինից բխող տարբերություններին, ապա նկատի ունենք հետևյալը. եթե «բայական եղանակավորող + ԱԴ» կառույցում եղանակավորող բայերն արտահայտում են ցանկություն, պահանջ, կարողություն, մտադրություն, մարդկային այլևայլ զգացումներ, եղանակներ՝ ընթացքի մեջ, որպես տևական գործընթաց, որն անհրաժեշտ է ԱԴ-ով արտահայտված գործողության կատարման համար, ապա «ոչ բայական եղանակավորող + ԱԴ» կառույցում ԱԴ-ով արտահայտված գործողության կատարումը հնարավոր, վտանգավոր, պարզ կամ բարդ, հեշտ կամ դժվար, քաղցր կամ ուրախ և այլն լինելը դրսևորվում է առանց ընթացքի, առանց տևականության, շարունակականության՝ միանգամից:

Առաջիններն ունեն թե՛ դիմային, թե՛ եղանակային, թե՛ ժամանակային բոլոր քերականական հատկանիշները (բացառությամբ որոշ բայերի), երկրորդները, չնչին բացառությամբ, արտահայտում են միայն երրորդ դեմքի գործողություններ՝ միայն էական բայի ներկա և անցյալ ժամանակներով, սահմանական եղանա-

կով¹⁰⁰: Ի վերջո, եղանակային և բայական իմաստների տարբերակում առկա է և՛ «բայական եղանակավորող + ԱԴ», և՛ «ոչ բայական եղանակավորող + ԱԴ» կառույցներում՝ այն տարբերությամբ, որ առաջին դեպքում ենթական ակտիվ կողմ է, իսկ երկրորդում՝ ոչ ակտիվ (իհարկե, կան չնչին բացառություններ. **հրամայվեց գնալ և պարտավոր եմ գնալ**):

«Եղանակավորող բայ + ԱԴ» կաղապարը բացարձակապես ավելի տարողունակ է: Հաճախականությամբ երկրորդ կառույցը զիջում է առաջինին:

«Ոչ բայական եղանակավորող + ԱԴ» կառույցի ոչ բայական մասը կարող ենք դասակարգել հետևյալ սկզբունքներից ելնելով՝

1. ըստ խոսքիմասային պատկանելության
2. ըստ երանգավորման իմաստի
3. ըստ հաճախականության
4. ըստ էական բայի դիմաթվային կարողականության:

Կառույցի բայական մասը՝ ԱԴ-ն, արդեն քննության առարկա է դարձել իր ձևով, կառուցվածքով, հոդառությամբ, թեպետև նրա հետ կապված այլևայլ հարցեր նորից կշռչափվեն:

Կառույցի դասակարգումն ըստ ոչ բայական բաղադրիչի խոսքիմասային պատկանելության

Ըստ խոսքիմասային պատկանելության վերոհիշյալ բառերն ածականներ, գոյականներ են լինում: Բացառություն է կազմում ափսոս բառը, որն արդի հայերենում առանձին գործածությամբ ձայնարկություն է: Ասել, որ այստեղ գործում է նմանակությունը, սխալ կլինի: Բացառվում է նաև բառի վերաիմաստավորումը:

¹⁰⁰ Խոսքը չի վերաբերում այն կառույցներին, որոնցում վերացական բայերն են էական բայի դեր կատարում:

Ըստ Հայկազյան բառարանի այս բառն առավելապես ռամկորեն է և գործածվում է որպես միջարկություն: **Ափսոս**-ի հայտնվելն այս շարքում կարելի է բացատրել պատմականորեն: Հնում այն ածականական կիրառություն է ունեցել: Այսօր էլ բառարաններում հիշատակվում է նրա ածականական գործածությունը. այն նաև գոյականական արժեք է ունեցել:

Արժե խոսել նաև **պարտավոր** բայի մասին, որն ածական է (հին հայերենում լայնորեն գործածվող), սակայն արդի հայերենում ինքնուրույնաբար չի գործածվում, այլ միայն էական բայի հետ: Իսկ երբեմն հանդիպող «պարտավոր դարձնել»-ը հնացած ձև է:

Արդի հայերենում ինքնուրույն գործածություն չունի նաև **պիտի**-ն: Արսեն Այտընյանն էլ է վկայում, որ հնուց (Ե դարից սկսած) **պիտի** դիմագուրկն էլ կար, որ մինչ նորագույն դարերը գործածվում էր: Հարկադրական եղանակի եղանակիչ է, իսկ որպես միադիմի բայ լայնորեն գործածվում է ԱԴ-ի հետ՝ «անհրաժեշտ է, պետք է» նշանակությամբ: Ինչ վերաբերում է **պետք** գոյականին, ապա այն ևս առանց էական բայի հանդես չի գալիս արևելահայերենում: Այստեղ այն հարկադրական եղանակի եղանակիչ է, էական բայի հետ ունի նաև միադիմի բայի արժեք: Ոմանք **պետք է**-ն համարում են պակասավոր բայ՝ երևի ավանդույթի ուժով:

Արսեն Այտընյանը, թվարկելով միադիմի կամ դիմագուրկ բայերը, չի սահմանափակվում միայն ածականական կառույցներով. դրանց կողքին թվում է նաև այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ **հնար, մեղք, հերիք, լավ, ամոթ, կարիք** և այլն: «Ամօթ է, պետք է, մեղք է այնպես են՝ ինչպես այլեւայլ գոյականներով ըսելի՜ր՝ Պարծանք է, պատիվ է, թշնամանք է եւ այլն»¹⁰¹: Նա թերևս առաջինն է, որ փորձում է մեկնաբանել նման կառույցների գոյացումը, ծա-

¹⁰¹ **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 81:

գումը. այն կարծիքն է հայտնում, որ հայերենը մեկ-երկու միադիմի բայ ունի. մնացածն այլևայլ խոսքի մասերից են ծագում: Արժեքավորն այն է, որ նա մատնանշել է նման ձևերի քանակական աճը: Իրոք, գնալով ավելի շատ բառեր են ԱԴ-ի կողքին համապատասխան ձևավորումով եղանակավորող արժեք ձեռք բերում:

Ներկայացնում ենք հիշյալ բառերի դասակարգումն ըստ խոսքիմասային պատկանելության, ներկայացնում ենք՝ կրկին ու կրկին անգամ մատնանշելով, որ եթե աղյուսակում կան մի շարք բառեր, որոնց եղանակավորող էությունը ակնհայտ է, ապա դրանց կողքին բացառված չէ այնպիսիների գոյությունը, որոնք նման իմաստ նոր-նոր են ձեռք բերում (հատկապես գոյականները), իսկ մի քանիսում էլ այն սոսկ ուրվագծվում է:

ԳՈՅԱԿԱՆ	ԱԾԱԿԱՆ		ՄԱԿ-ԲԱՅ	ԶԱՅՆԱՐ-ԿՈՒԹՅՈՒՆ
ապուշություն	արժանի/ արժան	անկարելի	շուտ	ափսոս
անբարոյականություն	ավելորդ	կարևոր	վաղ	
տխմարություն	հարմար	հաճելի /հաճո/	ուշ	
երջանկություն	անհարմար	տհաճ		
ուրախություն	հնարավոր	հարկավոր		
ժամանակ/ն/	անհնար	հեշտ		
պատիժ	անհնարին	հետաքրքիր		
բախտ	վայել	հոժար		
պարտք	անվայել	համաձայն		
պարտ	անկարող	մտադիր		
մեղք	պատշաճ	պարտադիր		
ցավ	անպատշաճ	պարտավոր		
նպատակ	ցանկալի	պարկեշտ		
պատիվ	անցանկալի	ճիշտ		
հարկ	բարդ	սարսափելի		
պետք / պիտի	դժվար	սովոր		

	ոյուրին	սոսկալի		
	դառը	սազական		
	զուր	սխալ		
	ընդունակ	վատ		
	անընդունակ	վտանգավոր		
	թույլտրելի	ունակ		
	լավ	ուրախ		
	ծանր	քաղցր		
	կարելի			

Աղյուսակն իսկ վկայում է ածականների բացարձակ առավելությունը (որով էլ հավաստվում է կարծես նրանց եղանակավորիչ, որակիչ լինելը):

Վ. Առաքելյանն է, որ արդի հայերենում ածականներից բացի այս դերում նշում է նաև մակբայներն ու **ժամանակ** գոյականը: «Ածական + էական բայ + ԱԴ» և «գոյական + էական բայ + ԱԴ» կառույցներում բաղադրիչ մասերի նույն փոխհարաբերությունն է, նույն իրողությունը: Կիրառական, գործառական ծավալով վերջինս շատ ու շատ է զիջում առաջինին:

Եթե փորձենք ներկայացնել «ոչ բայական եղանակավորող + ԱԴ» կառույցի եղանակավորող մասի համառոտ պատմությունը, ապա պատկերն այսպիսին կլինի. սկզբում էական բայի հետ միադիմի ձևեր են կազմել ածականները, և երկուսով միասին ԱԴ-ի համար դարձել եղանակավորող, ապա մի քանի մակբայներ, որոնք ածականական կիրառությունն էլ են ունեցել: Այնուհետև նույն դերում հանդես են եկել դարձյալ ածականներից բաղադրված գոյականները (**միամտություն, ուրախություն, տխրություն, ապուշություն, տխմարություն...**): Սրանց նմանակությամբ արդեն այլևայլ վերացական գոյականներ ծեռք են բերել նման կիրառություն: Բոլոր դեպքերում ակնհայտ է՝ նման դերով հանդես են գալիս տարբեր խոսքի մասերի պատկանող այն բառերը, որոնց իմաստային հիմքում ընկած են գնահատողական, եղանակավորական, կերպավորական, զգայական և նման տիպի

նշանակությունները: ԱԴ-ն, ծուլվելով դրանց հետ, կազմում է մի ամբողջություն. վերջինս էլ դառնում է անդեմ նախադասության ստորոգյալ:

Իհարկե, նման կառույցների ձևավորման ընթացքը կանգ չի առնում, և զարմանալի չի լինի, որ որոշ ժամանակ անց հիշյալ ոչ բայական եղանակավորողների շարքը համալրվի նորերով:

Ոչ բայական եղանակավորողների իմաստային դասակարգումը

Ոչ բայական եղանակավորողները եղանակավորում, երանգավորում են ԱԴ-ով արտահայտված գործողությունը: Մի դեպքում այն կարող է լինել հարկադրական, մի այլ դեպքում՝ կարելիական, երրորդ դեպքում՝ ցանկական, հաճելի, տհաճ և այլն: Ելնելով ոչ բայական եղանակավորողների արտահայտած իմաստներից՝ ավանդական հայագիտության մեջ ներկայացնում են դասակարգման հետևյալ ձևը՝

1. **պարտավորական**
2. **հարկադրական**
3. **կարելիական**
4. **անհնարինության, անկարողության, անհարմարության**

5. **ցանկության, մտադրության, ուրախության** երանգավորումներ արտահայտող եղանակավորողներ:

Նկատի ունենալով, որ դասակարգման նման սկզբունքը կարող է տանել հասցնել մեկ բառին՝ մեկ եղանակավորող իմաստի, ապա հարկ ենք համարում ընտրել դասակարգման մեկ այլ սկզբունք:

Հիմք ընդունելով եղանակավորության էությունն ընդհանրապես և առաջնորդվելով անհատի ու իրականության փոխհարաբերությամբ՝ ներկայացնում ենք ոչ բայական եղանակավորողների հետևյալ իմաստային դասակարգումը.

1. **կամային**

2. զգացական
3. եսական-հասարակական գնահատողական երանգավորումներ արտահայտող եղանակավորողներ:

1. Կամային երանգավորում արտահայտող եղանակավորողներ

Սրանք այն եղանակավորողներն են, որոնք դրսևորում են անհատի կամքը, իրականության նկատմամբ եսական (սուբյեկտիվ) ակտիվությունը, որևէ գործողություն կատարելու պատրաստականությունը: Կամային երանգավորում արտահայտող բառերից են՝ *կարող, անկարող, պատրաստ, անպատրաստ, մտադիր, տրամադիր, ուրախ, համաձայն, հոժար, ընդունակ, անընդունակ* և այլն:

Հետաքրքիր, նաև մեծ հաճախականություն ունեցող եղանակավորող է *կարող*-ը. հանդիպել է 533 անգամ: Օրինակներ՝ Սողոմոնը կեցել էր գլուխկախ, մի տեսակ մեղապարտ, ու չի հասկանում ինչու, ոչ մեկին նայել *չէր կարող* (ՄԳՊ, 11): *Կարող է* մայրը խլանալ հանկարծ... *Կարող է լսել* ոտնաձայնն անգամ Մարմարի վրա քայլող մրջյունի: *Կարող է տեսնել* սև ցելի վրա Սև ստվերն անգամ Սև գիշերվան մեջ չվող թռչունի (ՀՄԴԾ, 193): Խուլ *հառաչել չեմ կարող*, Ուրախ *կանչել չեմ կարող*, Ցավը սրտիս մեջ ես դրել, *Գցել, փախչել չեմ կարող* (ՀՇ, 192): Իսկ թե քեզ հանկարծ *չես կարող* զսպել, շրթունքդ խաժիր բոլորից ծածուկ ... (ՌԴՔԲ, 146): Քո սիրո լեզուն *չի կարող* արդեն *հոլովվել* սրտի Եվ ոչ մի ազնիվ քերականությամբ (Մ, 40): Աստված *չի կարող* տեսնել և անտարբեր մնալ, երբ ականվում են լույսն ու գեղեցկությունը (ՄՍԳՆ, 21): Գեղեցկությունն ու քաջությունը միասին սատանային *չեն կարող* ծառայել (նտ, 22): Մեռնում է նաև մարդը. ինչո՞ւ *չի կարող* սերը *մեռնել* (ՎԴՀԲԱ, 51):

Գրաբարն ու միջին հայերենը ունեցել են *կարեմ* բայը, որ նշանակել է «ձեռնահաս լինել, զորել, բավել, ուժել, կարենալ, կրնալ» (Ոչ ոք *կարե* երկու տերանց *ծառայել* -ՆՀԲ, 1, 1057: Ես

ոչ կարեն՝ գրել ի գիրս, Ջպատուհասս, որ դիպեցան... ՌԻՄՈՒՄ, 1, 20): Նույն ՆՀԲ-ում նշված են **կարող** կամ **կարող** ձևերը, որոնք ածականներ են՝ «ուժեղ, զորեղ, հզոր» նշանակությամբ: «Արդի հայերենի բացատրական բառարանում» **կարող**-ն ածական է և ձևով նման է **կարել** բայի ենթակայական դերբային: Արդի հայերենում քիչ գործածական է **կարել**-ը, իսկ **կարող**-ը կորցրել է իր դերբայական նշանակությունը և համալրել ածականների շարքը: **Կարող**-ն էական բայի հետ եղանակավորող է դառնում մի քանի նրբիմաստներով.

1. «Ուժ ունենալ, զորություն ունենալ» իմաստով. Եվ ո՞վ **կարող է** ցավի հետ **վիճել**, Այդ ո՞ր հիմարը (ՊՍ, 2, 23): Եվ փրփուրը բերնիս **կարող են՝ վիճել**, Որ բերան է տրված ոչ ուտելու, այլ խոսելու համար (ՊՍ, 1, 509):

2. «Կարող լինել, ի վիճակի լինել» իմաստով. Մի՞թե մարդկային տարբեր սրտեր **կարող են սքանչանալ** ու լուրջ **ակնկալիքներ ունենալ** Գրիգոր տաղերգուից (ՄՍԳՆ, 57): Ես **կարող էի** աստղերի շողուն **հավաքել**, շաղել նրա վարսերին... (ՎԴ, 1, 77):

3. «Հնարավոր լինել, հնարավոր է, կարելի է» իմաստով. Մեր ծերությունը **կարող է** հանկարծ մեզ **հարցնել** մի օր... (ՊՍ, 2, 124): Եվ լուսի՛ց, լո՛կ լուսից **կարող է մայրանալ** մինչև իսկ չբերը (նտ, 94): Առանց մարմնի **չի կարող** մարդկային ծայն **գոյություն ունենալ** (ՊԶԱԵ, 589):

Կարող-ը եղանակավորող է դառնում էական բայի բոլոր հարացույցներով. Էլ ինչպե՞ս **կարող են** ես **հովիվ դառնալ**... Տեսնո՞ւմ ես, իմ մեղքերը պաշտպան են ինձ... Դրանք էլ հո **չե՞ս կարող խլել** ինձնից (ՊԶԱԵ, 134): Բայց իմ մեջ **կարող է** հանկարծ մարդը **գարթնել**, արքա՛... **Կարող են** հուշերը **ժայթքել**: Կարոտը **կարող է խեղդել** ինձ (նտ, 416): Մենք երկուսով նույն օդը **շնչել չենք կարող**, նույն հացը **ուտել չենք կարող**, և, ի վերջո, նույն հողում **թաղվել չենք կարող** (ՄՍԳՆ, 190):

Կարող-ն էական բայի ժխտական ձևերով **ոչինչ** ժխտական դերանվան և **անել** կամ **չանել** ԱԴ-երի հետ կազմում է կապակ-

ցություն, կայունացած ոճ, որը ժամանակի ընթացքում կայունացել է և ձեռք բերել մեկ՝ ոչ մի հնար չլինելու գաղափար. Իմ ձիերն անտառում ոչինչ անել չեն կարող (ՍԽԱ, 301):

Մարդկային կարողություններից վեր լինելու գաղափարն է արտահայտում նաև ի՞նչ կարող եմ /ենք, ես / եք/ անել դարձվածային արտահայտությունը. Ափսոս է, բայց ի՞նչ կարող ենք անել, մեռնող որբերն ավելի ափսոս են (ՍԽԱ, 267): Տեսնո՞ւմ ես, ինչպես են հավի նման մորթում, մայրաքաղաք է, ի՞նչ կարող ես անել (ԽՀ, 246): Ի՞նչ դերանվան կրկնությունն է՛լ ավելի է ահագնացնում գործող անձի անգործությունը, անկարողությունը. էլ ի՞նչ կարող ենք անել, ի՞նչ (ՍԽԱ, 379):

Կայունանում է նաև չկա և չի կարող լինել կապակցությունը. ... Վերջապես չկա և չի կարող լինել ազգի և անհատի ձևավորում առանց լեզվի (ԽՀ, 246):

Եղանակավորող իմաստով *կարող է*-ն նմանվում է *կարողանալ* եղանակավորողին, սակայն տարբերվում է ոչ տևականությամբ. երկրորդը բնորոշվում է շարունակական կերպով. այս տարբերությունը ակնհայտ է հատկապես նրանց համատեղ գործածության դեպքում. Սակայն ինքը *չէր կարող և չկարողացավ* երկընտրանքը *հաղթահարել* (ՄՍԳՆ, 16):

Կարող-ն էական բայի հետ նման նշանակությամբ գործածվել է մեր լեզվի զարգացման բոլոր շրջաններում. գրաբարում՝ Եվ եթէ զայդ այդպէս արարից, գիտեմ ապա թէ և զիրամանն արքունի *կարող եմ կատարել* (Եղ, 126): Միջին հայերենում՝ Այ անօրէն, միս եմ ու ոսկոր, զեմ քար չեմ, Այլ *չեմ կարող* գաղտուկ *ապրել*, կու կանչեմ... (ՌԻՄՀԲ, 1, 300): Աշխարհաբարյան շրջանում՝ Մարիամը *չէր կարող* առանց ժպտելու *նայել* նորա երեսին (Ռ, 89): Արևմտահայերենում՝ Ջիս աստղազարդ երկին *սփոփել չէ կարող* (ՊԴ, 1, 18): ...Չէ՛, *չեն կարող* պահ մը Ձեր վառ հիշատակ ծածկել սև ու սոսկումի վեմի տակ ... (նտ): Արդի արևմտահայերենում այս կիրառությամբ *կրնալ* բայն է գրեթե բացառապես հանդես գալիս:

«**Կարող** + էական բայ» եղանակավորողին հականիշ է «**անկարող** + էական բայ»-ը, որը հոմանիշ է առաջինի ժխտական ձևերին. ունի «անձեռնահաս, անկար», «ուժ, կարողություն չունենալ» իմաստները: Թվում է, թե գործածության ծավալով գրեթե պետք է հավասարվերառաջինին, սակայն այդպես չէ. միջին հաճախականություն ունի. Եվ իմ մարմնի մեջ թայտում է լուռ, վիրավոր մի հավք, Որ **անկարող է** թևերը բացել (ՎԴԱ, 82): Ես թևեր չունեմ, Եվ **անկարող եմ** նաև քրքջալ (ՊՍ, 1, 301): Այս գեղեցկուհու հոգում սատանան **անկարող է** բնակվել (ՄՍԳՆ, 62): Հոգում փոթորիկներ կային, ինքն **անկարող էր** նավարկել (նտ, 22): Հետաքրքրական են նաև **անկարող** եղանակավորողով կազմված անորոշ կառույցները. Նա երկու-երեք օր փակվեց իր խցում՝ **անկարող գնահատել** իրերի վիճակը, իր հոգեվիճակը (ՄՍԳՆ, 322):

Հնաբույր ձև է **անկար** եղանակավորողի գործածությունը. Ի՞նչ անեն, լաո՛, **անկար են** չգալ, Էնպես են սեղմել մեր ոտն ու մեր ձեռ, Որ մեր ծօի կաթ արնի հետ մեր ալ Եղունգի տակից ի դուրս է պրծել (ՎԴԾԾ, 133):

«Պատրաստ+ էական բայ» կառույցում **պատրաստ**-ը լիարժեք բառի իմաստ ունի. Ես պատրաստ չեմ այս կռվին (ՄՍԳՆ» 126): Օ՛, ո՛չ, Հակոբի՛կ, մեր սիրո հարատևման համար նա պատրաստ է ամեն ինչի, նույնիսկ անաստվածության (նտ, 290): Այն իր լիարժեք բառային իմաստը դրսևորում է նաև որոշիչ հոդ ունեցող ԱԴ-ի հետ. Կհաղթահարես նաև քո հոգու ծանրությունը, որ դեռևս պատրաստ չէ աստծո հետ անմիջնորդ հաղորդակցվելուն (ՄՍԳՆ, 121): Պատրաստ-ն ԱԴ-ի միջավայրում նաև կապի դեր է կատարում. Ի՞նչ պատասխաներ իր սիրո համար մարտնչելու պատրաստ աղջկան (ՄՍԳՆ» 44): «Տրամադիր, հակված լինել» իմաստով էական բայի հետ ԱԴ-ի համար եղանակավորող է դառնում: Ունի միջին հաճախականություն. Մինչ **պատրաստ ենք** կառչել (=կառչելու) ատամներով Ուրախության անցնող ակնթարթից անգամ (ՊՍ, 1, 24): Պատրաստ-ը առավելապես առնում է թեք ձևով ԱԴ, ինչպես օրինակ՝ Ես **պատրաստ**

եմ աշխարհի բոլոր հարցերի շուրջ **վիճելու** (ՎՊՀԲԱ, 204): Դեռևս գրաբարում եղանակավորող էություն է դրսևորել. **Պատրաստ եմք** ըստ օրինակի Տեառն մերոյ **մեռանել**... (Եղ, 338):

Էական բայի հետ եղանակավորող է դառնում նաև **անպատրաստ**-ը. Իմ հոգին **անպատրաստ է ընդունել** ուրացողին:

Միջին հաճախականություն ունեն էական բայի հետ եղանակավորող դարձող **անգոր, մտադիր, տրամադիր, ուրախ, համաձայն** կապակցությունները. Օրինակներ՝ Վանական խցի քարե պատերն արդեն **անգոր էին** խենթացնող սրտին **կլանել** (=կլանելու) իրենց մեջ (ՄՍԳՆ, 277): Հիմա ես ձեզ իմ թանկ գաղտնիքը բաց անեմ՝ Ես **մտադիր եմ** դեռ երկար **ապրել** (=ապրելու) այստեղ, **ապրել** (=ապրելու) երկար-երկար, մինչև խոր աշուն (ՌԴՔԲ, 204): Լեռնցիները **տրամադիր են** կռվել: **Ուրախ եմ** իմանալ (=իմանալու), որ ուրեմն չի խախտվում մեր միաբանությունը (ՊԶԱԵ, 521): Որդին համարձակ էր, և հայրը **համաձայն էր** տանել (=տանելու) իր հետ: **Կարող էին** հոմանիշ եղանակավորող է նաև **ընդունակ է-ն**. **Ընդունակ են** սողալ (=սողալու), **ընդունակ ենք** ծնել (=քծնելու) (ՎՂԱ, 331):

Նույն իմաստով էական բայի հետ եղանակավորող է դառնում **ունակ**-ը. Նա, ով **ունակ է** այսպիսի պատ **կերտել** (=կերտելու), ծունկի չի գա երբեք իր ոսոխի առաջ (ՎՂԱ, 315): Հակառակ իմաստով՝ **անընդունակ**-ը. Ծերունին **անընդունակ էր** ճանաչել մարդկանց:

2. Զգայական երանգավորում արտահայտող եղանակավորողներ

Զգայական երանգավորում արտահայտող եղանակավորողները երանգավորում են ԱԴ-ով արտահայտված գործողությունը, սակայն վերջինս է թելադրում իր նկատմամբ վերաբերմունքը, այսինքն՝ առարկայական իրականությունից է ձևավորվում անհատի վերաբերմունքը տվյալ գործողության նկատմամբ, և անհատի եսը մղվում է ետին պլան: Իրականության թելադրան-

քով զգայական եղանակավորողները ցույց են տալիս գործողության կատարման անհրաժեշտություն, հնարավորություն, անհնարինություն, գործողության կատարման պարտադիր, կարելի կամ անկարելի, հարկավոր կամ զուր լինելը: Զգայական եղանակավորողներից են՝ *հարկավոր, անհրաժեշտ, պարտավոր, պարտ, հնարավոր, անհնար, անհնարին, կարելի, անկարելի, զուր, սովոր, պետք, պիտի* և այլն:

Կարողականությամբ և հաճախականությամբ առանձնանում է *հարկավոր* է-ն: Հարկավոր-ը նյութական իմաստով գործածությանը զուգահեռ (Մեզ *հարկավոր չեն* աստվածներ ու սրբեր – ՄՍԳՆ, 353: Հիմա *հարկավոր է* այդ ծուխը, ավելի շուտ՝ լույսը – ՎՊՀԲԱ, 264:)) էական բայի հետ դառնում է եղանակավորող. *Հարկավոր է մաքրել, զտել* միաբանությունը (ՄՍԳՆ, 257): *Հարկավոր է քչփորել* հին ու թաց վերքը (նտ, 290): Ճշմարտությունից ո՛չ վախենալ, ո՛չ էլ փախչել *է հարկավոր* (նտ, 349): Ես պարզապես վաղուց համոզվել եմ, Որ դուր գալու ծանոթ առևտրում *Հարկավոր է լինել* չմանրվող դրամ Եվ չծախսել իրեն կոպեկ-կոպեկ (ՊՍ, 1, 294):

Համարյա նույն իմաստով եղանակավորող են դառնում *անհրաժեշտ* է-ն և *պարտադիր* է-ն. *Անհրաժեշտ էր* որևէ կերպ գլխի ճարը տեսնել (ՊԶԱԵ, 499): Ուրեմն արժեք, նույնիսկ *պարտադիր էր* ծանոթանալ այդպիսի հազվագյուտ հայուհու հետ (նտ, 298):

Հարկավոր-ին նույն դերով չի զիջում *պարտավոր*-ը. հաճախադեպ եղանակավորող է դառնում էական բայի հետ, միայն, ի տարբերություն առաջինի, հանդես է գալիս էական բայի հարացուցային բոլոր ձևերով. Ուրեմն մենք *պարտավոր ենք* այն դուրս բերել, տանել-հասցնել օտար հողում նույնիսկ իր մայրենին չիմացող հային, որ նա հայ մնա (Դպր., 60): Ով նստեց Աթոռի վրա, Օրենքի ուժով *պարտավոր է* նաև հիշել, որ ինքը չորքուտանի է (ՊՍ, 2, 68): Բայց դու *պարտավոր ես* վրեժ լուծել ինձանից (ՊԶԱԵ, 425): Ես *պարտավոր էի* պաշտպանել մեր սերը

(ՎՊՀԲԱ, 21): Գարնանը վերանորոգվում է կյանքը, իսկ ծերացողը *պարտավոր է տեղ ազատել* եկողի համար, *տեղ տալ* եկողին (ՄՍԳՆ, 181):

Պարտ է-ն գործածական է եղել գրաբարում և միջին հայերենում. Արդ դու մարգպանդ ես աշխարհիս, *պարտ է* քեզ փոյթ յանձին *ունել*, *գրել* և *ցուցանել* յարքունիքս զմիաբանութիւն բռնութեանս...(Եղ, 122): Եւ եթէ *պարտ է* պարզաբար *ասել*... (նտ, 386): *Չէր պարտ լսել* մեր չարականին..., *Պարտ էր լսել* բարեկանին, *Պահել* զիրաման Տեառն Յիսուսին (ՈՒՄՀԲ, 1, 227): ...Սերմանողին *պարտ է հնծել*... (նտ, 22): Վերջին շրջանում այն սկսում է գործածվել հատկապես պատմական երկերում. Զեզ շատ եմ հարգում, հա՛յր Անանիա, բայց *պարտ եմ* իմացածս *հայտնելու* (=հայտնել) (ՄՍԳՆ. 232): Այսօրվա չար դիպվածի համար էլ մենք *ենք պարտ մեղանչել* տիրոջ դեմ, տիրոջ առջև (նտ, 22):

Հնարավոր է-ն նույնպես հաճախակի է հանդիպում. միադիմի է. *Հնարավոր՞ է* ծագող արևի ընթացքը *փակել* կամ այ, այս Արաքս գետի հոսքը *դադարեցնել* (ՍԽԱ, 18): *Հնարավոր է գտնել* ամեն երգի ամենալավ երգչին ու *լսել* մեն-միանգամվա նրա երգածը (ՄԳՊ, 30): Անանիան հասկանում էր, որ նման քայլի *գնալ հնարավոր չէ*...(ՄՍԳՆ, 27):

Հնարավոր է եղանակավորողին հոմանիշ է *կարելի է*-ն. մեծ հաճախականություն ունեցողներից է. մեր քարտարանում հանդիպել է 93 անգամ. Մինչև Ե՞րբ *կարելի է տառապել*, *սպանվել*, *կիսաքաղց մնալ* (ՍԽԱ, 105): Ամեն ինչ *կարելի է ներել* արքային, բացի սրբապղծությունից (ՊԶԱԵ, 204): Սերը *չի կարելի մեղք համարել* (ՄՍԳՆ, 243): Հիմա դու լա՛վ գիտես, Ի՛մ սիրելի, Որ սիրո հետ *խաղալ չի կարելի* (ՊՍ, 3, 121): Նոր եղանակավորող չէ. ...Հնությունների վերա միայն *կարելի է նայել* ու *գվարձանալ* (Ր. 106): Նույն իմաստով գործածական է նաև արևմտահայերենում. Այդ աղմուկի մեջ *կարելի չէր քնանալ* արդեն (ԳԱԵ, 244): Նոթագրել *կարելի չէ* (նտ, 241): Կըսեին, թե վերին թաղամասեն

կարելի էր հեռաձայնային կապ հաստատել (նտ, 168): Կայուն կապակցություններ են դարձել «*կարելի է + ասել*», «*կարելի է + կարծել*», «*կարելի է + պնդել*» կառույցները (*կարելի է կարծել*, որ աշխարհը համայն Սեղմվել ու փոքրացել էվ ձգվելով թովիչ այս քաղաքից նրա շուրջն է սիրով խմբվել – ՊՍ, 1, 110):

Հնարավոր է և կարելի է եղանակավորողներին հականիշ են *անհնար է, անհնարին է, անկարելի է* եղանակավորողները, ըստ որում ավելի մեծ հաճախականություն առաջինն ունի. Ազնվությունը այդքան թույլ է ու անպաշտպան, որ նրա շարքերում չզինվորագրվելու դեպքում անգամ *անհնար է չհամակրել* (ՊԶԱԵ, 287): Լույսն *անհնար է բռնել* (ՄՍԳՆ, 48): Ուժով ու բռնությամբ *անհնար է պահել* Ազնիվ բարեկամներ (ՎԴԱ, 300): Աստված իմ, *անհնար է* բառերով արտահայտել քո ստեղծագործ հանձարի գործությունը (ՄՍԳՆ, 289): Ես հավատում եմ, Որ *անհնար է* արևը *բանտել*, Երկնականարի գարդերը *քանդել*, Խմորի նման *հունցել* ու *գնդել* Կապույտը ծովի, Ատելի լուսնին *բռնել վռնդել* Երկնքից ծավի (ՊՍ, 1, 404-405): *Անհնարին է* աղետը *կանխել*, երբ զինվորը հրաժարվում է կռվելուց (ՍԽԱ, 257): Եվ մի՞թե, իրո՞ք, *անհնարին է* աշխարհում *լինել* հսկա կայսրություն ու մնալ արդար (ՊՍ, 4, 309): Աստծուց *անկարելի է* բան *թաքցնել* (ՄՍԳՆ, 47): Երկուսին *ծառայել* միաժամանակ *անհնարին է* (նտ, 69): Եվ մի՞թե, իրո՞ք, *անկարելի է* աշխարհում *լինել* ոչ նաև *ճարպիկ*, այլ միայն *ճարտար* (ՊՍ, 4, 309): *Անկարելի է*-ն առավելապես գործածական է արևմտահայերենում:

Նույն իմաստով գրաբարում եղել են՝ *անհնար է, անհնարին է, ոչ է հնար*. ... Լռել և չառնել պատասխանի *անհնար էր* (Եղ, 114): Եւ եթէ նոքա առ սոսա ոչ մերձենան, մարդոյ լոկոյ *անհնարին է* զայսպիսի պայծառութիւն լուսոյ զգենուլ (նտ, 292): Արդ *ոչ է հնար* ձեզ ապրել ի մահուանէ... (նտ, 372):

Քիչ գործածական են *գուր է և սովոր է* եղանակավորողները. Եղբայրներ, *գուր է մրցել*, թե ո՞րս ենք հին ու հնամյա ... (ՍԿԳՄՀ, 14-15): *Չո՞ւր էր* տան *հիմքը դնել* Անապատի փխրուն

ավագներուն (ՊՍ, 1, 33): Ոմանք *սովոր են* արտասպել անլաց, թե ձախողակ են ծնվել աշխարհում (Ս, 203): Թխկին ու լորին *Սովոր են* ապրել ամեն քամու տակ (ՎԴ, 1, 363): *Սովոր ես*, չէ՞, օր ու գիշեր *մեջք ծռել* (ՊԶԱԵ, 252):

Վերջինս գործածական էր նաև գրաբարում. ...Դուք *սովոր էք անցանել* ըստ հրամանաւ թագաւորին ձերոյ... (Եղ, 344):

Հետաքրքիր է *պետք է (պիտի)* եղանակավորողը. Բարձունքը բարձր տեսնելու համար բարձրանալ *է պետք* (ՍՎԳՄՀ, 214): Բուժել *է պետք* ժամանակին, հոգալ *է պետք* ժամանակի կարիքները: Սանձահարել, սանձել *է պետք* ժամանակի կարիքները (ՀՍԴԾ, 53): Էլ *պետք չէ* արյուն տալ, Ղարաբաղ, մեր արյան տենչավառ գազանին (ՌԴՔԲ, 19): Երգի կորցրածը *պետք է որոնել* երգի միջոցով, գտնել ու վերադարձնել երգին (ՄԳՊ, 29): Ուրախանալ *էր պետք*, հրճվանքից երեխայի պես պարել ու ցատկոտել *էր պետք* (ՊԶԱԵ, 483): *Պետք է փրկել* կիսակենդան աշխարհը, եղունգներով, ատամներով *պետք է կառչել* կյանքին, ազգին հարություն տալ (ՍԽԱ, 71): Ծմակուտից Երևան հասնելու համար *պետք է գնալ* մի ցերեկ ու մի գիշեր (ՀՄ, 2, 5):

Արդեն նշել ենք, որ *պետք*-ը արևելահայերենում ինքնուրույն գործածություն չունի, առանձին բառի արժեք չունի, թեպետ ասում ենք՝ պետքերոր: Միայն էական բայի հետ (այն էլ միայն եզակի թվով և երրորդ դեմքով) կապակցված է դառնում ինքնուրույն միավոր: Այլ խոսքով՝ *պետք է*-ն մի բառի արժեք ունի և շարահյուսական մակարդակում անվերլուծելի է: Ինքնուրույնաբար ունի «հարկավոր է, անհրաժեշտ է» իմաստը. մեզ պետք են ազնիվ ու շիտակ, սրբության հասնող մաքրության տեր հոգևորականներ (ՄՍԳՆ, 348): Ականջ էր պետք, որ ջոկի, Ու ձեռք էր պետք, որ պոկի Օտարամուտ ամեն քող: Պետք է կոկորդ ու ոգի (ՍՊՔ, 907): Նաև եղանակիչ է՝ հարկադրական եղանակի ցուցիչ. Մարդը պետք է կարողանա լույսին ընդառաջ գնալ: Եղանակավորող դերով գործածական է նաև արևմտահայերենում. Անոնց թվում մը տաղտկալի հարկ մըն է, մինակ *պետք է* խոստովանիլ,

թե եթե ոչ շատ, գեթ բավական կարելի էր երկարել (ՄՄ, 173):
-Ո՛հ, մի՛ լռեր, երբ *պետք է լալ*, *Պետք է* ցավեն *պոռալ* դարձյալ...
(նտ, 32):

Նույնը կարելի է ասել *այիտի*-ի մասին. գրաբարում, միջին հա-
յերենում պակասավոր բայ էր, արդի հայերենում՝ հարկադրա-
կանի եղանակիչ. Հայերը պիտի *թոթափեն* օտարամուտ ամեն
բան: Իսկ ԱԴ-ի կողքին եղանակավորդ է. Օ՛, ես քաջ գիտեմ, թե
այսուիետև ի՞նչ *այիտի անել* ... (ԳԷ, 2, 11): ...Դու երբևէ կհաս-
կանաս, թե ոնց *այիտի ապրել* կյանքում, թե ոնց *այիտի նայել*
կյանքին (ՊՍ, 1, 172): Իմն է լեռնային անհայտ այն լճի թրթիռը
կապույտ, Որի դեմ *այիտի իջնել* ծնկաչոք (ՎԴ, 1, 134): Մեր պայ-
քարը *այիտի հյուսել* ժողովրդի ուժից (ՍԽԱ, 23): Առհասարակ
այիտի եղանակավորողի գործածությունը կարծեք հնացած է.
այն առավելապես բարբառային երանգ ունի: Ավելի հաճախ
պետք է-ն է գործածվում: Այնուամենայնիվ մեր ձեռքի տակ
եղած օրինակները հավաստում են նրա գործածական որոշ հա-
ճախականությունը: Սա գործածական էր նաև մեր լեզվի նա-
խորդ շրջանում. Սէրըն որ դրամով լինի, զինք էրել *այիտի*
կրակով (ՆՔ): Ո՛վ Միքայել, հպարտութիւն քեզ չպիտի, *Խոնար-*
հութիւն անել այիտի (ՌԻՄՀԲ, 1, 381):

Զգացական վերաբերմունք են արտահայտում նաև՝ *սոսկալի*,
սարսափելի, *վտանգավոր*, *հետաքրքիր*, *կարևոր*, *լավ*, *հեշտ*,
ոյուրին, *հաճելի* (*հաճո*), *քաղցր*, *ցանկալի*, *անցանկալի*, *տիաճ*,
դառը, *ժանր*, *բարդ*, *սխալ* և այլն: Սրանք ուղեկցում են ԱԴ-ին և
վերջինիս ցույց տված գործողության որակական գնահատա-
կանն են արտահայտում: Հիշյալ բառերով ձևավորված եղանա-
կավորողներին որոշ վերապահությամբ պետք է մոտենալ.
սրանց եղանակավորող բնույթը կասկածելի է, լրիվ եղանակա-
վորող չեն, բայց, կարելի է ասել, այդ ճանապարհն են բռնել: Մի
դեպքում առարկայորեն անհրաժեշտ գործողությունը կարող է
լինել ցանկալի, հաճելի, քաղցր, հեշտ, ոյուրին, լավ... ԱԴ-ի հա-
մար նման երանգներով եղանակավորող են դառնում՝ *հաճելի է*,

քաղցր է, լավ է, հեշտ է, ցանկալի է, հետաքրքիր է, կարևոր է... Օրինակներ՝ Բայց ինչ էլ լինի, *հաճելի է թիկնել* աղբյուրի մոտ՝ քարի, ու Ծիածանի եփած սուրճը *խմել* կում-կում (ՍԽԱ, 69): Այնպե՛ս *քաղցր է զգալ*, թևածումդ, գարուն... (ՊՍ, 1. 19): *Լավ է չունենալ* կյանքում տուն ու տեղ, Քան թե արվեստում *լինել տնփեսա* (նտ, 480): *Լավ չէ՞ - Քուն քնել* Սուտ անուրջների հեղձուկ անկողնում (ԳԷ, 2, 75): *Հեշտ է*, գուցե, գրքե՛ր *գրել*, ո՛չ թե *կարդալ* (ՊՍ, 1, 392); Իսկ ինձ համար թեկուզ այս օրերի հեռվից *կարծում եք, թե հեշտ է* «սիրո մերժում» *ասել* (ՌԴՔԲ, 202): *Դյուրին էր* այնքան *բացել, ներս մտնել, հարցնել* տաքուկ (ՍԿԳՍՀ, 283): *Ցանկալի էր* նրա շուրթերից սիրո շշուռներ *լսել*: Շատ *հետաքրքիր էր* տեսնել, թե ոնց կանցնի հանդիպումը: Հայը որտեղ էլ լինի՝ նույնն է, *կարևոր է հայ մնալ* (ՎՊՀԲԱ, 118): Ավելի *ճիշտ է երկրպագել* դեերին ու սատանաներին (ՄՍԳՆ, 353): *Ինչ, ինչպես, որքան, այնքան, ինչքան* դերանունները և *շատ բառն* էլ ավելի են ընդգծում եղանակավորող իմաստը, սաստկացնում ԱԴ-ով արտահայտված գործողության նկատմամբ վերաբերմունքը. *Ինչ լավ է* գարնան գաղտնիքն *իմանալ* ... (ՊՍ, 1, 132): Ա՛խ, *ի՛նչ հեշտ է խաղալ* մարդկանց խեղճ բախտի հետ (ՊՍ, 3, 137): *Քաղցր է* այնպես եվ *դժվար* սիրուդ խայտանքը *զգալ*, Մութ բիբերիդ փայլով *հարբել, Հարբել* և էլ *խելքի չգալ* (ՊՍ, 1, 257): Ահա թե *որքան հեշտ է* քեզ չճանաչող մարդու համար՝ *որոշել* կյանքիդ ուղին, *խորհուրդ տալ* (ՎՊՀԲԱ, 50): *Ինչքա՛ն հեշտ է լինել* վշտին անգետ մանուկ (ՊՍ, 3, 108): Հակո՛բ, ավելի, *շա՛տ ավելի լավ է ընկնել* ձեռքն աստծո, քան սատանայի հրապույրներին *ենթարկվել* (ՄՍԳՆ, 288):

Հաճելի է եղանակավորողին, հատկապես պատմական թեմաներով գրվածքներում, երբեմն-երբեմն փոխարինում է հնաբույր *հաճո*-ն. Այնպես որ մեզ *հաճո է իմանալ*, թե դու ինչպես ես պայքարում թոնդրակյան վարդապետության դեմ (ՄՍԳՆ, 251): Օ՛, խնդրեմ, եթե *հաճո է լսել* խոշտանգվողների վայնասունը (նտ, 151):

Նույնին արևմտահայերենում համապատասխանում է *աղվոր* է եղանակավորողը. *Աղվոր, աղվոր է քալել* այս մայրերեն հյուրընկալ, *Ըլլալ* մարդոց շրթներուն բացվող ժպիտն այգային. մանուկի մեջ *տեսնել* խենթ մանկությունն իր անցյալ, Եվ իր հոգվույն մեջ *գտնել* ժպտող մանուկ մը կրկին (ԳԱԵ, 18): *Աղվոր, աղվոր է ապրիլ* վաղվան համար մանավանդ (նտ, 19):

Մյուս դեպքում Ադ-ով արտահայտված գործողության կատարումը կարող է լինել սոսկալի, սարսափելի, վտանգավոր, տհաճ կամ անցանկալի, ծանր, դժվար, բարդ... Նման երանգներով եղանակավորող են դառնում հետևյալները՝ *սոսկալի է, սարսափելի է, վտանգավոր է, դառն է, անցանկալի է, բարդ է, տհաճ է, ծանր է, դժվար է, սխալ է*: Ներկայացնում ենք օրինակներ՝ չմոռանալով նշել, որ սրանց մեջ իր հաճախականությամբ առանձնանում է *դժվար է* եղանակավորողը. Ես կյանքում ինչքա՞ն գիշեր եմ ունեցել, - *Դժվար է ասել...* (ՊՍ, 2, 119): Չարության մեջ Ձեզ *դժվար է հաղթել*, Կունծիկ աբեղա (ՄՍԳՆ, 51): Այն հողից, որ քո արյամբ ես հերկել, *Դժվար է գրկվել*՝ թեկուզ հանաքով (ԳԷ, 2, 105): ...Ծանր արյունը ծանր ջրից էլ *դժվար է կրել* (ՍԿԳՄՀ, 225): Նույնիսկ ամենաանբիծ մարդու համար *սոսկալի էր իմանալ*, որ մինչև կյանքիդ վերջը պարտավոր ես առաքինի մնալ (ՊԶԱԵ, 181): Սիրտը պատռելու չափ *սարսափելի էր պատկերացնել* (ՀՄ, 2, 15): Այն ժամանակ անասելի *դառն էր կուլ տալ* դարչնագույն հաբերը (ՎՊՀԲԱ, 472): Սրբազանի ունկերին *անցանկալի էր լսել*, որ մարդիկ ... անհամաձայն են իր ձեռնարկումներին (ՄՍԳՆ, 317): Ի՞նչ *բարդ էր* այդքան *Գտնել* երեք անուններում Իմ անունը գեթ մի անգամ (ՊՍ, 1, 123): Խաղաղությունն բոլոր նրանց, ում համար *ծանր է տեսնել* սգավոր կին, քույր ու մայր, *Ծանր է տեսնել* իր քաղաքը մոխրացած (նտ, 76): *Ծանր էր լսել* մեռնող զանգվածի աղաղակը (ՍԽԱ, 64): Երեկ եկավ դիմեց նախ ինձ, Թե *սխալ է* հոտ ու նախիր *Տանել պահել* քարայրներում (ՊՍ, 3, 36):

Հիշյալ կապակցությունների եղանակավորող գործածությունը որոշ դեպքերում հատուկ է նաև արևմտահայերենին. Որքա՞ն *քաղցր է սուզվիլ* քու պայծառ խորհուրդիդ ջինջ անհունության մեջ ... (ՄՄ, 37): Շատ *դյուրին է զգալ*, թե գրչի մեկ հարվածով արտադրված է իր գրությանց մեծամասնությունը, եթե ոչ բոլորը (նտ, 164): *Սարսափելի է Ըլլալ* մարդոց հետ, բայց ինքնզինք *զգալ* լքվա՞ծ ու մինա՞կ (ԳԱԵ, 125): Իրավամբ, *դժվար է* Շուշանյանի հետ հույզի ու հուզումի հոսանքն ի վար *չերթալ* և բաբախուն էջերեն լայն մեջքերումներ կատարելու փորձությանը *դիմանալ* (նտ, 254-255): Առանց այրումի՝ *դժվար է* գրել (նտ, 235):

3. Եսական-հասարակական գնահատողական երանգավորում արտահայտող եղանակավորողներ

Սրանք ցույց են տալիս իրականության մեջ առարկայական (օբյեկտիվ) գործողության գնահատումն անհատի (սուբյեկտի) կամ հասարակության կողմից: Եսական-գնահատողական եղանակավորողներ կազմող բառերից են՝ *հարմար, անհարմար, վայել, անվայել, արժան (արժանի), ափսոս, հարկ, պատշաճ, անպատշաճ, պարկեշտ, պատիժ* և այլն:

Գրաբարյան նմանիմաստ եղանակավորողներից այսօր գործածական են *պատշաճ է* և *վայել է*. Նոր-նոր սկսել է խոսակցական լեզվում գործածվել *օրէն է-ի՝ օրենք է* տարբերակը: Օրինակներ՝ *Պատշաճ չէ* մի ծայրահեղությունից *ընկնել* մյուս ծայրահեղության մեջ, հոխորտանքից մինչև ստորացում (ՊԶԱԵ, 326): -Գնա՛նք, սենեկապե՛տ, *վայել չէ* սպասեցնել կաթողիկոսին (նտ, 149): Ու տղամարդուն *վայել չէ* պատմել Հաղթանակդ սին (Մ. 156): Բայց *վայել՞ չէ* թոռին նոյան *նմանվել* խեղճ ջրահեղծի (ԳԷ, 2, 32): Հակառակ իմաստն ունի *անպատշաճ է* եղանակավորողը. *Անպատշաճ է* Աստծո հետ խոսակցել դեմ-դիմաց (ՄՍԳՆ, 65):

Պարկեշտ է -ն նոր եղանակավորող է. ...Առնվազն *պարկեշտ չէ վիրավորել* մորը (ՎՊՀԲԱ, 49): «Վայել է, հարկ է, պատշաճ է» իմաստով եղանակավորող է *արժանի է-ն* (*արժան է-ն*): Ունի ինքնուրույն գործածություն. Իսկ այն, ինչ որ ինձ ես տվել, Արժանի չէր ոչ քեզ, ոչ ինձ (ՍՊԲ, 902):

Գրաբարում տարածված եղանակավորող էր *հարկ է-ն*: Ժամանակի ընթացքում նրա կիրառական սահմանները նեղացել են, և այսօր այն քիչ գործածական է. պատմական վեպերում իբրև հնաբանություն է կիրառվում. Քո այս մատով, տիկի՛ն, Սրտերիս ես դիպչում, որոնց *հարկ չէ դիպչել* (ՎԴԱ, 272): *Հարկ է նկատել*, որ այս ամենը կնպաստեն մեր հաջողությանը (ՄՍԳՆ, 139): *Հարկ է գործել* ըստ դասական բանաձևի՝ ...կաթիլը քար է ծակում (ԽՀ, 206): Եղանակավորող է դառնում երկու նրբիմաստներով՝

1. «Անհրաժեշտ է, պետք է». Եթե դրա համար *հարկ է* մի ամբողջ կյանք *գոհաբերել*, Աղաչո՛ւմ եմ, մի՛ կասկածիր (ՊԶԱԵ, 185):

2. «Հարկ լինել, հարկ համարել». Ու թե *հարկ է* մեզ իրար հետ *չափվել*, Չափվենք, թե ո՞րս ենք քայլելու աշխարհի վրա... (ՍԿԳՄՀ, 442):

Նույն իմաստով կա նաև արևմտահայերենում. Եվ որպեսզի ապրիս դուն՝ թեև *մեռնի՛լ հարկ է* դեռ (ԳԱԵ, 30):

ԱԴ-ով արտահայտված գործողության համար եղանակավորող են ձևավորում նաև *հարմար, թույլատրելի, ակիտոս* բառերը. Տեսնո՞ւմ ես, արքա՛, որ ես *հարմար չեմ* պատանդ *կոչվելու* (ՊԶԱԵ, 365): *Հարմար չէ քայլել* փողոցով: Չկա մի գաղափար, որի անունից *թույլատրելի է զոհել* մարդու կյանքը (ՊԶԱԵ, 310): *Ակիտոս էր* կտոր-կտոր անել, տալ վանքերեցու ձեռքը (ՀՄ, 2, 15):

Եսական-գնահատողական վերաբերմունք որևէ գործողության նկատմամբ ոչ միայն դրականորեն, այլև բացասականորեն կարող է դրսևորվել: Ինչ-որ գործողության կատարում սուբյեկտի

կամ հասարակության համար կարող է լինել վայել, պատշաճ, հարմար, արժան, կամ՝ մերժելի, անվայել, անհարմար և այլն, ինչպես օրինակ՝ Եվ առհասարակ *անվայել է* որևէ հանրապետության ծրիակերության մեջ *մեղադրել* (ԽՀ, 274): *Անհարմար է* բոքիկ *քայլել*, Այս կոշիկն էլ շատ է նեղում (ՊՍ, 1, 338):

Բոլորովին էլ պատահական չէ, որ եղանակավորողների այս իմաստային խմբում է հանդես գալիս «գոյական + էական բայ + ԱԴ» կառույցի եղանակավորողների գերակշռող մասը: Սրանք ԱԴ-ի հետ կազմում են միակազմ նախադասություններ (միայն երրորդ դեմքով) և արտահայտում են հասարակության ընդհանրական գնահատողական վերաբերմունքը: Էական բայի հետ եղանակավորող դարձող գոյականներից են՝ հանգանք, փափագ, ամոթ, վայելք, կարոտ, խաբկանք, պարտք, պատիժ, հաճույք, երազանք, խնդիր, կարգ, նպատակ, ոժքախտություն, միամտություն, երանություն, քնավորություն, տխմարություն, անբարոյականություն, անհեթեթություն, ապուշություն... Ամենից առաջ ասենք, որ սրանցում նորից թույլ է զգացվում եղանակավորող իմաստը: Եվ առավելապես այն պատճառով, որ նոր-նոր են նման իմաստ ձեռք բերել կամ ձեռք բերում. ավելի ճիշտ՝ եղանակավորող դառնալու գործընթացի մեջ են գտնվում: Ավելացնենք նաև, որ ի տարբերություն ածականական եղանակավորողների՝ սրանք քիչ են հանդիպում և համարյա թե նորագոյացություններ են: Ներկայացնում ենք օրինակներ (ըստ մեր քարտարանի). Մի՞թե *հանցանք է* մարդուն *պատկերել* Աստծո նմանությամբ (ՄՍԳՆ, 139): Թե՛ր, ես քեզ կօգնեմ, թե չէ *ամոթ է նստել*¹⁰² երիտասարդ իշխանուհու առջև և *գանգատվել* (նտ, 279): Ինձ համար *վայելք է* տարվա այս եղանակին կավ պատրաստելուց հետո *վերցնել* իմ կերգե ոտնամաններն ու գուլպա-

¹⁰² Կառույցը հետաքրքիր ձևով է կիրառել Պ. Սևակը. Էնտել, որդի՛, *ամոթ ասել*, նույնիսկ ոտաց ճանապարհին Դու կտեսնես կարգին «կռիշ» (ՊՍ, 5, 51): Սա կայուն արտահայտություն է՝ խոսակցական՝ *ամոթ ասել*, *ամոթ չլինի ասել* ...

ները, բոքիկ ոտներով **իջնել** ծորը (ԳՄԾՓ, 20): **Փառք է** աչքերս հառած ձեր վրա՝ Ձեզ համար **կռվել**, ձեզ համար **մեռնել** (ՍՊԲ, 555): Միամիտ **խաբկանք է** երաժշտական այս երկրից **ակնկալել** ընդամենը ծառայությունն այն երգի, որ երբեմն մարմին շարժելուն է ուղղված (ԽՀ, 269): Հիմա մեր **պարտքն է** սրանց **պահպանել**, մեր փորձը **հաղորդել** նորերին, արժանի հետևորդներ ունենալ (ՊԶԱԵ, 160): Ծանրագույն **պատիժ է** հավիտյանս դատապարտված **լինել** ինչ-որ բանի (նտ, 181): Թող շնջա՜մ քո ականջին, Որ **հաճույք է** մի առանձին **Լսել** նրանց խոսքերը զուր (Մ, 17): Նրա **երազանքն էր** դառնալ երկրաբան, **ճանաչել** լեռները, **հասկանալ** նրանց բնավորությունը, **աշխարհի հանել** նրանց գանձերը (ՎՊՀԲԱ, 280): Այսօրվա մեր **խնդիրն է** պահել Կարսը (ՍԽԱ, 277): Սահմանված **կարգ է** ամեն բանում **հնազանդ լինել** իրենց առաջնորդին, **առարկություն չանել** նրան (նտ, 334): Իմ **նպատակն է անցնել** Շուշի (նտ, 399): Ա՛խ, ի՜նչ **բախտ է** կյանքում **լինել** Ամենքի պես, Ամենքի հետ... (ՊՍ, 1, 429): Մեծ **ղժբախտություն է** ազգիս ներսում **ոթել** հարազատի, յուրայինների արյունը (ՄՍԳՆ, 326): **Միամտություն է** մտածել, որ ճակատագրի սահմանածը հնարավոր է փոխել (ՍԽԱ, 257): **Երանություն էր** նայել ջուրն ի վեր (ՎԴԱ, 176): Ժուռնալիստի **բնավորություն է** միշտ **ղժգոհ լինել** իր արածից, միշտ **որոնել** ավելի լավը, խորը, իր գրիչ-արորով **բարձրացնել** կյանքի նոր շերտերը (ՎՊՀԲԱ, 8): **Տխմարություն է** հուսալ, թե Եվրոպան մեզ համար տեր Հիսուս Քրիստոսի հրաշքը պետք է գործի (ՍԽԱ, 28): **Անբարոյականություն էր** հավատալ իր որբությանը, դրանով իսկ՝ էլ ավելի սիրել իրեն (ՊԶԱԵ, 184): Նույն **անհեթեթությունն էր** փոխել երևույթի ի վերուստ տրված էությունը (ԽՀ, 219): **Ապուշություն է** սպասել... (ՍԽԱ, 128):

Կարծում ենք՝ նույն ձևով հնարավոր է հետևյալ գոյականների եղանակավորող կիրառությունը՝ առաքինություն (**առաքինություն է գոհվել**), արիեստ (**արիեստ է** սիրուն դավել), հիվանդություն (**հիվանդություն է** անընդհատ իր մասին խոսել), դժվարու-

թուն (*դժվարություն չէ* անմեղին մեղավոր ճանաչել) և այլն: Սրանք լիարժեքորեն չեն դրսևորում իրենց եղանակավորող իմաստը:

Հետաքրքիր են քան գոյականով ձևավորված կառույցները. բառը, իր լրացյալի և էական բային հետ կապված, եղանակավորող հատկանիշ է դրսևորում, ինչպես օրինակ՝ «*հեշտ քան չէ*», «*ցանկալի քան չէ*», «*իզուր քան է*» և այլն, այնուամենայնիվ շատ դժվար է ընկալվում նման կապակցությունների եղանակավորող էությունը. *Լսվա՞ծ քան է* առանց դատի դատաստան տեսնել վարդապետի հետ և սպանել (ՄՍԳՆ, 317): Այստեղ *միամիտ քան կյինի* հակադրություն տեսնել մոդեռնի և ավանդականի միջև (ՎՊՀԲԱ, 447): *Հեշտ քան չէ*, ջանս, ճիշտ ժամանակին *Ջարկել* տազնապի սուր ահագանգը (ՊՍ, 1, 261): *Ցանկալի քան չէ* ականատես դառնալ մի բախումի, որ ազգիս ներսում է (ՄՍԳՆ, 163: *Իզո՞ւր քան է* հիմա դիմել մահի (ՊՍ, 3, 138):

Գոյականները նման դերով գրաբարում և միջին հայերենում էլ են հանդես եկել. Ղեւք ոչ չարք են, ոչ ըմբռնին և տանջին ի մարդկանէ, թո՛ղ թե Աստուած արարի ամենայն արարածոց, զոր ձեզ *ամոթ է ասել*, և մեզ կարի անհավատալի բանք (Եղ, 54): Եւ այն՝ եւս չար է քան զամենայն, զդուռն՝ զոր բացին կորստեան, Աստուածո՛յ միայն *կարողութիւն է փակել* զնա այլ ըստ մարդկան սահման՝ ահա անցեալ է հնար (նտ, 182): *Ժամ է* մեզ դառնալ, եղբայր (ՈՒՄՀԲ, 1, 232):

Նման դերով կան արևմտահայերենում. ...Ցամքի՛լ ծաղիկ հասակի մեջ, Ո՛հ, *չէ* այնչափ *ցալ* ինձ համար (ՊԴ, 1, 78): Եվ *չափազանցություն չէ ըսել*, թե ոչ ոք այնքան խոր հուզումով, այնքան այրումով ու նույն ատեն՝ այնքան գեղեցկորեն չէ երգած, կանչած իր հարազատները, որքան Շուշանյան (ԳԱԵ, 252): Ո՛չ, *սխալ է* Շիրակի հայրենասիրությունը *նկատել* այլամերժ, սահմանափակ զգացում մը... (նտ, 275): Միթե *անիրավություն* մը *չէ՞* գեղեցիկ ամբողջության մը դաշնությունը *հատվածել*, *քայքայել* երազի նրբահյուս ու ճարտարագեղ ... շենքը (ՄՄ, 158):

Ժամանակային առումով էական բայի հետ եղանակավորող են դառնում՝ *շուտ է, ուշ է, վաղ է, ժամանակն է. Վաղ է* գալիք օրերի հույսով *ապրել*: *Ժամանակն է* բերքը *հնձել*, Սերմը հողին ու դարին *հանձնել* (ԳԷ, 2, 272): *Ժամանակը չէ՞*, բանաստեղծ անգութ, Քնարերգության լճակից կապույտ Մանել արծակի անսահման ծովը (նտ, 282):

Չափի առումով էական բայի հետ եղանակավորող են դառնում *բավական է, բավ է, հերիք է* կապակցությունները. *Բավական է* ձեռքը խաղացողին *մեկնել*, Ու կծուա հեռվից ձայնը ծանոթ (ՍԿԳՄՀ, 155): Այսինքն՝ պետք է աշխատել, այսինքն՝ *բավական է երազել...* (ԳՄԾՓ, 21): Ա՛խ, հայտնվի՛ր, *բավ է* մթնում խարխափել, Ե՛կ, նեցուկվեմ քո բախտին (ՀՇ, 3, 40): Եվ նպատակդ մեկն է անկասկած՝ «*Հերիք է մնալ* բանտարկության մեջ» (ՌԴՔԲ, 144):

Կառույցի ոչ բայական մասի դասակարգումն ըստ էական բայի դիմաթվային կարողության

Կառույցի եղանակավորող մասն ըստ դիմային և թվային կարողության լինում է՝

ա) միադիմի

բ) ոչ միադիմի:

Շատ հաճախ եմ և լինել բայերի հետ եղանակավորող են դառնում իրենց բառային նշանակությունը կորցրած գոյականներ, ածականներ, մակբայներ: Այս դեպքում եղանակավորման իմաստ արտահայտող բաղադրիչը մեծ մասամբ միադիմի անվանական բայ է: Սրանք հայագիտության մեջ տարբեր կերպ են անվանվել՝ «միադիմի բայեր», «անդիմավոր բայեր», «դիմագուրկ բայեր»: Միադիմի բայերը գործածվում են միայն երրորդ դեմքով, այսինքն՝ ունեն մեկ քերականական դեմք: Այսպիսի բայերի ցույց տված գործողության սուբյեկտի տրամաբանական կամ բնական դեմքի գաղափարը չի տրվում: Հիմնականում այն

բայերն են, որ ԱԴ-ի հետ «ոչ բայական եղանակավորող + ԱԴ» կառույցն են ձևավորում: Ուրեմն կառույցը հետևյալ մասնակա-
ղապարները կարող է ունենալ՝

ա. «միադիմի բայ եղանակավորող + ԱԴ»

բ. «ոչ միադիմի բայ եղանակավորող + ԱԴ»:

Սրանք զանազանվում են իրենց դիմայնությամբ: Առաջին դեպքում են բայի հետ եղանակավորողի դերում հանդես են գա-
լիս *արժան, ավելորդ, հարմար, անհարմար, հնարավոր, անհնար, անհնարին, վայել, անվայել, պատշաճ, անպատշաճ, ցանկալի, անցանկալի, բարդ, դյուրին, զուր, կարելի, անկարելի, կարևոր, հաճելի, հաճո, տհաճ, հարկավոր, պարտադիր, պար-
կեշտ, անպարկեշտ, սոսկալի, վտանգավոր, քաղցր, ափսոս, վաղ, ուշ, բախտ, պարտք, հարկ, ամոթ* և այլն: Երկրորդ մասնա-
կառույցում նման դերով հանդես են գալիս *կարող, ընդունակ, անընդունակ, հոժար, համաձայն, մտադիր, պարտավոր, սովոր, ունակ, ուրախ, պարտ* և այլ բառեր:

«Միադիմի բայ եղանակավորող + ԱԴ» մասնակառույցն ան-
վանաբայական ստորոգյալ է դառնում միակազմ նախադասու-
թյունների համար:

Եղանակավորողների մի մասը եմ-ի փոխարեն լինել բայով
կարող է կազմվել, որը տվյալ դեպքում ավելի լայն հնարավորու-
թյուններ է ստեղծում եղանակների ու ժամանակների փոփոխու-
թյան համար: Օրինակ՝ Փաստն այնքան եղկելի է, սրբազա՛ն, որ
հոգիս ի բուռ, էլի *անկարող եղա* նույնիսկ *երեսը տեսնել* (ՄՍԳՆ,
248):

Ի վերջո ավելացնենք՝ ածականական եղանակավորողների
մի մասը ձևավորվում է համեմատության աստիճաններով, հատ-
կապես և ավելի շատ՝ բաղդատականով. *Ավելի լավ չէ՞ փոխել*
մեր երազանքները, քան մտածել աշխարհի կարգը փոխելու մա-
սին (ՎԿՀԲԱ, 55): Թե չէ, իհարկե, *ավելի հեշտ է վերցնել* ու *գրել*
թերթերին (նտ, 49): Մի՞թե նա չէր հասկանա, որ աղջկան *ավելի*
վայել է համեստ լինել, զուսպ, ինքնասեր (նտ): Ինձ թվում է,

ավելի հարմար է մոտիկ տեղերից հավաքել մարդկանց (ՊԶԱԵ, 168): Հրաժարվել Դրախտիկից ավելի ծանր է ինձ համար, քան ստույգ մահը (ՄՍԳՆ, 187):

* * *

Այսպիսով՝ ԱԴ-ի համար եղանակավորող են դառնում նաև ածականով, գոյականով, մակբայով ու էական բայով ձևավորված միավորները, որոնք առաջինով արտահայտված գործողությունը զանազան իմաստներով են երանգավորում: Առավել մեծ հաճախականություն ունեն ածականով և էական բայով ձևավորված կառույցները:

Ըստ էության ոչ բայական եղանակավորողներն ամբողջացնում են ԱԴ-ի հետ հանդես եկող եղանակավորող միավորների շարքը:

«Ոչ բայական եղանակավորող + ԱԴ» կառույցը, նմանություններ ունենալով բայական եղանակավորողներով ձևավորված կառույցի հետ, կիրառական-շարահյուսական յուրահատկություններով է նաև տարբերվում: Այն խոսքի մեջ իմաստային, շարահյուսական, ոճական արժեք ունի:

Մինչ այժմ խոսքը վերաբերում էր այնպիսի կառույցներին, որոնք կազմվում էին միայն եղանակավորողից և ԱԴ-ից (օրինակներում ընդգծել ենք միայն կառույցի բաղադրիչները՝ անտես առնելով լրացումները): Սակայն կան նաև այնպիսիք, որոնցում կառույցի բաղադրիչ ԱԴ-ն, ունենալով եղանակավորող իմաստ, իր հերթին կառույց է կազմում մեկ ուրիշ ԱԴ-ի հետ: Այլ կերպ ասած՝ կառույցի կաղապարի ծավալում է տեղի ունենում: Օրինակներ՝ ***Պետք է կարողանալ աշխատանքի մարդկանց և՛ կողքին լինել, և՛ նայել նրանց հեռվից, կարողանալ թափանցել նրանց ներաշխարհը և ներսից լուսավորել (ՎՊՀԲԱ, 418): Նա կարողացել էր ստիպել մարդկանց չզարմանալ, որ ինքը քայլում է բոլորի նման, բոլորի նման ժպտում (նտ, 310): Պարզապես պետք է առաջարկել նրան համապատասխան ակնոց կրել (ԽՀ, 206): Այս օրինակներում պետք է և կարողացել էր եղանակավորողներն իրենց կողքին ունեն կարողանալ, ստիպել, առաջարկել ԱԴ-երը, որոնք իրենց հերթին եղանակավորող են լինել, նայել, թափանցել, լուսավորել, չզարմանալ և (ակնոց) կրել ԱԴ-երի համար: «***Պետք է + կարողանալ + լինել, նայել, թափանցել, լուսավորել***» «***կարողացել էր + ստիպել + չզարմանալ***» և «***պետք է + առաջարկել + կրել***» կառույցները ծավալուն են, բայց և համարժեք նախադասության մեկ անդամի: Նման դեպքերում ԱԴ-ն, իբրև կապակցության իմաստային կենտրոն, ստանում է մի այլ ԱԴ և կառույցում երկու դեր է կատարում (որով և տարբերվում է երրորդ բաղադրիչից): մեկ կառույցի իմաստակիր, գլխավոր անդամն է, մեկ էլ եղանակավորող՝ մեկ այլ ԱԴ-ի համար:***

Սա էլ հենց կաղապարի ծավալման մի դրսևորումն է:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այստեղ գործ ունենք «դիմավոր բայ կամ ոչ բայական եղանակավորող + ԱԴ» և «դերբայ եղանակավորող + ԱԴ» կառույցների բաղադրության հետ:

Վ. Քոսյանը թերևս միակն է, որ անդրադարձել է այս հարցին: Բաղադրյալ ստորոգյալը կարող է կազմվել նաև երեք և ավելի բաղադրիչներից: Եղանակավորիչ բայը մեկի փոխարեն կարող է ունենալ երկու անորոշ դերբայ-բաղադրիչ: Նա գրում է. «Ինչպես երկաստիճան կառույցի գլխավոր բառ դերբայը, այնպես էլ կազմիչ կառույցի գլխավոր բառը կարող է հանդես գալ տարբեր ձևերով: Առաջին հերթին նշում ենք այն դեպքը, երբ մեծ կառույցը, նախադասության դիմավոր բայի մոտ դրվելով, դառնում է բայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ: Չէր փորձում / ոչնչով արգելել նրան // շարունակելու իր խոշտանգիչ խոսքը (ԴԴՎ, 471): «Ըստ երևույթին ջանում էր / իր մտուցին ևս հարկադրել // պահպանելու այն համեստ միջոցը (ԴԴՎ, 7): Շարահյուսական մեծ կառույցը կարող է կազմվել նաև երանգավորիչ բայերի անորոշ դերբայով: Այսպիսի կառույցները համարժեք են բայական բաղադրյալ ստորոգյալին, այն տարբերությամբ, որ նախորդ դեպքում բայը հանդես է գալիս դիմավոր ձևով, իսկ այստեղ՝ միայն դերբայական ձևով: Օրինակներ՝ «Նա հրահանգ էր տվել Մերուժանին՝ ոչնչացնել հունաց գրքերը, արգելել հունաց լեզվի ուսուցում և. հայերին ստիպել // պարսկերեն սովորելու // (Բ, 7, 34): «Խնդրեց քեզ և դղյակի մյուս կանանց՝ /աշխատել ուրախ պահել թագուհուն/» (Մուր., 4, 26)¹⁰³:

Իսկ «Հայոց լեզվի» 2-րդ հատորում մանրամասնվում է, թե ո՞ր եղանակիչները եղանակավորող ո՞ր անորոշ դերբայների հետ կարող են զուգորդվել: «Այդպիսի ստորոգյալ կարող են կազմել դիմավոր եղանակավորիչ կամական և հակման՝ **ուզել, կամենալ, ցանկանալ, երազել, ձգտել, ջանալ, ուխտել** բայերը և

¹⁰³ Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 70-71:

շարունակել, սկսել բայերի անորոշը՝ ցանկացած այլ անորոշի հետ: Ես ուզում եմ շարունակել խաղալ: Նա ջանում էր սկսել աշխատել: Նա կամենում է խաղալ սկսել: Այդ նույն կամական, հակման դիմավոր բայերը գործածվում են սովորել, իմանալ, կարողանալ, գիտենալ բայերի անորոշի և մի այլ ցանկացած անորոշի հետ: Փափագելով փափագում էր կարդալ սովորել: Ինչպես էր երագում մեքենա վարել կարողանալ (իմանալ, գիտենալ): Զանում էր գրել-կարդալ սովորել: Փորձում էր հյուսել սովորել: Ծանոթ. Ոչ պարտադիր անորոշը կարող է նաև զուգադիր բայ լինել: Զանում էր նստել-կանգնել սովորել: Այդ նույն դիմավոր բայերը կարող են ունենալ նաև զուգադիր անորոշներ, ինչպես՝ Նա փորձում էր տանել այնտեղ պահել: Երկու անորոշ դերբայներ կարող են առնել նաև ամաչել, քաշվել, տատանվել, խոստանալ, երդվել, վճռել, որոշել, փորձել և այլ դիմավոր բայեր, երբ անորոշներից մեկն է սովորել, իմանալ, սկսել, շարունակել բայերից մեկն ու մեկը: Ամաչում է երգել սկսել: Քաշվում է շարունակել խոսել: Ամաչում է մեքենա վարել սովորել»¹⁰⁴:

Այո՛, նման կառույցները բնորոշ են հայերենին, և նրանց կառավարն ուրեմն կլինի՝ «Դիմավոր եղանակավորող + ԱԴ եղանակավորող + ԱԴ»:

Դրանք լինում են երկու տեսակ՝

1. «Անվանաբայական եղանակավորող + ԱԴ եղանակավորող + ԱԴ». Բայց միաժամանակ այս աստվածային գեղեցկությունը *անգործ է* մարդասպանին *արգելելու* դանակ խրելու իր զոհի կուրծքը կամ *փրկելու* խեղդամահ արվող կաքավողին կամ *չթողնելու* թալանել արդար մարդու քրտինքի արդյունքը (ՄՍԳՆ, 288): Իմացե՛ք՝ մենք *կարող ենք* բլբուլի նման ձեզ խոսեցնել, եթե հարկ լինի, նաև *ստիպել* տաղեր *ասելու* (=ասել)... (նտ, 151):

¹⁰⁴ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2, Երևան, 1975, էջ 175-176:

2. «Դիմավոր բայ եղանակավորող + ԱԴ եղանակավորող +ԱԴ»։ Մարդիկ սկսում են վախենալ պատժվելուց (ՄՍԳՆ, 351): Կխնորքի նրանց մեծահոգի գտնվել ու փորձել հասկանալու (հասկանալ) իրավիճակը, որի մեջ հայտնվել է Հայաստանի տասներկուերորդ մայրաքաղաքը (ԽՀ, 206): Վերջին նախադասության մեջ կխնորքի մեծահոգի գտնվել-ը հիմնական կադապարի իրացումն է, իսկ կխնորքի փորձել հասկանալու-ն կառույցի ծավալումն է:

Նման ծավալուն կառույցներ նկատվել են դեռևս 19-րդ դարում. Վերակացու Ֆերրաշը հրամայեց աղջիկներին դադարել գործելուց և նստել ճաշելու (Բ, 11) (Հրամայեց նստել ճաշելու-ն չի կարելի վերջինների շարքը դասել. ճաշելու-ն նպատակի պարագա է):

Նման կառույցներ կան արևմտահայերենում. Բայց հարկ կա՞ր, սիրելի՛, լեղի դեղահատով մը դարմանել փորձել այս հիվանդությունը (ՄՄ, 207):

Մեր ձեռքի տակ եղած օրինակներում եղանակավորողների համար եղանակավորող են դարձել հետևյալ բայերի դիմավոր ձևերը՝ խնորել, աշխատել, հրամայել, փորձել, ստիպել, կարողանալ, որոշել, համարձակվել, հրավիրել, շարունակել, նաև՝ կարող եմ, պետք է, անհնար է, անգոր է, կարելի է անվանաբանական եղանակավորողները: Օրինակներ՝ խնորում է իրեն թույլ տալ համապատասխան քննություններ հանձնել նոր վկայական ստանալու համար (ԽՀ, 275): Ինչպես չկարողացաք ինձ թույլ տալ նրան նվիրած այս նոթերը գրել ցերեկը (նո, 270): Եվ ապա՝ նաև մինչև տասնվեց տարեկաններին անհնար է արգելել մտածել (ՎԴՀԲԱ, 26): Եթե նույնիսկ շինականները անհարգալից են եղել քո և զորաց նկատմամբ, կարելի է համոզելով, բանակցելով փորձել լեզու գտնել նրանց հետ (ՄՍԳՆ, 318):

Մերօրյա հայերենում բավական տարածված են՝ «առաջարկում է ստիպել +ԱԴ», «գիտեր գգուշանալ + ԱԴ, «կամենում էր խուսափել +ԱԴ», «ձգնում էր խուսափել + ԱԴ», «հարկադրում է

մոռանալ + ԱԴ», «պատվիրեց պատրաստվել + ԱԴ», «պահանջեց սկսել + ԱԴ», «վճռեց սկսել + ԱԴ», «ցանկանում էր փորձել + ԱԴ», «ուզում էր սկսել + ԱԴ» և այլն:

Շարահյուսական այս ծավալուն կառույցը ևս կարող է քայքայվել, եթե «եղանավորող + ԱԴ եղանակավորող +ԱԴ» կառույցի երկրորդ ԱԴ-ն հոդ ստանա. եվ կկամենամ իմանալ իմ ո՛վ կամ ի՛նչ լինելը (ՊՍ, 2, 56): Մանավանդ որ՝ անհնար է որոշել այդ երկրաչարժի սկսվելը (ՎՊՀԲԱ, 26, 27): Երկուսում էլ ընդգծվածները ուղիղ խնդիր են: Արտաքուստ թվում է՝ «եռաստիճան կառույց ունենք նաև հետևյալ նախադասություններում՝ Սակայն ես դեռ չուն չունեմ եվ չգիտեմ էլ՝ արժե՞ ունենալ (ՊՍ, 2, 100): Ժամանակ չկա հարցնելու՝ ի՞նչ անել (ՍԽԱ, 331): Սակայն չգիտեմ՝ արժե ունենալ և Ժամանակ չկա հարցնելու՝ ինչ անել կապակցությունները դարձյալ ստորոգյալ – ուղիղ խնդիր հարաբերություն են ներկայացնում:

ԲԱԶՄԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Նախորդ շարադրանքում ընդհանրապես շեշտվում էին մեկ եղանակավորողով և մեկ ԱԴ-ով ձևավորված կառույցները, ինչպես այս օրինակներում՝ *Ցանկանում եմ* քեզ հետ *գրուցել*, Գրիգոր, քեզ մի երկու հարցում *ուզում եմ* օգնել (ՄՍԳՆ, 190): Աղջիկը *փորձեց* կարճել սպասման ժամանակը (նտ, 186): *Պահանջում էին* իրենց հանձնել անարգողին, շնացողին և աստծո թշնամուն (նտ, 233): Զգում էր, որ երազի մեջ է, սակայն *չէր կարողանում* արթնանալ (նտ, 247):

Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ նույն եղանակավորողով երանգավորվում են մեկից ավելի գործողություններ (ԱԴ-ներ): Բազմակի ԱԴ-ներով ձևավորված կառույցը լայն տարածում ունի մեր լեզվում. Նա *ձգնեց* կենտրոնանալ, առանձնանալ ինքն իր հետ, *անէանալ* սեփական մարմնի մեջ (ՊԶԱԵ, 171): *Կարողանում էին* հոտոտել և ականջել նրա կյանքին, նրա շնչառությանը (ՄՍԳՆ, 176): Շատ *ուզեցի* սեր չունենալ, Ապրել անսեր, անսեր մնալ, Կշտամբանքից, բամբասանքից, Հալածանքից *հեռու մնալ* (ՀՀԻՂ, 51): Ես է՛լ *եմ* *ուզում* քիչ թեթև ապրել, Ես է՛լ *եմ* *ուզում* Եվայի նման Մանկորե՛ն, անխո՛հ Տրվել արգելված պտղի հաճույքին ԵՎ գեթ մի վայրկյան վտարել ինձնից Աստծուն պատասխան տալու երկյուղը (ՍԿԳՄՀ, 225-226):

Իսկ ինչքա՛ն գործողությունների հետ կարող են առնչվել, ասենք, *ուզել*, *կարողանալ*, *սկսել*, *փորձել* եղանակավորողները: Տեսականորեն հնարավոր են բազում ԱԴ-ներով կիրառություններ, սակայն այս հարցում էլ վճռական դեր ունեն հայերենի շարահյուսական առանձնահատկությունները. ԱԴ-ների քանակը մի եղանակավորողի երանգավորման ոլորտում պայմանավորված

է հայոց լեզվի ընծեռած հնարավորություններով: Ավելի հաճախ մի եղանակավորողի երանգավորման ոլորտն ընդգրկվում են 2, 3 ԱԴ-ներ: Մեր քարտարանը ևս հավաստում է հայերենի համար բնորոշ այս իրողությունը: 4, 5, 6, 7 և ավելի ԱԴ-ներով ձևավորվածներն առավելապես հատուկ են գեղարվեստական խոսքին, հատկապես չափածոյին և քիչ են հանդիպում. կարող են ոճը ճապաղ դարձնել:

Կառույցի՝ բազմակի ԱԴ-երով ձևավորված լինելու դեպքում ունենք հետևյալ մասնակաղապարները (հիմնական կաղապարի ծավալումները)՝

ա) «Եղանակավորող + ԱԴ + ԱԴ»:

Սրանք ամենատարածվածն են. *Փորձեցին* արյամբ *հագեցնել* ապստամբների քաղցն ու ծարավը և արյամբ *հանգցնել* նրանց արդար ցասումը (ՄՍԳՆ, 15): Եվ ապա թող *համարձակվի չքշել* իր մյուս երկու կանանց, *չարտաքսել*՝ մեկին պալատից, մյուսին՝ ընդհանրապես երկրից (ՊԶԱԵ, 499): Ներսեսն աթոռի վրայից գետին գցեց իրեն, ծնկաչոք *սկսեց մոտենալ* արքային և աղաչանքով *խոսել* (նտ, 136): ... *Ուզում է գնալ, իջնել* ծնկաչոք Իր հողին, ջրին, ծննդավայրին (ՎԴ, 1, 37): Իհարկե, երբ ԱԴ-ները եղանակավորողին են հաջորդում գծայնորեն, նախադասությունում ընդգծվածը համապատասխանում է կաղապարին: Սակայն երբ եղանակավորողն ու ԱԴ-ն իրարից շատ են հեռացած, կարող են նաև բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների ստորոգյալ դիտվել՝ եղանակավորողի գեղչմամբ՝ օրինակ Պ. Ջեյթունցյանի «Արշակ Երկրորդից» բերված նախադասության այսպիսի փոխակերպմամբ՝ Եվ ապա թող *համարձակվի չքշել* իր մյուս երկու կանանց, թող *համարձակվի չարտաքսել*՝ մեկին պալատից, մյուսին՝ ընդհանրապես երկրից:

բ) «Եղանակավորող + ԱԴ + ԱԴ + ԱԴ»:

Նորից տարածված մասնակաղապար է. Այժմ երեքով *սկսեցին գոռալ, ցնծալ, ոստոստալ* (ՍԽԱ, 375): Մտածում էր Հաբուդը, և նրա անտաշ միտքը մեծ ցավով *ձգնում էր* պատասխան

տալ, **հաղթել** արգելքները, պահած գաղտնիքների **դռները բանալ** (ԱԲ, 38): Անկեղծ ուրախության տերերը նույնքան ակնեղծորեն նեղանում էին անցորդներից, երբ սրանք **հրաժարվում էին մասնակից լինել** (=լինելուց) իրենց ուրախությանը, **հաց կտրել** (=կտրելուց) սեղանից, մի գավաթ գինով **օրհնել** (=օրհնելուց) երիտասարդների միությունը (ՄՍԳՆ, 123):

գ) «Եղանակավորող + ԱՂ+ԱՂ + ԱՂ + ԱՂ»:

Ամենից առաջ նշենք՝ որքան ավելանում է ԱՂ-ների թիվը, այնքան պակասում են նմանատիպ կառույցների գործածության դեպքերը. Եվ գիտես նաև, Որ քեզ տանջում է Մի զարմանալի ու խենթ ցանկություն, Որ **ուզում ես** դու ամենայն ինչի **Տալ** նոր մի անուն, Սիրո անունը Առեղծված **դնել**, Քարի անունը **Ղնել** քնքշություն, Հացը, Սուրբ հացը **Անվանել** հրաշք (ՎՂ, 1, 263-264): **Որոշում էր** այլևս շուկա **չգնալ**, **դեն գցել** անիմաստորեն առատ իր զարդերը, օր ու գիշեր տնային գործերի **լծվել** և ճաշ եփելու ու լվացք անելու տաղտուկի մեջ **մոռանալ** ամեն ինչ (ՊԶԱԵ, 437): Եվ հոգու խորքում ծվարած զգացումը **չուզեց մեկնել**, **մանրացնել**, **դարձնել** անշապիկ մի **բառ** ու **խոսք** և բոբիկ-բոբիկ **կանգնեցնել** այդ ցուրտ մայթի վրա, իր կողքին (ՄԳՊ, 54):

դ) «Եղանակավորող + ԱՂ +ԱՂ +ԱՂ + ԱՂ +ԱՂ»: Օրինակ՝ Ես էլ **եմ ուզում** Զտվե՛լ, խաղաղվե՛լ, Հասնել դաշնության, Լայն մի կշռությով **չափել** տիեզերքի անհունությունը, Եվ էլ **չնայել** հողին, քարտեզին (ՍԿԳՄՀ, 227):

ե) «Եղանակավորող + ԱՂ +ԱՂ +ԱՂ +ԱՂ +ԱՂ +ԱՂ» (կամ ավելի ԱՂ-ներ). **Ուզում է** նախ դեմը **սիգալ**, Եվ հետո **հոտոտել** արագ, **Քրքրել**, **ծվատել**, **կիսել**, Վայելիք ոռնոցով վայրագ Պղնձե շուրթերը **լիզել** (ՎՂԱ, 244): **Կուզեի** այնպես ես քո տունը **գալ**, **Տեսնել** շփոթմունքը ու շիկնանքը քո, Հոգնած ամպի պես Իմ կարոտները կրծքիդ **հեկեկալ**, Եվ սրտիս նման դողդողացող ձեռքով Մատնե՛րդ, Վարսե՛րդ **շոյել**, Բազուկներիս մեջ քո փխրուն ու տաք նազանքն **օրորել**... Ու տառապանքիս բոսորը **փռել** հալացքիդ ի տես, **Ասել**, որ դո՛ւ ես տերն այդ բոլորի, Սակայն

չգիտես (ՎԴ, 1, 90-91): Թե *կարենայի* ծաղկի պես խոնարհ, ժպտալով *թռչնել*, Ու *խաղա՜ղ մնալ* Մայր ցորենի նման հաշտ, ինքնամատույց հասկի *փոխարկվել* Ու *չդառնանալ*, Գետերի նման խաղով, կարկաչով ծովերի՜ն *զնալ* Ու ... *չհասկանալ*, Ասուպների պես *սահել* երկնքից, անհունին *լուծվել*, Ու ... *չահագնանալ* (ՍԿԳՄՀ, 290):

Վերոբերյալ օրինակներն իսկ հավաստում են, որ սրանք առավելապես գեղարվեստական խոսքի մեջ են կիրառվում, և այն չափով, որչափով չի խախտվում խոսքի իմաստը, այն չի դառնում խրթին, դժվարընկալելի:

Նման կիրառություններում երևի սխալ չէր լինի նաև ԱԴ-ներն իրենց լրացումներով թերի նախադասություններ դիտել, որոնցում ոճական նկատառումներով նույն եղանակավորողը չի կրկնվում (ինչպես օրինակ՝ *Սկսում եմ հիշել* ամենապատահական հանդիպումներ, *զարմանալ* ամենասովորական մարդկային մտերմության վրա (ՎԴՀԲԱ, 212): Վերականգման դեպքում այսպիսին կլինի՝ *Սկսում եմ հիշել* ամենապատահական հանդիպումներ, *սկսում եմ զարմանալ* մարդկային մտերմության վրա):

Եվ վերջապես ավելացնենք, որ ըստ քարտարանի տվյալների ավելի հաճախ *ուզել*, *կարողանալ*, *սկսել*, *փորձել*, *անհնար է*, *կարող է* և մի քանի նման եղանակավորողներ են բազմակի ԱԴ-ների հետ գործածվում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ միևնույն եղանակավորողի երանգավորման ոլորտն ընդգրկվող բազմակի ԱԴ-ների հարցի քննությանը նրանց կապակցման ձևերի հարցը պիտի հետևի: Այսպես՝ Ու ես *ուզում եմ* այսօր *խենթանալ*, Խանդի մրուրը մինչև *վերջ պարպել*, Ե՛վ *զալ* հողմի հետ, քո դուռը *բանալ*, Մտնել հոգուդ մեջ, Խառնել ամեն ինչ, Քեզ նորից *անել* հեզ ու հպատակ, Ե՛վ արցունքներ *տեսնել* աչքերին քո ջինջ, Ե՛վ արցունք *տեսնել* ձեռքերին մի տաք (ՎԴ, 1, 120): Այս նախադասության մեջ *ուզում եմ* եղանակավորողի հետ զուգորդվել են ինը անորոշ դերբայներ (իրենց լրացումներով), որոնք տարբեր կերպ

են կապակցվել. մի դեպքում՝ շարահարությամբ, մյուսում՝ և շաղկապով (ըստ չափի պահանջի): Պարզից էլ պարզ է, որ բազմակի ԱԴ-ները կարող են կապակցվել շարահարությամբ («եղանակավորող + ԱԴ, + ԱԴ, + ԱԴ...»). Վարդապետը *փորձել էր* բռնի ուժով *համբուրել, տիրանալ* (ՄՍԳՆ, 231): Ոչ հեռվում կապված ձիերը ... *սկսեցին խրխնջալ, ցատկոտել, քաշել* կապերը՝ դրանք կտրելու մոլուցքով (ՍԽԱ, 434): Հիմա նա *կարող էր* միայն վախենալ, մրսել, շոգել, քաղց զգալ (ՊԶԱԵ, 134): Իսկ իմ օրն այնքան է բարի, Որ *կարելի է* հացի տեղ ուտել, Խաղալիքի տեղ տալ լացող մանկան, ծալել իբրև թարմ հրավիրատոմս, Բաժանել մարդկանց (ՎԴ, 1, 207):

Ըստ խոսքի պահանջի բազմակի ԱԴ-ները կարող են կապակցվել նաև շաղկապներով. Ես *ուզում եմ բարձրանալ* հոգնած և ուժատ, *Գիրկս առնել ու շոյել* ձեռքերը տխուր (ՎԴ, 1, 320): Անտառը ծանոթ էր նրան, գիտեր, թե որտեղ *է սիրում բույն դնել ու կանչել* միրիափը (ԱԲ, 77): Նման դեպքերում ընդմիջարկման մասին խոսք լինել չի կարող. այս կարգի հավելադրումները կառույցում ԱԴ-ների շարահյուսական կապակցման դրսևորումներ են սոսկ: Ուրեմն շաղկապները շարահյուսական կապակցման դեր են կատարում, բայց և արտահայտում են զանազան հարաբերություններ. բազմակի ԱԴ-ների կապակցման ձևն արդեն տրամաբանական, իմաստային կողմի հետ է առնչվում, ինչպես օրինակ՝ -Բայց ես իրոք *չէի ուզում* նրան *ծաղրել կամ նվաստացնել*, - նրանց ծիծաղն ընդհատեց արքան (ՊԶԱԵ, 167): Եկեղեցին *պետք է ոչ թե հակադրել, այլ զուգակցել* երկրի միասնական շահերի հետ (նտ, 604):

Բազմակի ԱԴ-ների՝ շաղկապներով կապակցվելու դեպքում ունենք տարբեր մասնակառույցներ՝

1. «եղանակավորող + ԱԴ + և // ու + ԱԴ».
2. «եղանակավորող + ԱԴ + և (կամ) + ԱԴ.
3. «եղանակավորող + ԱԴ + քան (թե) + ԱԴ».
4. «եղանակավորող + ԱԴ + (և) ոչ թե + ԱԴ».

5. «եղանակավորող + և ոչ թե + ԱԴ + այլ + ԱԴ».

6. «եղանակավորող + ԱԴ + այլ ոչ թե + ԱԴ».

7. «եղանակավորող + ԱԴ + կամ (թե, էլ, թե չէ) + ԱԴ» և այլն:

Ինչպես մեր քարտարանն է ցույց տալիս, նկարագրված մասնակառույցներից յուրաքանչյուրն իր կոնկրետ իրացումն ունի խոսքի մեջ. յուրաքանչյուրը նաև յուրահատուկ իմաստային հարաբերություն է արտահայտում՝ պայմանավորված գործածվող շաղկապի բնությով: Ու, և շաղկապներով կապակցվելու դեպքում մի ընդհանուր եղանակավորողի երանգավորման ներքո ԱԴ-երով արտահայտված գործողություններ են թվարկվում.

Ուզում եմ գնալ ու ծնկի իջնել մեր աղբյուրներին (ՎԴ, 1, 335): Նա *ուզեց հավաքել ու էլի ներդաշնակել* մեղեդին (ՄԳՊ, 12): *Ցանկացավ դուրս գալ* վրանից *և փախչել* առանց ետ նայելու (ՄՍԳՆ, 151): Նման դերում հանդես են գալիս նաև *և՛...և՛, ո՛ւ...ո՛ւ, թե՛...թե՛* կրկնադիր շաղկապները. *Ուզում եմ խոսել* գարունից, պատանությունից, Քո աղջկական սատանությունից՝ Քո սուտ վանումից ու խուսափումից, *Ե՛վ կահավորել* այն տունը գուցե, Որ Քաղսովետից չենք էլ ստացել: *Ե՛վ չհավանել* այն վարագույրդ, Որ չի նվիրել դեռ մորաքույրդ: *Ե՛վ լինել անհոգ, և՛ անդարդ լինել* (ՊՍ, 1, 351):

Այսպիսին է նաև բարբառային *համ-ը*. *Հա՛մ ջահել մնալ ես ուզում, Հա՛մ դառնալ* իմաստուն ծերուկ (ՊՍ, 1, 264):

Կառույցին հավելական իմաստ են արտահայտում *ոչ միայն... այլև, նաև, ևս, այլև, ինչպես նաև* շաղկապները: Իսկ *այլ, և ոչ թե, այլ ոչ թե, ոչ թե...այլ* ներհակական շաղկապներով կապակցվելու դեպքում նույն եղանակավորողով երանգավորվում են հակադիր, ներհակական հարաբերության մեջ եղող գործողություններ ցույց տվող ԱԴ-ներ: Հետաքրքրականն այն է, որ տեսականորեն ունենում ենք բազմակի ԱԴ-ներ, իսկ փաստորեն, տրամաբանական առումով մի ԱԴ-ն է երանգավորված շեշտվում. Դու ինձ *ստիպեցիր ոչ թե խորշել* այդ ամենից, *այլ կարոտել*

(ՊԶԱԵ, 135): Հեշտ է, գուցե, գրքե՞ր գրել, ո՛չ թե կարդալ (ՊՍ, 1, 395): Պետք է իմանալ, այլ ոչ թե կուրորեն հավատալ: Որդին ու դուստրը ծիծաղում էին նրա աղոթելու վրա, որովհետև նա կարող էր վիճել, ձվձվալ, ապացուցել իր արդարությունը և ոչ թե վախենալ աստծուց և աղերսել (ՀՄ, 2, 81):

Կամ, կամ...կամ, կամ թե, կամ էլ, կամ թե չէ տրոհական շաղկապներով կապակցվելու դեպքում բազմակի ԱԴ-երով արտահայտված գործողություններից մեկնումենկն է իրական կամ հնարավոր դիտվում, ինչպես օրինակ՝ Կարող ես սիրել կամ ատել ... (ՊԶԱԵ, 321):

Ուշագրավ է, որ ոճական նկատառումներով, առավել ընդգծելու նպատակով կամ շաղկապով կապակցվում են նույն ԱԴ-ների դրական և ժխտական ձևերը. Օրինակ՝ Ինչպիսի կրքոտությամբ գիտեք մի բան ուզել կամ չուզել, մի բան սիրել կամ չսիրել (ՊԶԱԵ, 143):

Երկբայական կամ թեական (դարձյալ տրոհական) իմաստ է արտահայտում կառույցն այն դեպքում, երբ բազմակի ԱԴ-ները կապակցվում են թե շաղկապով. Գրիգորը չգիտեք հավատա՞լ, թե՞ չհավատալ լսածին (ՄՍԳՆ, 304):

Քան (թե) բաղդատական իմաստ ձևավորող շաղկապով կապակցվելիս ընդգծվում է մի գործողության գերադասությունը, նախընտրելի լինելը. Ես ... գերադասում եմ կրակից հեռու մի փոքր մրսել, քան այրվել նրա մոտիկությունից, Եվ հրաժարվել հյուրասիրվելու սուր ցանկությունից, քան դժվարությամբ կերած մարսել (ՊՍ, 1, 377): Լավ է չունենալ կյանքում տուն ու տեղ, քան թե արվեստում լինել տնփեսա (նտ, 480):

Բազմակի ԱԴ-ներով ձևավորված կառույցն իմաստային գանազան յուրահատուկ նրբերանգներով են օժտում նաև մի շարք արտահայտություններ. Անդրանիկը երկար չարչարվեց, մինչև նրան կարողացավ հանգստացնել, այսինքն՝ համոզել, որ լաց չլինի (ՍԽԱ, 102): Նա, ով չի վազել, անցնել է ուզում, ոչ միայն հասնել (ՊՍ, 1, 264): Ես ուզում եմ նախ հասկանալ, Եվ նո՛ր

միայն քեզ հավատալ (ՀՀԻՂ, 53): Տարե՛ք սրան և չչտապե՛ք սպանել և դրանով իսկ փրկել իսկական պատժից (ՄՍԳՆ, 51): Այս նախադասություններում նման դերում հանդես են եկել այսինքն, ոչ միայն, նախ... նոր միայն, և դրանով իսկ կապակցման միջոցները:

Երբեմն կառույցը ձևավորվում է մի քանի շաղկապներով. Ես կամենում եմ (և ձե՛ր փոխարեն) Ո՛չ թե լոկ մոռալ կամ թե գոմոռալ, Այլ գազանի պես մռնչա՜լ և ազդու (ՊՍ, 2, 208):

Կա նաև հակառակ երևույթը, երբ մեկից ավելի հոմանիշ կամ իմաստային հարաբերակցություն ունեցող եղանակավորողներ երանգավորում են մեկ ԱԴ-ի: Օրինակներ՝ Աչքերս այլևս ոչինչ տեսնել չեն կամենում, չեն ուզում (ՄՍԳՆ, 122): Ես խնդրում եմ քեզ, ոչ, ավելի շուտ պահանջում անել նույնը (նտ, 216): Նա խնդրում է, աղաչում է, ցանկանում է հանդիպել քեզ (նտ, 358): Իհարկե, եթե կարողանամ, և ինձ ականջել ցանկանա, կամենա տերը երկնային (նտ, 176): ...Միշտ ջանում ու ծգտում են ասել Առանց ավելորդ որևէ բառի (ՊՍ, 1, 466): Հնար չեղավ, որ նրանց համոզեն, ստիպեն ետ դառնալ (ՍԽԱ, 43): Նա ստիպված է հաղթել: Պարտավոր է (ՊԶԱԵ, 169): Ե՛վ հաճելի, և՛ ծանր էր ձեռք տալ այդ թղթերին, և ցանկալի, և՛ դառն էր լսել անցած-գնացած օրերի դողանջը (ՎՊՀԲԱ, 256):

Նույն ԱԴ-ի համար բազմակի եղանակավորողներ են դառնում հոմանշային հետևյալ փնջերը, ինչպես օրինակ՝ ուզել... կամենալ, ուզել...ցանկանալ, աղաչել...խնդրել, խնդրել...աղերսել, խնդրել...պահանջել, ստիպել...համոզել, ջանալ...ծգտել, կարողանալ ... ի վիճակի լինել, կարող է ... ի գործու է, խուսափել ... հրաժարվել, ամաչել ...երկնչել, հորդորել ... սպառնալ, ստիպված է ... պարտավոր է, հարկ է ... անհրաժեշտ է և այլն:

Ի տարբերություն բազմակի ԱԴ-ներով ձևավորված կառույցի՝ «բազմակի եղանակավորողներ + ԱԴ» կառույցն ավելի քիչ է հանդիպում:

«Եղանակավորող + ԱԴ» կառույցում հետաքրքրություն է ներկայացնում նաև երկրորդ բաղադրիչի՝ հարադրված ԱԴ-ի կառուցվածքն այն առումով, որ այն միաձև հանդես չի գալիս: Եղանակավորող բայերի ոչ պարտադիր անորոշները կարող են լինել գուգադիր, հարադիր բայեր, անորոշով դարձվածքային կապակցություններ: Օրինակ՝ Ով *ուզում է* իր ջուրն ըմպել աղբրակից, Նա *չի՛ կարող* չխոնարհվել, նա *չի կարող* ծնկի չգալ (ՊՍ, 2, 81): Բայց առայժմ ապրել *է պետք* (ՊՍ, 1, 362): Ուզում եմ շոյել այս արտը հասուն, *Ուզում եմ բռնել* երկնքի ճամփան (ՎԴԱ, 105): *Միտք ունի՞* այլևս հետամուտ լինել Դրախտիկին, անհեռանկար սիրով քար գցել նրա բախտին (ՄՍԳՆ, 228):

Վերոբերյալ նախադասություններում ունենք *«ուզում է ըմպել»*, *«չի կարող ծնկի չգալ»*, *«չի կարող* չխոնարհվել», *«ուզում եմ շոյել»*, *«ուզում եմ բռնել»*, *«պետք է ապրել»*, *«Միտք ունի* հետամուտ լինել», *«միտք ունի քար գցել»*, ուր ԱԴ-ն արտահայտված է համապատասխանաբար պարզ, ածանցավոր համադրական բայով (ըմպել, ապրել, բռնել, շոյել, չխոնարհվել) կամ հարադրական բայով (ծնկի չգալ, հետամուտ լինել, քար գցել. վերջինս դարձվածք է): Այդպիսի բաղադրյալ ստորոգյալ պետք է համարել երկրորդական բաղադրյալ ժամանակներով կիրառվող եղանակավորիչ բայերը և սրանց հետ միավորվող անորոշ դերբայները:

Կազմությամբ պարզ կամ ածանցավոր ԱԴ-ների գործածությունն իմաստային տեսակետից որևէ յուրահատկություն չի դրսևորում: Քանի որ կառույցի հիմնական իմաստը կրողը ԱԴ-ն է, թե՛ իմաստային, թե՛ ոճական առումներով կարևոր է դառնում

նրա մյուս կառուցվածքը: Ուրեմն՝ «Եղանակավորող + ԱԴ» կառույցում ԱԴ-ն՝

Ա. Պարզ կամ ածանցավոր բայ է: Օրինակներ՝ **-ԳՆԵ՞լ ես ուզում** ինձ,- վիրավորվեց Ներսեսը (ՊԶԱԵ, 206): Մուրը **փորձում է** նրան խճճել, խավարն **է փորձում** հայացքը ջնջել (ՌԴԲԲ, 16): Ասենք աշնան տեղակ **փորձեն** գարուն **բերել**, և կամ երկու ամառ միևնույն տարում **բերել**, կամ թե՛ **քամել** մարդկանց արյան շիթը վերջին, հետո նրանց արյունը **բերել** – ծյունների մեջ **ցանել** Յորնահունդը ոսկի, և **հավաքել** բերքը ողկույզներով խոսքի (նտ, 218): **Մոռանալ էր պետք**: Իսկ մոռանալու համար, գիտեի, **հեռանալ էր պետք** (ՎԴ, 1, 100): Մինչդեռ **կուզենայի իմանալ** այնպես համն արշալույսի (ՎԴԱ, 70): Նա կանգնեց այնպես, որ Իոնասը **չկարողանա տեսնել** հրաշագործ Լյուդմիլայի աշխատանքը (ԳՄԾԾ, 23): Իսկ միտքը դաժան էր, ինքը **որոշել էր հեռանալ** Խաչատուրից (ՍԽԱ, 430): Ինքն **սկսել էր վախենալ** մենակությանից (նտ, 158): Օրն **սկսեց բացվել** (նտ, 363): Ես քեզ հետ միանալով, քեզ ամուսին դարձնելով, **ցանկացա** Կարինի հորս տունը **կենդանացնել** (նտ, 437): Եվ **սկսում ես** դու երանորեն **այրվել**, Իբրև մի ինքնական, խոնարհ մի զոհ (ՎԴ, 1, 342): Հանկարծ արջը բերդանի փողը բերանն առավ, **սկսեց կրծոտել** (ԱԲ, 31): Ընդգծված կառույցներում **գնել**, **խճճել**, **ջնջել**, **բերել**, **քամել**, **ցանել**, **հավաքել** բայերը պարզ բայեր են, իսկ **մոռանալ**, **հեռանալ**, **իմանալ**, **տեսնել**, **վախենալ**, **բացվել**, **այրվել**, **կրծոտել**՝ ածանցավոր:

Բ. Բաղադրյալ բայ է (հարադրական, զուգադրական, կրկնավոր): Հարադրական բայով ԱԴ ունեցող «Եղանակավորող + ԱԴ» կառույցն էլ ծավալուն գործածություն ունի: Այս կառույցն առավել բարդանում է, երբ եղանակավորողն էլ արտահայտված հարադրական բայով. այս դեպքում ունենում ենք ծավալուն բայական բաղադրյալ ստորոգյալ. Մեզ **հնարավորություն կտրվի՞** ... հեռացրած հայերին **հավաքել ի մի** (ՍԽԱ, 130): Կառույցում հարադրական բայը ձևավորվում է հիմնականում մի քանի բայե-

րով՝ տալ, լինել, դառնալ, անել, մնալ և այլն: Օրինակներ՝ *Սկսեցին* կարկատելով *կյանք տալ* աշխարհին Հայոց (ՍԽԱ, 76): Մեր պապերը որովայնին հագուդ տալուց առաջ *մտածել են* հագուդի տալ իրենց ճաշակին (ՄՍԳՆ, 287): Ամենագեղեցիկն էր կանանցից, այնքան գեղեցիկ, որ *չէր կարող* իրական ու նյութեղեն լինել (ՊԶԱԵ, 136): Ժողովուրդը խուժեց տները, *սկսեցին* կրակ-ճրագ անել (ՍԽԱ, 259): Որքա՛ն անգամ եմ ես վանել Տխուր մտքերն ինձնից հեռու եվ *վախեցել եմ* միտք անել (անելուց), Որ դու, ... որ դու ինձ չես սիրում (ՊՍ, 1, 123): Ես *ուզում եմ* մենակ մնալ (ՄՍԳՆ, 331): Տե՛ր աստված, հենց որ հայ ազգի բախտը *սկսում է* մի փոքր լույս ստանալ, ահեղ ձեռքերն են շտապում դա հանգցնելու (*շտապել*-ն այստեղ «փորձել» իմաստով է եղանակավորիչ) (ՍԽԱ, 225): Մեկն *սկսեց* զուռնա փչել (նտ, 126): Սրանք ահով նայեցին հեծելագորին, սակայն *շտապեցին* երեսներին խաչ քաշել (նտ): *Ուզում եմ* գրի առնել անցած կյանքիս փշրանքները (նտ, 414): Նրանց *չէր կարողանում* կարգի կոչել անգամ սթափությունը և ամենադավադիրը՝ վախը (նտ, 44): Ես կծիծաղեի բոլոր նրանց վրա, ովքեր *ջանում են* գոնե մի աթոռով առաջ գնալ (ՊԶԱԵ, 166):

ԱԴ-ն կարող է արտահայտվել նաև տալ բայով ձևավորված պատճառական բայով. Գերմանիան ու Թուրքիան *կաշխատեն* Արևմտյան Հայաստանը դատարկել տալ մեր զորքերից ևս (ՍԽԱ, 225):

Լինում են դեպքեր, երբ հարադրական բայ-ԱԴ-ի բաղադրիչները նույն արմատով են կազմված. Ոչ էլ նրանք *կհամարձակվեն* իրենց անսուրբ բերանով խոսք խոսել աստծո հետ (ՄՍԳՆ, 342):

Կառույցում ԱԴ-ն արտահայտվում է նաև զուգադրական կամ կրկնավոր բարդություններով: Զուգադրական բայերով օրինակներ՝ Ծիածանը *որոշեց* գնալ տեսնել իրենց տունը (ՍԽԱ, 211): Դեպքերն *սկսեցին* կծկվել ուռճանալ (նտ, 415): Մինչև Կարին հարյուր երեսունհինգ վերստ է, երկու օրում *կարելի է* կտրել-

անցնել այդ ճանապարհը (նտ, 205): *Ուզում է գրկել-համբուրել* նրան (ՊՍ, 1, 124): Կրկնավոր բայերով օրինակներ՝ Մինչդեռ նա *շարունակում էր նայել ու նայել* (ՄՍԳՆ, 102): *Ուզում եմ* նաև հանել մի առու մազերիդ հոսքից Ու տանե՜լ-տանե՜լ... (ՊՍ, 1, 233):

Գ. Դարձվածք կամ դարձվածային արտահայտություն է, ուր գլխավոր բաղադրիչը դարձյալ ԱԴ-ն է: ԱԴ-ն դարձվածային միավոր է. դարձվածային արտահայտություն կամ դարձվածք: ԱԴ-ն դարձվածային արտահայտություն է. ոչ դարձվածք. Ես *ուզում եմ* ուշադրության կենտրոնում լինել (ՊԶԱԵ, 172): *Ուզում ես* մոտենալ, մի բարի խոսք ասել գլանակ վաճառող ծերուկին (ՊՍ, 1, 189): Եթե *ուզում ես* մեկին երիցս անիծել, թող փոքր ազգի թագավոր դառնա (ՊԶԱԵ, 147): Ես *փորձում եմ* գոնե քիթս բռնել (ՊՍ, 1, 305): ԱԴ-ն արտահայտված է դարձվածքով. Կտրի՛ր անարժանիս լեզուն, որ *հանդգնում է* արևի վրա սև բծեր տեսնել (ՄՍԳՆ, 373): Ինքն իրեն սիրտ տալ *սկսեց* (ԱԲ, 42): Խռովահույզ մի տագնապով *սկսում էր* սիրտս խաղալ (ՊՍ, 1, 48): Ո՞ւմ ջրերն էինք կտրել, ո՛վ լուսին, Որ արմատից *են* մեզ կտրել *ուզում* (ՀՇՀԴ, 190): Այսպես խոսողը *ճգնում է* չափ ու կշռի ենթարկել մեր հողի մեր պատմության վրայով անցած հազարամյակների ռիթմը: Մեր ազգի առաջնորդները *չկարողացան* մեր արդար պայքարը մեծ ճանապարհի վրա դնել... (ՍԽԱ, 153): Ամեն տեղ *չպետք է* քիթ խոթել (նտ, 217): Իրերի վիճակը փոխվել է, *պետք է* նոր շապիկ հագնել (նտ, 378): Ամենից նողկալին այն է, որ Թուրքիան *կաշխատի* լեզու գտնել Անգլիայի հետ (նտ, 331): Ինչպե՞ս *ես համարձակվում* ռեխո ցրիվ տալ (նտ, 31): Ների՛ր նվաստիս, եթե *հանդգնում եմ* քո դեմքին ասել (ՎԴԱ, 70): Եվ այդ բախտը *չէր կարող* երկու ձեռքերի մեջ մնալ (ՊԶԱԵ, 202): *Պատրաստ էր* անգամ վերջին շապիկը տալ (նտ, 193): Թե *կարողանար* ինչ-որ հրաշքով իր սիրտը բացել, Երևի պատմեր... (ՎԴ, 1, 293):

Երբ արդեն քննության են առնված կառույցի հետ կապված շատ ու շատ հարցեր, երբ տարբերակված են ենթակառույցներն ու մասնակառույցները, եղանակավորողների իմաստային դաշտերը, ԱՂ-ի հետ առնչվող շատ հարցեր պարզաբանված են, անհրաժեշտ է դառնում խոսել նրա նկատմամբ մեղանչումների, նրա ոչ ճիշտ ձևավորման մասին: Այստեղ «մեղանչում» բառի գործածումը խիստ պայմանական է, քանի որ շատ դեպքերում դրանք զարգացման միտումների սաղմնավորվող էության դրսևորում են դառնում: Այս հարցն արդեն տարբեր առիթներով ուշադրության առարկա է դարձել, բազմիցս մատնանշվել է, որ կառույցում ԱՂ-ի թեք ձևերի դեպքում չենք պնդում նրա ստորոգյալ լինելը: Այստեղ թեք ձևերի համար խոշոր վերապահումն առավել ևս է շեշտվում:

Չպետք է մոռանալ նաև, որ մի խումբ լեզվաբաններ նույն բայի կողքին ԱՂ-ի ուղիղ ձև լինելիս եղանակավորող են դիտում, թեք ձև լինելիս՝ շարահյուսական կապակցություն: Մյուս կողմից՝ հեշտությամբ արձանագրում ենք, որ սկզբնապես եղել են, ասենք, «ստիպում է հեռանալու», «որոշում է միանալու», բայց այսօր ԱՂ-երի թեք ձևերը *ստիպել, որոշել* եղանակավորողների կողքին սխալ են, և լեզվական նորմը սահմանում է՝ սրանց կողքին ճիշտ են ուղիղ ձևերը: Բայց դժվարանում ենք ասել, որ նույն նորմով սահմանված «պատրաստվում է գնալու», «խուսափում է գնալուց» և նմանատիպ այլ կառույցներում օրինաչափական են դառնում դրանց ուղիղ ձևերով գործածությունները, գուգաձևությունների փոխում են: Մի բան պարզ է՝ վերջին դեպքում եղանակավորող-եղանակվորվող հարաբերությունը չի ընդ-

գծվում: Տվյալ պարագայում հարցն ուսումնասիրվում է զուտ գործող լեզվական (շարահյուսական) նորմի տեսանկյունից (նկատված շեղումները ներկայացվում են որպես «Ծանոթություն» կամ հղվում են տողատակում):

Պետք է ասել, որ այս հարցը միշտ էլ ուշադրության կենտրոնում է եղել թե՛ ձևակազմական, թե՛ շարահյուսական առումներով: Բնականաբար՝ կան հիմնավորվել է, կան չի հիմնավորվել, կան ուղղակի արձանագրվել է: Կարծում ենք՝ այս դեպքում ճիշտ կլինի ուղղակիորեն մեջբերել լեզվաբանական տարբեր աղբյուրներում հայտնված կարծիքները, և սա լեզվաիրազեկչականից բացի կդառնա նաև վիճակագրության նման մի բան՝ պարզելու թե արդի լեզվաիրավիճակում ի՞նչ համամասնությամբ են երկբևեռվում, ինչքանո՞վ են դրանք տարբերվում և նմանվում, ո՞վ ինչպես է փորձում հիմնավորել այն, և որքանո՞վ են դրանք համապատասխանում արդի լեզվամտածողությանը:

1. Մ. Աբեղյանը գրում է. «Անորոշ դերբայն իբրև բայանուն իր հոլովով կախված է խնդրառու բայից, բայց երբ այդ դերբայն անհոդ է, հաճախ տրական և հայցական հոլովներն իրար հետ շփոթվում են գրաբարի և օտար լեզուների ազդեցությամբ... Այդպես և մի քանի բայերի հետ, որոնք բացառական հոլովով խնդիր են առնում... Սովորաբար թե՛ բացառական, և թե՛ հայցական կամ տրական հոլովով է դրվում անորոշ դերբայը»¹⁰⁵ :

2. Հր. Աճառյանը, խոսելով դերբայների հոլովման մասին, այդ թվում նշելով նաև անորոշը, չի տարբերակում նման խնդիրների ճիշտ կամ սխալ ձևավորումները: Իհարկե, փակագծերում նշում է, թե ուղիղ ձևը որի՞ փոխարեն է գործածվել, բայց չի շեշտում, որ նման բացարձակ գործածությունները սխալ են: Նա գրում է. «Դերբայը առնվելով գոյականաբար՝ հոլովվում է, բայց զանազան հոլովների փոխարեն կարող է մնալ անփոփոխ, օրինակ՝ Նա արտասովոր պահանջ զգաց՝ տեսնել ու խոսել որևէ

¹⁰⁵ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 465:

մեկի հետ (Սիրաս, 2գրված օրենք, 59), սեռ. Արտակարգ ցանկություն զգաց ավելի երկար ու ավելի մտերմորեն խոսել նրա հետ (էջ 61), սեռ.՝ (խոսելու): Սիրտ չարավ այլևս որևէ բան հարցնել (էջ 62), սեռ.՝ (հարցնելու). Մուշեղի լրջությունը նրան զրկում էր ավելի առաջ գնալ (էջ 88), բացառական՝ (գնալուց). Խուսափում էր մարդկանց, մանավանդ ծանոթներին հանդիպել (էջ 52), բացառական (հանդիպելուց)»¹⁰⁶ :

3. Ըստ Հ. Հարությունյանի՝ տարբերակային ձևեր ունեցող բայերը գոյականով լրացում առնելիս կանոնավորապես պահանջում են տրական և բացառական հոլովներ, սակայն երբ գոյականի փոխարեն գործածվում է անորոշ դերբայ, հոլովառությունը տալիս է տատանումներ՝ հոգուտ ուղղականի: Նշանակում է՝ սա նկատելի միտում է: «Անորոշ դերբայով լրացում պահանջող բայերի զգալի մասն ունի կառավարման տարբերակներ՝ պահանջում է հոլովական տարբեր արտահայտություն ունեցող անորոշ դերբայով լրացումներ: Որոշակիորեն նկատելի է, որ ժամանակակից հայերենում միտում կա անորոշ դերբայի թեք հոլովաձևերի փոխարեն առնել ուղիղ ձև»¹⁰⁷, - գրում է Հ. Հարությունյանը:

4. Գ. Զահուկյանը թերևս միակն է, որ բայերի արժույթային դասակարգման, նրանց հետ կապվող միավորների բնույթի և արժույթի դրսևորումներից մեկի՝ խնդրառության մասին խոսելիս առանձնացնում է նաև **դերբայառությունը**՝ անորոշ դերբայ ստանալը կամ չստանալը: Անորոշ դերբայ ստացողներից մի շարքի մասին գրում է. «Զգալի թիվ են կազմում –վ-ով բայերը, որոնք սովորաբար պահանջում են տրականով, երբեմն էլ անփոփոխ ձևով անորոշ դերբայ՝ **հարկադրվել (գրելու, գրել), մտադրվել (գրելու, գրել), նպատակադրվել (գրելու, գրել), պատրաստվել**

¹⁰⁶ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 2005, էջ 320:

¹⁰⁷ Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 202:

(գրելու), պարտավորվել (գրելու, գրել), ստիպվել (ստիպված լինել) (գրելու, գրել)¹⁰⁸: Պարզից էլ պարզ է, որ նշված են տարբերակային ձևերը. միայն զարմանալի է, որ **պատրաստվել**-ի կողքին միայն տրականաձև ԱԴ է՝ **գրելու**: (Թվարկված բայերի կողքին սա կարելի է և բացթողում համարել): Կամ գրում է՝ «Ավելի լայն մեկնաբանության դեպքում բառ-մասնիկներ պետք է համարվեն նաև անորոշ դերբայի հետ գործածվող այն դիմավոր ու անդեմ բայաձևերը, որոնք արտահայտում են եղանակային, կերպային և այլ իմաստներ՝ **ուզում եմ (զնալ)**, **հարկավոր է (զնալ)**, **սկսեց (քայլել)**, **դադարեց [քայլել(ուց)]**, **շարունակում է (զնալ)** և այլն»¹⁰⁹: Կամ՝ «Անորոշի հետ գործածվող բայերը հարաբերակից են եղանակային և կերպային իմաստ ունեցող ածականներին՝ տիպարային և կերպային տարբերությամբ՝ **պատրաստ եմ գրելու** – **պատրաստվում եմ գրելու**, **պարտավոր եմ գրել** – **պարտավորվում եմ գրել** և այլն: Այս տիպի ածականները պետք է դիտել որպես ստորոգական ածականներ»¹¹⁰: Վերջին միտքը ընդգծելով մենք ևս կարող ենք ընդգծել՝ անորոշի հետ գործածվող եղանակային և կերպային իմաստ ունեցող ածականներին հարաբերակից բայերը պետք է դիտել որպես ստորոգական դիմավոր բայեր: Իսկ այն, որ լեզվաբանը նույն բային զուգորդված ԱԴ-ի տարբեր ձևերը կողք կողքի է դնում, «ճիշտ և սխալ» չի անում, վկայում է սուսկ այն մասին, որ թեք ձևերի փոխարեն ԱԴ-ների ուղիղ ձևերի գործածությունը ժամանակակից հայերենում օրինաչափական է, ուղղակի լեզվական նորմում պետք է սահմանվի սրանց՝ կանոնական զուգաձևություններ լինելու իրողությունը, որը, կարելի է ասել, այսօր զուտ լեզվաշինական (տեխնիկական) հարց է:

¹⁰⁸ **Զահուկյան Գ.**, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 472:

¹⁰⁹ **Զահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 381:

¹¹⁰ **Զահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 472-473:

5. Գ. Գարեգինյանը, խոսելով սեռային տեղաշարժերի և անորոշ դերբայի խնդրառական կիրառությունների մասին, նշում է, որ անորոշ դերբայն ավելի ու ավելի է հոլովական անհամաձայնություն ցուցաբերում իր գերադաս բայի նկատմամբ՝ հանդես գալով ուղիղ ձևով¹¹¹: Իհարկե, այստեղ որոշակի թյուրիմացություն է առաջացնում «հոլովական անհամաձայնություն» եզրութակապակցությունը. եթե դիմավոր բայի և ԱԴ-ի միջև հոլովական համաձայնություն կա, նշանակում է հեղինակը հակված է այն բաղադրյալ ստորոգյալ համարել, հակառակ դեպքում խոսքը պիտի կառավարման մասին լիներ...

6. Դրանք շարահյուսական համանիշներ է համարում Մ. Ասատրյանը. «Ժամանակակից լեզվում մի շարք դեպքերում փաստորեն կանոնական է անորոշի սեռական-տրական (բուն տրական) ձևի հետ միաժամանակ նաև ուղիղ ձևի գործածությունը, և այսպիսով, անորոշի ուղիղ ձևը և սեռական-տրական հոլովաձևը որոշ կապակցությունների մեջ շարահյուսական համանիշներ են»¹¹²: Նույնը ասվում է անորոշ դերբայի ուղիղ և բացառական հոլովաձևերով զուգաձևերի մասին: Հաճախ անորոշ դերբայը գոնե իր ձևով որպես խնդիր կախված չէ խնդրառու բայից և, անկախ այդ բայի սեռական-տրական (բուն տրական) կամ բացառական խնդրառությունից, գործածվում է ուղիղ, անփոփոխ ձևով, և հայ քերականագիտության մեջթեք հոլովաձևի փոխարեն ուղիղ ձևով գործածված անորոշը կոչվում է բացարձակ անորոշ կամ բացարձակ աներևույթ: Բայ + անորոշ դերբայ կառույցներն արժեքավորելով ըստ անորոշի կախվածության և ձևավորվածության՝ նա ընդգծում է, որ երբ անորոշն իր «հոլովական ձևով կախված չէ խնդրառու բայից», «զուրկ է հոլովի քերականական կարգից, և դիմավոր բայի հետ կազմում է մի միաս-

¹¹¹ Տե՛ս՝ Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973, էջ 317:

¹¹² Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի հարցեր, Կ, Բ, Երևան, 1973, էջ 240:

նական բաղադրյալ ստորոգյալ»¹¹³: Նման դեպքերում այն ունի սոսկ գործողության, ընթացքի իմաստ և չի արտահայտում բայանվանական նշանակություն և պատասխանում է **ի՞նչ անել** հարցին: Լեզվաբանը գրում է. «Անորոշ դերբայը արդի հայերենում իր ուղիղ ձևով կարող է խնդիր լինել նաև չեզոք բայերի, ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները. Ու չի դադարում երգի հետ վարար Կախեթի գինին խելագար հոսել» (ՀԹ): Վախենում եմ ասել», «Ամաչում եմ ներս մտնել», «Չհամարձակվես տեղիցդ շարժվել», Նա համաձայնեց մեզ հետ աշխատել», «Նա հանդգնեց մեզ անպատվել», «Նա շտապեց սեղան բացել» և այլն: Նա հակադարձում է Գ. Ներսիսյանին, ասելով՝ փոխանակ լեզվական զուգահեռ ձևերի բացատրությունը տալու, եթե իրոք դրանք հավասարանշանակ են և հավասարաչափ գործածվում են, փոխանակ որոշելու այդ ձևերի գործածության և գոյության պատճառները, ձևերից մեկը համարում է ճիշտ, իսկ մյուսը անհիմն կերպով համարում սխալ՝ ազգի՝ աշակերտների, ոսուցիչների, գրողների, ընդհանրապես հայոց լեզվով խոսողների անգրագիտության արդյունք»¹¹⁴: «Ժամանակակից հայոց լեզու» բուհական դասագրքում շեշտվում է նույն իրողությունը. «Գործողության հետ համատեղելով առարկայական նշանակություն՝ անորոշ դերբայը որպես բայանուն իր հոլովական ձևով կախված է խնդրառու բառից, այսինքն՝ որպես բայից կախված լրացում դրվում է այն հոլովական ձևով, ինչ գոյական լրացումը, օրինակ՝ (**մոռանալ, խոստանալ, ձգտել, վարժվել, ամաչել, վախենալ...**): Սակայն անորոշ դերբայն ունի կիրառական այն առանձնահատկությունը, որ անորոշի ուղղական հոլովածևը հաճախ գործածվում է տրականի ու բացառականի փոխարեն, և այսպիսով լեզվում գործառնում են «բայ + անորոշի տրական հոլով // ուղղական

¹¹³ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 243:

¹¹⁴ Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959, էջ 49-50:

հոլով» և «բայ + անորոշի բացառական հոլով // ուղղական հոլով» զուգահեռ բառակապակցությունները»¹¹⁵ :

7. Վ. Քոսյանը ևս խոսում է տարբերակային ձևերի մասին, այն կապակցությունների, «որոնցում անորոշ դերբայը շեղվում է իր սովորական ձևերից», և դա բացատրում է այլ լեզուների համապատասխան կառուցվածքների ազդեցությամբ, դիտելով անհանձնարարելի ձևեր. «Շեղումը հիմնականում դրսևորվում է տրական-հայցական հոլովներում՝ պայմանավորված բայերի խնդրառական առանձնահատկություններով և բայական բաղադրյալ ստորոգյալի, ինչպես և այլ լեզուների համապատասխան բառակապակցությունների ազդեցությամբ», - գրում է Վ. Քոսյանը¹¹⁶:

8. Ն. Պառնասյանը խնդրի վերաբերյալ հետևյալ դիտողությունն ունի. «Գեղարվեստական գրականության մեջ երբեմն տրականով նպատակի պարագային համանիշ գործածվում է անորոշ դերբայի հայցական հոլովը, հատկապես այն դեպքերում, երբ ան լրացնում է ոչ թե ստորոգյալին, այլ վերջինիս համար նպատակի պարագա հանդիսացող տրական հոլովով դրված անորոշ դերբայի. օրինակ՝ Ամեն միջոցի դիմեց հրապուրելու և համոզելու ինձ մնալ Թուրքիայում (ՎՓ, ՀՀ, 207): ...Բերված օրինակներում կողմնակի նպատակի պարագաները կարող են գործածվել նաև տրական հոլովով, սակայն այս դեպքում ոճը կդառնա անհարթ (հմմտ. «Համոզելու և հրապուրելու ինձ մնալու...): Երբեմն հայցական հոլովով է դրվում նաև նախադասության բուն նպատակի պարագան, սակայն այդ կիրառությունն այժմ հնացած է. օրինակ՝ Թողնենք ուրեմն նրան զվարճանալ առայժմ յուրայինների հետ (Մ, 5, 15): Ծանոթություն. - Երբ **պատրաստվել** բայի մոտ նպատակի պարագան անորոշի տրա-

¹¹⁵ **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, (Շարահյուսություն), Երևան, 1987, էջ 97:

¹¹⁶ **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 461:

կան հոլովաձևի փոխարեն գործածվում է հայցական հոլովով, մասամբ կորցնում է նպատակային հարաբերություն դրսևորելու արժեքը՝ վերածվելով բաղադրյալ ստորոգյալի մասի: Հմնտ. Հասկացավ, որ ավանում պատրաստվում են շահին դիմավորելու – Պատրաստվում են շահին դիմավորել»¹¹⁷ :

9. Ռ. Իշխանյանը գրում է. «Անորոշ դերբայն այս խնդրի միևնույն դիրքում կարող է հանդես գալ նաև ուղիղ ձևով. Օրինակ՝ «Պետք է պատրաստվես ընդառաջ գնալու» և «Պետք է պատրաստվես ընդառաջ գնալ»... Հասկանալի է, որ այս **գնալ, աշխատել, մեկնել** ձևերը տրական հոլովով անուղղակի խնդիրներ չեն: Որ տրական հոլովով դրված անորոշ դերբայի վերը բերված գործածությունը անուղղակի խնդիր է, պարզվում է նաև փոխակերպումով. օրինակ՝ «Նախապատրաստվեցինք լսելու» նախադասության մեջ անորոշ դերբայը կարելի է փոխարինել գոյականով՝ «Նախապատրաստվեցինք ընդունելության»: Այստեղ **ընդունելության** տրական հոլովով անուղղակի խնդիր է, ուրեմն և նույն դիրքում նույն հոլովով անորոշ դերբայն էլ անուղղակի խնդիր է... Բայց ամեն դեպքում չէ, որ այսպիսի փոխակերպում հնարավոր է կատարել: Անորոշ դերբայով արտահայտված անուղղակի խնդիրը ճանաչվում է նաև բացառման եղանակով: Այսպես, եթե տրականով դրված լրացումը մականուն չէ, նպատակի պարագա չէ, վերադիր չէ, սեռի խնդիր չէ և այլն, ուրեմն անուղղակի խնդիր է»¹¹⁸: Անորոշ դերբայն անջատման անուղղակի խնդրի դերում ևս ունի զուգահեռ տարբերակ՝ ուղիղ ձևով: Ուղղական հոլովով դրված անուղղակի խնդիրները 2 տեսակ է առանձնացնում՝ տեղի անուղղակի խնդիր և անորոշ խնդիր («բացարձակ անորոշ»): «Այս դեպքում մենք գործ ունենք միայն անորոշ դերբայի՝ որպես բայի լրացում հանդես գալու մի դեպքի հետ, երբ այդ դերբայն ուղիղ ձևով է դրվում: Արդեն գի-

¹¹⁷ Պառնասյան Ն., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, էջ 295-296:

¹¹⁸ Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն, Երևան, 1986, էջ 208-209:

տենք, որ տրական և բացառական հոլովներով դրված անորոշ դերբայ անուղղակի խնդիրներն ունենում են զուգահեռներ՝ ուղիղ ձևով: Հիշենք՝ «Մայրը պատրաստվում է գնալու» և «Մայրը պատրաստվում է գնալ», «Մայրը խուսափում է գնալուց» և «Մայրը խուսափում է գնալ»: Հայերենում այս կարգի զուգահեռ ձևավորումը՝ տրական-ուղղական, բացառական-ուղղական, հատուկ է միայն անորոշ դերբային: Կարծիք կա, որ յուրաքանչյուր զուգահեռի տրական կամ բացառական հոլովաձևում դրսևորվում է անորոշ դերբայի ավելի շատ գոյականական հատկանիշը, ուղիղ ձևում՝ ավելի շատ բայականը: Նույն լրացումների դերում գոյականը միշտ միաձև է լինում (չունի զուգահեռ ձևավորում): Այս է պատճառը, որ անորոշ դերբայի զուգահեռ ուղիղ ձևը անվանում են բացարձակ աներևույթ կամ բացարձակ անորոշ, այսինքն՝ անորոշ դերբայն իբրև դերբայական, չհոլովված վիճակում: Թեև հիշյալ անվանումները, հատկապես առաջինը, այսօր հնացած են, բայց այս դեպքում էլ կարևորն անունը չէ, այլ այն, որ թե՛ տրական, թե՛ բացառական և թե՛ ուղիղ ձևով դրված այդ միավորները ակնհայտորեն դիմավոր բայի լրացում են... Այլ խոսքով, յուրաքանչյուր դեպքում ունենում ենք միևնույն բայի միևնույն բովանդակությունն ունեցող երկու ձևի լրացում, նույնանիշներ՝ մի դեպքում տրական և ուղղական, մյուս դեպքում՝ բացառական և ուղղական... Ինչպես տեսնում ենք, առկա են ուղղական հոլով անորոշ դերբայի՝ իբրև դիմավոր բայի լրացում հանդես գալու երկու տարբերակներ՝ 1) զուգահեռ ձևերով հանդես եկող լրացում (տրական-ուղղական կամ բացառական-ուղղական), 2) զուգահեռ ձև չունեցող, միաձև (միայն ուղիղ ձևով կամ ուղղական հոլովով) լրացում: Երկու դեպքում էլ անորոշ դերբայի ուղիղ ձևով կամ ուղղական հոլովով դրված այս լրացումներն անուղղակի խնդիրներ են: Այս լրացումը պայմանականորեն անվանում են **անորոշ անուղղակի խնդիր**»¹¹⁹ :

¹¹⁹ Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 219-220:

10. Արտ. Պապոյանի կարծիքն այսպիսին է. «Չենք կարող չնշել, որ բարդ կոչված ստորոգյալի ըմբռնման մեջ ևս առկա են վիճելի դրույթներ: Ոչ սակավ դեպքերում ստորոգյալները կազմվում են որպես սխալ ու մերժելի խնդրառության (կառավարման) արդյունք: Այսպես՝ «Անգոր էր հասկանալ» և «Ուրախ եմ ծանոթանալ» նախադասությունները համարված են ամբողջական մեկական բարդ ստորոգյալներ, մինչդեռ դրանք սխալ խնդրառության հետևանք են. պետք է լինեին՝ «Անգոր էր հասկանալու» և «Ուրախ եմ ծանոթանալու», այսինքն՝ սովորական բաղադրյալ ստորոգյալներ (ուրախ եմ, անգոր էր)՝ համապատասխան լրացումներով՝ դրված անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով: Ինչ վերաբերում է բերված բնագրային վկայություններին, թեև դրանք տարածված են, սակայն ակնհայտ օտարաբանություններ են, ռուսերենից բառացի պատճենման արդյունք, ուստի և մերժելի են: Բնավ կարիք չկա դրանք օրինականացնել, վրան էլ տեսություն մշակել¹²⁰:

11. Պ. Բեդիրյանը եվրոպական ծանոթ լեզուների համեմատությամբ հայերենի անորոշ դերբայի հոլովվելու մասին խոսելիս շեշտում է, որ այսօր արդեն, կարելի է ասել, թարգմանությունից էլ անկախ՝ շատ –շատերը «մոռանում են օգտվել» հայերենի այս առավելությունից: Մոտեցումը խիստ է. «Եվ չարաչար սխալվում են: Ամբողջ հարցն այն է, որ եթե այդպես շարունակվի, կամա թե ակամա, հայերենի կառույցներից մեկը կխախտվի»¹²¹: Նա մեջբերում է մեր լեզվի այս կարևոր առանձնահատկությունը ցուցահանող մի քանի կարևոր կետեր: **Հրաժարվել, դադարել, խուսափել, խույս տալ, վախենալ, հոգնել, զգուշանալ, ամաչել, հեռու լինել** բայերի կողքին ճիշտ է համարում անորոշի բացառականով ձևերը, **պատրաստվել, օգնել, պատրաստականություն հայտնել, պատրաստ լինել, խանգարել, հնարավորություն տալ,**

¹²⁰ Ա. Պապոյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2007, էջ 732:

¹²¹ Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը (Գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց), Երևան, 2007, էջ 124:

հնարավորություն ունենալ, իրավունք ձեռք բերել, իրավունք տալ, նպատակ ունենալ, մտադրություն ունենալ, ընդունակ լինել, անկարող լինել, ունակ լինել, ի վիճակի լինել, լիազորվել, հավակնել, հակված լինել, իրավասու լինել, նպաստել, սատարել, բախտ վիճակվել, փորձ արվել, ուժ գտնել, ցանկություն առաջացնել, միտվել հարկ լինել (=հարկ չկա), կարիք լինել (կարիք չկա) բայերի կողքին՝ անորոշի տրականով ձևերը: Իսկ փորձ անել, փորձել, թույլ տալ, արտոնել, մտադիր լինել (=մտադիր է), սպառնալ, հարադրված լինել, հարկադրվել, խորհուրդ տալ, պարտավոր լինել (=պարտավոր է), նախատեսել, զլանալ բայերի կողքին ճիշտ են անորոշ դերբայի միայն ուղիղ ձևերը¹²²: Այնուամենայնիվ, փակագծերի մեջ ավելացնում է. «Մեր օրերում ստիպված լինել=ստիպվել բայի կողքին, գրեթե հավասարապես, թե՛ -ել / -ալ, թե՛-ելու /-ալու ձևեր են դնում. «Ստիպված եմ գնել կամ գնելու»: Աստիճանաբար կարծեք թե առաջինն է տիրապետող դառնում»¹²³:

12. Կառույցի տարածված լինելը («սխալների անսանձ տարածումը») հայոց լեզվի տրամաբանության մեջ որևէ հենարան չունեցող, լեզվաբանական գիտության թերացում, անթույլատրելի շեղում, կիրառական լեզվաբանության՝ բայերի արժույթների իրացման եղանակներից ետ մնալու գործոններով է բացատրում Դ. Սաքայանը¹²⁴:

13. Հստակ է Լ. Թելյանի դիրքորոշումը. բացարձակ աներևույթը չի հակասում արդի հայերենի կանոնին և պետք է ներկայացվի որպես բայական խնդրառության մի օրինաչափ դրսևորում»: Նա տարբեր արժեքի դիմավոր բայերի (ուզել, սիրել, ձգտել, հրաժարվել...) կամ ածական վերադրով (դժվար, անհրաժեշտ, հաճելի ...) և խնդրառական հարաբերությամբ

¹²² Տե՛ս՝ **Բեդիրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 124-131:

¹²³ **Բեդիրյան Պ.**, նշվ.աշխ., էջ 129:

¹²⁴ **Սաքայան Դ.**, խնդրառության մի քանի հարցեր, «Ջափուկյանական ընթերցումներ», Երևան, 2014, էջ 180:

նրանց լրացնող ԱԴ-ով բաղադրյալ ստորոգյալների կադապրային իրացումները խմբավորում է՝ նկատի ունենալով գերադաս (դիմավոր) բայի քերականական և իմաստային հատկանիշները՝ 1. Դիմավոր բայը ներգործական սեռի է և ուժեղ խնդրառությամբ պահանջում է ուղիղ խնդիր. անորոշ դերբայն այս դիրքում միշտ ուղիղ ձևով է, գերազանցապես առանց հոդի: Անորոշի դիրքում կարող է հանդես գալ գոյական (կամ դերանուն)՝ ուղղական կամ տրական (հայցական) հոլովով (սիրում է երգել – սիրում է բանաստեղծություն, սկսել..., շարունակել..., սովորում է..., մոռացել է): 2. Խնդրառու դիմավոր բայը սովորաբար չեզոք սեռի է և բայիմաստով պայմանավորված ուժեղ խնդրառությամբ պահանջում է տրական կամ բացառական հոլովներով ձևավորված խնդիրներ: Գոյական (կամ դերանուն) խնդրի դեպքում նշված հոլովները միակ հնարավոր ձևերն են, մինչդեռ նույն դիրքում անորոշ դերբայը ի հայտ է բերում գործառական երկվություն. այն կարող է դրվել նշված (տրական, կամ բացառական) հոլովներով՝ ենթարկվելով խնդրառական կանոնին, կամ էլ դրվել ուղիղ ձևով՝ «չինազանդվելով» խնդրառու բայի պարտադրանքին (**պատրաստվել, ձգտել, հրաժարվել, հակվել, վախենալ**): «Չինազանդվող» անորոշ դերբայներն էլ հենց քերականական ավանդույթով «բացարձակ աներևույթ» կամ «բացարձակ անորոշ» կոչվածներն են: 3. Խնդրառու բայը գոյական կամ դերանուն խնդիրների հետ չի կապակցվում և ունենում է միայն անորոշ դերբայի ուղիղ ձևով արտահայտված լրացում (**համարձակվել, աշխատել, կարողանալ** և այլն)¹²⁵: Լ. Թեյանը գրում է. «Այսօրվա լեզվական վիճակը, այնուամենայնիվ, թույլ է տալիս արձանագրել, որ Աբեդյանի նշած «ընդհանուր կանոնից» շեղումներն այնքան են տարածված, որ հիմք կարող են դառնալ մի այլ օրինաչափության հաստատման: Դա այն է, որ, անկախ

¹²⁵ Տե՛ս՝ **Թեյան Լ.**, «Բացարձակ աներևույթի» գնահատման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի (Հայագիտություն), 3, Երևան, 2015, էջ 44-45:

օտար ազդեցության գործոնից, անորոշի ուղղականաձև կիրառությունները խորթ չեն հայոց լեզվի ոգուն և կառուցվածքին, դրանցում գերակշռում է անորոշի բայական էությունը, ինչը հատուկ է նաև ռուսերենին և այլ լեզուների... Բացարձակ աներևույթի՝ շարահյուսագիտական տարբեր աշխատություններում եղած նկարագրությունները, կառույցի համատարած գործածությունը գրողների, մտավորականության խոսքում արդյոք հիմք չե՞ն տալիս ասելու, որ գործ ունենք հայերենի շարահյուսական կանոնի մեջ արդեն իսկ արմատ նետած կառույցի հետ՝ անկախ իր բնիկ կամ օտարածին լինելուց»¹²⁶:

Միանգամայն հասկանալի է, որ լեզվաբաններից շատերն են ուշադրություն դարձրել դիմավոր բայի հետ զուգորդված անորոշ դերբայի ձևավորմանը, տարբեր կերպ անվանել այն՝ **ստորոգյալի մաս կամ բաղադրիչ, ստորոգելի, բացարձակ աներևույթ կամ բացարձակ անորոշ, անորոշական խնդիր**։ տրամաբանական է, որ կարող էր լինել և **անորոշական պարագա** եզրույթը:

Անկարելի է հերքել, որ գիտականորեն է գնահատվել և գնահատվում կառուցը, թեև այդ գնահատականը մի դեպքում խիստ է, մյուս դեպքում՝ մեղմ, երրորդ դեպքում՝ չեզոք կամ վերապահությամբ արված: Մի բան, սակայն, անժխտելի է. լեզվաբանական մտասկեռումն ուղղորդված է ԱԴ-ի՝ թեք ձևերի փոխարեն՝ ուղիղ ձևով գործածության դեպքերին, և այս իրողության գիտական հիմնավորումն ու օրինականացումը (նորմավորման դաշտ բերելը) վերջնականապես թույլ կտան կառույցը մի ամբողջական շարահյուսությո դիտել, իսկ ԱԴ-ի տարբերակային ձևերի դեպքում՝ իմաստարժեքային փոխանցման տարանցողիկ օղակ (որպես շարահյուսական զուգաձևություններ կամ քերականական համանուններ): Նորմավորման գործընթացում, բնականաբար, առաջին քայլը պետք է լինի քննության նյութ դարձած

¹²⁶ Լ. Թելյան, նշվ. տեղում, էջ 50:

կառույց-գուգորդումը «Ճիշտ է» և «Ճիշտ չէ» չափորոշչային ցուցիչով (հղումով) մաքրել մեր լեզվի ներքին զարգացմանը խանգարող սխալ գործածություններից: Երկրորդը՝ լեզվագիտական տարբեր աղբյուրներում եղած նյութերն ընդհանուր հայտարարի բերել: Երրորդը՝ լեզվական նույն իրողությունները դիտարկել կենդանի խոսքում և այլն:

Ստորև ներկայացնում ենք լեզվագիտական տարբեր աղբյուրներից քաղված պատճառաբանությունները ԱԴ-ի ձևակազմական տատանումների վերաբերյալ.

ա) Դրանք շփոթվում են գրաբարի և օտար լեզուների համապատասխան կառուցվածքների ազդեցությամբ.

բ) Հոլովական անհամաձայնության կամ խնդրառու բայի պարտադրանքին «չհնազանդվելու» դրսևորում են.

գ) ԱԴ-ն հոլովական կարգից զրկվել է.

դ) Կորցրել է հարց առնելու հատկանիշը (եթե հարց չի առնում, ուրեմն նախադասության առանձին անդամ չի կարող լինել).

ե) ԱԴ-ն մասամբ կորցնում է խնդրային և պարագայական հարաբերություններ դրսևորելու արժեքը՝ վերածվելով բաղադրյալ ստորոգյալի մասի.

զ) Յուրաքանչյուր զուգահեռի տրական կամ բացառական հոլովածնում դրսևորվում է անորոշ դերբայի ավելի շատ գոյականական հատկանիշը, ուղիղ ձևում՝ ավելի շատ բայականը:

է) Թե՛ դիմավոր բայի, թե՛ ԱԴ-ի համաժամանակյա (իրար հետ զուգորդվելու հետևանքով) իմաստարժեքիոխման արդյունք է. դիմավոր բայը կորցնում է բառական նշանակությունը՝ ձեռք բերելով եղանակական-կերպական արժեք՝ վերածվելով բառմասնիկի (եղանակադիմաթվային քերականության), իսկ մյուս ծայրում ուժեղանում է ԱԴ-ի բայական նշանակությունը՝ գոյականական արժեքի թուլացման հաշվին:

ը) Սխալ ու մերժելի խնդրառության (կառավարման) արդյունք են կամ հետևանք.

թ) Սոսկ բնագրային վկայություններ են, թեև դրանք տարածված են, սակայն ակնհայտ օտարաբանություններ են, ռուսերենից և այլ լեզուներից կատարված բառացի պատճենման արդյունք, ուստի և մերժելի են:

ժ) Լեզվական նորմի նկատմամբ մեղանջումներ են.

ժա) Բայական խնդրառության օրինաչափ դրսևորում են.

ժբ) Միևնույն բայը միևնույն բովանդակությունն ունեցող երկու ձևով արտահայտված լրացումների (նույնանիշների) լրացյալ է.

ժգ) Ոճական անհարթություն չստեղծելու անհրաժեշտությամբ են դրվում ուղիղ ձևով.

ժդ) Կառույցի տարածված լինելը, գործածական հաճախականությունը և համագործածությունը.

ժե) Կիրառական- գործառական լեզվաբանության՝ բայերի արժույթների իրացման եղանակներից ետ մնալը.

ժզ) Շատ լեզվաբաններ այս միտումը բացատրում են համաբանության գործոնով: «Նմանակության՝ համաբանության» օրենքը կարևոր դեր ունի լեզվական նորագոյացություններում: Քանի որ եղանակավորողների մեծ մասը ուղիղ ձևով ԱԴ է պահանջում, քանի որ անորոշ դերբայի ուղղականով լրացումներ առնող բայերի քանակը շատ է թեք ձևերով լրացումներ առնող բայերից, բնականաբար նմանակության՝ միօրինակության ձգտումով վերջիններս առնվում են ուղիղ ձևով:

ժէ) Շատ դեպքերում՝ դիտողությունները կոպիտ են, «զայրույթով լի»՝ «սխալների անսանձ տարածում», «հայոց լեզվի տրամաբանության մեջ որևէ հենարան չունեցող սխալ կիրառություններ», «լեզվաբանական գիտության թերացում», «անթույլատրելի շեղում», «հայոց լեզվով խոսողների անգրագիտության արդյունք» կամ՝ «բնավ կարիք չկա դրանք օրինականացնել, վրան էլ տեսություն մշակել» և այլն:

Ճիշտ են այն լեզվաբանները, ովքեր այդպիսիք դիտում են որպես օրինաչափություն, կառույցը համարում բաղադրյալ ստորոգյալ: Հակառակ պնդումը գուցե ճիշտ լիներ, եթե այս լեզվափ-

րողությունները բնութագրական լինեին լեզվի զարգացման համեմատաբար կարճ ժամանակահատվածի համար: Բայց եթե լեզվի պատմության ընթացքում միշտ արձանագրվել են այսպիսի շեղումներ, արդյո՞ք լեզվի ներքին էությանը բնորոշ է հազարամյակներ շարունակ պահպանել նույնանիշները. չէ՞ որ լեզվում գործող անխախտ օրենք կա. լեզուն չի սիրում հավելուրդային կամ կրկնակ ձևեր պահել, և եթե դրանք ինչ-որ ժամանակում ինչ-որ որ ձևով կամ իմաստով չեն տարբերակվում, լեզուն ընտրում է դրանցից միայն մեկը: Մյուս կողմից՝ նման ձևերը գնալով ավելի հաճախական են դառնում, իսկ համագործածական լինելը արդեն իսկ թելադրում է դրանք ձանաչել ու օրինականացնել:

«Եղանակավորող + ԱԴ» կառույցում ԱԴ-ն հանդես է գալիս հոլովական տարբեր ձևերով (ուղղական, տրական, բացառական. ներգոյական հոլովով ձևերը հանդիպում են ժողովրդախոսակցական լեզվում, որտեղից երբեմն թափանցում են գրական լեզվի մեջ՝ **դադարեց ասելում**). Կարինի մայր եկեղեցու զանգերն **սկսեցին դողանջել** (ՍԽԱ, 253): Օ՜, **ինձ երազել դժվար է** արդեն, և **անհնար է** մտքով սավառնել, և **անհնար է** մութ հողմերի դեմ լույսի գրահներ **թևերիս առնել** (ՌԴՔԲ, 65): Ես **պատրաստվում եմ հանձնվելու** Մորփեոսին (ԳՄԾՓ, 100): Իսկ ես **չվախեցա** իմ բարեկամների **նեղանալուց** (ՄՍԳՆ, 245): Այնուհետև դու մի՛ հպարտանա, մանավանդ **ամաչիք պարծենալուց** (ՄՍԳՆ, 251):

Ինքնին հասկանալի է ԱԴ-ի ձևային նման դրսևորումը, քանի որ կառույցի նախահիմքը համարվում է նրա ստուգաբանությունը, եղանակավորողի և ԱԴ-ի շարահյուսական կապակցությունը: Նախկինում կառույցը շարահյուսական կապակցություն է եղել, ժամանակի ընթացքում վերացարկվելով՝ այն դարձել է շարահյուսական մեկ միավոր: Սակայն վերացարկվելը չի վերացրել սրանց ստուգաբանական հարաբերությունների հետքերը: ԱԴ-ն չի կորցնում և չի էլ կարող կորցնել շարահյուսական այն պաշտոնը, որ երբևէ արտահայտել է կառույցից դուրս. շարունակում

է պահել, բայց արդեն ներքին ընդհանուր հարաբերության մեջ: Ուրեմն՝ կառույցի կապերն ու հարաբերությունները նախադասության մի անդամի՝ ստորոգյալ կազմող լեզվական միավորների մեջ դրսևորվող կապեր ու հարաբերություններ են: Հետևաբար ԱԴ-ն իր հոլովական ձևով կախված է խնդրառու բայից, տվյալ դեպքում՝ ընդհանրապես եղանակավորողից:

Հայ լեզվաբաններն այս հարցին նույնպես քիչ են անդրադարձել: Հ. Հարությունյանը մի քայլ առաջ է անցել և հիշյալ կառույցների ԱԴ-ի հոլովաձևը կառույցների տարբերակման հատկանիշ է համարել՝ առանձնացնելով հետևյալ մասնակաղապարները՝ Ա. Բայ + անորոշ դերբայի ուղղական մասնակաղապար (աշխատել, բարեհաճել, գիտեն, երագել, երդվել, թողնել, կամենալ, հրամայել, համարձակվել, հանդգնել, մոռանալ, շարունակել, շտապել, վճռել, չարչարվել, պարտավորվել, սկսել, սպառնալ, տքնել, ցանկանալ, ուխտել, ուզենալ, փորձել...): Բ. Բայ + անորոշ դերբայի տրականով մասնակաղապար (հարկադրել, համաձայնել, հակվել, ձգտել, մտադրվել, սովորել, շահագրգռել, վարժվել, պատրաստվել, օգնել և այլն): Գ. Բայ + անորոշ դերբայի բացառականով մասնակաղապար (ամաչել, դադարել, զգուշանալ, խորշել, զգվել, խուսափել, կշտանալ, հոգնել, հրաժարվել, վախենալ, սարսափել, սոսկալ, քաշվել և այլն): Դ. Բայ + անորոշ դերբայի ներգոյական մասնակաղապար (սրանք հանդիպում են հատկապես ժողովրդախոսակցական լեզվում. դանդաղել, ծուլանալ, առաջադիմել)¹²⁷:

Նոր ժամանակներում հարցի քննությունն աշխուժացել է՝ կապված լեզվի նորմավորման հացերին առավել ուշադրություն դարձնելու, սխալ և ճիշտ ձևերի ընտրության հետ, նաև՝ դրանց՝ որպես արդեն լեզվական միտումների ձևավորման հետ, ընդհանրապես լեզվագործածության, լեզվի գործնական կիրառության, խոսքային դրսևորումների հետ:

¹²⁷ Տե՛ս՝ Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 199-200:

Իրոք, կառույցի մանրագնին քննությունը հանգեցնում է այն հետևության, որ այնտեղ ԱԴ-ն միաձև դրսևորում չունի. հանդես է գալիս ուղիղ և թեք ձևերով: Բայց խոսքն այն մասին է, երբ նույն եղանակավորողի կողքին ԱԴ-ն տարբեր ձևավորում է ունենում, ինչպես օրինակ՝ *պատրաստվել* (հեռանալու / հեռանալ), *անկարող է* (նայելու / նայել), *խուսափել* (քայլելուց / քայլելու / քայլել) և այլն: *Պատրաստվել* եղանակավորողի հետ, ըստ մեր ձեռքի տակ եղած քարտարանի, գրեթե հավասարապես հանդես են գալիս ԱԴ-ի ուղիղ և թեք ձևերը: Հիմք ընդունելով եղանակավորող էություն դրսևորող բառային միավորների կողքին ոչ բայ խնդրի ձևը (Առաջարկում էր ամուսնություն (ՄՍԳՆ, 291): Մագաղաթը կենդանանում է, ոգի առնում և պատրաստվում աշխարհի ու մարդկանց հանդիպմանը (նտ, 313) և այլն՝ տարբերակում ենք հետևյալ մանրակառույցները՝

ա) «եղանակավորող + ուղղական հոլովով ԱԴ»,

բ) «եղանակավորող + տրական հոլովով ԱԴ»,

գ) «եղանակավորող + բացառական հոլովով ԱԴ»:

ա) «եղանակավորող + ուղղական հոլովով ԱԴ»: Նշված մանրակառույցն ամենատարածվածն է: Հարկ է նշել, որ ԱԴ-ի ուղիղ ձևեն պահանջում արդի արևելահայերենի եղանակավորողների մեծ մասը:

ԱԴ-ի ուղիղ ձևով կառույց կազմող եղանակավորողներից են՝ *կարողանալ, ջանալ, սկսել, ձգնել, ծգտել, որոշել, վճռել, հարկադրել, հրամայել, ստիպել, պահանջել, սպառնալ, կարգադրել, հանդգնել, համարձակվել, աղաչել, խնդրել, աղերսել, հայցել, հորդորել, համոզել, ուզել, կամենալ, ցանկանալ, խոստանալ, աշխատել, շարունակել, արգելել, մերժել, հանձնարարել, թույլ տալ, ստիպված լինել, մտքով անցնել, անհնար է, անհնարին է, կարող է, հաճելի է, ծանր է, ցանկալի է, դժվար է, դյուրին է, պետք է, անհրաժեշտ է, պարտադիր է, պատշաճ է* և այլն: Օրինակներ՝ *Կարողացավ* կուլ տալ հուզմունքը (ՄՍԳՆ, 280): *Սկսեցին* հալածել առաջադեմ ու մտածելու ընդունակ հոգևորական

գործիչները (նտ, 16): Մի ժամանակ թաքուն էին հետևում, հիմա նույնիսկ *չեն* էլ *ջանում* խնամքով *թաքցնել* (նտ, 210): Հերձվածողները *ձգնում են* մեզ *խել* քեզանից (նտ, 52): Եթե *չես կամենում* հեռանալ, ուրեմն դիմացիր (նտ, 20): *Չէր ցանկանում* նահանջել վատի ու ստորության առջև (նտ, 337): Վանահայր, *հրամայիր դադարեցնել* հետապնդումը (նտ, 21): Արտավազդը *հասցրեց* լիովին *լուծել* օրվա պարտության վրեժը (ՊԶԱԵ, 435): Ի միջի այլոց, ես *մոռանում եմ* քեզ *հարցնել* (նտ, 148): Ոչ ոք *չի ուզում* մեղանջել գահի դեմ (նտ, 163): Ոչ ոք *չի համարձակվում* եկեղեցի մտնել (նտ, 137): *Արժե՞* արդյոք *շարունակել*՝ ձեր կարծիքով (ՊՍ, 1, 128): Դրախտի՛կ, քաղցրի՛կս, ես հարբած եմ, թո՛ւյլ տուր հեռանալ (ՄՍԳՆ, 39): Ուրեմն նա կարող է փախչել ինձանից և անպատիժ մնալ (ՊԶԱԵ, 174): Ե՛վ *հաճելի*, և՛ *ծանր էր ձեռք* տալ այդ թղթերին, և *ցանկալի*, և՛ *դառն էր լսել* անցած-գնացած օրերի դողանջը (ՎՊՀԲԱ, 256): *Դյուրի՞ն է* թանաքով *գովերգել* գարունը, Եվ *դժվա՞ր*՝ գարնանը *զոհել* իր արյունը...(ԳԷ, 2, 107):

Ճիշտ *չեն՝ պատվիրել, առաջարկել, թույլ տալ, հանձնարարել, հրամայել* եղանակավորող բայերի և անորոշ դերբայի թեք ձևերը:

բ) «Եղանակավորող + տրական հոլովով ԱԴ»¹²⁸: Ամենից առաջ նշենք, որ տրական հոլովով, նաև բացառականով ԱԴ պահանջող միավորների *եղանակավորող* անվանումը պայմանականորեն է տրվում: Նման եղանակավորողներից են՝ *պատրաստվել, խանգարել, մղել, համաձայնել, ի վիճակի լինել, ի գործու լինել, անկարող լինել, ճիգ անել, ուժ ունենալ, համաձայն է,*

¹²⁸ Բ. և գ. մասնակաղապարները սոսկ կընդգծենք՝ առանց շեղելու, քանի որ եղանակավորողների «եղանակավորող» բնույթը սրանցում վիճելի է: Բերված բոլոր նախադասությունները կարող են ունենալ «եղանակավորող + ուղիղ ձևով դրված ԱԴ» կաղապարային փոխակերպները՝ անգամ առանց իմաստային տարբերակման, իսկ ԱԴ-ների թեք ձևերի փոխարեն ուղիղ ձևերի գործածությունը օրինաչափության է վերածվում:

ընդունակ է, անկարող է, սովոր է, արժանի է, պատրաստ է և այլն: Օրինակ՝ Պատրաստվում էր մեկնելու, երբ անսպասելի եկավ Տեր-Մարտիրոսը (ՍԽԱ, 127): Մուրը խանգարում է տեսնելու գարդանախշերը (ՄՍԳՆ, 335):... Գովերգում եմ ... Այն խաբելը, որ մղում է չեղած ճիշտը որոնելու (ՊՍ, 1, 373): Այլևս ի վիճակի չէին հրամայելու գորաց (ՄՍԳՆ, 60): Իշխանական գորագնդերը անկարող եղան կանգնեցնելու սովյալների և ըմբոստների գրոհները (նտ, 15): Այնուհետև նա անընդունակ կլինի մարմինը թողնելու զնդանում և հոգով ու մտքով տեղափոխվելու այլ աշխարհներ (ՊԶԱԵ, 601): Նույնիսկ ճիգ արեց բռնելու աղջկան, բայց ուշ էր արդեն (ՄՍԳՆ, 18): Նա ժամանակ չունեցավ կանոնավոր կերպով զբաղվելու իր երեք որդիների ուսման ու կրթության հարցերով (նտ, 302): Նա իրավունք չունեի արտասվելու և խղճալու արքային (ՊԶԱԵ, 602): Հիմա արդեն հնարավորություն ուներ մոտենալու երիտասարդ սարկավագին (նտ, 426): Դու համաձայն ես կաթողիկոս դառնալու (նտ, 137): Ճշմարիտն այն մարդու գոյությունն է, ով ընդունակ է իր ետևից տանելու ամբոխին, առաջնորդելու հովվի կարոտ բազմությանը (նտ, 430): Պատրաստ ենք մեր մարմիններով փակելու թշնամու ճանապարհը (ՍԽԱ, 230): ...Մատնե՛ր, որ երբեք սովոր չեն կյանքում հրեղեն շահեր, գանձ շոշափելու (Մ, 408):

գ) «Եղանակավորող + բացառական հոլովով ԱԴ»: ԱԴ-ն բացառական հոլովով է դրվում հետևյալների թելադրանքով՝ *խուսափել, վախենալ, դադարել, ամաչել, հրաժարվել, սարսափել, խորշել, զգվել, սոսկալ, զրկվել, քաշվել, զգուշանալ* և այլն: Օրինակներ՝ Կանանց հետ շփվելուց խուսափում էր (ՍԽԱ, 7): Խաչատուրը չէր կշտանում նրան նայելուց (նտ, 305): Ռետինե սուտ ծամելուց մենք զգվել ենք (ՊՍ, 2, 79): Նա վաղուց դադարել էր մարտիկ լինելուց (ՄՍԳՆ, 217): Տատս վախենում էր սայթաքելուց (ՊՂ, 27):

Լեզվի պատմության ընթացքում կատարվել է և կատարվում է հոլովառության տեղաշարժ: Բնականաբար ինչ-որ ժամանակ

կառույցի բաղադրիչ ԱԴ-ները տարբերակային ձևերով են ներկայացվել: Ուղղական և տրական, ուղղական և բացառական հոլովածներով տարբերակներից նախապատվությունը տրվել է ուղիղ ձևերին: Այսպես՝ ոչ վաղ անցյալում կանոնական են համարվել, օրինակ, **սկսեց վազելու, արգելեց գրելու, համաձայնեց գնալու, սպառնաց հայտնելու, շտապեց պատմելու, թույլ տվեք գնալու**: Արդի հայերենում կանոնական են ԱԴ-ի ուղղական հոլովով ձևերը՝ **սկսեց վազել, արգելեց գրել, համաձայնեց գնալ, սպառնաց հայտնել, շտապեց պատմել, թույլ տվեք գնալ**: Սա նշանակում է, որ անցողիկ օղակում եղել են զուգաձևություններ՝ առաջին աստիճանում՝ այսպիսի նախընտրությամբ՝ **սկսեց վազելու // վազել, արգելեց գրելու // գրել, համաձայնեց գնալու // գնալ, սպառնաց հայտնելու // հայտնել, շտապեց պատմելու // պատմել, թույլ տվեք գնալու // գնալ**, երկրորդ աստիճանում՝ այսպիսի՝ **սկսեց վազել // վազելու, արգելեց գրել // գրելու, համաձայնեց գնալ // գնալու, սպառնաց հայտնել // հայտնելու, շտապեց պատմել // պատմելու, թույլ տվեք գնալ // գնալու**:

Ժամանակակից հայերենում նույն ճանապարհն են բռնել պատրաստվեց գնալու և գնալ, մտադրվեց գնալու և գնալ, ստիպված եղավ գնալու և գնալ, ձգտեց հասնելու և հասնել, խուսափեց վազելուց և վազել, վախենում է տեսնելուց և տեսնել, խուսափում է հանդիպելուց և հանդիպել և նմանատիպ այլ կառույցներ: Կարելի է սրանք արձանագրել գոնե որպես անցողիկ օղակի առաջին աստիճանի կանոնական դրսևորումներ:

Ակներև է, որ մերօրյա հայերենն ԱԴ-ի ուղղականաձև գործածության միտում ունի, և տարբեր աշխատություններում շեշտվում է նման գործածությունների հաճախականությունն ու էլ ավելի տարածվելու միտումը: Հ. Հարությունյանն անգամ վիճակագրական տվյալներ է բերում. «Բայ + անորոշ դերբայ կառույց պարունակող 458 նախադասություններից միայն 56-ում է, որ անորոշ դերբայն առնված է տրական և բացառական հոլովներով, այսինքն հարաբերությունը 402 / 56 է:

Հարցի հետ կապված՝ արդի հայերենյան լեզվավիճակի պատկերը սա է. լեզվաբանների մի խումբ, հարազատ մնալով անորոշ դերբայը գոյական համարելու արեղյանական տեսակետին, նմանօրինակ միտումը համարում են օտար լեզուների կամ գրաբարի ազդեցության արդյունք: Մյուս խումբը, կասկածի տակ առնելով հարցի՝ օտար լեզուների ազդեցությամբ բացատրելու դրույթը, անորոշ դերբայի՝ խնդրառու բառից հոլովական ձևով կախված չլինելու իրողությունը բացատրում է նրա բայական էության դրսևորմամբ, և անորոշի ուղիղ և թեք ձևերով կառույցները համարում շարահյուսական համանիշներ: Մյուս կողմից՝ անկախ լեզվաբանների տարամիտվող կարծիքներից՝ մեր խոսքը հեղեղված է լեզվական նորմից կատարված նմանատիպ շեղումներով: Իր ժամանակի համար գուցե և Մ. Աբեղյանը ճիշտ էր՝ իբրև ընդհանուր կանոն ընգծելով, որ անորոշ դերբայը նույն հոլովով է դրվում, ինչ հոլովով որ դրվում է ոչ դերբայ խնդիրը: Մեր ժամանակների համար ճիշտ պետք է համարել Գ. Ջահուկյանի, Ս. Աբրահամյանի և նրանց հետևորդների կարծիքը: Կարծում ենք՝ ժամանակն է, կարիք կա «դրանք օրինականացնել» և «վրան էլ տեսություն մշակել», չէ՞ որ լեզվում գործող ներքին օրենք կա՝ յուրաքանչյուր անկանոնություն համագործածությամբ ի վերջո կանոն դառնալու իրավունք է նվաճում...

Այսպիսով՝ մի խումբ դիմավոր բայերը կորցրել են և շարունակում են կորցնել իրենց բայական արժեքը՝ վերածվելով բառասնիկների կամ քերականությունների՝ դրանով իսկ ուժեղացնելով ԱՂ-ի բայական հատկանիշները: Իհարկե, այս դեպքում կառույցի հիմքում ընկած է բայի բառիմաստի փոփոխման գործոնը, բայց այն արժեք չէր ունենա, եթե բայը չունենար գործողության որակման, գնահատման, եղանակական երանգ, այսինքն բառիմաստը ընծեռում է այդ հնարավորությունը: Մյուս կողմից՝ դիմավոր բայի իմաստային այս երանգը առաջնային է դառնում ԱՂ-ի գուգորդմամբ. եթե գոյականն է նրա կողքին, նյութական նշանակությամբ է գործածվում: Ի վերջո՝ որքան կառույցում ուժե-

ղանում է սուբյեկտիվ տարրը, այնքան թուլանում է նրա բառական իմաստը: Երրորդ դեպքում՝ կառույցի ձևավորման հարցում փաստորեն խանգարիչ գործող է ԱԴ-ի ձևը, ահա թե ինչու այն միտում է ուղիղ ձևով գործածվելու: Ի վերջո կարող ենք ասել՝ այս դեպքում լեզուն իր ներքին «ընտրությունը» կատարել է. մնում է լեզվաբաններն ընտրեն օրինաչափականը, լեզվի ներքին զարգացմամբ թելադրվածը՝ ամրակայելով լեզվական նորմում:

Այս հարցը լուծում կստանա մասնաւոր այն դեպքում, երբ հստակորեն պարզ դառնա, թե ենթական ո՞ր գործողությունն է կատարում՝ եղանակավորողի՞ արտահայտած, թե՞ ԱԴ-ի: Եթե եղանակավորողով արտահայտված գործողությունն է կատարում, ուրեմն՝ կառույցը շարահյուսորեն վերլուծելի է, իսկ եթե ԱԴ-ովը՝ ուրեմն միասնական կառույց է:

«Եղանակավորող + ԱՂ» կառույցը կազմելու նախապայմանը լեզվական նորմին համապատասխան քերականական ճիշտ ձևավորումն է. բաղադրիչները կապակցվում են համապատասխան շարահյուսական և ձևաբանական օրենքներով: Երբեմն այն ճշտորեն ձևավորված չի լինում: Շեղումը հիմնականում դրսևորվում է ԱՂ-ի ձևակազմության մեջ՝ հատկապես տրական-հայցական հոլովներում՝ պայմանավորված բայերի խնդրառական առանձնահատկություններով և բայական բաղադրյալ ստորոգյալի ըմբռնմամբ, ինչպես և այլ լեզուների համապատասխան բառակապակցությունների ազդեցությամբ:

Կառույցի նկատմամբ մեղանչումները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. օտար լեզուներից կատարված մեքենայական թարգմանությունների, բառաձևակազմական պատճենումների հետևանքով կատարված մեղանչումներ.

2. եղանակավորողների՝ տվյալ ժամանակաշրջանին բնորոշ խնդրառական առանձնահատկություններով, իմաստաարժեքային տեղաշարժերով պայմանավորված մեղանչումներ.

3. բարբառների, խոսակցական լեզվի ազդեցությամբ բացատրվող մեղանչումներ:

Հայ ժողովրդի լեզվամտածողությունը շոշափման եզրեր ունի այլ ժողովուրդների լեզվամտածողության հետ. հայերենը հարստանում է նաև նրանցից կատարված փոխառություններով, պատճենումներով, որոնց մի մասը, անշուշտ, ճիշտ է և նպաստում է մեր լեզվի զարգացմանը: Սակայն խոսքն այստեղ ոչ ճիշտ ձևերի մասին է, հատկապես այն մասին, երբ հապճեպորեն

ուղղակի տառադարձվում են այնպիսի նմանատիպ կառույցներ, որպիսիք հայերենում ընդունելի չեն: Սա վերաբերում է հատկապես թարգմանական գրականությանը և մամուլին, ուր մասնավորապես նույնացվում են հայոց և ռուսաց լեզուների իրողությունները, մոռացվում է այն պարզ ճշմարտությունը, որ ռուսերենի ԱԴ-ն (инфинитив) չի նույնանում հայերենի ԱԴ-ի հետ, որ պետք է հավատարիմ մնալ հայերեն լեզվամտածողությանը՝ տվյալ դեպքում օգտագործելով կառույցի ճիշտ ձևեր:

«Մեղանչումների» մի խումբ պայմանավորված է եղանակավորողների խնդրառական առանձնահատկություններով, նաև բաղադրյալ ստորոգյալի՝ բառակապակցությամբ արտահայտվելու հանգամանքով: Նախորդ միտքն ընդգծված է այն նկատառումով, որ եթե ԱԴ-ի և դիմավոր բայի զուգորդումները դիտում ենք բառակապակցություններ, ապա նրա ներսում գործող կապակցման եղանակը խնդրառությունն է, իսկ խնդրառական նորմի տեսակետից սխալ են համարվում կապակցական այսպիսի ձևավորումները, որոնք, ի դեպ, ողողել են և ողողում են արդի արևելահայերենը, նրանց նմանությամբ էլ կազմվում են նորերը. եվ այնքա՛ն շատ են այսօր Հոգուս մեջ սեր ու թախիծ, Որ ես պատրաստ եմ այս խենթ ջրերի հետ **հեկեկալ** (=հեկեկալու) (ՎԴ, 1, 75): **Պատրաստվում էր** երկինքն արդեն Ձնով **նախշել** (=նախշելու) գետինը պաղ (ՊՍ, 4, 106:): **Վախենում էր աչք փակել** (=փակելուց) (ՄՍԳՆ, 70): Գովերգում են այն երաշտը, որ **մղում է** ջրանցք **շինել** (=շինելու) (ՊՍ, 1, 373) և այլն: Մյուս կողմից՝ եթե նման զուգորդումները դիտում ենք որպես բաղադրյալ ստորոգյալ, ԱԴ-ի ուղիղ ձևերը սխալ չեն (վստահորեն չենք էլ կարող ասել՝ ճիշտ են): Նշանակում է՝ տեղի է ունենում կանոնների խաչաձևում: Խաչաձևման կենտրոնի համեմատությամբ խաչաձևվող կանոնները նույն հեռավորության և նույն աստիճանի վրա չեն: Եթե անցյալ դարի վերջերին առավելապես կարևորվում էին խնդրառական հատկանիշները, և լեզվական նորմը ձևվել է հենց այդ աստիճանին համապատասխան, ապա ներկա

Ժամանակներում լեզվական նորմը նույն հարթության վրա է մնացել, բայց կառույցի ներսում բաղադրիչների իմաստաարժեքային և ձևակազմական տեղաշարժերը օրինաչափությունների են վերածվել կամ շարունակում են վերածվել:

Ինչևիցե՝ գործող լեզվական կանոնով սահմանված խնդրառական առանձնահատկություններից ելնելով՝ ճիշտ չեն՝

- Հրամայել, պատվիրել, հանձնարարել, առաջարկել, ձգնել, պարտավոր է, թույլ տալ եղանակավորողների կողքին ԱԴ-ի թեք ձևերը. Տերը կարող էր չհավանել նորը և հրամայել կրկին սարքելու (ՊԶԱԵ, 494) - (փխկ.՝ հրամայել սարքել): Մայրը հանդիմանել էր իրեն և խստիվ պատվիրել առանձին նստելու (ԱԲ, 76) - (փխկ.՝ պատվիրել էր նստել): Ո՞վ է քեզ հանձնարարել լրտեսելու վարդապետ Գրիգորին (ՄՍԳՆ, 238) - (փխկ. հանձնարարել է լրտեսել): Դու մի ասա, ոչ ոք էլ ինձ չի առաջարկել փախչելու (ՊԶԱԵ, 593): - (փխկ.՝ չի առաջարկել փախչել): Օլիմպիան ինքն էր ձգնում հասկանալու անխուսափելիության աստիճանը (նտ, 511): - (փխկ.՝ ձգնում էր հասկանալ): Եվ որքան որ Վրիկն էր պարտավոր երջանիկ լինելու, այնքան էլ Ներսեսն էր հարկադրված բախտավոր կյանք սկսելու (նտ, 489): - (փխկ.՝ պարտավոր էր երջանիկ լինել, հարկադրված էր սկսել): Մի՛ թույլ տուր մարդու մտքին խառնելու աստծո սահմանները և դուրս նայելու քո աստվածություններից (ՄՍԳՆ, 299): - (փխկ.՝ Մի՛ թույլ տուր խառնել և դուրս նայել) և այլն:

- Պատրաստվել, անկարող է, սովոր է, ընդունակ է, անգոր է, պատրաստ է, հնարավորություն ունենալ, ժամանակ ունենալ, ի վիճակի լինել, ի զորու լինել, անկարող լինել, հարկ կա (չկա) և այլոց կողքին ԱԴ-ի ուղիղ ձևերը. Ես պատրաստվում եմ վանական դառնալ (=դառնալու) (ՄՍԳՆ, 43): Ես այլևս անկարող եմ նրա հետ բանավիճել (=բանավիճելու), տրամաբանել (=տրամաբանելու), մանավանդ հավատացնել (=հավատացնելու) ու համոզել (=համոզելու) (նտ, 21): Նա սովոր էր քնել (=քնելու) մանդուի լույս ու տաք կրծքի մեջ (ՎԴԱ, 298): Ընդունակ են ծա-

խել (=ծախելու) ճշմարտություն ու խիղճ (նտ, 331): Վանական խուցի քարե պատերն արդեն **անգոր էին** խենթացնող սրտին **կլանել** (=կլանելու) իրենց մեջ (ՄՍԳՆ, 277): Մինչ **պատրաստ ենք կառչել** (=կառչելու) ատամներով Ուրախության անցնող ակնթարթից անգամ (ՊՍ, 1, 24): Մենք հետապնդում էինք այնպիսի նպատակ, որ պատերազմը վերջացնելուց հետո **հնարավորություն ունենանք** անմիջապես **զինաթափ անել** (=անելու) հայերին (ՍԽԱ, 133): Ոչ էլ սատանան է **ի գորու իշխել** (=իշխելու) այդպիսի մեկին (ՄՍԳՆ, 22): Գիտեմ, որ խռոված ես ինձանից, որ **ուժ չունեցա պահել** (=պահելու), **պահպանել** (=պահպանելու) մեր սերը (նտ, 335): Փաստն այնքան եղկելի է, սրբազան, որ հոգիս ի բուռ, էլի **անկարող եղա** նույնիսկ **երեսը տեսնել** (=տեսնելու) (նտ, 248): Ո՛չ, ո՛չ, բանտապետ, դեռ ոչինչ-ոչինչ չարած **հարկ չկա** պատժի մասին խոսել (**=խոսելու**) (ՌԴՔԲ, 231):

- **Վախենալ, խուսափել, ամաչել, դադարել, հրաժարվել, խորշել** և այլոց կողքին՝ նորից ԱԴ-ի ուղիղ ձևերը. **Վախեցար ենթարկվել** (=ենթարկվելուց) մի մարդու, որը ըստ էության գոյություն էլ չուներ (ՊԶԱԵ, 416): Անակը գիտեր և **խուսափում էր հանդիպել** (=հանդիպելուց) (նտ, 490): Ճերմակ հողմը լռել, **դադարել էր ողբալ** (=ողբալուց) (ՎԴ, 1, 416): **Ամաչում էր** օգնությունը նրա վզին **փաթաթել** (=փաթաթելուց) (ՊԶԱԵ, 494): Ուրեմն դու **հրաժարվում ես կատարել** (=կատարելուց) իմ հրամանը (նտ, 133): Եվ եթե մենք **չխորշեցինք** մեր բնության **դեմ գնալ** (=գնալուց), արդյոք մեր երազանքների իրականացման համար չէր (նտ, 590):

- **Ամաչել, հրաժարվել, խորշել** և նման բայերի կողքին ԱԴ-ի ոչ միայն ուղիղ, այլև տրականով ձևերը. Ինչո՞ւ **եք ամաչում** աջ ու ձախ **կանգնելու**: Իսկ **գործելո՞ւ** (ՊԶԱԵ, 377-378): Դժբախտաբար, Նախիջևանը **հրաժարվում է ընդունելու** մեր գաղթականությանը (ՍԽԱ, 433): Այդ պարոններից ոմանք **չէին խորշում** տե-

ղացի հայերին **ասելու**, թե իրենց պետությունները երբեք չեն պաշտպանի հային (նտ, 216):

Ժամանակն էլ այստեղ «մեղք ունի». ոչ վաղ անցյալում մի շարք եղանակավորողների կողքին ճիշտ էին ԱԴ-ի թեք ձևերը՝ **սկսեց քայլելու, ստիպեց հեռանալու, ձգտեց մոռանալու** և այլն: Խոսելով հատկապես **ստիպել** բայի մասին՝ Ա. Այտընյանը նշում է, որ վերջինս մտնում է այն բայերի շարքը, որոնց կողքին ԱԴ-ն կարող է դրվել թե՛ ուղղական, թե՛ տրական հոլովներով. եթե ԱԴ-ն նրանից առաջ է՝ տրական, եթե նրանից հետո՝ ուղղական: Ժամանակի ընթացքում սրանց կողքին ճիշտ համարվեցին ԱԴ-ի ուղիղ ձևերը: Գրական արևմտահայերենում այսօր էլ դեռ ընդունված է տրական ձևը. Ան **կը սկսի գործելու**: Այսօր **սկսել**-ի կողքին միշտ ուղիղ ձևով ԱԴ է, **ստիպել**-ի կողքին՝ գրեթե միշտ: Նույնը կարելի է ասել **շտապել** եղանակավորողի մասին, չնայած որ եզակի դեպքերում հանդիպում են և թեք ձևերով գործածություններ, որոնք սխալ են: Օր.՝ Բայց ես **չեմ ձգտում** նրան **դավելու** (=դավել), **այլ զննելու** (=զննել): (Մ. 210): Նրանք թալանում են մեր ինչքն ու հարստությունը, որպեսզի աղքատի, չունևորի վիճակը մեզ **ստիպի դժգոհելու** (=դժգոհել) քեզանից և **արժանանալու** (=արժանանալ) քո ոչնչացնող բարեկամությանը (ՄՍԳՆ, 52): Նա ուժով և իշխանությամբ կիրագործի իր ծրագրերը, ինչպես իր պապի պապը՝ Գրիգոր Լուսավորիչը, որ հրով ու սրով **ստիպեց** մարդկանց **ընդունելու** (=ընդունել) իր բերած բարիքները (ՊԶԱԵ, 182): Կարնեցի գթության քույրերը **շտապեցին** նրան **խնամելու** (=խնամել) (ՍԽԱ, 226):

Մեղանչումների մի խումբ կապվում է բանաստեղծական խոսքի հետ: Շատ եղանակավորող-խնդրառու բայեր պահանջում են տրականով, բացառականով խնդիրներ, սակայն խոսքի վարպետները հնարավոր են համարում քանդել խնդրառության այդ հնագույն եղանակը, տեղը դնել բանաստեղծական-արտահայտչական առումով ավելի ուժունակ, կարելի է ասել՝ ոճական փայլով զուգորդություն, որոնց նախկին՝ տրականով կամ բացա-

ռականով սպասելի բաղադրելին փոխարինված է ուղղականով, և հիմնավոր ու նպատակային նման գործածությունը մոռացնել է տալիս կառավարման շեղումն ընդունված կարգից: Այսպես օրինակ՝ Ասեմ, և նախ ասեմ, Որ *դադարել եք* դուք *աղոթել* առ երկինք, Եվ *դադարել եք* դուք *հաղորդություն առնել* Ու *զոհ անել* աստծուն (ՎԴԾԾ, 158):

Արդի հայերենում էլ արդեն սովորական են ավելի շատ ուղիղ ձևերով գործածությունները:

Ռուսերենի ազդեցությամբ պետք է բացատրել նաև մեղանշումների հետևյալ տիպը. *Ինձ պետք է հիմա հոնքերը կիտել*, *Ինձ պետք է հիմա կարգին լրջանալ* (ՊՍ. 1, 232): *Ինձ հասանելիք պատժից քեզ հարկավոր չէ երկնչել* (ՄՍԳՆ, 347): «Միադիմ բայ + ԱԴ + տրական ենթակա» կառույցը որքան ճիշտ էր գրաբարի համար (*Պարտ է քեզ գիտել*, *Հարկ է ինձ երթալ*), նույնքան էլ խորթ է ժամանակակից հայերենում (*Պետք է գիտենաս*, *Հարկ է, որ գնամ*): Այս տիպի սխալների մասին Պ. Բեդիրյանը գրում է. «Գրաբար շատ ներդաշնակ էր հնչում, երբ ասում էին՝ «Հարկ է մեզ գիտել», «Պարտ է նմա երթալ», ինչպես որ հիմա ռուսերեն են ասում՝ Нам надо (следует) идти, Ему надо (следует) знать: Սակայն այս կառուցվածքով նախադասությունները մեր օրոյա հայերենին արդեն խորթ են, եթե մեկն այսօր «Հարկավոր է մեզ իմանալ» ասի, նախադասությունը մեր լեզվամտածողությամբ այսպես կհասկանանք՝ անհրաժեշտ է, որ ինչ-որ մարդիկ մեզ գիտենան՝ ձանաչեն: Այլապես պետք է որ ասենք՝ «Հարկ է որ մենք իմանանք»...»¹²⁹:

Բայական շատ եղանակավորողներ, նորից ռուսերենի ազդեցությամբ, կրավորաձև են գործածվում, որով կառույցը դառնում է սխալ. «*սկսվում է նվալ*», «*շարունակվում է անձրևել*» և այլն: Օրինակ՝ *Ուզվեց ասվել* լացով ու խղճահարությամբ (ՀՄ, 2, 12):

¹²⁹ Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը (Գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց), Երևան, 2007, էջ 109:

Բավական է մի ցուրտ փչի, - *Սկսվում է* սպին նվալ (ՊՍ, 1, 90):
Ճիշտ են «ուզում էրասել», «սկսում է նվալ» ձևերը:

Խոսակցական լեզուն և բարբառները գրական լեզվի հարստացման անսպառ աղբյուրներից են: Գրական հայերենը դրանցից վերցրել ու վերցնում է նաև ինքնատիպ կառույցներ՝ անշուշտ մշակված ձևով, գրականացված: Այնուհանդերձ, բարբառների և ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ պետք է բացատրել «եղանակավորող + ԱԴ» կառույցում ԱԴ-ի փոխարեն եղանակային ձևերի հանդես գալը: Հաճախ ԱԴ-ի փոխարեն գործածվում են բայի ըղծական եղանակի ապառնի ժամանակի ձևերը, որոնք այս կիրառություններում կորցնում են իրենց դիմային և եղանակային արժեքը՝ հանդես գալով որպես անորոշ դերբայի ուղիղ կամ թեք հոլովներին համանիշներ: Սրանք առաջացել են խնդրային (հիմնականում՝ ուղիղ խնդիր), պարագայական (հիմնականում՝ նպատակի, պատճառի) երկրորդական նախադասությունների անշաղկապ կապակցություններից և ժամանակակից գրական հայերենում հանձնարարելի չեն: Օրինակներ՝ Եվ դեռ երեկո չեղած, նա կտրից տուն **չէր ուզում գա** (ԱԲ, 81): Սմբատ եղբայրը **երեսս չի ուզում տեսնի** (ՍԽԱ, 198): Եվ ես **ուզեցի աշունն սպառեմ**, և ինքը՛ս, ինքը՛ս մնամ անսպառ... (ՌԴՔԲ, 132): Բաժանվածներից առաջինը չեմ, Բայց **կուզենայի վերջինը լինեմ** (ՀՇ, 171): Վախենում եմ շենում խառնակություն **սկսվի** (ՄՍԳՆ, 282): Թո՛ւյլ տուր տամ մի հարց, բայց շատ եմ խնդրում, Որ դա չհաշվես բնավ հաճո խոսք (ՊՍ, 1, 282): Այս իմաստով գործածվում են կա՛մ անորոշ դերբայը, կա՛մ շաղկապով միացած երկրորդական նախադասությունը, կամ գեղչված շաղկապով համանիշ տարբերակը: Այսպես՝ Բաժանվածներից առաջինը չեմ, Բայց **կուզենայի վերջինը լինեմ** – 1. Բաժանվածներից առաջինը չեմ, Բայց **կուզենայի վերջինը լինել**: 2. Բաժանվածներից առաջինը չեմ, Բայց **կուզենայի**, որ **վերջինը լինեմ**: 3. Բաժանվածներից առաջինը չեմ, Բայց **կուզենայի՝ վերջինը լինեմ**: Կամ՝ **Վախենում եմ** շենում խառնակություն

սկսվի – 1. Վախենում եմ շենում խառնակություն սկսվելուց: 2. Վախենում եմ, որ շենում խառնակություն սկսվի: 3. Վախենում եմ՝ շենում խառնակություն սկսվի:

Ուրիշ խնդիր է, եթե կառույցը կիրառվում է համապատասխան միջավայր ստեղծելու նպատակով, ոճական՝ գրական հերոսի խոսքի կոլորիտ ստեղծելու նպատակով: Նման ձևեր հաճախ են գործածել Հովհ. Թումանյանը, Հովհ. Շիրազն ու Ավ. Իսահակյանը. դա բխում էր նրանց լեզվական հավատամքից: Հիմա էլ որոշ գրողներ, ովքեր ավելի շատ հակում ունեն դեպի ժողովրդական խոսքը, օգտվում են նրանից: Շատ լեզվաբաններ (Վ. Առաքելյան և այլք) առանց տրոհության նշանի կից ներկայացված դիմավոր բայերը դիտում են որպես բայական բաղադրյալ ստորոգյալներ, այնինչ դրանք առանձին-առանձին ստորոգյալներ են՝ կախյալ և գերադաս նախադասություններում՝ շարահարությամբ կապակցված: Վերոբերյալ կառույցների զոդվածական կապակցությունները կունենան հետևյալ տեսքը՝ «Եվ դեռ երեկո չեղած, նա չէր ուզում, որ կտրից տուն գա»: «Սմբատ եղբայրը չի ուզում, որ երեսս տեսնի»: «Եվ ես ուզեցի, որ աշունն սպառեմ, և ինքը՛ս, ինքը՛ս մնամ անսպառ»: «Բաժանվածներից առաջինը չեմ, Բայց կուզենայի, որ վերջինը լինեմ»: «Վախենում եմ, որ շենում խառնակություն սկսվի»: «Թո՛ւյլ տուր, որ տամ մի հարց, բայց շատ եմ խնդրում, Որ դա չհաշվես բնավ հաճո խոսք»:

Մերուժան Հարությունյանը, խոսելով արևելահայ գրական լեզվի ներկա վիճակի մասին, փորձելով բուժել «այսօրվա արևելահայ լեզվի ծանր վիճակը», հանգում է այն եզրակացության, որ «Տերյանն էլ է էս ծուղակն ընկել, էս սխալ ձևը շատ է օգտագործել Պ. Սևակը», որ «լեզվի հարցում միակ և գերազույն չափանիշը կենդանի լեզուն է, բարբառը, մեր գրական լեզվի համար՝ Արարատյան բարբառը... Բարբառն ասում է՝ «Որոշեցինք յոթն ու քառասունքը միասին անենք, որոշեցինք հարսանիք չանենք,

որոշեցինք գնանք հարս ու փեսին բերենք, որոշեցինք մի սենյակ վերևը սարքենք և այլն, և այլն»¹³⁰:

Անուրանալի է այն փաստը, որ բարբառը գրական լեզուն սնուցող երականերից է, սակայն նման «բացարձակ ու գերագույն» մոտեցումը ճիշտ չէ. գրական լեզուն հղկում, մշակում է ներմուծվող լեզվական իրողությունները, գրական տեսք տալիս նրանց: Այստեղ քերականական կրկնությունից, հավելուրդայնությունից խուսափելու արդյունքում տնտեսման և նվազագույն ճիգի օրենքներն են գործում. ինչո՞ւ երկու անգամ շեշտել դեմքը, թիվը: Գրական հայերենում վերոհիշյալ ձևերը հանձնարարելի չեն:

Գ. Զահուկյանը «եղանակավորող + ԱԴ» կառույցը համարում է բարդ ստորադասական նախադասության փոխակերպման արդյունք: Նա այն միտքն է հայտնում, որ «Բարդ ստորոգյալը որոշ առումով պետք է դիտել որպես դիմավոր նախադասությունների փոխակերպման արդյունք՝ «ես ուզում եմ, որ նա գնա» (ենթականների տարբերություն) և «Ես ուզում եմ, որ գնամ» (ենթականների նույնություն) - «Ես ուզում եմ գնալ»¹³¹: Թերևս կառույցը զարգացման այսպիսի ճանապարհ պիտի անցած լինի՝ բարդ ստորադասական նախադասություն → եղանակավորող + դիմավոր բայ → եղանակավորող + ԱԴ (ուզում եմ, որ գնամ → ուզում եմ գնամ → ուզում եմ գնալ...):

Հետևաբար «եղանակավորող + ԱԴ» կառույցը զարգացման, վերացարկման ավելի բարձր աստիճան է: Եղանակավորողով ձևավորված կապակցությունները մեր լեզվամտածողությանը հարազատ են մնում եղանակավորողի կողքին ԱԴ-ի առկայությամբ: Կա եղանակավորող բայի հետ դիմավոր ձևերի գործածության յուրահատուկ տիպ. ... Լոկ ես **գիտեմ** ինչպե՞ս **անցա**, ինչքա՞ն **տևեց** իմ այս ճամփան (**ՀՀԻՂ**, 56): Ես **ուզում եմ**, իմ անձկալի, իմ աչքի դեմ, իմ խորքերում Այնպե՞ս **մնաս**, Ինչպես

¹³⁰ «Երկիր» օրաթերթ, 1992, թ. 67:

¹³¹ **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 416:

այն հին Ձմեռային այն գիշերում (ՍԿԳՄՀ, 122): Ես **վախենում եմ** ծառերը **փափկեն**, ծառերը **ծաղկեն** ժամանակից շուտ (նտ, 381): Նման դեպքում կառույցի դեմ մեղանշման մասին խոսք չկա. բանն այն է, որ վերոբերյալ օրինակներում գործ ունենք ոչ թե «եղանակավորող + ԱՂ» կառույցի հետ, այլ ստորադասական նախադասության. ինչպես օրինակ՝ լոկ ես գիտեմ, թե ինչպես անցա... կամ՝ Ես վախենում եմ, որ ծառերը փափկեն: Սակայն կա կետադրական սխալ. պարզապես **թե, որ, եթե** շաղկապների զեղչման համար բութի (') բացակայությունն է նման երկվության հանգեցնում (հմմտ. **Ուզում ես՝ ժպտա՛ քո ամբողջ կյանքում, Ուզում ես՝ ապրի՛ր ճոխ ապարանքում, Կամ կարո՛տ մնա մի կտոր հացի (ԳԷ, 2, 91):**

Նկատելի է, որ ոչ բոլոր եղանակավորողների կողքին են հանդիպում եղանակային ձևեր. բնականաբար մեղանշումներ կլինեն այն կառույցների նկատմամբ, որոնք ձևավորված կլինեն բարբառներում կենսունակ եղանակավորողներով՝ ***կամենալ, ուզել, ուզենալ, խնդրել, կարողանալ, գիտեմ, հասցնել, որոշել, վախենալ, զգվել, թույլ տալ*** և այլն:

ԿԱՌՈՒՅՑՆ ԸՍՏ ԲԱՂԱԴՐՈՒՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՐԵՐԻ

«Բայական եղանակավորող + ԱԴ» կառույցը քննելիս-քննարկելիս հայ լեզվաբաններն ուշադրություն են դարձրել նաև երկու բայերի ցույց տված գործողությունները կատարողի կամ կատարողների հարցին: «Երբ եղանակավորիչ կամ կերպավորիչ բայը և անորոշ դերբայը միևնույն ենթակայի գործողությունները չեն, ապա միասին մի ստորոգյալ կազմել չեն կարող: Այս դեպքում անորոշ դերբայը դիտվում է իբրև խնդիր...»¹³²: «Ստորոգելիական անորոշ դերբայով արտահայտված գործողության իրական կատարողը (սուբյեկտը) և քերականական ենթական համընկնում են: Մինչդեռ լրացական անորոշ դերբայով արտահայտվող գործողության իրական կատարողը և քերականական ենթական նույնը չեն: Վերջինս կա՛մ մտածվում է և չի արտահայտվում, կա՛մ նախադասության մեջ դրսևորվում է որպես անուղղակի խնդիր»¹³³: «Եթե եղանակավորիչ բայը և սրա հետ կապակցվող անորոշ դերբայը միևնույն ենթակային չեն պատկանում, բաղադրյալ ստորոգյալ չեն կազմում»¹³⁴:

Հ. Հարությունյանն էլ «բայական եղանակավորող + ԱԴ»-ի բայ բաղադրիչներն ըստ գործողության տերերի երկու խմբի է բաժանում՝ 1. կառույցներ, որտեղ ԱԴ-ի և նրա լրացյալի ցույց տված գործողությունները վերաբերում են նույն ենթակային,

¹³² Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 144:

¹³³ Աբրահամյան Ա., Ժամանակակից հայերենի շարահյուսական մի քանի կառույցների մասին, «Դասախոսների և ասպիրանտների 32-րդ գիտաշրջանի թեզիսներ», Երևան, 1977, էջ 129:

¹³⁴ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Երևան, 1975, էջ 159:

նույն ենթական է կատարում գործողությունները. 2. կառույցներ, որոնցում ԱԴ-ի և նրա լրացյալի ցույց տված գործողությունները վերաբերում են տարբեր ենթակաների, գործողությունները կատարում են տարբեր ենթականեր: Նա գրում է «...Գործողությունները կատարում են տարբեր ենթականեր. կառավարող բայի ենթական իր գործողությամբ մեկ ուրիշին կատարել է տալիս անորոշ դերբայով արտահայտված գործողությունը, և վերջինիս «ենթական» կառույցում հանդես է գալիս որպես գերադաս բայի խնդիր կամ կարող է բառական արտահայտություն չունենալ. արգելել, թողնել, հարկադրել, հրամայել, շահագրգռել, ստիպել, օգնել և այլն, որոնք հիմնականում կամային վերաբերմունք՝ հարկադրանք արտահայտող բայեր են: Նման բայերի կառավարման տիրույթը սովորաբար եռանդամ է՝ բայ + խնդիր + անորոշ դերբայ»¹³⁵:

Իրոք, կառույցում երկու գործողությունների տերերը կան նույնն են, կան տարբեր: Ըստ այդմ էլ «բայական եղանակավորող + ԱԴ» կառույցը երկու տեսակ է լինում՝

1. Երբ գործողություն կատարողը նույնն է. Դու **թարգմանել ես ուզում** այս մութ բարբառն ու սակայն **Չես կարենում վերծանել** (ՎԴ, 1, 384): Ես **ջանացել եմ** ձեր դիմաց **փռել** կղզիներ անհայտ (ՎԴԱ, 204): Քահանան կապտած շրթունքներով **շարունակում էր մրմնջալ** հեռավոր դարերի հառաչանքը (ՍԽԱ, 61): Եվ ամեն տեսակ մեղքի մեղսակիցը Աշխարհը **պահել չի կարողանում** Մեր փոքրիկ մեղքը իր մեծ բերանում (ՀՍԴՇ, 67): Ասում էին, որ ես **ցանկանում եմ** Աստծո հետ **մտնել** երկխոսության մեջ, **ուզում եմ** դրանով **շահել** Աստծո սիրտը, **հաճոյանալ** թոնդրակյաններին (ՄՍԳՆ, 179):

2. Երբ բաղադրիչների ցույց տված գործողություններ կատարողները տարբեր են. Երանգավորում է մեկը, կատարում է

¹³⁵ Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 208:

մյուսը. Կարծես թե նրան *համոզել էին* մի սուրբ ու նվիրական գաղտնիք *խոստովանել* (ՊԶԱԵ, 399): -Պետք *հրամայեց* *հանձնել*, - ասաց նա և դուրս եկավ (ԳՄԾՓ, 47):

Ժիշտ չէ նման կառույցներում տարբերակել ստորոգելիական և լրացական ԱԴ-ներ, այսինքն՝ նույն իրադրության մեջ մի դեպքում կառույցը քանդել, մեկ այլ դեպքում՝ ոչ: Կարևորն այն է, որ ԱԴ-ով արտահայտված գործողությունը երանգավորվում է՝ անկախ այն բանից, թե ո՛վ կամ ի՞նչն է նման իմաստ հաղորդում բային՝ գործողություն կատարո՞ղը, թե՞ մեկ ուրիշը:

ԱԴ-ի հետ նույն ենթական են պահանջում հետևյալ եղանակավորող բայերը՝ *աշխատել, ալարել, գերադասել, դադարել, խուսափել, խորշել, երազել, երդվել, գիտենալ, գլանալ, թերանալ, իմանալ, կարողանալ, կարենալ, կամենալ, հանդգնել, համարձակվել, հապաղել, մոռանալ, շարունակել, շտապել, պատրաստվել, ջանալ, տենչալ, ցանկանալ, ուզել, որոշել* և այլն:

Տարբեր ենթականեր են պահանջում հետևյալ եղանակավորողներով ձևավորվածները՝ *աղաչել, աղերսել, առաջարկել, ակնարկել, արգելել, թելադրել, խանգարել, խնդրել, կարգադրել, պահանջել, պատվիրել, հրամայել, հանձնարարել, հորդորել, հայցել, հրավիրել, պարտադրել, ստիպել* և այլն:

Կան մի շարք բայեր, որոնցով երանգավորված կառույցներում դժվար է դառնում որոշել՝ գործողություններ կատարողները տարբե՞ր են, թե՞ նույնը, ինչպես օրինակ՝ *սոսկալ, վախենալ* բայ-եղանակավորողներով ձևավորված կառույցներում: «Վախենում էր հեռանալուց» երկու ձևով կարելի է հասկանալ՝ վախենում էր իր հեռանալուց և վախենում էր նրա հեռանալուց: Նման երկվությունը լուծվում է խոսքային միջավայրում: Հետաքրքիրն այն է, որ երբ սրանց կողքին ԱԴ-ի թեք ձևերն են, նման խնդիր չի առաջանում, քանի որ ենթական երկու գործողությունների համար նույնն է:

Արտահայտության պլանում անհոդավոր ձևերի նկատմամբ դրսևորվում է **0 // ը (0// ն)** հակադրությունը: Եթե կան լեզուներ, որոնցում անորոշ դերբայի հոդավորմամբ պահպանվում են բայական սեռի և կերպաժամանակային իմաստները (ինչպես հունարենում), ապա հայերենում վերջինիս հոլովումն ու հոդավորումը գոյականաբար գործածության արդյունք չեն. հայերենի գոյականացված անորոշը լեզուների շարքում առանձնանում է նաև այս յուրահատկությամբ: «Կառույցում ԱՂ-ի հոդավորումը» վերնագիրը պայմանականորեն է ընտրված, քանի որ այս դեպքում այն քանդվում է, դադարում այդպիսին՝ հարադրմամբ բաղադրյալ ստորոգյալ լինելուց: Այլ կերպ ասած՝ ԱՂ-ի հոդառությունը հանգեցնում է համապատասխան համարժեք բառակապակցությանը, վերականգնում շարահյուսական նախատիպը: **0 // ը (0 // ն)** հակադրությունը հանգեցնում է **եղանակավորող // ստորոգյալ, ստորոգյալի մաս ԱՂ // լրացում ԱՂ** հակադրության: Հմմտ.՝

Անձրևի տեսքով կին էր մի խարտյաշ, Որ տրվել *գիտե* տարփուհու նման (ՎԴԱ, 76): և -Իմ հոգևորական, Կճավա ուխտից լինելն, իհարկե, *չգիտեն* (ՄՍԳՆ, 316):

Չեն էլ *թողնի խոսել* (նտ, 189): և *Թողե՛ք* հիմար-հիմար խոսելը (նտ, 306):

Գողին *հարկավոր չէ* հանցագործ անվանել կամ բռնել ձեռքը... *Հարկավոր է* անվանել հերոս (նտ, 292): և *-Հարկավոր է*, շատ է *հարկավոր* ամուր ձեռք ունենալը (նտ, 280):

Հիմա արդեն այս փաստին շատ *դժվար է* հավատալ (ՊՍ, 1, 183): և *-Դժվար է* գալը, *դժվար՝* գնալը, *Դժվար՝* լռելը, *դժվար՝*

ճշայլը, Դեռ հավատալն է ամենից դժվար։ Ավելի դժվար՝ չհավատալը ... (ՍԿԳՄՀ, 344)։

Առանց սիրո *անհնար կլինի* նվիրվածության ու սիրո խոսքեր ուղղել առ Աստված (ՄՍԳՆ, 34)։ և Եվ ընդվզում են, երբ անհնար է լինում փախչելը, Երբ անհնա՞ր է լինում միանալը... (ՍԿԳՄՀ, 230)։

Առաջին օրինակներում *գիտենալ*-ը, *թողնել*-ը, *հարկավոր է*-ն, *դժվար է*-ն, *անհնար լինել*-ը եղանակավորող են, երկրորդներում՝ ոչ։ ԱԴ-ները խնդրային հարաբերության մեջ են։

Այո՛, երբ ԱԴ-ն հող է ընդունում, կառույցը քայքայվում է։ Սակայն հարցն այն է, որ ոչ բոլոր եղանակավորողների կողքին ԱԴ-ն կարող է հողով գործածվել, ինչպես՝ Ի՞նչ կնքահայր, երբ հարազատ հայրն անգամ *չկարողացավ տեսնել* իր նորածին որդուն (ԳՄԾԾ, 53)։ *Կարող ես* Մարսի վրա *դեգերել*, Հայը ճրագ չէ, որ *ջանաս մարել*, Թե մեկն ու մեկը *կարենա մարել* կանթեղը երկնի, Թե երկիր բերել *կարենա* լուսինն աստվածականթեղ, էլի *չի կարող*՝ ինչ եղեմնով էլ՝ ինչպես էլ ձգնի (ՀՇՀԴ, 97)։ Ամբողջ քո արգանդը, որ աստվածատուր է, *կուզենայի տեսնել* օրինական թռիչքի մեջ (ՄՍԳՆ, 175)։ - Դու *հանդգնեցիր առաջ անցնել* ժամանակից, արքա՛ (ՊԶԱԵ, 605)։ Պարզ նկատվում է, որ *կարողանալ*, *կարող է*, *ջանալ*, *կարենալ*, *ուզենալ*, *հանդգնել* եղանակավորողների կողքին ԱԴ-ն հողով կիրառություն չունի։ փոխակերպական տարբերակներ չկան։ Ըստ այդմ՝ արևելահայերենում ԱԴ-ների հետ գործածվող բայական և անվանաբայական միավորները կարելի է բաժանել երկու խմբի՝

1. Լեզվամիավորներ, որոնց զուգորդությամբ ԱԴ-ն կարող է հող ընդունել (ընդունված կամ շրջուն շարադասությամբ)՝ *ուզել*, *երագել*, *սկսել*, *վճռել*, *որոշել*, *տենչալ*, *ցանկանալ*, *կամենալ*, *պահանջել*, *պարտադրել*, *շարունակել*, *թողնել*, *արժե*, *գիտեմ*, *արգելել*, *առաջարկել*, *ավելորդ համարել*, *անպատշաճ համարել*, *անհնար դառնալ*, *գերադաս համարել*, *հարկ համարել*, *հնարավոր լինել*, *դժվար է*, *հեշտ է*, *հնարավոր է*, *անհնար է*, *անհնա-*

րին է, հարկավոր է, վտանգավոր է, լավ է, հաճելի է, քաղցր է, վայել է, դյուրին է, անկարելի է և այլն:

2. Լեզվամիավորներ, որոնց կողքին ԱԴ-ն բացարձակապես հող չի կարող ընդունել՝ *կարողանալ, կարենալ, աղաչել, հասցնել, համարձակվել, ճգնել, հանդգնել, ծգտել, շտապել, աղաչանք անել, կարող է, հարկ է, պարտավոր է, մտադիր է* և այլն:

Ուրեմն՝ շատ բան կախված է եղանակավորողի իմաստից, նրա լրացական ընդունակությունից, հողառական կարողականությունից: Շատ բան կախված է նաև շարադասությունից, սրա փոխարկման հետ կապված լինելուց, այլ լրացումներով ընդմիջարկված լինել-չլինելուց:

Կառույցի քննության ընթացքում հետաքրքրություն է ներկայացնում նաև ստորոգյալ «եղանակավորող + ԱԴ» կառույցի բաղադրիչների ինչպես իրար, այնպես էլ այլ անդամների նկատմամբ դիրքը: Կառույցում բաղադրիչների շարադասությունը շարահյուսական նշույթի արժեք ունի: Նրանով որոշվում է նաև կառույցի կայունության աստիճանը:

Կառույցում բաղադրիչների սովորական շարադասական կարգ կա. ըստ հայերենի քերականության գործող օրենքի՝ եղանակավորողը նախորդում է ԱԴ-ին, վերջինս անմիջապես հաջորդում է նրան: Օրինակ՝ Միաժամանակ *չէր կարողանում հասնել* լավին ու կատարյալին, *հաղթել* զրպարտությանն ու մատնությանը, անբարոյականությանն ու անգթությանը (ՄՍԳՆ, 337): Ջուղայի հայոց եկեղեցու զանգերը *սկսեցին ծնգալ*՝ ծերությունից մի բուռ մոխիր դարձած ժամհարի խղճահարությամբ (ՍԽԱ, 326): *Հեշտ չէ հաղթել* առանց սիրո (ՊՍ, 1, 550): Եղանակավորողը առաջադաս պետք է լինի, որովհետև որքան էլ որ ԱԴ-ն իմաստով ուժեղ և արտահայտության կենտրոնական եզրն է, այնուամենայնիվ, ստուգաբանությամբ քերականորեն կախված է եղանակավորողից և, հավանաբար, վերջինիս որևէ լրացումն է եղել, մինչդեռ վերածվել է կապակցության իմաստակիր միավորի: Սակայն այս կարգն անխախտ չէ. շատ հաճախ այլևայլ նպատակներով, նախադասության որևէ անդամը շեշտելու անհրաժեշտությամբ փոխվում է շարադասությունը (բառադասությունը), որով և փոխվում է նրա արտահայտության եղանակը: Ազատ է կառույցի բաղադրիչների շարադասությունը: Շնորհիվ շարադասական ճկունության՝ բանաստեղծական հայե-

րենը պատկերավոր է դառնում, հնչեղ: Շրջուն շարադասությունը նախադասությունը հարստացնում է հուզաարտահայտչականությամբ, այն օժտում իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ռիթմական բազմազանություն մտցնում խոսքային հյուսվածքի մեջ: «Հակառակ սովորական շարադասությանը, - գրում է Վ. Առաքելյանը, - շրջումը հաճախ այնպիսի իմաստային ու ոճական նորություններ է հայտնաբերում նախադասության մեջ, որ սովորական շարադասությամբ բնավ չի զգացվում. նախադասությունը լիցքավորվում է քնարական շնչով, հուզաարտահայտչական խորությամբ, մելոդիկ հարստությամբ և համաչափ կշռույթով»¹³⁶: Պետք է ընդգծել, որ բայական կապակցություններում, մասնավորապես այս կառույցում շարադասական ազատության ու ներքին ճկունության շնորհիվ հնարավոր է դառնում ցանկացած ժամանակ կատարել տեղափոխություններ, և այսօր անգամ դժվար է որոշել՝ ո՞րն է գերակշռում՝ կանոնակա՞նը, թե՞ շրջունը: Ավելացնենք նաև, որ շարադասական շրջումով կառույցի իմաստը չի փոխվում. չի փոխվում նաև բաղադրիչների փոխհարաբերությունը:

Ընդունված իրողություն է. շրջումը կախված է տրամաբանական շեշտից: Այս մասին Մ. Աբեղյանը գրում է. «Շրջումը կախված է գլխավոր շեշտից, որով այս կամ այն բառը, առանձնապես կարևորություն ստանալով, դրվում է բայից առաջ կամ բայի մոտ, կամ թե հաճախ դրվում է խոսքի սկզբում, և, եթե ինքը շեշտված բառը խոսքի բայը չէ, պահանջում է, որ ետևից բայը դրվի: ... Երբ գլխավոր շեշտը բայի վրա է, այն ժամանակ սովորական շարադասությունն անփոփոխ է մնում, որովհետև սովորական շարադասության մեջ ևս բային է ավելի կարևորություն տրվում: Այսպիսի շրջումը և կանոնավոր շարադասությունը մեծ մասամբ հավասարագոր են. այս պատճառով հաճախ սովորական շարադասության տեղ կամ նրա հետ անխտիր փոխեփոխ

¹³⁶ Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, էջ 458-459:

գործ է ածվում այս շրջուն ձևը, որով և խոսքը ավելի բազմազանություն է ստանում, երբեմն նույնիսկ շրջուն ձևի մեջ բայն ավելի թեթև է շեշտվում, քան կանոնավոր շարադասության մեջ, մանավանդ երբ բայից հետո ընկնում են պարագաներ, ստորոգելիական վերադիր, բնության խնդիրներ կամ մի անորոշ դերբայ, որոնք երկրորդական շեշտ են ունենում: Հմմտ. գնալ ուզո՞ւմ եմ և ուզո՞ւմ եմ գնա՞լ»¹³⁷: Չմոռանանք նշել նաև, որ մի շարք բայերի (ստիպել...) կողքին ԱԴ-ն կարող է դրվել թե՛ ուղղական, թե՛ տրական հոլովներով, բայց եթե ԱԴ-ն նրանից առաջ է՝ տրականաձև է, եթե նրանից հետո՝ ուղղականաձև: Ժամանակի ընթացքում սրանց կողքին ճիշտ են համարվել կամ ավելի հավանական պիտի համարվեն ԱԴ-ի ուղիղ ձևերը:

Այնպես, ինչպես շարադասական ամենասովորական օրինաչափությունը հնչեղություն է հաղորդում խոսքին, այնպես էլ կառույցի բաղադրիչների շրջունությունը ռիթմական բազմազանություն է հաղորդում, իսկ կառույցի բաղադրիչների շրջուն և կանոնավոր շարադասությունները ըստ հարկի և հմտորեն զուգակցող, բառերի գրաված դիրքի գեղագիտական արժեքը գիտակցող գրողի խոսքը բանաստեղծականանում է, ԱԴ-ն կարող է եղանակավորողից առաջ շարադասվել, որը ոճականորեն ավելի ախորժալուր է. Գուցե քո վերքը **բալասանել փորձենք** (ՄՍԳՆ, 171): Ուրախանալ **էր պետք**, հրճվանքից երեխայի պես պարել ու **ցատկոտել էր պետք** (ՊԶԱԵ, 483):

Շատ հաճախ էլ որևէ իրողություն, որևէ բան էլ ավելի ընդգծելու նպատակով ոչ թե ԱԴ-ն է իր տեղը փոխում, այլ միան էական բայն է եղանակավորողից առաջ ընկնում. Վա՛նն **է պետք ազատագրել**, Վա՛նը (ՍԽԱ, 56): Այդ պահին, միայն այդ պահին **էր հանդգնել լինել** աստծո հետ և **խոսք խոսել** նրա հետ (ՄՍԳՆ, 329): Նման շարադասական շրջումը հատկապես չափի և հանգավորման նպատակով է կատարվում: Իսկ սովորական շարա-

¹³⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ. Երևան, 1974, էջ 439-440:

դասությամբ կառույցները բնորոշ են ամենից առաջ արծակ ստեղծագործությունների լեզվին:

Նորից բանաստեղծական խոսքի չափի և այլևայլ նպատակների հետ կապված՝ կառույցի բաղադրիչների շարահատությունը կարող է փոխվել նաև ընդմիջարկությամբ. եղանակավորողի և ԱԴ-ի միջև կարող են հայտնվել բառեր, բառակապակցություններ, նախադասություններ. Ու ես երգով, լույսերի պես, ուզում եմ քեզ արծազանքել (ՊՍ, 1, 198): Իսկ ով երջանիկ էր, ուզում էր էլ ավելի երջանկանանալ, ով հարուստ էր, ուզում էր էլ ավելի հարստանալ (ՊԶԱԵ, 152-153): Իսկ չի՞ կարելի, հա՛յր սուրբ, կանխել կոտորածը... (ՄՍԳՆ, 119): Ցանկանում եմ, ինչ գնով էլ լինի, ծեռք գցել (նտ, 58): Հա՛յր սուրբ, ես կուզեի կյանքի՜ս գնով ջնջել «գգույշ» բառը (ՊՍ, 2, 209): Աշխարհը շատ է նեղացել հիմա, Ու նեղսրտել են մարդիկ աշխարհի, Չեն կարողանում Առանց դավելու, Առանց երազը մանրացնելու, Առանց սեփական ներսը կրծելու, Առանց լավություն անելու մահին՝ Ապրել աշխարհում... (նտ, 11): Մեկը ես, պատրաստ եմ, Երբ հինձ հրամայեմ, թողնել տուն ու տեղ, գործ ու պաշտոն... (ԱԲ, 44): Ու հիմա պահանջել, որ առանց կեղտի լինի այս ամբողջը, առանց ավերածություններևի, հոգևոր անկման, դժվար է (Գ. 1991, 4, էջ 8): Ակնկալել Աստծո հետ հաղորդակցվել ֆիզիկական առումով, ինչպես ես տեսնում եմ քեզ, դու տեսնում ես ինձ, անկարելի է (նտ, էջ 10):

Ուրեմն «եղանակավորող + ԱԴ» կառույցը շարահյուսորեն ընդմիջարկելի է: Ըստ որում պակաս կարևոր չէ խոսքի մեջ նրա ընդմիջարկվածության աստիճանը, որով կառույցը կարող է կորցնել իր կուռությունը կամ ոչ: Ընդմիջարկելիության աստիճանը պայմանավորված է մեր լեզվի շարահյուսական կառուցվածքի ինքնատիպությամբ, որը և հնարավորություն է տալիս ընդարձակելու կառույցի բաղադրիչների ընդգրկման ծավալը որոշակի շրջանակներում՝ չխաթարելով նրա իմաստը: Այսինքն՝ կառույցի բաղադրիչների շարահատական ազատությունը չպետք է

բացասական հետևանքներ ունենա, չպետք է անհիմաստության հասցնի, այլ կերպ ասած՝ պահպանի այն, ինչ լեզվի մեջ «տարածական կապ» (дистанционная связь) է կոչվում:

* * *

Լեզվական-քերականական իրողություններից կրկնությունը ոճաբանության մեջ իմաստի ընդգծման, էֆեկտիվության միջոց է համարվում: Կրկնության արվեստը հին է, և առանձին հնչյունների ու հնչյունախմբերի, բառածների, գուգորդությունների, նախադասության անդամների ու շարահյուսական կապակցությունների նույնահունչ հանդիպադրումները մեծ չափով նպաստում են ասույթի հուզական լիցքավորմանը, քնարականությանն ու մեղեդիականությանը: Նորից ոճական նկատառումներով, խոսքն է՛լ ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով շատ հաճախ, հատկապես չափածո խոսքում, կրկնվում է կա՛մ ամբողջ կառույցը (միայնակ կա՛մ լրացումներով), կա՛մ առանձին-առանձին եղանակավորողն ու ԱԴ-ն, ըստ որում գեղագիտական ներգործության ուժն առավել մեծ է ոչ լիակատար նույնությամբ ձևավորվելու դեպքում. նույն եղանակիչի և նույն ԱԴ-ի ոլորտն ընդգրկված տարբեր բառերը ընդգծում են իմաստները, խտացնում են գույները, աշխուժացնում են շարահյուսական իներտ կառույցները: Կառույցը կարող է նույնությամբ կրկնվել, բայց կրկնության մեջ բաղադրիչները կարող են ուղեկցվել նոր լրացումներով ու նոր բնութագրումներով, որով նախադասությունը հուզաարտահայտչական նոր գունավորում է ստանում:

Կրկնվում է ողջ կառույցը. Եվ լույսի՛ց, Լոկ լույսի՛ց *Կարող է* և մայրանալ, *Կարող է* մայրանալ ... մինչևիսկ չբերը (ՊՍ, 2, 94): *Կարող է* այսպես տևել ողջ տարին, *Կարող է* այսպես տևել կյանքը ողջ (ՊՍ, 1, 71):

Լինում են դեպքեր էլ, երբ կրկնվում է կառույցը, բայց ունենալով ստորադաս նախադասություն, առանձնանում է, դառնում ավելի ինքնուրույն: Երբեմն անգամ վերջակետով են անջատ-

վում, առանձնանում եղանակավորողն ու ԱԴ-ն. Ես *կարող եմ*, Ես *կարող եմ ենթադրել*, թե ինձ մոտ ես, Թեպետև մեզ սար ու ձոր են անջատում: Ես *կարող եմ ենթադրել*, Թե դու համեստ, ամաչկոտ ես, Մինչդեռ իրոք՝ Ինձ պարզապես չես նկատում: Ես *կարող եմ ենթադրել*, Բայց ինչ օգուտ... (ՊՍ, 1, 389): Սիրո անհուն առեղծվածը *չեմ կարենում հասկանալ*, Սերը կորո՞ւստ, թե՞ մի գանձ է, *չեմ կարենում հասկանալ*, Ես քեզ սիրում, իսկ դու անսեր, չոր մի սիրտ ես թափառիկ, Հաղթո՞ղն եմ ես, թե՞ հաղթվածը՝ *չեմ կարենում հասկանալ* (ՍԿԳՄՀ, 51): (Վերջինում կառույցի կրկնությունը պայմանավորված է քառյակի ժանրային առանձնահատկությամբ, նրա պահանջով):

Պատահում են դեպքեր, երբ կառույցը կրկնվելիս այլ յուրահատկություն է դրսևորում. մի եզրում դրական ձևով է հանդես գալիս, մյուսում՝ ժխտական. Ինչո՞ւ այնպես եղավ, որ աշխարհում Ես *կարող եմ* հիմա ամենայն տեղ *գնալ*, Լոկ *չեմ կարող գնալ* հայրական տուն (ՎԴ, 1, 410): Որովհետև եթե լրիվ քանդվեց, դեմ կառնես մեծագո՞ւյն փակուղուն, որը չգիտես այստեղ է, ի՞նչ է, կա՞, թե՞ չկա, *արժե՞ կռվել* նրա դեմ, թե՞ *չարժե*, ինչո՞ւ *է պետք կռվել* և ինչո՞ւ *պետք չէ*... (ՊԶԱԵ, 183):

Բարդ նախադասություններում կրկնվում է միայն եղանակավորողը: Այս դեպքում առավել ևս ընդգծվում է միտքը, մանավանդ երբ այն ուղեկցվում է հատուկ զգացական երանգով: Ըստ որում կարող է կրկնվել կա՛ն առանց ԱԴ-ի, որի դեպքում ավելի է ընդգծվում եղանակավորող իմաստը, կա՛ն ուրիշ ԱԴ-ի հետ. Ես ոչ մի անգամ *չկարողացա (չկարողացա~չկարողացա)* Ղառնալ խոսափող ա՛յն անցողիկին, Որ համարժեք է հաջողությանը (ՊՍ, 2, 101): Ես *չեմ կամենում կորցնել* իմ սերը, *չեմ կամենում* (ՄՍԳՆ, 46): *Ցանկանում է* սիրահարեցնել իրեն, *ցանկանում է ապացուցել* իր արիությունը (նտ, 210): *Չեմ ձգտել* երբեք Շոշափել կյանքում, *Չեմ ձգտել* երբեք Զգալու համար վայելել կյանքում (Մ, 97):

Միայն ԱԴ-ն է կրկնվում. այս դեպքում ոճական մի նպատակ է սոսկ հետապնդվում՝ առաջին պլանի վրա մղել ԱԴ-ով արտահայտված գործողությունը, շեշտել այն. Հիմա միայն **ճչալ է պետք, ճչալ...** (ԽՀ, 219): Եվ **ուզում ես** անվերջ խոսե՜լ, խոսե՜լ, խոսե՜լ (ՊՍ, 1, 219): Հովի հետ այս ուխտավոր Անցնելուց բարդուց բարդ **Ուզում ես գնա՜լ, գնա՜լ** (ՎԴ, 1, 168):

Կրկնվում է նաև իրեն հարող լրացումներով. Ես **ուզում եմ** նրան **զգա՜լ**, նրա՛ն **զգա՜լ**՝ քե՛զ գրկելով այս մատներով... (ՊՍ, 1, 50):

Երբեմն էլ կառույցը նոր արժեք է ստանում և ոճական նոր իմաստ հաղորդում խոսքին՝ նույն ԱԴ-ի սեռային հակադրությամբ կրկնվելիս. Քամում են կենաց հյութերը, իսկ նա **ցանկանում է ապրել** ու **ապրեցնել** աշխարհը (ՄՍԳՆ, 348): Ա՛խ, երանի՜ նրան, ով մի անդարձ մեծ կորուստ ունի, կարոտում է ու **անհնար է կանչել** ու **կանչվել**, **զգվել** ու **զգվեցնել** (ՀՄ, 2, 507):

Ոճական ուրույն երանգ ունի ԱԴ-ի ահա այսպիսի կրկնությունը. Աստվա՛ծ իմ, խոնարհ ծառադ... **ցանկանում է** տաղերգուների մեջ **լավը դառնալ, լավերի լավը դառնալ** (ՄՍԳՆ, 176):

Կրկնվում են, և խոսքը դառնում է ավելի տպավորիչ, ավելի ցայտուն:

Ոճական առումով խոսքի միտքը խտանում է նաև այն դեպքում, երբ թե՛ եղանակավորողը, թե՛ Ադ-ն նույն բայով են արտահայտված. Ու ես էլ **չեմ ուզում** ոչի՛նչ **ուզենալ** ... (ՊՍ, 1, 317): **Աղաչում եմ**. - Այս և նման այլ հարցերում երբևիցե ինձ **չաղաչե՜լ** (նտ, 418): **խոստանում եմ** Ոմանց նման իզուր տեղը **չխոստանալ** (նտ, 394): ...Թեկուզ **ուզիր** է՛լ **չուզել** – իզուր... (նտ, 318):

Սովորաբար կառույցը ժխտական իմաստ է ձեռք բերում կա՛ն եղանակավորողի ժխտական ձևով (**Չկարողացա իմանալ**, թե ի՞նչ ցավ է - ԱԲ, 188), կա՛ն ԱԴ-ի (Հիմա **ջանում եմ** լոկ... **չլինել**... -ՊՍ, 2, 60): Սակայն երբ թե՛ եղանակավորողը, թե՛ ԱԴ-ն ժխտական ձևավորում ունեն, ապա կրկնակի ժխտականը յուրահատուկ ոճ է ստեղծում. վերջնական արդյունքում դրական

իմաստ է տալիս. Իսկ նույն պահին *չեմ կարողանա* ես *չմտածել*, Որ կար մի աղջիկ... (ՊՍ, 2, 58): Իսկ մենության մեջ՝ լողա՛ս թե թռչե՛ս, Մե՛կ է՝ *չլռել չե՛ն կարողանա* (նտ, 64): Նրանք գալու են. *Չեն կարող չգալ*, Ինչպես *չի կարող չգալ* անձրևը, Երբ որ ամպերը խիտ են ու լցված... Նրանք գալու են. *Չեն կարող չգալ* Մեր երգիչները հպարտ ու խոնարհ, Ինչպես *չի կարող* հունդը *չծլել*, Երբ եղանակը նպաստավոր է (ՀՍՄԱ, 111): Վերջին օրինակում նկատելի է, որ եղանակավորողի և ԱԴ-ի ժխտական ձևերի համադրման կողքին խոսքային հյուսվածքն էլ ավելի խտանում ու խորանում նաև հարակցվող նախադասությունների **գալ** բայի հակադիր՝ դրական և ժխտական, անդեմ և դիմավոր կիրառությամբ:

1. Հայոց լեզվի համակարգում բացառիկ արժեք է ներկայացնում ԱԴ-ն իր պատմական զարգացմամբ, ձևաբանական-շարահյուսական կիրառության առանձնահատկություններով, մյուս դերբայների հետ ունեցած իմաստային ու ձևային կապերով:

2. Նշանակությամբ պատկանելով բային, ելնելով յուրահատուկ իմաստից՝ ԱԴ-ն շարահյուսական բազմաբնույթ յուրահատկություններ է դրսևորում: Ընդունվում է ԱԴ-ի յուրահատուկ լինելը դերբայական շարքում, նրա երկակիությունը, ընդգծված գոյականական հատկանիշներ ունենալը, բայց և չի անտեսվում եղանակավորողների հետ հանդես գալը և ստորոգյալի մաս կազմելը, որն էլ նրա բայական արժեքի դրսևորումներից մեկն է:

3. ԱԴ-ն եղանակավորողների հետ կազմում է «եղանակավորող + ԱԴ» ստորոգելիական կառույցը: Սա մի կապակցություն է, որի բաղադրիչներից մեկն արտահայտում է բուն բայական հատկանիշը (գործողության հատկանիշը), իսկ մյուսը՝ եղանակավորող ու այս կարգի լրացուցիչ իմաստներ: Տեղի է ունենում հիմնական ու լրացուցիչ իմաստների զուգորդում, և արդյունքում «եղանակավորող + ԱԴ» ստորոգյալն է՝ վերլուծական-նկարագրական եղանակով:

4. «Եղանակավորող + ԱԴ» կառույցը «խոնարհված բայ + ԱԴ» ստորոգյալի մի կարևոր դրսևորումն է. երկրորդն ավելի լայն ընդգրկում ունի:

5. Կառույցի առանձնացումը կատարվում է եղանակավորման լայն ըմբռնման և ստորոգման ջահուկյանական մոտեցման հիմունքով:

6. Կառույցի բաղադրիչների ստորադասական հարաբերությունը սոսկ ներկառույցային, ստուգաբանական արժեք ունի:

7. «Եղանակավորող + ԱԴ» կառույցն արտահայտում է մի ընդհանուր նշանակություն և կազմում մի միասնական շարահյուսական ամբողջություն: Սրանք միասին հատկանշվում են իմաստային, քերականական, ոճական առանձնահատկություններով: Կառույցի բաղադրիչների արտահայտությունների, միմյանց նկատմամբ ունեցած ներքին կապի ու յուրահատուկ շարահյուսական հարաբերությունների քննությունը երևան է հանում նրանց միջև բազմազան ու բարդ հարաբերություններ, որոնք և պայմանավորված են բաղադրիչների թե՛ ձևաբանական-կառուցվածքային, թե՛ իմաստային, թե՛ քերականական այլ առանձնահատկություններով:

8. «Եղանակավորող + ԱԴ» կառույցն արդի հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) հաճախադեպ լեզվափոփոխություններից է: Այն նաև պատմական գոյացություն է. գործուն է եղել գրաբարում և միջին հայերենում: Վերջապես համալեզվական է. գործուն է նաև այլ լեզուներում:

9. Եղանակավորողները տվյալ բաղադրյալ ստորոգյալը հարստացնում են կարողական, ցանկական և այլնայլ նրբիմաստներով:

10. Կառույցում առաջին բաղադրիչ կիրառությունը սահմանափակ է, իսկ ԱԴ-ինը՝ գերազանցապես ոչ:

11. Ամենատարածվածը «բայական եղանակավորող + ԱԴ» կառույցն է: Ըստ եղանակավորման իմաստի տարբերակվում են մասնակառույցները:

12. Հարադրական բայերն էլ համադրականների նման եղանակավորող են դառնում, ԱԴ-ի հետ կազմում են «հարադրական բայ եղանակավորող + ԱԴ» կառույցը: Սրանում նորից նույն քերականական հարաբերություններն են: Ունեն իրենց հոմանիշ համադրական եղանակավորողով կառույցներ:

13. Ժամանակակից հայերենում լայն կիրառություն ունեն այն կառույցները, որոնցում որևէ ածականին, գոյականին կամ այլ ոչ բայ խոսքի մասին ու էական բային հարադրվում են

ԱՂ-ները: Ունենալով որոշակի նմանություններ՝ «բայական եղանակավորող + ԱՂ» և «ոչ բայական եղանակավորող + ԱՂ» կառույցները տարբերվում են ձևային արտահայտությամբ, իմաստային կողմով, իմաստից բխող ոճական առանձնահատկություններով, դիմային, թվային, եղանակային կարգերն արտահայտելու կարողականությամբ, կառույցի նկատմամբ ենթակայի դերով, նաև հաճախականությամբ:

14. Արդի արևելահայերենում գործուն է նաև «դերբայ եղանակավորող + ԱՂ» կառույցը, որը թեպետ քիչ է հանդիպում, սակայն իր յուրահատկություններով ավելի բազմազան է դարձնում «եղանակավորող + ԱՂ» կառույցի շարահյուսական դաշտը, հարստացնում խոսքը, ուրույն երանգ հաղորդում նրան:

15. Կառույցի արժեքավորման և գնահատման հարցում շատ բան կախված է եղանակավորողի իմաստից, նրա լրացական ընդունակությունից, հոդառական կարողականությունից: Շատ բան կախված է նաև շարադասությունից, սրա փոխարկման հետ կապված լինելուց, այլ լրացումներով ընդմիջարկված լինել-չլինելուց: «Եղանակավորող + ԱՂ» կառույցը շարահյուսորեն ընդմիջարկելի է: Ըստ որում պակաս կարևոր չէ խոսքի մեջ նրա ընդմիջարկվածության աստիճանը, որով կառույցը կարող է կորցնել իր կուռությունը կամ ոչ: Ընդմիջարկելիության աստիճանը պայմանավորված է մեր լեզվի շարահյուսական կառուցվածքի ինքնատիպությամբ, որը և հնարավորություն է տալիս ընդարձակելու կառույցի բաղադրիչների ընդգրկման ծավալը որոշակի շրջանակներում՝ չխաթարելով նրա իմաստը:

16. Քննարկվող նյութի տեսակետից ամենախախտուտ կողմը թեք ձևեր պահանջող եղանակավորողների ոլորտն է. սրանց քննությանը խիստ վերապահությամբ ենք մոտեցել. սրանք հետաքրքրական են այն առումով, որ եղանակավորողների անցման ճանապարհն են մատնանշում: Եղանակավորողների առանձին բառական նշանակությունը և դրանց գործածության հաճախականության հանգամանքն արգելիչ գործոն է լիարժեք

եղանակավորող իմաստ ձեռք բերելու ճանապարհին: Լեզվի ընդհանուր օրենքներից մեկն այն է, որ երբ մի իմաստից առաջ է գալիս նորը, հինը միանգամից չի ջնջվում, այլ նրանք շարունակում են գործածվել կողք կողքի այնքան ժամանակ, մինչև որ չի ջնջվում նախկին իմաստը և մնում եղանակավորող իմաստը:

17. Մի խումբ դիմավոր բայերը կորցրել են և շարունակում են կորցնել իրենց բայական արժեքը՝ վերածվելով բառ-մասնիկների կամ քերականությանների՝ դրանով իսկ ուժեղացնելով ԱԴ-ի բայական հատկանիշները: Իհարկե, այս դեպքում կառույցի հիմքում ընկած է բայի բառիմաստի փոփոխման գործոնը, բայց այն արժեք չէր ունենա, եթե բայը չունենար գործողության որակման, գնահատման, եղանակական երանգ, այսինքն բառիմաստը ընծեռում է այդ հնարավորությունը: Մյուս կողմից՝ դիմավոր բայի իմաստային այս երանգը առաջնային է դառնում ԱԴ-ի գուգորդմամբ:

18. Հայոց լեզվի զարգացման արդի փուլում առավել ուժեղ է դրսևորվում որոշ եղանակավորողների կողքին ԱԴ-ի ուղիղ ձևի աշխուժացումը՝ ի հաշիվ թեք (տրական, բացառական) ձևերի: Սա լեզվում մշտապես գործող նմանակության օրենքի արտահայտություններից է, նաև արտաքին (հատկապես՝ ռուսերենի) ազդեցության հետևանք: Լեզվաբանական աղբյուրներում հայտնի է «բացարձակ աներևույթ» եզրութակապակցությամբ: Կառույցի ձևավորման հարցում խանգարիչ գործող է ԱԴ-ի ձևը, ահա թե ինչու այն միտում է ուղիղ ձևով գործածվելու:

19. Այսօրվա լեզվի նորմերի տեսակետից ճիշտ չեն ԱԴ-ի թեք ձևերի փոխարեն ուղիղ ձևերի գործածությունը. քանի դեռ բայը թեք ձևով ԱԴ է պահանջում, չենք կարող պնդել նրա լիակատար եղանակավորող լինելը: Մյուս կողմից՝ չենք կարող անտեսել, որ արդի հայերենում «Եղանակավորող + ԱԴ» կառույցն իր համագործածությամբ, հաճախականությամբ, օրինաչափության վերածվելու միտվածությամբ լեզվական նորմում փոփոխություններ արձանագրելու հիմքեր է ստեղծել և ստեղծում է: Արդի հայե-

րենում ընդգծված հակասություն է արձանագրվում լեզվական և խոսքային /խոսքիմշակութային/ նորմերի միջև, որը դրսևորվում է գուգաձևությունների տեսքով: Լեզվի զարգացման պատմական ընթացքը ցույց է տալիս, որ նմանատիպ փոփոխություն-զարգացումներում լեզվաշինական աշխատանքները պետք է տարվեն լեզվական նորմի փոփոխությամբ՝ այն համապատասխանեցնելով խոսքային նորմին: Ներկա լեզվավիճակը պահանջում է եղանակավորողների կողքին ԱԴ-ի թեք ձևերի փոխարեն ուղիղ ձևերի գործածությունը սխալ չհամարել, մեղանջում չդիտել, այլ, հիմնվելով արժույթայնության վրա, կանոնով հաստատել սրանց համատեղ գործածությունը՝ շարահյուսական տարբեր արժեքներով՝ կամ որպես մեկ շարահուսույթ (այս դեպքում ունենք «եղանակավորող + ԱԴ» կառույցը՝ ներկառուցային տարբեր հարաբերություններով), կամ որպես շարահուսույթների գումար՝ ենթակառության, ստորագառության, խնդրառության և պարագառության հարաբերություններով ձևավորված:

20. Լեզուն անընդհատ զարգանում է՝ անընդհատ կրելով խորքային ու մակերեսային փոփոխություններ, որոնցից շատերը լեզվաշինության գործընթացի ճիշտ և գիտական ուղղորդվածության դեպքում կարող են կանոնների տեսքով ամրակայվել գրական լեզվի նորմում...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. ԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. *Աբեղյան Մ.* Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. *Աբեղյան Մ.*, Երկեր, հ. Զ, 1974:
3. *Աբրահամյան Ա.*, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
4. *Աբրահամյան Ա.*, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
5. *Աբրահամյան Ա.*, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
6. *Աբրահամյան Ա.*, Ժամանակակից հայերենի շարահյուսական մի քանի կառույցների մասին, «Դասախոսների և ասպիրանտների 32-րդ գիտական նստաշրջանի թեզիսներ», Երևան, 1977:
7. *Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ.*, Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, Երևան, 1975:
8. *Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
9. *Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ.*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976:
10. *Աբրահամյան Ս.*, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962:
11. *Աղայան Է.*, Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967:
12. *Աղայան Է.*, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:
13. *Աղաջանյան Զ.*, Եղանակավորող դիմավոր բայ+անորոշ դերբայ կապակցությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, թ.1:
14. *Աճառյան Հ.* Լիակատար քերականություն հայոց լեզվի, Համեմատությամբ 562 լեզուների, հ. 4, Ա-Բ, Երևան, 1959-1961:
15. *Աճառյան Հ.*, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 2005:
16. *Այտընյան Ա.*, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:

17. *Առաքելյան Վ.*, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958:
18. *Ասատրյան Մ.*, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959:
19. *Ասատրյան Մ.*, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973:
20. *Ասատրյան Մ.*, ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988:
21. *Ասատրյան Մ.*, ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987:
22. *Ավագյան Վ.*, Շարահյուսություն (Օժանդակ ձեռնարկ ուսուցչի համար), Երևան, 1983:
23. *Ավագյան Վ.*, Հայոց լեզվի շարահյուսություն (Դասագիրք երեկոյան միջնակարգ դպրոցների 7-8-րդ դասարանների համար), Երևան, 1985:
24. *Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.*, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1986:
25. *Բաղիկյան Խ.*, ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986:
26. *Բաղիկյան Խ.*, ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Երևան, 1976:
27. *Բաղիկյան Խ.*, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2008:
28. *Բարսեղյան Հ.*, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980:
29. *Բարսեղյան Հ.*, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
30. *Բարսեղյան Հ.*, Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները, Երևան, 1975:
31. *Բեդիրյան Պ.*, Մայրենիի ուսուցման հարցեր, Երևան, 1982:
32. *Բեդիրյան Պ.*, ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1978:
33. *Բեդիրյան Պ.*, Հայ լեզուն և մեր խոսքը (Գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց), Երևան, 2007:
34. *Գևորգյան Գ.*, Անորոշ դերբայը որպես եղանակային ձևերի բաղադրիչ, «Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն, Գիտական աշխատություններ», Զ պրակ, Երևան, 2008:

35. *Գյուլբուդադյան Ս.*, Ժամանակակից հայերենի շարահյուսություն (Պարզ նախադասություն), Երևան, 1988:

36. *Գյուլբուդադյան Ս.*, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987:

37. *Գյուլբուդադյան Ս.*, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:

38. *Ջաքարյան Հ.*, Բացարձակ աներևույթի և համանման կառույցների զուգաձևերը հայերենում, «Զահուկյանական ընթերցումներ», Երևան, 2007:

39. *Թեյլան Լ.*, Բացարձակ աներևույթի գնահատման շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի» (Հայագիտություն), թ.3, Երևան, 2015:

40. *Թեյլան Լ.*, Արդի հայերենի քերականության հարցեր, Երևան, 2016:

41. Ժամանակակից հայերենի խոսակցական լեզուն, Երևան, 1981:

42. *Իշխանյան Ռ.*, Արդի հայերենի շարահյուսություն (Պարզ նախադասություն), Երևան, 1986:

43. Հայոց լեզու և գրականություն (Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Պրակ 5-6), Երևան, 1985:

44. Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:

45. Հայոց լեզվի և ոճի հարցեր, 5-րդ, Երևան, 1978:

46. *Հարությունյան Հ.*, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983:

47. *Ղազարյան Ս.*, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981:

48. *Մարգարյան Ա.*, Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն), Երևան, 1990:

49. *Մարգարյան Ա.*, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:

50. *Մարության Ա.*, Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ, Երևան, 1971:

51. *Միրումյան Մ.*, Հայոց լեզու, Տեսական և գործնական դասընթաց, Երևան, 2013:

52. *Մկրտչյան Էդ.*, Դերբայական կապակցության և դերբայական նախադասությունների փոխհարաբերությունը գրաբարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, թ. 8:

53. *Մկրտչյան Էդ.*, Ստորոգյալի կազմությունը և արտահայտությունը գրաբարում, «Բանբեր Երևանի պետական համալսարանի», 1975, թ. 1:

54. *Մուրվալյան Ա.*, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959:

55. *Ներսիսյան Գ.*, Հայերենի բայական բաղադրյալ ստորոգյալի արդի ըմբռնումը, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2002:

56. *Շարաբխանյան Պ.*, Գրաբարի դասընթաց, Երևան, 1974:

57. *Պապոյան Ա., Բաղիկյան Խ.*, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:

58. *Պապոյան Ա.*, Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2007:

59. *Պառնասյան Ն.*, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986:

60. *Պառնասյան Ն.*, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան, 1979:

61. *Զահուկյան Գ.*, Գրաբարի քերականության պատմություն (17-19-րդ դ.դ.), Երևան, 1974:

62. *Զահուկյան Գ.*, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

63. *Զահուկյան Գ.*, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

64. *Զահուկյան Գ.*, Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1985, թ. 1:

65. *Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ.*, Հայոց լեզու, 1-ին մաս, պրակ Ա., Երևան, 1980:

66. *Սաքայան Դ.*, Խնդրառության մի քանի հարցեր, «Զահուկյանական ընթերցումներ», Երևան, 2014:

67. *Քյուրքչյան Ա.*, Անվանական բաղադրյալ ստորոգյալը և նրա խնդիր ու պարագա լրացումները, Երևան, 1975:

68. *Քոսյան Վ.*, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Երևան, 1976:

69. *Քոսյան Վ.*, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975:

70. *Քոսյան Վ.*, Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976:

71. *Օհանյան Հ.*, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, 1982:

բ. ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. *Աղայան Է.*, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. հ. 1-2, Երևան, 1976:
2. *Բեդիրյան Պ.*, Դարձվածաբանական բացատրական բառարան (Դպրոցական, համառոտ), Երևան, 1971:
3. *Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.*, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Երևան, 1987:
4. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. հ. 1-2, Ե., 1979-1980:
5. *Պապոյան Արտ.*, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հ. 2, Երևան, 1982:
6. *Պետրոսյան Լ.*, Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերի բառարան, Երևան, 1976:
7. *Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազուլյան Թ.*, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:
8. *Պետրոսյան Հ.*, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
9. *Սարգսյան Ա.*, Արևմտահայերեն բառարան, Երևան, 1991:

գ. ԲՆԱԳՐԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐ

ԱԲ - Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1986:

ԱԱԵ - Գառնիկ Ադաբայան, Երկեր, Երևան, 1988:

ԱԶ - Գրիգոր Զոհրապ, Երեք նովել, Երևան, 1988:

ԱԷ - Գևորգ Էմին, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1985:

ԱՄԾՓ - Գուրգեն Մահարի, Ծաղկած փշալարեր, Երևան, 1988:

ԴՊՐ - «Դպրություն» օրաթերթ, 1990:

ԴՔ - Դավթակ Քերթող, Ողբք ի մահն Զեւանշիրի մեծի իշխանին, Երևան, 1986:

ԵՂ. - Եղիշե, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, 1989:

ԽՈՐ. - Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Երևան, 1991:

ՀՀԻՂ - Հրաչյա Հովհաննիսյան, Իրիկնային դողանջ, Երևան, 1982:

ՀՄ - Հրանտ Մաթևոսյան, Երկեր, հ. 2, Երևան, 1985:

ՀՇ - Հովհաննես Շիրազ, հ. 3, Երևան, 1984:

ՀՇՀՂ - Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը հայ կոտորածների հավերժասուգին, Երևան, 1991:

ՀՄԴԾ - Համո Սահյան, Դաղձի ծաղիկ, Երևան, 1986:

ՀՄՄԱ - Համո Սահյան, Մայրամուտից առաջ, Երևան, 1961:

Մ - Մետաքսե, Հազար ու մի սեր, Երևան, 1981:

ՄԳՊ - Մուշեղ Գալշոյան, Պայուսակը, Երևան, 1988:

ՄՄ - Միսաք Մեծարենց, Երկեր, Երևան, 1986:

ՄՄԳՆ - Մկրտիչ Սարգսյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1989:

ՆՔ - Նահապետ Քուչակ, Հազար ու մեկ հայրեն, Երևան, 1976:

ՊԴ - Պետրոս Դուրյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1971:

ՊԶԱԵ - Պերճ Զեյթունցյան, Արշակ Երկրորդ, հ 2, Երևան, 1987:

ՊՂ - Պատվական Ղուկասյան, Բարով ես եկել, Երևան, 1975:

ՊՍ - Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ.հ. 1-4, Երևան, 1971 - 1973:

ՈՂՔԲ - Ռազմիկ Ղավոյան, Քարե բարձ, Երևան, 1989:

ՍԽԱ - Սերո Խանզադյան, Անդրանիկ, Երևան, 1989:

ՍԿԳՄՀ - Սիլվա Կապուտիկյան, Գիրս մնա հիշատակող, Երևան, 1988:

ՍՊՔ - Սովետական պոեզիա, Քրիստոմատիա, Երևան, 1986:

ՎԴ - Վահագն Դավթյան, Երկեր, հ. 1, Երևան, 1985:

ՎԴԾԾ - Վահագն Դավթյան, Ծուխ ծխանի, Երևան, 1969:

ՎՊՀԲԱ - Վարդգես Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Երևան, 1977:

Ր - Րաֆֆի, Պատմվածքներ և վիպակներ, Երևան, 1986:

ՈԽՀԲ - Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (16-17-րդ դ.դ.), հ. 1, Երևան, 1986:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
«ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ+ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	17
ՍՏՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՈՐՊԵՍ «ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ+ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ	64
Կառույցի վերլուծական նկարագրությունը	74
«ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ + ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԸ	81
Արդի արևելահայերենի բայական եղանակավորողները, նրանց գործառական հաճախականությունը	82
Եղանակավորող բայերի իմաստային դասակարգումը (իմաստային դաշտերը)	85
«ՀԱՐԱՐԱԿԱՆ ԲԱՅ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ + ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԸ	139
Գոյական հարադիր ունեցող հարադրական բայ եղանակավորողներ	151
Ածական հարադիր ունեցող և կախյալ բայարմատներով ու բառերով ծևավորված հարադրական բայ եղանակավորողներ	153
«ԴԵՐԲԱՅ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ + ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԸ	157
«ՈՉ ԲԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ + ԱՂ» ԿԱՌՈՒՅՑԸ	164
Կառույցի դասակարգումն ըստ ոչ բայական բաղադրիչի խոսքիմասային պատկանելության	169
Ոչ բայական եղանակավորողների իմաստային դասակարգումը	173
Կառույցի ոչ բայական մասի դասակարգումն ըստ էական բայի դիմաթվային կարողության	191
«ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ + ԱՂ» ԿԱՂԱՊԱՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ	194
ԲԱԶՄԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ ԶԵՎԱՎՈՐԱԿԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ	199
ՀԱՐԱՐԱԿԱԾ ԱՂ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	207
ԿԱՌՈՒՅՑՈՒՄ ՀԱՐԱՐԱԿԱԾ ԱՂ-Ի ԶԵՎԸ	211
ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՂԱՆՉՈՒՄՆԵՐ	234
ԿԱՌՈՒՅՑՆ ԸՍՏ ԲԱՂԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՐԵՐԻ	244
ԿԱՌՈՒՅՑՈՒՄ ԱՂ-Ի ՀՈՂԱՎՈՐՈՒՄԸ	247
ԿԱՌՈՒՅՑԻ ԲԱՂԱՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ	250
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	258
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	263

ՋԱՌԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆՈՐՈՇ ԴԵՐՔԱՅՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿԱԶՄՈՒՄ («ԵՂԱՆԱԿԱԿՈՐՈՂ + ԱԴ» ԿԱՌՈՒՅՑԸ)

Համակարգչային ձևավորումը՝ *Մ. Ճանճապանյանի*

Պատվեր՝ 8:
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ
Երևան-9, Տերյան-91